

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՄԻՐԶՈՅԱՆ

**ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ  
«ԶՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱՅԻ»  
ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ**

Ստեփանակերտ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՍԵՐԻԱ

**ԵԼԻՉԱՎԵՏԱ ՄԻՐՉՈՅԱՆ**

**ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆԻ  
«ՉՈՒՌՆԱ-ՏՄԲԼԱՅԻ»  
ԼԵՉՎԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ**

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ  
«Դիզակ պլուս» ՍՊԸ  
2007**

ՀՂՏ 809.198.1:891.98 (07)  
ԳՄԴ 81.22+84Հ Գ7  
Մ 763



Հրատարակվում է ԼՂՀ ԿՄՍ նախարարության երաշխավորությամբ

**Խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Լ.Շ. Հովհաննիսյան**

**ՄԻՐՁՈՅԱՆ Ե.Ա.**

**Մ 763 Տմբլաչի Խաչանի «Ձուռնա-Տմբլաչի» Լեզվական Արվեստը.-  
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» ՍՊԸ, 2007թ., 184 էջ:**

Ուսումնասիրության մեջ ներկայացված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ մշակույթի նշանավոր գործիչ, երգիծաբան Կ.Մելիք-Շահնազարյանի բարբառային ստեղծագործությունների լեզվաոճական արվեստը:

Ղարաբաղի բարբառի բառապաշարի վերաբերյալ ցայժմ չկա որևէ ուսումնասիրություն, իսկ Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարը հարուստ նյութ է տալիս Ղարաբաղի բարբառի՝ նշված ժամանակաշրջանի հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականական իրողությունների ուսումնասիրության համար:

Ուսումնասիրության նյութ դարձնելով գրողի ստեղծագործությունների (ամփոփված երկհատոր «Ձուռնա-Տմբլաչ» ֆելիետոնների ժողովածուում) լեզվի և ոճի քննությունը՝ հեղինակը ներկայացրել է տաղանդավոր գրողի լեզվական համակարգը Ղարաբաղի բարբառի, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի գրական արևելահայերենի համադրական քննությամբ:

Աշխատանքը որպես ուսումնական ձեռնարկ հասցեագրվում է բուհերի բանասիրական բաժնի ուսանողությանը, այն կարող է օգտակար լինել բարբառագիտության, բանահյուսության, Ղարաբաղի բարբառի բառապաշարի տարբեր հարցերով զբաղվողների համար, ինչպես նաև Տմբլաչի Խաչանի ստեղծագործություններն ընթերցողներին:

ԳՄԴ 81.22+84Հ Գ7

ISBN 978-99941-812-5-4

© Ե. Միրզոյան, 2007թ.

**ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ**

Հայ գրականության պատմության մեջ եզակի անուններ կան, որոնք ստեղծագործել են իրենց մայրենի բարբառով: Նման հեղինակների ստեղծագործությունների լեզվական քննությունը կարևորվում է լեզվաբանական-բարբառագիտական առումով:

Այդ անունների մեջ իր ուրույն տեղն ունի Տմբլաչի Խաչանը (Կ. Մելիք-Շահնազարյան), որի՝ Ղարաբաղի բարբառով գրված ստեղծագործությունը՝ «Ձուռնա-Տմբլաչ» ֆելիետոնների երկհատոր ժողովածուն, կարելի է ասել, հուշարձան է հարազատ բարբառին: Հայերենի բարբառների մեջ քիչ չեն հունորով հարուստ բարբառները, խոսվածքները, սակայն արտակարգ հունորով է Ղարաբաղի բարբառն իր ճոխ ու հարուստ բառապաշարով, որն իր արտահայտությունն է գտել Տմբլաչի Խաչանի լեզվում:

Ցավոք, առայժմ ուսումնասիրված չէ արցախցի տաղանդավոր գրող-երգիծաբանի, մանկագրի, հրապարակախոսի, բանահավաքի, հասարակական գործչի հսկայածավալ ժառանգությունը, և մանավանդ գնահատական չի տրված նրա գրականագիտական և լեզվաբանական գործունեությանը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Ե. Միրզոյանի սույն ուսումնասիրությունը բարբառագիր գրականության լեզվի քննությանը վերաբերող եզակի աշխատանքներից է: Այն լրացնում է հայ բարբառագիտության բացթողուններից մեկը և որոշակի ներդրում է հայերենի բարբառագիտության մեջ:

Հեղինակը Տմբլաչի Խաչանի տաղանդը արժևորելու և երգիծանքի լեզվով ասելիքի նրբությունները բացահայտելու համար ընտրել է լեզվաբանության մեջ ավանդական դարձած բարբառագիտական ուսումնասիրությունների մշակած սկզբունքը՝ հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների նկարագրությունը: Չբավարարվելով նշված կողմերի ուսումնասիրությամբ՝ անդրադարձել է նաև Ղարաբաղի բարբառի բառապաշարի մի շարք միավորների ծագումնաբանական և իմաստաբանական քննությանը, որն ամբողջանում է գրողի երգիծանքի գեղարվեստական պատկերավորման և արտահայտչամիջոցների նկարագրությամբ:

Սույն աշխատանքը թեմային վերաբերող համապարփակ ուսումնասիրություն է, որն անհրաժեշտ է արցախցի գրող-երգիծաբանի անունը հայ երգիծաբանների համաստեղության շարքում դասելու և հայ գրականության պատմության մեջ նրա կայուն տեղը նշելու առումով:

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Լ.Շ. Հովհաննիսյան*

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Իմ աչքի լուս ըշխարքաւս մին փռւած նամուս ղեյրաթավ Ղարաբաղցիք, իմ յոյսը ծեզ երայ ա, ծեր աբուռը օլմիա թա չուը քցիք, դուդի բուդի պեներու հետաւ կենաք, ծեր վեաթանը մոռանաք, ծեր վառ ուջադին երայ ճիւր ածիք, Ղարաբաղին անըմը կոտրիք...» (1-16):

Իր կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը Կոստանդին Կարապետի Մելիք-Շահնազարյանը ծառայեցրել է մի բարի նպատակի՝ օգտակար լինել մարդկանց, բաժանել իր համերկրացիների տխրությունն ու կսկիծը, կարելվույն չափ սպեղանի լինել նրանց վերքերին և հունորի միջոցով ցույց տալ ճիշտ կենսաձևի ուղի:

Այդ նպատակին հասնելու համար գրական հայերենի, գրաբարի հմուտ գիտակը, ռուսերենին, ֆրանսերենին հիանալի տիրապետող գրողը ընտրեց հայրենի Ղարաբաղի բարբառը և «Ձուռնա-Տմբլա»<sup>1</sup> գրքի առաջաբանում դիմեց հայրենակիցներին. «Իւրան աչքի լույս դարաբաղցոց, մեծին ու պուճուրին փեշքեշ»:

Կոստանդին Մելիք-Շահնազարյանի անունը քչերին է հայտնի (նրա ստեղծագործությունը ցայսօր չի վերահրատարակվել), այնինչ նրա ներդրումը մեծ է և՛ արևելահայ երգիծական գրականության, և՛ ազգագրության ու բանահյուսության, և՛ մանկական գրականության, և՛ բանասիրության, և՛ գյուղատնտեսության մեջ, և՛ մանավանդ «մեր հանրային հիշողությունը արթուն պահելու գործում»:<sup>2</sup>

Կոստանդին Մելիք-Շահնազարյանը ծնվել է 1857թ. ապրիլի 15-ին, Շուշիում, գինեգործ Կարապետ բեկ Մելիք-Շահնազարյանի և Բեգլար Յուզբաշի Շահիջանյանցի դուստր Զասագյուլի ընտանիքում: Սերել է Խաչենի իշխանության Սողք գավառից XVI-XVII դարերի սահմանագլխին Վարանդա տեղափոխված Շահնազարյանների մելիքական տոհմից:

1. Կ. Մելիք-Շահնազարյանի բարբառով գրված ստեղծագործությունները՝ «Ղըլըցե կնանոց Պըմը-փեշակը», «Շօշա Ղալին խերն ու շառը», «Տնգըլբազ» և այլ ֆելիետոններ, ամփոփված են «Ձուռնա-Տմբլա» Ա և Բ ժողովածուներում:

2. Թ. Գայրապետյան, «ԼՂ Գանրապետություն» թերթ, 27.03.1996թ.:

Ընտանիքն ապրում էր «Քյոհնա հանգստի թաղում»: Հինգ տարեկանում գրկվում է հորից: Բազմանդամ ընտանիքը (յոթ երեխա) մնում է հորեղբոր խնամքին: Տարբեր նախակրթարաններում ուսում ստանալուց հետո 12-ամյա Կոստանդինը 1869թ. ընդունվում է Շուշիի թեմական դպրոցի առաջին դասարանը: Այստեղ նա աշակերտում է նշանավոր Մաղաբիյա Պլուզյան վարժապետին, սովորում է Գրիգոր Տեր-Հովհաննիսյանի (Մուրացյան), Առաքել Բաբախանյանի (Լեո), Նիկողայոս Տեր-Ավետիքյանի (Վարդապետ) և այլ ապագա նշանավոր գործիչների հետ: Սերը մայրենիի նկատմամբ նրան կապում է էջմիածնի մատենադարանի հետ: Ուսումնասիրելով սկզբնաղբյուրները՝ ապագա բանասերը ձեռնամուխ է լինում գրաբար-աշխարհաբար և աշխարհաբար-գրաբար բառարաններ կազմելու աշխատանքներին, որն էլ հետագայում՝ 1933թ., հանձնում է Գարեգին Լևոնյանին՝ որպես օգնություն հանրագիտական բառարան կազմողներին:

Ժողովրդական-բարբառային խոսքը մատչելի դարձնելու նպատակով նա հետագայում կազմում է նաև բարբառային բառերի բացատրական բառարան (հավելված Ղարաբաղի լեզվի բառերի):

1880թ. Կ. Մելիք-Շահնազարյանը ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի լսարանական բաժինը: Այդ տարիներին ճեմարանում հայոց լեզու էր դասավանդում Սկրտիչ էմինը: Սակայն նյութական միջոցներ չունենալով՝ ամիսներ անց նա վերադառնում է Դերբենդ և շարունակում մանկավարժական գործունեությունը:

1882թ. Թիֆլիսի ուսուցչական համագումարին Անդրկովկասի տարբեր քաղաքներից և գյուղերից մասնակցում էին երկու հարյուրից ավելի հայ ուսուցիչներ: Համագումարը կազմակերպել էին մանկավարժներ Սեդրակ Մանդինյանը, Առաքել Բահաթրյանը, «Մշակի», «Նոր-դարի», «Արծազանքի» խմբագիրները՝ Գր. Արծրունին, Սպ. Սպանդարյանը, Ա. Հովհաննիսյանը, Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների տեսուչները, Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը և այլ անվանի մանկավարժներ: Լսվում են դասախոսություններ հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ: Իր դասախոսության մեջ Կ. Մելիք-Շահնազարյանը

պատմում է հայոց լեզվի՝ դասավանդման իր մեթոդիկայի մասին (երեք տարում նրա աշակերտուհիները հայոց լեզվից հասել էին հինգերորդ դասարանի պատրաստվածության մակարդակի): Արդունքներն ամփոփելով՝ հանձնաժողովը նշում է, որ օրինակելի է Կ.Մելիք-Շահնազարյանի դասավանդման մեթոդը:

1883թ. Մելիք-Շահնազարյանը խնայած միջոցներով մեկնում է Ֆրանսիա և ընդունվում Մոնպելիեի նշանավոր երկրագործական բարձրագույն դպրոց՝ գյուղատնտեսական գիտելիքներ ստանալու նպատակով, «որի կարիքը անհրաժեշտ է մեզանում»<sup>3</sup>: 1885թ. ավարտելով ուսումը՝ վերադառնում է հայրենիք և իր ստացած գյուղատնտեսական հարուստ գիտելիքները ի սպաս դնում Անդրկովկասում տնտեսության զարգացման գործին:

Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահվող բազմաթիվ նամակները վկայում են, որ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ հաճախակի են դիմել նրան՝ գյուղատնտեսության «զաղտնիքների» մասին տեղեկություններ ստանալու խնդրանքով:

Այդ տարիներին Կ.Մելիք-Շահնազարյանը շարունակում է մամուլում հրատարակել ոչ միայն մասնագիտական հոդվածներ ու թարգմանություններ, այլև ֆելիետոններ:

Նրա թղթակցություններին ընթերցողը սպասում էր անհամբերությամբ: 1911թ. Ձավեն վարդապետը Մելիք-Շահնազարյանին գրում է. «Սիրելի հայրենակից, ով չգիտե, որ մեր սիրելի հայրենիքի, գեղեցիկ Ղարաբաղի շահերը քո սրտին շատ մոտ են: Գիտեմ, որ քո սիրտը ուրախ կբաբախի, եթե ասեմ, որ քո սիրածդ հայրենիքի շահերին ու առաջադիմությանը նվիրված մի հայրեն «Ղարաբաղ» անունով թերթի հրատարակման հիմք են դրել, որի առաջին համարը լույս կտեսնի սեպտեմբերին... Հենց առաջին համարում փայլելու է մեր հայրենիքի հարազատ զավակը և հայ գրականության մեջ յուր պատվավոր տեղը բռնած բոլորի սիրելին, մեր Տմբլաչին...»<sup>4</sup>: Ի պատասխան՝ «Ես հույս

օնիմ, վեր էտ կազեթընը մեր Ղարաբաղին ահալաթը կիրելավ, ընդրախերն ու շառը լուս աշխարհ քցելավ, ըշխարքավս մին շաղ եկած ղարաբաղիք էնքան նամուս կունենան, վեր թողել չըն էտ ասլանբալասոց երգիրը անդեր անտիրական մնա, ղեյրաթ կանին վերը փողավ, վերը բարի գործավ, վերը խորհուրդավ, վեր մին ղուլավ ուսումն ու արվեստը ձեռք ձեռք տված առաջ քյինա, պտկի, ծաղկի, մյուս ղուլավ սեր-պարեկամությունը, մին մինու թասիք քաշելը ամեն տեղ պյուն տինի, մեր էտ շխարքա կտրված երգիրն էլ յուսավեր երգիրներին ջարգն ընկնի, ազատ շունչ քաշի: Ուրան վթանան ղյադարգյուն ընգած Տմբլաչի Խաչան»<sup>5</sup>:

Նա իր եռանդն ու ընդունակությունը անմնացորդ նվիրում է մայր ժողովրդին: Հայաստանի Կենտգործկոմը 1924թ. Կ. Մելիք-Շահնազարյանին շնորհում է Հայաստանի վաստակավոր գյուղատնտեսի կոչում, և, ի պատիվ նրա գիտական-հասարակական գործունեության 40-ամյա հոբելյանի, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում սահմանվում է նրա անվան ուսանողական երկու կրթաթոշակ:

Ակսել Բակունցը գրում է. «Հեռավոր Ձանգեզուրից ընդունեք մեր անկեղծ շնորհավորանքը՝ «Ձառի ղադրը զարգարը կիմանա ...»<sup>6</sup>:

Կոստանդին Մելիք-Շահնազարյանի կյանքը, գրական, մանկավարժական ու հասարակական գործունեությունը հնարավոր չէ առանձնացնել նրա գյուղատնտեսական գործունեությունից. լինելով գյուղատնտես՝ նա անձնվիրաբար ծառայել է իր ժողովրդի ապրուստը թեթևացնելու գործին և հիսուն տարիների իր գործունեության վաստակն է համարել բազմաթիվ մասնագիտական-տնտեսական գրքերն ու գրքույկները, որոնք նշանակալից ավանդ են Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման ասպարեզում: Այդ աշխատություններից են՝ «Ուղեցույց գործնական գինեգործության» (1885թ), «Մշակված և անմշակ ծառի կյանքը, տարրական այգեգործություն» (1886թ), «Ծխախոտը և իր վնասները» (1888թ), «Ոգելից ըմպելիքների վնասակարությունը»

5. Նույն տեղում՝ գ. 312:

6. Նույն տեղում՝ գ. 242:

3. ԳԱԹ, Կ. Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գ. 34:  
4. Նույն տեղում՝ գ. 177:

(1889թ), «Վազի մշակությունը» (1902թ), «Ծխախոտի մշակությունը» (1925թ), «Գործնական ձեռնարկ արևի տակ պտուղներ չորացնելու» (1929թ), «Ինչպես ոչնչացնել մրիկը» (1930թ), «Ինչպես պետք է հավաքել դեղաբույսերը» (1939թ) և այլն:

Հարկ է նշել նաև, որ Կ.Մելիք-Շահնազարյանը մշակել է հայերեն լեզվով գյուղատնտեսական տերմինների, տեխնիկական հասկացությունների հարուստ բառապաշար:

Տարիներ շարունակ Կ.Մելիք-Շահնազարյանը աշխատակցել է Տիգրան Նազարյանի պատկերազարդ «Աղբյուր» ամսագրին: 1917թ. նշելով Կ.Մելիք-Շահնազարյանի գրական-հասարակական գործունեության 35-ամյակը՝ ամսագիրը գրել է. «Ահա «Աղբյուրի» մի կենարար ջինջ ու բյուրեղ ակն, որ 35 տարի անընդհատ ջրել, ոռոգել է մանկական անդաստանը: Հեզ՝ իբրև գարնանաբույր մանուշակ, Մելիք-Շահնազարյանը, գիտնականին հատուկ համեստությամբ, ամբոխային ծափերից ազատ մեր արդի ականավոր մանկական գրողն է...»<sup>7</sup>:

Գրական հայերենով է գրված նրա մանկական ստեղծագործությունների փունջը և կրում է «Փնջիկը» (նվեր մանուկներին) վերնագիրը: Այս գրքի ջերմ ընդունելությունը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ հեղինակը մանկավարժ է և ծանոթ է մանկական հոգեբանությանը:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը, ըստ արժանվույն գնահատելով Կ.Մելիք-Շահնազարյանի գրական վաստակը, 1913թ. նրան ընդունում է ընկերության անդամ:

1940թ. հունվարին երևանում վախճանվում է 83-ամյա գրողը:

Երկար ու ծանր ճանապարհ է անցել Կ.Մելիք-Շահնազարյանը: Լինելով մեծ հոգու տեր անձնավորություն՝ կարողացել է հաղթահարել բոլոր դժվարությունները, մարդ, որ հուճորով է վերաբերվել իր մասին գրվելիք մահախոսականին: Նրա կտակը, գրված անսովոր հուճորով ու մեծահոգությամբ, ամբողջացնում է նրա դիմանկարը.

«Իմ հարգելի ընկերներ, շատ խնդրում եմ, որ իմ մահվան լուրը լսելով, եթե եղանակը ցուրտ է, անձրևային, ճանապարհները ցեխ, իմ դա-

7. «Աղբյուր», 1917թ, մայիս-հունիս, էջ 89:

գաղի ետևից չգաք և դեռ հայիոյեք, թե ինչ բեյվախտ մեռավ, մեզ էլ ցեխի մեջ ձգեց:

...Դե ընկերներ, ես գնացի, դուք մնացեք... Կ.Կ.Մելիք-Շահնազարյան»<sup>8</sup>:

Նրա գործընկեր, հասարակական գործիչ եւ հրատարակիչ Ա.Աթանեսյանը (Սալ-Ման), արժեքավորելով Տմբլաչի Խաչանի վաստակը, գրում է. «Կ.Մելիք-Շահնազարյանը թողել է հարուստ գրական արխիվ, ուր կան տպագրության համար պատրաստ բազմաթիվ աշխատությունների հետ նաև մեծ թվով գրական, մասնագիտական նյութեր, նամակներ, լուրջ ուսումնասիրություններ: Արժեք, որ նրա միջից հանվեին ու լույս ընծայվեին արժեքավորները, որոնք կդառնային լայն մասսաների սեփականությունը»<sup>9</sup>:

Բազմավաստակ գրողը և մանկավարժը ունի տպագրված 60-ից ավելի աշխատություններ և անտիպ 72 գրական, բանասիրական, մանկական գրվածքներ, որոնք, նրա կտակի համաձայն, պահվում են Հայաստանի Եղ. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի Մելիք-Շահնազարյանի ֆոնդում:

Կ.Մելիք-Շահնազարյանը զբաղվել է նաև բանահյուսական-հավաքչական գործունեությամբ: Նրա ժողովրդագիտական ժառանգությունը բազմաժանր ու բազմաբնույթ է՝ հեքիաթներ, զրույցներ, անեծք-օրինանքներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ, բարբառային բառերի բացատրական բառարան, ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութեր և այլն: Բանահյուսական և բանասիրական մեծ արժեք են ներկայացնում Ղարաբաղի բարբառով գրված անտիպ «Ղարաբաղցիների օրհնանքներ և հայիոյանքներ», «Հանելուկներ»՝ «Պնզլիր» ենթավերնագրով, «Շուտասելուկներ», «Առակներ, առածներ», «Տնային բժշկությունը Ղարաբաղում» աշխատությունները: Կ.Մելիք-Շահնազարյանը, վարպետորեն օգտագործելով բանահյուսական տարբեր ժանրերի գեղարվեստական հնարանքները, արտահայտչական, լեզվա-

8. ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գ. 183:

9. «Գրական թերթ» շաբաթաթերթ, երևան, 1940, ք.20:



կան առանձնահատկությունները, կատարում է կենցաղային, հասարակական-քաղաքական կյանքի հրատապ խնդիրներին վերաբերող կարևոր ընդհանրացումներ:

Իր գեղարվեստական ստեղծագործությունների մի մասը Մելիք-Շահնազարյանը գրել է Ղարաբաղի բարբառով: Գրողը նույնպիսի հմտությամբ է օգտվել Ղարաբաղի բարբառի հարուստ բառազանծից, արտահայտչական միջոցներից ու պատկերավորման հնարավորություններից, ինչպես Պարոնյանն ու Օտյանը՝ պոլսահայ բարբառից, Սայաթ-Նովան ու Սունդուկյանը՝ քիֆլիսահայ բարբառից: Եվ եթե մեր ժողովրդին նա քիչ է հայտնի, պատճառն այն է, որ Տմբլաչի հաչանը (նրա գրական մականունը) իր ֆելիետոնները գրում էր Ղարաբաղի բարբառով, որն այնքան էլ մատչելի չէր հայ ընթերցող հասարակայնության բոլոր խավերին, մանավանդ որ առաջին հրատարակությունից հետո այլևս չեն վերահրատարակվել և պահպանվել են բնագրի միայն եզակի օրինակներ:

Մեծ չէ արևելահայ բարբառային գրականությունը. Սայաթ-Նովա՝ Թիֆլիսի բարբառ, Խ.Աբովյան՝ Արարատյան բարբառ, Ռ.Պատկանյան՝ Նոր Նախիջևանի բարբառ, Գ.Սունդուկյան՝ Թիֆլիսի բարբառ, Ագապյան՝ Ղազախի բարբառ, Կոստանդին Մելիք-Շահնազարյան՝ Ղարաբաղի բարբառ:

XIX դարավերջին և XX դարի առաջին տասնամյակում Ղարաբաղի բարբառով հրատարակվել են մի շարք գեղարվեստական գործեր:

Այդ գործերից հիշատակելի են Մ.Բարխուդարյանցի<sup>10</sup> «Բարոյական առածները», «Պըլը-Պուղին», «Արազը տարին կտարի», Տիգրան Նազարյանի «Ճպատըտ քուլատ կտրի», Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլա» երկերը:

Համեմատելով այդ գրվածքների լեզուն և ոճը՝ գալիս ենք այն եզրակացության, որ դրանք բառակազմական և ձևաբանական իրողություններով ներկայացնում են Ղարաբաղի տարբեր շրջանների խոս-

10. Կ.Ղավթյանը նշում է, որ Մ.Բարխուդարյանցի վերոհիշյալ գրվածքների լեզուն իրենց ծայնեղ պայթականներով, օժանդակ բայի ձևերով ոչ «Վարանդու գավառի լեզուն է», ինչպես ասված է «Պըլը-Պուղու» առաջաբանում, ոչ էլ հայրենի գյուղի՝ «խանածախի բուն գործածական լեզուն»,

վածքները և դրանց հնչարտաբերությունը: Հրատարակված վերոհիշյալ երկերի լեզվին գերազանցում է Մելիք-Շահնազարյանի ֆելիետոնների լեզուն՝ հյուսիս, հարուստ բառապաշարով, բառակազմական հետաքրքիր կառույցներով: «Ձուռնա-Տմբլաչի» ֆելիետոնների լեզուն, հեղինակի խոստովանությամբ «ոչ թե Ղարաբաղի այս կամ այն գավառի, օրինակ՝ Վարանդու, Խաչենի, Տիգրակի կամ Սիսիանի լեզուն է, այլ այդ գավառաբարբառների հղկվածն ու կոկվածը, որ 70-80 թթ. գործադրվում էր Շուշի քաղաքում»<sup>11</sup>:

Ինչու է հեղինակը ֆելիետոնների ժողովածուն վերնագրել «Ձուռնա-Տմբլա»: Ձուռնան և տմբլան ժողովրդական նվագարաններ են (նրանց ընդհանրությունը համույթային բնույթի մեջ է), սակայն Տմբլաչի հաչանի ստեղծագործության մեջ Ձուռնա-Տմբլան մի միասնական հնարանք է, որը հրապարակային տոնահանդեսային հնչեղություն է հաղորդում հաչանի գրչին. «Ձուռնիս փչըմըմ, Տմբլիս թխըմ սաղ ըշխարքին իմըցըմ, վեր...» (2-94):

«Դժբախտաբար Տմբլաչի հաչանը մինչև օրս էլ չունեցավ իր հետևորդը: Ոչ ոք չառավ ձեռքը նրա զուռնան ու տմբլան, և երևի թե արդար էր հաչանը, որ իր կտակի մեջ գրում էր. «թա վեր յուրան նման ուստա մարթ չի ճարվի, զուռնան ու տմբլան տինին կացնին տակին, փշրին, վեր հաղի բուղի մարթու ըռեխ չընգնի, յուրան անումը տափավը տա» (5-7):

Իր կենդանության օրոք, տեսնելով, որ Տմբլաչի հաչանը բանահյուսական բնավորություն է ձեռք բերում, Կ.Մելիք-Շահնազարյանը բարբառով գրում է չափածո մի շարք, որից «Հուռումի ողբը հաչանին ճանապարհ դնելուց», «հաչանի քույրը Հուռումն» հատվածները երգվել են: Վերջին հատվածը կենցաղավարում է Արցախում, կատարվում է մշակութային համույթներում: Ահա բնագրից մի հատված.

Ախճի Հուռում թող լյացըտ  
Շուտով կըկյա հաչանը

ինչպես գրված է «Արազը տարին կտարի» աշխատության սկզբում... «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը», էջ 9:

11. Մելիք-Շահնազարյան, Ձուռնա-Տմբլա, Ա հատոր, «երկու տող»:

Բուլ-բուլ փողեր կը պերի,  
Ջուբն ու քիսան լըցըրած:  
Ծափ տո, պար եկ, քէփ ըրա  
Բու ա հինչքան լաց իլիր  
Խաչան, Խաչան կնչելավ...<sup>12</sup>

Խաչանի հանդեպ գոյություն ունեցող համընդհանուր սիրո և հեղինակության օգտին է խոսում այն փաստը, որ Ղարաբաղում ժամանակին երգիծելու բացառիկ շնորհքով օժտված մարդկանց տալիս էին «Տմբլաչի Խաչան» մակդիրը: Տմբլաչի Խաչանի անունը վերածվել է բանահյուսության՝ «Ամեն պոետ Սաստի չի լինի, ամեն տմբլաչի՝ Խաչան» (գ.97):

Այսպիսով՝ արևելահայ գրականության լեզվի պատմության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Կոստանդին Կարապետի Մելիք-Շահնազարյանը: Ցավոք, պետք է նշել, որ հայ լեզվաբանությունը և գրականագիտությունը մինչև այժմ չեն անդրադարձել 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ապրող և ստեղծագործող, հիրավի, հանրագիտարանային մտածողության գիտնականի բազմավաստակ ժառանգության գնահատմանը:

Կոստանդին Մելիք-Շահնազարյանի «Ջուռնա-Տմբլա» ստեղծագործությունը այսօր էլ կարևորվում է մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով: Եվ եթե հարափոփոխ ժամանակների բովով անցած մրա երգիծանքը այսօր էլ կենսունակ է, նշանակում է՝ նա հայ գրականության անդաստանում հաստատել է իր մնայուն տեղը:

<sup>12</sup> Երաժշտության մշակումը՝ Կիմ Առաքելյանի:

## Գ Լ ՈՒ Խ Ի

19-րդ դարավերջի գրական արևելահայերենը և  
Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների  
լեզվական համակարգը

19-րդ դարի առաջին կեսին և այնուհետ ստեղծվեց բարբառային հարուստ գրականություն՝ Խ.Աբովյան, Ռ.Պատկանյան, Գ.Սունդուկյան, Կ.Մելիք-Շահնազարյան: Ինչո՞վ էր պայմանավորված այդ ժամանակաշրջանում բարբառով ստեղծված գրականության այդպիսի առատությունը:

1. Հայ հին գրական լեզուն վաղուց դադարել էր ժողովրդին հասկանալի լինելուց և փակում էր կենդանի լեզվի մուտքը գրականություն: Ժողովրդի կենդանի խոսակցական լեզուն կատարում էր միայն բանավոր հաղորդակցման դեր և հեղեղված էր ավելորդ ու անհարկի օտար բառերով: Մեռած գրաբարը և կենդանի աշխարհաբարը դարձել էին հակադիր գործոններ: Առաջինը ժողովրդին խորթ ու անհասկանալի էր, երկրորդը, փոխըմբռնման միջոց լինելով, տեղ չունեի ո՛չ գրականության մեջ և ո՛չ էլ հասարակական կյանքի այլ բնագավառներում: Խ.Աբովյանը պայքարում էր գրականության մեջ աշխարհաբարի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ:

2. Մյուս գործոնը պայմանավորված էր հայ ժողովրդի պատմական կյանքի հանգամանքներով: Շարունակ ենթակա լինելով հարձակումների սպառնալիքներին՝ ժողովուրդը չի կարողացել առաջ մղել իր մշակույթը, լեզուն, գրականությունը: Ժողովրդի լեզուն հեղեղվել էր իշխող ժողովուրդների լեզուներից փոխանցված ավելորդ բառերով: «Մեր բախտը էնպես ծովել է, որ մարդ իր գլուխը չէր կարում պահիլ, ուր մնա լեզվի դարդը քաշիլ: Էս ա պատճառը, որ մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա» (6-46):

3. Իրենց ստեղծագործությունների լեզվի ընտրության հարցում ժամանակի գրողները երեք հնարավորություն ունեին: Նրանք կարող էին՝

ա) գրաբարը փոխարինել ժամանակի գրական աշխարհաբարով («քաղաքացիական հայերենով»<sup>13</sup>) և դա հետևողականորեն կատարելագործել,

բ) կարող էին ստեղծագործել բարբառով, գ) և կամ ընտրել միջին ուղի՝ ստեղծագործելով բարբառախառն կամ դեպի գրաբարը հակված գրական լեզվով: Այդ շրջանի գրողները հնարավոր երեք ուղղություններն էլ օգտագործել են:

19-րդ դարի արևելահայերենի լեզվական վիճակը բնութագրելիս ակադեմիկոս Գ.Ջահուկյանը նշում է երեք կարգի տարատեսակների առկայությունը՝ ա) հին գրական հայերեն կամ գրաբար, բ) «քաղաքական» կամ քաղաքացիական հայերեն և գ) բարբառներ (7-51):

«Քաղաքացիական հայերենը» նույնացվել է ժողովրդի ընդհանուր լեզվի հետ և բարձրացել գրական լեզվի մակարդակի, որը սովորաբար ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի խոսակցական ընդհանուր լեզվի գրավոր և մշակված վիճակը: Այլ կերպ ասած՝ քաղաքացիական հայերենը արևելահայ իրականության մեջ հանդես է եկել իբրև միջբարբառային հաղորդակցման միջոց՝ գրավոր և բանավոր դրսևորումներով:

Իսկ ինչպիսի՞ն էր 19-րդ դարի 2-րդ կեսի գրական լեզուն, և ի՞նչ վերաբերմունք ունեին գրողները այդ լեզվի նկատմամբ:

19-րդ դարի 80-ական թթ-ին արևելահայ գրական լեզուն ուներ զարգացման որոշակի աստիճան, ուներ բավական միօրինակացված կանոններ, մերժում էր իրեն անհարիր բարբառային, մաս գրաբարյան բառերն ու քերականական ձևերը, մամուլը կրքոտությամբ պաշտպանում էր գրական լեզվի շահերը՝ գործնականում էլ նպաստելով դրա դիրքերի ամրապնդմանը: Մի քանի անգամ մեծացավ հայերեն պարբերականների քանակը, շատացավ ընթերցողների թիվը, աճեց մամուլի նշանակությունը հայ հասարակական կյանքում: Տպագրվում էին նոր պարբերականներ՝ «Արծազանք», «Հորիզոն», «Տարազ», «Նոր-դար», որոնք իրենց որոշակի լեզվական ուղղվածությունն ու համակարգը, իրենց զարգացման համապատասխան միտումներն ու սկզբունքներն

13. Տերմինը առաջին անգամ գործածել է 17-րդ դարի հեղինակ Դովհանես Դոլովը:

ունեին: «1870-90-ական թ.թ.-ին,-գրում է ակադեմիկոս Գ.Ջահուկյանը,- հայ նոր գրական լեզվի հաղթանակը դառնում է ընդհանուր ճանաչման արժանացած փաստ» (8-326):

Այլ էր խնդիրը գեղարվեստական գրականության մեջ: Ակնհայտ էր այն փաստը, որ հնարավոր չէր ամբողջովին այդ լեզվի մակարդակով գեղարվեստական ստեղծագործություն գրել: Գեղարվեստական գրականության մեջ գրաբարին փոխարինելու եկած աշխարհաբարը գրական մշակման տևական ուղի անցած չլինելու պատճառով, բնականաբար, դեռևս անմշակ քերականական կառուցվածք և բավական աղքատիկ բառապաշար ուներ: Ուրեմն, դա պիտի մշակվեր ու հարստացվեր, բայց ինչպե՞ս, ի՞նչ աղբյուրներից նա կարող էր սնվել. այդ շրջանի գրողներին ամենից առաջ հետաքրքրում էր ժողովրդին հասկանալի, պարզ ու մատչելի գրականություն տալու խնդիրը՝ նրան գեղարվեստական գրականության հետ կապելու համար:

19-րդ դարում բարբառները դիտվում էին որպես գրական լեզվի հարստացման աղբյուր և կամ իբրև պատրաստի նյութ գեղարվեստական ստեղծագործության համար: Հայոց լեզվի բազմաթիվ բարբառների հարստությունները դեռևս անհայտ էին մնում:

Ռափայել Պատկանյանը 50-ական թ.թ.-ին գրում էր. «Մենք պետք չէ շինենք լեզու. լեզուն կա, և այնքան պատրաստված է ու կոկված ազգի բերանում, որ առանց դժվարության կարող է մեր գաղափարները հայտնել: Մենք՝ գրողներս, ջանք պիտի դնենք հավաքել ծակոծուկերից ազգային, կենդանի խաղացկուն պարբերությունները...» (11-743):

Ասելիքը կար, ժողովրդական լեզվամիջոցներից օգտվելու ամիրաժեշտությունը մեծ էր, իսկ հնարավորությունը՝ սահմանափակ: Եվ եթե հայ բարբառագիր գրողները՝ Պռոշյանը, Սունդուկյանը, Մելիք-Շահնազարյանը, քիչ են նպաստել գրական լեզվի նորմաների մշակմանն ու կայունացմանը, ապա շատ բան են արել ժողովրդական կենդանի խոսքի հարստության օգտագործման, ոճի ձևավորման, գեղարվեստական գրականության լեզուն յուրահատուկ դարձնելու ուղղությամբ: Եթե ժամանակի գրական աշխարհաբարից դեպի բարբառները կատար-

ված անցման հիմնական նպատակը գրականության լեզվի խնդիրները չլինեին, ինչու պիտի Աբովյանը իր ինքնուրույն ու թարգմանական մանկավարժական գործերում գրական լեզու օգտագործեր, իսկ «Վերք Յայաստանին» գրեր դեպի մայրենի բարբառը հակված խոսակցական լեզվով, Մելիք-Շահնազարյանը իր գյուղատնտեսական, մանկավարժական ու մանկական գրականությունը գրեր գրական լեզվով, իսկ «Ջուռնա-Տմբլայի» ֆելիետոնները՝ Ղարաբաղի բարբառով:

Ինչպես Աբովյանի «Վերքի», այնպես էլ «Ջուռնա-Տմբլայի» լեզվի ընտրությունը պայմանավորված էր գեղարվեստական գրականության լեզուն ավելի հուզական, կենդանի ու ազդեցիկ դարձնելու միտումով:

Գեղարվեստական գրականության մեջ բարբառներին կարևորություն տալը պայմանավորված էր նաև ստեղծագործության նյութով: Սունդուկյանի՝ բարբառով գրելը պայմանավորված էր նրա ընտրած ժանրով. դրամայի ասպարեզում լեզուն կենդանի խոսք է պահանջում: Յանդիսատեսը պետք է դիտի իրական կյանքը՝ կենդանի ժողովրդի ոգուն ու մտածողությանը հարիր պատկերներ, իսկ այդ խնդիրը հնարավոր էր իրագործել ժողովրդին հասկանալի լեզվով՝ բարբառով:

Ընդունված կարծիք է, որ հեզմանքն ու հուժորը իրենց համն ու հոտը պահպանում են կենդանի, հյութալից ու պատկերավոր բարբառներում, քան գրական լեզվի մեջ: Այս հայեցակետով Մելիք-Շահնազարյանի գրական հերոսը՝ Տմբլաչի Խաչանը, պետք է մտածեր ու խոսեր անգրագետ մարդու մտածողությամբ ու լեզվով, նրա անկեղծ ու շիտակ երգիծանքը պետք է հասներ իր նման մարդկանց մտքին ու սրտին, ոգևորեր, հույս ու հավատ ներշնչեր, օգներ ճիշտ վերաբերմունք դրսևորելու տեղի ունեցող հասարակական իրադարձությունների հանդեպ՝ ծաղրելով պակասությունները՝ միաժամանակ կարեկցություն և սեր ցուցաբերեր նրանց հանդեպ, որովհետև իր ղարաբաղցիներին նա հոր պես է սիրում և հոր պես էլ սաստում, խրատում, «ուղիղ ճանապարհի բերում»:

1890-ական թթ. «Նոր-դարը» «Ազդ» խորագրի տակ գրում է. «Կ. Մելիք-Շահնազարյանի «Ղըլըցե կնանոց պընըփեշակը» մի ամփոփ գր-

վածք չէ, որ ընթերցողին որոշ գաղափար տայ Ղարաբաղի կանանց բարոյական կեանքի վերայ, դա միայն մինն է այն բազմաթիվ պատկերներից, որ հարգելի հեղինակը (Մելիք-Շահնազարյան-Ե.Մ.) ընտրեց գլխավորապես իբրև նյութ լեզվի ձևերը, ոճերը, դարձվածքները երևան հանելու: Մյուս աշխատություններում Ղարաբաղի մեր կանանց թերությունների հետ կերևան և նրանց շատ վսեմ ու պայծառ կողմերը և որոնցով լույս կու հանվին այն կոկիկ բառերը, դարձուացքները, որ հետզհետե չքանում են՝ տեղ տալով շինծու՝ իբրև աշխարհիկ լեզուին»<sup>14</sup>:

Գրական լեզվի հետագա զարգացումը հաջորդ սերնդի գրողների կողմից (Թումանյան, Աղայան, Յովհաննիսյան) հաստատվեց այն ճշմարտությամբ, որ գրական-գեղարվեստական լեզվի կարևոր խնդիրն է նաև բարբառի անհատական, գեղարվեստական օգտագործումը, և ինչպես եզրակացնում է Միքայել Նալբանդյանը. «դրանք պիտի ընկնեին ճարտար հեղինակների քուրայի մեջ և այնտեղից դուրս գային նոր որակով» (12-167):

Յետևաբար՝ Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների, մասնավորապես «Ջուռնա-Տմբլա» ժողովածուի լեզվի համակարգը քննելիս, նրա լեզվական օրինաչափությունները բացահայտելիս ամենից առաջ այս ելակետը պետք է ունենալ: Մելիք-Շահնազարյանը «Ջուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուն կարող էր գրել գրական լեզվով, և դա ընթերցողին մատչելի ու հասկանալի կլիներ: Սակայն գրական լեզվի զարգացման աստիճանը թույլ չէր տա, որ երկը պահպաներ հուզական, գեղարվեստական արժանիքները և, բացի այդ, Մելիք-Շահնազարյանը նպատակ ուներ Ղարաբաղի բարբառի այն ժամանակվա վիճակը «հանձնել» բանասերին: Մելիք-Շահնազարյանի գրական հերոսը՝ Տմբլաչի Խաչանը (որի հետ նույնանուն է հեղինակը), գտնում է, որ «ըշխրափառը խրթին, շինծու է» և ուզում է «Էս դեօնըմ իր պըպական լեզվաւ (իմա՝ բարբառով) կիրի, ետնան ըշխարի էլ կը կիրի»(1-17):

14. Նոր-դար, Թիֆլիս, 1889թ., հ. 71:

Բարբառով գրելը ևս մի նպատակ էր հետապնդում. տաղանդավոր երգիծաբանը դեռևս «Ջուռնա-Տմբլայի» առաջին հատորի (1907թ.) առաջաբանում գրել է. «Հրատարակության տալով Ղարաբաղի լեզվով մեր գրած ֆելետոնները, մենք նպատակ ենք ունեցել ի մի ժողովել այն հատ ու կտոր հողվածները, որոնք լույս են տեսել այս ու այն թերթերում, որպեսզի թեթևացրած լինենք Ղարաբաղի լեզվով հետաքրքրվող բանասերների գործը և միևնույն ժամանակ երևան հանած լինենք մեր ընտանեկան նիստ ու կացի և հասարակական գործերի ու գործիչների պակասությունները» (1-1): Հեղինակի այս խոսքից և հողվածներից երևում է, որ Կ.Մելիք Շահնազարյանը իր ֆելիետոնների առաջին և ամենագլխավոր նպատակը համարում է լեզվական խնդիրը և ավստ-սում է, որ «նա (Ղարաբաղի լեզուն) այս ու այն հանգամանքների շնորհիվ հետզհետե մոռացության է տրվում, աղավաղվում և իր նախնական վիճակից հեռանում» (1-1): «Մելիք-Շահնազարյանը, որպես գեղարվեստական ստեղծագործության միջոց ընտրեց ֆելիետոնները, և ֆելիետոնների միջոցով նա իր ստեղծագործության լեզվով (բարբառով-Ե.Մ.) ընթերցանություն և սեր զարթեցրեց բոլոր այն գրագետ ղարաբաղցիների մեջ, որոնց համար մեր խրթին գրական լեզուն անմատչելի է: Տեսել ենք Բալախանում ղարաբաղցիներին, որոնք մեծ հաճույքով կարդում էին սիրելի հանաքչի Խաչանի երգիծանքները»,- գրում է Արսեն Տերտերյանը (գ. 67):

Իր ստեղծագործական կյանքի երկար ճանապարհին Մելիք-Շահնազարյանը մերթ գրել է Ղարաբաղի բարբառով, մերթ անցել գրական լեզվին: Նրա գյուղատնտեսական երկերը, մանկավարժական նոթերն ու հողվածները, մանուկներին նվիրված ստեղծագործությունները գրված են գրական լեզվով: Ահա Մելիք-Շահնազարյանի տպագրված ստեղծագործությունների ժամանակագրական ցանկը. 1878-1879. «Ղըլըցե կնանոց պընըփեշակը» (բարբառ)

1887թ.- «Շօշվա դալին խերն ու շառը» (բարբառ)

1888թ. - «Փշրանք մանուկներին» (գրական)

1889թ. - « Ոգելից ըմպելիների վնասը» (գրական)

1890թ.- « Հայ գյուղացու սև օրը» (գրական)

1898թ.- «Մեղեա» դրամա (գրական)

1898թ.- «Փոքրիկ նուագարան» (գրական)

1900-1901թթ. «Ջուռնա-Տմբլա» (բարբառ)

1908թ.- «Փնջիկ» (նուեր մանուկներին) (գրական)

1929թ.- « Նանագյուլի և կովի կռիվը» (գրական):

Ի պատիվ Մելիք-Շահնազարյանի՝ հարկ է նշել, որ նա «Ջուռնա-Տմբլայում» չդիմեց արդեն համարյա ձևավորված գրական-գեղարվեստական լեզվին, այլ մխրճվեց կենդանի-խոսակցական բարբառի մեջ. այն մեր առջև բացեց իր հազարերանգ ծալքերով և ֆելիետոնի երգիծական ժանրի միջոցով ստեղծեց մի հետաքրքիր ու հիասքանչ երկ, երկ, որի լեզվաբանական, բանահյուսական, գրականագիտական ուսումնասիրությունները նոր բովանդակություն կհաղորդեն Ղարաբաղի բարբառին նվիրված ուսումնասիրություններին, ինչպես նաև արևելահայ լեզվի պատմությանը, և միգուցե Կ.Մելիք-Շահնազարյանը, թեկուզ ուշացունով, հայ գրականության և լեզվաբանության մեջ իր թեպետ համեստ, բայց ուրույն տեղը կունենա: «Ջուռնա-Տմբլան», կարելի է ասել, հուշարձան է Ղարաբաղի բարբառին: Սակայն Մելիք-Շահնազարյանը գիտակցում էր լեզվի գրականացման անհրաժեշտությունը և նշանակությունը, չէր կարող շրջանցել գրական լեզվում իշխող քերականական օրինաչափությունները և իր գրվածքներում նա գնում էր այդ ուղիով՝ աստիճանաբար մաքրելով իր երկերի լեզուն գրաբարյան և բարբառային տարրերից: Դրա վկայությունն է այն հանգամանքը, որ, բացի «Ջուռնա-Տմբլայից», հրատարակված նրա մյուս գործերում գրական լեզուն ներկայացված է համեմատաբար մաքուր վիճակով: Այստեղ տեղ չեն գտել այն բառերը, որոնք կենդանի-խոսակցական լեզվից էին անցած և 19-րդ դարի վերջին գրական լեզվի համար անընդունելի էին. ինչպես օրինակ՝ *արուռ, աղաթ, ազիզ, բաղ, բալքի, բողազ, դաստի, դուշման, դուքան, թամադա, թամուզ, խալխ, հալալ, հարամ, հասրաթ, դայիմ, դասաթ, մեյդան, մուրտառ, յախա, նհախ, պրիշակ, ռազի, փեշակ*, և այլն:

Լեզվական յուրաքանչյուր միավորի ընտրությունը Մելիք-Շահնագարյանի երկերում հիմնականում պայմանավորված էր որոշակի միտումով՝ *ա) նյութի թելադրանքով, բ) ում համար է գրված տվյալ ստեղծագործությունը, գ) ինչ նպատակով, դ) տվյալ ժամանակի գրական լեզվի ընդհանուր մակարդակի հաշվառումով:*

«ԶՈՒՌՆԱ -ՏՄԲԼԱՅԻ» ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ:

Մելիք-Շահնագարյանի «Զուռնա-Տմբլա» երկի հնչյունական համակարգին որոշ չափով անդրադառնալը գտնում ենք անհրաժեշտ, քանի որ այն ներկայացնում է լեզվական համակարգի նվազագույն միավորների առնչակցությունը մի կողմից Ղարաբաղի բարբառին, մյուս կողմից՝ արևելահայ գրական լեզվի հնչյունական համակարգին՝ ըստ այդմ դրսևորելով նաև ոճական արժեք:

Հարկ է նշել, որ «Զուռնա-Տմբլայի» հնչյունական համակարգը ընդհանուր առմամբ համընկնում է Ղարաբաղի բարբառին՝ մասնակի շեղումներով: Բարբառային առանձին հնչյունական երևույթներ հաճախ փոխարինվել են գրական լեզվի համապատասխան իրողություններով: Այս հանգամանքը վկայում է, որ երգիծաբանը լեզվական տվյալ մակարդակում սկսել է հոգ տանել բարբառային որոշ հնչյունական իրողությունների մշակման, տառադարձման և գրականացման ուղղությամբ: Այս նպատակով էլ հեղինակը նյութը ներկայացրել է որոշակի տառադարձության համակարգով՝ փորձելով հաղթահարել բարբառային տառադարձության որոշ դժվարություններ: Չունենալով առաջնալեզվային քմային ձայնավորների գրության համապատասխան միջերհեղինակը դրանք ներկայացրել է երկու տառի օգնությամբ. ինչպես՝ *ա* ձայնավորը և *յա* երկհնչյունը գրանցել է հին հայերենի *եա* երկբարբառի միջով, *ու* ձայնավորը՝ հին հայերենի *իւ* երկբարբառի միջով: Այդ մասին հեղինակը «Զուռնա-Տմբլայի» վերջում տված «Ղարաբաղի լեզուի մի քանի յատկությունները» հավելվածում նշում է. «Ղարաբաղի լեզուի հնչիւններից մի քանիսը մենք երկու-երեք տառերով նշանակեցինք շատ տեղ, իսկական նշանագիրը չունենալու համար, ինչպես՝ ոչ-

վըէչ,որ-վըէր, տես-տըէս, կէս-կըէս, և այլն»(2-237): Հր.Աճառյանը այդ առթիվ իր գոհունակությունն է հայտնել. «Ղարաբաղի բարբառն, ունենալով զանազան յուրահատուկ հնչյուններ, կարելի չէ հայերենի սովորական այբուբենով պատկերացնել: Մելիք-Շահնագարյանը չի թերացել այս յուրահատուկ հնչյունների վերարտադրմամբ բռնել մի այնպիսի ճանապարհ, որ գոհացներ թէ գիտական ճշտություն ընտրող բարբառագետին և թէ չխրտնեցներ հասարակ ընթերցողին» (գ. 256):

«Զուռնա-Տմբլայի» լեզուն արժեքավոր և գնահատելի է այն առումով, որ ներկայացված է բարբառին հարազատ հնչարտասանությամբ և արժեքավոր նյութ է տալիս Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության համար: Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը լավագույնս ներկայացրել է Կ.Դավթյանը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատության մեջ.

Քննարկվող երկի հնչյունական համակարգին անդրադառնալը նպատակ ունի ցույց տալ բարբառային հնչյունական օրինաչափություններից տարբերվող առանձնահատուկ իրողությունները, որոնք երբեմն ոճական երանգ են հաղորդում կերպարների խոսքին: Ինչպես հայտնի է, *Ղարաբաղի բարբառն ունի երկանդամ ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ, հարուստ է քմային բաղաձայններով, ինչպես և փափուկ, թեթև ձայնավորներով, ձայնեղ հպականները հանդիպում են ռնգայիններից հետո և փոխառություններում. (ռուսերենից որոշ փոխառություններում ձայնեղները խլացած են, ինչպես օրինակ՝ պօժկա, կազեթ... ենթադրվում է, որ սրանք ավելի ուշ կատարված փոխառություններ են):*

Հին հայերենի ձայնավորների և երկբարբառների հնչյունափոխության մի շարք երևույթներ արտացոլված են «Զուռնա-Տմբլայի» հնչյունական համակարգում և հիմնականում համընկնում են Ղարաբաղի բարբառի համանման երևույթներին: Սակայն հեղինակը չի սահմանափակվում միայն բարբառային երևույթների արտացոլմամբ, չի հետևում որոշակի նորմաների, այլ գեղարվեստական խոսքի բարեհնչության ներքին զգացումով գործածում է երկձևություններ, երբեմն նաև ե-

ռաձևություններ՝ մերթ նախապատվությունը տալով համընդհանուր ձևերին, մերթ բարբառայիններին, մերթ էլ՝ թե՛ մեկին և թե՛ մյուսին, ինչպես օրինակ՝ *հարսանիք // հրսանէք, երեխա // ըրեխա // րախա // խոխա // ըրախէք*:

Մեր նպատակն է օգնել «Զուռնա-Տմբլա» երկի ապագա ընթերցողներին՝ ճիշտ պատկերացում կազմելու բարբառի հնչյունափոխական որոշ երևույթների մասին: Այսպես օրինակ՝ բարբառին յուրահատուկ է *Աճառյանի օրենքի գործողությամբ կատարված աստիճանական հնչյունափոխությունը՝ ա>ւմ>է, ինչպես՝ բամբակ>պէմբակ, բանջար>պէնջար, գազար>կէզար, շաբաթ>շէթթ, բան>պէն, զարթուն>զէթուն, բարակ>պէրակ* և այլն. (ինչպես նկատվում է բերված օրինակներից, *ա*-ն հնչյունափոխվում է խլացած ձայնեղներից հետո): Այս երևույթը իր արտահայտությունն ունի երկի լեզվում: «Մեր Քեարաուզանց Սառան էլ օխտը *կէզ* իւրան բոյան *պէցրացած*, ճժեր վժերի նհետ հացի ա նստըմ»:

Ղարաբաղի բարբառում, ի տարբերություն գրական լեզվի, շեշտը ընկնում է նախավերջին վանկի վրա, և բարբառային հնչյունափոխական յուրահատկություն է համարվում շեշտանախորդ դիրքի ձայնավորների թուլանալը և փոխվելը: Քննարկվող երկում դիտվում են նման բազմաթիվ իրողություններ՝ *աղաչել>ըղաչել, հավատալ>հըվատալ, քախքախել>ծիծեխել, հարսանիք>հըրսանէք*. Այստեղ նկատելի են զուգաձևություններ. միևնույն բառը հանդիպում է և *ա*-ով, և նրա սղուծով: Այսպես է հենց *հարսանիք* բառը, որը բարբառում համարյա միշտ հնչյունափոխված ձևով է գործածվում, մինչդեռ երկում հանդիպում են և գրական, և բարբառային ձևերը, ինչպես՝ «...Քեաբին փուլին տալիս է *հարսանիք* անում...» (2-181), «Ասըմ ըս քինանք Ամիրջանանց *հրսանէքը* եօր օնինք...» (2-44):

Բազմավանկ բառերի բառասկզբի *ե* ձայնավորի դիմաց բարբառն ունի է, *ի* կամ *ա*, ինչպես՝ *երկար-երկան, երկու-երկու, երեսուն-երեսուն, երես-իրես, երկաթ-արկաթ*: «Զուռնա-Տմբլայուն» հնչյունափոխական այս իրողությունը զուգորդվում է գրական ձևերին. «աբուռն *իրեսին*

մարթեքը...», նաև՝ «մարդու *երես* դուրս գալ» (2-176):

Բառամիջում ևս որոշ բառերում ե-ի դիմաց կա ի ձայնավորը, օրինակ՝ *ցերեկ-ցիրեկ*. Այս փոփոխությունները նկատելի են նաև մի շարք բայերի ըղձական եղանակում, ինչպես՝ *տեսնիմ, մեռնիմ, ընկնիմ, լպգտիմ*, «մեր աչքին իշեղն էլ կտրին» (2-129): (Սրանցում պահպանված են հին հայերենի *ի* խոնարհման օրինաչափությունները՝ *մեռանիմ-անկանիմ*):

Հաճախակի է գործածվում նաև իրեն դերանվան *իւրան* բարբառային ձևը, որը ավելի հարազատ է հին հայերենի *իւրեան* ձևին: «Սօցիալ ա իւրան հմարըմ կնգաթողը, անաբուռը, քիւչըմ ղլմըղալ սարքողը, պիանիցը, էրգեան փափախ տինողը, դիւքան կտրողը, օրը ցիրեկավ մարթ սպանողը...» (2-238):

*ի* ձայնավորը շեշտակիր դիրքում հաճախ սղվում կամ վերածվում է *ը* ձայնավորի: Ինչպես օրինակ՝ *ճիպոտ-ճըպատ*: *Ի*-ն՝ որպես նախդիր, բառակազմության ժամանակ ենթարկվում է հնչյունափոխության՝ *գլուխն ի վեր-կըլխըր, պօրտն ի վեր-պըրտըր, պորտն ի դուրս> պըրտըտիւս*:

*Ու* ձայնավորը, բացի ավանդական հնչյունափոխության համընդհանուր երևույթներից, «Զուռնա-Տմբլայուն» ներկայացված է մի շարք փոփոխություններով.

Բառասկզբի շեշտանախորդ դիրքում ու-ն սղվում է. «Էտ լիւսին պիւնը, *ա* քմմատաղ, *սոււմարանն ա...*» (2-205): «Ինգլիզը իւրան ղոշունը Տրանցվալ *ղարկից* (2-35):

Ուշագրավ է հետևյալ հանգամանքը. միևնույն բարդությունը, երբ հարադրական է, պահպանում է իր բառային իմաստը, *ու* շաղկապը մնում է անփոփոխ, ինչպես՝ *հորն ու մորը, սուս ու փուս, շուն ու կատու, ծարթ ու փշուր, մարթ ու կնէզ* և այլն, իսկ համադրական բարդություններում ու-ն, հայտնվելով շեշտանախորդ վանկում, կորցնում է իր միավորիչ դերը իբրև շաղկապ՝ *հերըններ, սուսըփուս, հրցըփործ, մըրթըկնէզ, ծարթըփշուր, շնըկատու*: «Սուսըփուս անց կացավ» (1-80): «Մեր Ղրամաֆոնը *հըրցըփործանըմ*» (2-193): «Լեմնըստան (իմա-Գերմա-

նիան) *սուս ու փուս* պէներ ա տեսնըմ...» (2-113), «Մին մին հանըմ ա, սուփրին քշտին պպըզած *շան ու կատուին* առաջը քցում (2-114): Պակաս կարևոր չէ մեկ այլ օրինակ, որը, մեր կարծիքով, «Ձուռնա-Տմբլայի» լեզվի գրականացման վկայություն է: Այս հնչյունափոխական իրողությունը յուրահատուկ է Ղարաբաղի բարբառին և, իբրև արտասանական առանձնահատկություն՝ արժանի է ուշադրության: Ղարաբաղի բարբառում ևս, ի թիվս արևելյան մի շարք բարբառների, անկատար դերբայի *ուժ* մասնիկը (այն ծագումով կապում և նույնացնում են ներգոյական հոլովի *ուժ* վերջավորության հետ), գրվում և արտասանվում է ըմ տարբերակով՝ *սարըմ, անդունդքըմ, կարմունջըմ, եսփընջըմը* և ապա՝ *տեսնըմ ա, երգըմ ա, կտորըմ ա*: «...*եշըմա ա տեսնըմ* մըզանայ քոռ, բէյուղուբ, խէլքը դբանին կապած շատ պիծի միծի ազկեր մարթու ջեարգըն ընգալ» (2-189), «Սօր հազարաւեր հայեր *կարտըմ, լօթըթիւնըմ, անտուկ խարջերըմ* ծոխը կտորցրալ ըմ...» (2-187): Երկում նշված ձևերը և՛ անկատար դերբայի, և՛ ներգոյականի հոլովածներում գրվում և արտասանվում են այնպես, ինչպես բարբառում, երբեմն հանդիպում են և գրական լեզվով գրության ձևեր. «...կասիս իւրանց հորանց վէսկի պիիրը *կնդստորումն* ա թաղուած...» (2-189):

Այսպիսով՝ «Ձուռնա-Տմբլայի» հնչյունական համակարգում ձայնավորների հնչյունափոխության համար իբրև ընդհանրական գործոններ դիտվում են բարբառային հնչյունափոխությանը յուրահատուկ օրինաչափություններ՝ *ձայնավորների ներդաշնակությունը* և *նախաշեշտ ձայնավորների սդումը*:

«Ձուռնա-Տմբլայում», ինչպես և հայերենի մի շարք բարբառներում (այդ թվում և Ղարաբաղի) ու ժողովրդախոսակցական լեզվում, գրաբարյան երկբարբառները, հակառակ գրական լեզվի, որտեղ դրանք հիմնականում վերածվել են երկհնչյունների, փոխարինվել են պարզ ձայնավորներով: Այ երկբարբառը շեշտի տակ բառերի մեծ մասում վերածվում է ոչ միայն *է,է-ի*, ինչպես՝ *լայն-լէն, այրվել-էրվել, այս, այր, այն-էս, էդ, էն*. այլև առաջնալեզվային *ա-ի*, որը Մելիք-Շահնազարյանի մոտ գրվում է *եա*-ով. ինչպես՝ *հեար, մեար, լեա*ւ: Այն երբեմն վերած-

վում է *ի* ձայնավորի՝ *հայելի-հիլի, կայծ ու կրակ-կիծիկրակ, վայրի-վիրի*: «Իրըսըհան *հիլի*, տըկըհան *ծիլի*» (1-55) ասացվածքում *հիլի, ծիլի* բառերում դիտվում է *ե* ձայնավորի և առաջին բառում *այ* երկհնչյունի անկում:

Բաղաձայնին նախորդող նախաշեշտ *ա-ը* հնչյունափոխվում է բոլոր դիրքերում, օրինակ՝ *լայն-լընօթուն, երկայն-իրկընօթուն, մայր-մըրոացեղ, այսօր-սօր, այստեղ-ստեղ, այդտեղ-ըտեղ*: «...Հզեր հզեր ջահիլ ջւան տղէք *սօր* բխոված զարգամբէքը քցած...» (2-45): *Այ>ըէ՝ կայ-ռիք>կըռէք, սայր>սըռէ*: «Մեջքին *սըռէր* կոտրից» (2-150): *Այ>իւ՝* գայլ>կիւլ: «*Կիւլին* ճոտերը ստեղէք լըցալըն» (2-200): *Իւ* երկբարբառը -*ութիւն* գոյականակերտ ածանցով կազմված բառերում հնչյունափոխվում է *ու-ի*. գողութիւն-կիղոթուն, քեսսիբոթուն (2-133): *Իւ* երկբարբառը բառամիջում վերածվում է *է-ի՝ ծիւղ-ծէղնը, ալիւր-ալէր*, բառակզբում՝ *իւղ-եղ*: *Եա* երկբարբառը բարբառում տալիս է *ա, է, ի*, ինչպես՝ *համարեա>հըմարէ, ազատեա>ըզադի, ցորեան>ցորեն*. «Ձուռնա-Տմբլայում» այն գործածված է գրաբարածն գրությամբ. «*Կեալուստը* պարի» (1-56):

*Եա* եռաբարբառը շեշտի տակ դարձել է *էվ բարեաւ>պարէվ, եայե*-ռաբարբառի դիմաց բարբառն ունի *է* կամ *ի երկաթեայ>ըրկաթէ*. «Ձուռնա-Տմբլայում» գործածական են երկու ձևերն էլ:

«Ձուռնա-Տմբլայի» բաղաձայնական համակարգում ևս դիտվում են հնչյունական կարևոր հատկանիշներ՝ զուգաբանություններ. Ղարաբաղի բարբառին յուրահատուկ հնչյունափոխական երևույթները՝ *ձայնեղ հպականների խլացումը, խուլ պայթականների շնչեղացումը, բաղաձայններից նախորդող կիսաշփականների տարրալուծումը, առնմանությունը, տարնմանությունը, հավելումը, անկումը, դրափոխությունը* իրենց բնորոշ արտահայտություններով արտացոլված են Մելիք-Շահնազարյանի քննարկվող երկում:

Մի շարք միավանկ բառերում *ռ-ից* առաջ *հ-ի* դիմաց դիտվում է շրթնային շփական *հ-վ* հնչյունափոխությունը՝ *հորթ-վէրթ* (որթ ձևից), վրթատել. ինչպես օրինակ՝ «Պառաւն ասից *վէրթս* կորաւ» (1-128):



Յոր-վեր՝ «Ախպերքը քեանդիրը կտորմ ըն, տղին վերընը թողըմ...» (2-203): Յոտ-վետ՝ «Բաքուայ միլիոններին վետը քթըներաւը ընգավ...» (2-135): «...Քթընեն հշտեղ ասիս վրթվէթըմ, վընընեն հշտեղ ասիս կոխըմ ըն...» (1-129): Կան նաև զուգաձևություններ. երբեմն գործածվում է գրական ձևը:

«Ձուռնա-Տմբլայում» հանդիպում են ոճավորման նպատակով կիրառված հնչյունական այնպիսի երևույթներ, երբ բառասկզբի *հ* բաղաձայնի դիմաց առկա է *խ*, ինչպես օրինակ՝ «...աս խաթուն ինչ լաւ *խալ-վա* կուտեցնէ մըզի, ատոր *խոքուն* դուրբան, սուրփ Կարապետ խոռնց մուրազ *խասցնի*...» (2-56): Հնչյունափոխական այս իրողությունը յուրահատուկ է Մշո բարբառի որոշ խոսվածքների: Մելիք-Շահնազարյանը, մեջբերելով Արևմտյան Հայաստանից եկած փախստականների խոսակցությունը, նրանց բարբառի հնչյունական օրինաչափությամբ ստեղծում է յուրահատուկ ոճավորում:

Սակայն Ղարաբաղի, ինչպես և արևելյան մյուս բարբառներին բնորոշ է հնչյունափոխական այն իրողությունը, երբ բառի կազմում *ղ*-ի առկայության դեպքում բառասկզբի դիրքում *խ*-ն ենթարկվում է տարնմանության օրենքին՝ վերածվելով *հ*-ի, ինչպես՝ *խաղող-հաղող*, *խաղ-հաղ*, *ուղեղ-հըղող*, *խաղաղ-հաղաղ*: Այս մասին վկայում է Յր.Աճառյանը. «Հայերեն *խ* ձայնը բառին սկիզբը՝ *ղ* ձայնեն առաջ՝ տարնմանության օրենքով կղառնա հ» (13-40): «Ռուսներն Կալկազը ըռնելան ետը էտ կիւլերին քէթը առժամանակ *հըղաղուից*» (2-210): Յ.Մուրադյանը գտնում է. «Հնագույն շրջանում *խ*-ն ամենայն հավանականությամբ լծորդվում է *հ*-ի հետ և հաճախ *հ*-ն հանդես է գալիս հին *խ*-ի փոխարեն» (15-252): Այս երևույթը «Ձուռնա-Տմբլայում» առանձնապես տարածված է և հանդիպում է քիչ հաճախականությամբ:

Բաղաձայնական համակարգում ևս դիտվում են լեզվական այնպիսի փաստեր, որոնք հավաստում են «Ձուռնա-Տմբլայի» լեզվի գրականացման միտումը: Գիտենք, որ՝

ա) ինչպես գրական հայերենում, այնպես էլ Ղարաբաղի բարբառում

*ղ*-ին հաջորդող և միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում ձայնեղ բաղաձայնները վերածվում են շնչեղ խուլերի, ինչպես՝ *մարդ>մարթ*, *կարգ>կարթ*, *կարգադրիչ>կարթատրիչ*, *սրբել>սրփել*, *հոգևոր>հոթներ*:

բ) Ղարաբաղի բարբառին բնորոշ է, և «Ձուռնա-Տմբլայի» լեզվի բաղաձայնական համակարգում դիտվում է ոչ բառասկզբնային, հատկապես միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն, ինչպես՝ *գիղըմ ըմ*, *ընգաւ*, *ընգրօթուն*, *սոնգ*, *ընդեղ*, *թընգրօթուն*, *ծնգները*, *բեաղարաք*: Հնչյունական այս երևույթը երբեմն խախտվում է, և գրությունը համապատասխանում է գրական լեզվին. խուլերը բառամիջում մնում են անփոփոխ, ինչպես՝ *պուծախ*, *ընկաւ*, *պատարաք*, *պատկեր*, *կետրոնական*: Երբեմն նույն էջի վրա դիտվում են հնչյունական երկձևություններ՝ միևնույն բառի խուլ և ձայնեղ տարբերակներով՝ *կյանք-գեանք*, *ընկեր-հընգեր*, *պատարաք-բաղարաք* և այլն:

գ) Բարբառի բաղաձայնական համակարգին բնորոշ է նաև բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների խլությունը՝ *կլօխ*, *պէն*, *պրաննէ*, *կումարնէ*, *կիւլն ու կէզանը*, *տաշնակցական*, *տրախտ*:

դ) Խուլ պայթականների դիրքային շնչեղացում՝ *փրիքաշիգնէ*, *ապսպարանք-փասպարք*, *շապիք*:

ե) Քիչ հաճախականությամբ հանդիպում է և կիսաշփականների ձայնեղացում՝ *Բագուցուայ*, *Բագու*:

Ընդհանրապես երկձևությունները մեծ թիվ են կազմում «Ձուռնա-Տմբլայի» լեզվում: Սրանց առկայությունը լեզվի տարբեր մակարդակներում (ոչ միայն հնչյունական, այլև քերականական), մեր կարծիքով, ամենից առաջ լեզվի զարգացման տվյալ փուլի արդյունք է, երբ դեռ գրական լեզուն մշակման գործընթացի մեջ էր և լեզվական առանձին ձևերի համար չկար միօրինակություն:

Ղարաբաղի բարբառը չունի *Ֆ* հնչյունը: Չնայած այս երևույթին՝ երկում հանդիպում են *Ֆ*-ով գործածված մի շարք բառեր, որոնք հիմնա-

կանուն ռուսերենից և թուրքերենից փոխառություններ են: Հեղինակը այստեղ ևս ունի գրության երկձևություններ<sup>15</sup> մերթ ֆու, մերթ փու, ինչպես՝ *Ֆեալշիւի-փալշիվի, ֆեալըվան-փահլևան, ֆանդ-փանդ*:

Ղարաբաղի բարբառում տարածված երևույթ է ձայնավորով սկսվող մի շարք բառերի սկզբում ձայնորդ *յ-ի* հազագի հավելումը՝ *հընգեր, հինջ, հիշքան, հաներ, հըլեվուր, համութ*: «Համ ինքը մին դրադան պըռշկաւ, ըրմացավ, համ իւրան *հներանց* ըրմըցրաւ...» (2-68): «*Հնգեր հրևան* գիտան...» (2-30): «Պէն ա հրցնող կինի թա տոխկն էլ տէսիր, ջողաբ տամ, *համութալի* չի մնամ» (2-13): Երբեմն էլ նկատելի է *հ* հնչյունի կորուստ, հատկապես՝ *հետո, հետկից* բառերում. «...լօխ շոկուլադ խմելան *ետը*՝ մին մինու կոմպլիմինտ ըսելաւ թուբուն կապած՝ յղէ ըն ընգնըմ...» (2-55), «...էսքան կուտրվածքան *ետը* մին ըստուծասէրը տիւս կեայ հային աչքին ըրտասունքը սրբի...» (2-46), *եննան* (այստեղ գործում է նաև տ-ի առնմանական փոփոխությունը *ն, ռ, ռ* ձայնորդներից առաջ), *ետնան*:

*Դրափոխություն*: Հնչյունական այս իրողությունը լայնորեն տարածված է հայերենի բարբառներում: «Զուռնա-Տմբլայում» դիտվում են խոսակցական լեզվին յուրահատուկ դրափոխության երևույթներ: Այս առթիվ Հր.Աճառյանը գրում է. «Հրջունը կամ բաղաձայնների տեղափոխությունը սովորական երևույթ է բոլոր լեզուների մեջ: Օրինակ՝ *ոչխար- ոխճար, աշխատել-ախշատել, կարպետ-կապերտ*: Այս շրջունը կարող է իր ծայրագույն աստիճանին հասնել, երբ ամբողջ բառն է շրջվում» (13-402), օրինակ՝ *լայն-լեն-նել, պուտ-տուպ, դեպի-բիդի*. Գործել է հնչյունների դրափոխության օրենքը. *ր-ի* դրափոխություն՝ *դատարկ-տերտակ*, գործածվում է նաև այդ բառի փոխառյալ ձևը՝ *մաղբուն, կամուրջ-կարմունջ, ւ-ի* դրափոխություն՝ *ականջ-անգուջ-անգանձ-անջուկ-անկուձ, նշանց-շնանց-շիանց, գոքանջ-գէմքուջ, թոնիր-թուրեն, բ-ի* դրափոխություն՝ *դեպի-բիդի, չխ-խճ՝ ոչխար-վէխճար, սխ-խս՝ սխտոր-խստոր, փտ-փթ-թփ՝ փետուր-թեփուռ, շխ-խշ՝ աշխատանք-ըշխադանք, խշ-շխ՝ նախշուն-նաշխուն*:

15. Նույնիսկ եթե բառը պահանջում է փ սկզբնատառ, Տմբլայի խաչանը հաճախ գործածում է ֆ տառը. Ֆանախանին դեօվրան-Փանահ խանի ժամանակներից, ֆեալըվան-փահլևան և այլն:

«...Եաւաշ եաւաշ պցրացի մագի *կարմունջին* կլոխը...» (2-6), «...*Անգուճիտ* քամակը քցի, թա չէ կլխիտ օյին կըկեայ...», «...Լոխ առաջ կտրոկ անին, վեր ընդրա *տերտակ* չնաղան հեալա տիւս չի եկած մէտքը հասկանամ» (2-152): Հեղինակի լեզվում *համար* բառը գործածվում է *մհար* ձևով, որ առաջ է եկել *մ-ի* դրափոխությամբ և *ա-ի* անկումով. «ամմա եկող տարվա *մհար* տափին շատ ապրանք մնաց, կէս կինաւ էլ ուատաս տանող չլինի» (2-128): Դրափոխված որոշ ձևերի կողքին հեղինակը գործածում է նաև նրանց անփոփոխ, գրական ձևերը, ինչպես օրինակ՝ «Այն ժամանակ ինձ *համար* աշունքուայ գլխարկ կառնէիր...» (2-176):

*Անկում և հավելում*: Բարբառային հնչյունական իրողությունների մի մասն էլ կապվում է հնչյունների հավելման և դրա հակառակ երևույթի՝ անկման հետ, որոնք լեզվի փոփոխման ու զարգացման առանձնահատուկ դրսևորումներ են և իրենց առաջացմամբ էլ պայմանավորված են լեզվական արտասանական այս կամ այն օրինաչափությամբ. *դուրս-տիւս-տիւրս, ջրաղաց-ճեղաց, ճանապարհ-ճանապ-ճնապ, դժվար-տժեր, աշխարհ(ք)- աշխարք-աշարք- արշաք-արշա*: «...Վերը բաղ, վերը *ճեղաց*, վերը դիւքան ժամին երայ կտակ ըրալ, իւրան յիշելիք թողալ...» (2-156): «*Ճնապին* վէջ ըրկաթե յղըցու մաշիննէ տեսի, վեր օրըմէջ դոչի ըն տամ, փշուր փշուր ինըմ» (1-60), «Մեր բլըբանը դոխտուրներան խնդրըմ ա, վեր չրու իրեք մանեթ վիզիտի փող չառնին, վէնընէն տանան *տիւս* չտինին, թէկուզ լիա հենգ սիաթավ նչաղին աչքը *ճնապարին* ինի...» (1-53): Սակայն «Զուռնա-Տմբլայում» բազմիցս հանդիպում են նման բառերի ուղիղ, գրական ձևերը. «Իտի ազաբաւ *ճանապարհ* քինալան էս դեօնըմ ազադ ի...» (2-6): «Զարգեարներան էլ խընդրըմ ա, վեր պղնձին միտ վէսկի չխառնին, վէսկուն դադրը մեր ժըղովորթը հեալա *դժվար* կհասկանայ» (2-54): Հնչյունների հավելումը բառիմաստի փոփոխություններ առաջ չի բերում և զուտ բարբառային երևույթ է: Իբրև ածականներ՝ հիմնականում հանդես են գալիս *ն, դ, ռ, բ*, հնչյունները.), *արտասունք, քմքըծէճաղ* (ի տարբերություն գրական լեզվի, պահպանված է *ք* ածանցը), *հըմբարել*: «Հանց քցըքացի ա-

նըմ, վեր *սրտածանք* իլած՝ թողըմ ըն, մին փախչըմ» (2-15), «*ընդրանց* քմակին *ծոնդր* տինող ժողովուրթան Աստված ըզադի մեր երգիրը...» (1-152): «Մին երկու հզեր մանեթու պարտքու տակ կընկնիս ու կզեթիտ փողերը *ըստիւր ընտիւր* ջուբում թոխս կըկեայ» (1-52): *Ըստիւր, ընտիւր (ընդիւր)-սրա*, նրա բառերում ունենք *տ,դ* բաղաձայնների հավելում. *նրանց-ընդրանց*, բառասկզբի *ը*-ի արտասանությունը օրինաչափական երևույթ է *շպ, ստ, սպ, շտ* և հնչյունակապակցություններից առաջ՝ *ըստրանց*, որի նմանությամբ էլ՝ *ընդրանց*:

*Առնմանություն*: Ղարաբաղի բարբառին բնորոշ է նաև առնմանությունը. «Վիսելաս պոռշըս ճաքալ ար, լիզուս դմաղաս կացալ վեններս թիւլացալ, էնա *ճընճըպոմբիի* անըմ, անձանց մերոց տեռնըմ, մին էլ զինքս հւրքեցի..., մին թեահրաւ էն դրաղը ընցի...» (2-7): Ելնելով բառիմաստից՝ կարելի է ենթադրել, որ *ճընճըպոմբի* բառը կրկնավոր բարդություն է՝ *ճոնճ-ճոնճ* արմատով, *ճոճ* բառն է՝ *ը*-ի հավելումով և *ճ*-ի *պ*-ով հնչյունափոխությամբ. *ճոճ(ը)-ճոշ(ը)-ճօճկ*, տարնմանությամբ բառասկզբի *ճ*-ն ազդել է բառավերջի *ճ*-ին և, հեռացնելով իրենից, դարձրել է *շ*, իսկ Ղարաբաղի բարբառում՝ *ժ* կամ *ջ*:

*Ամփոփում*: Բառի առանձին մասերի ու վանկերի հապավման, սղման, կրճատման երևույթները նույնպես գործածվում են «Ձուռնա-Տմբլայում» ինչպես՝ *այսուհետ-աստա, տեր ողորմեա-տըղորմյա, քեզ մատաղ-քըմատաղ, նաև՝ քըմմատաղ, հորեղբայր-ղօրփեր, հորաքույր-աքեր, տեր հայր-ադեր* (ուճի կոչականական ծագում. երկուսն գործածվում է նաև որպես կոչական), *տեառնընդառաջ-դըռդոռանջ, արխալուղ-խլեղ, դալուխ, ըրխալուղ, ինձ տո-ի*:

«Ձուռնա-Տմբլայում» հանդիպող հնչյունական տարբեր փոփոխությունների պատճառով երբեմն բառը բավականաչափ հեռանում ու տարբերվում է իր նախավոր ձևից, ինչպես՝ *վիշապ-օշափ, հորեղբայր-ղօրփեր, ջրհորդան-շուռըթկան*. նման բառերը սկզբնական ձևերի համեմատությամբ կարող են իմաստապես նույնը լինել, կարող են պահել նախկին նշանակություններից մեկը կամ մի քանիսը և կամ հներից

զրկվելով՝ արտահայտել նոր իմաստ<sup>16</sup>: *Հորեղբայր-ղօրփեր, հորաքույր-աքեր, քաջք-քաշկ* բառերի բաղադրիչները պահպանել են իրենց իմաստը: Ալ.Մարգարյանը գտնում է, որ բարբառում այդպիսի կերպարանափոխությունների իմաստային տարբերակումների ճանապարհով առաջ են եկել շատ բառեր, որոնց ծագումը դեռևս ապացուցված չէ<sup>17</sup>:

*Հնչյունների կրկնություն*: Հնչյունների կրկնությունը կամ արտասանական տևողությամբ նրանց ուժեղացումը բնորոշ երևույթ է Ղարաբաղի բարբառում և հաճախ էլ գործածվում է «Ձուռնա-Տմբլայում»: Ինչպես օրինակ՝ *տասսը, մեռռել, դղչչաղ, առռէ* և այլն: Հնչյունական այս իրողությամբ արտահայտվում է իմաստի սաստկացում և առհասարակ խոսողի վերաբերմունքը, նրա հոգեկան վիճակը: Այս իրողությունը գործում է և գրական լեզվում:

«Ձուռնա-Տմբլայի» երկի լեզուն հարուստ է բնածայնական բառերով, բայածներով, որոնց մեջ բաղաձայնների կրկնությունները ավելի ակնհայտ են դարձնում արտասանության տևողությունը. օրինակ՝ *տըզզալ, դըռռալ, ճըռռալ, խըշշալ* և այլն: Անշուշտ, միայն այսքանով չեն սահմանափակվում «Ձուռնա-Տմբլայի» հնչյունական համակարգի արտասանական, հնչյունափոխական իրողությունները, կան նաև հնչյունափոխության բազմաթիվ դեպքեր, որոնք յուրահատուկ են ոչ միայն քննարկվող երկի լեզվին, այլև Ղարաբաղի բարբառին և գրական լեզվին: Կրկնություններից խուսափելու նպատակով այդ կարգի երևույթներին չենք անդրադառնում:

16. Տե՛ս «Իմաստափոխություն» բաժինը, էջ 122:

17. ՊԲՀ, 1971թ., հ. 3, էջ 236:

## Գլուխ II

### Քառապաշարային իրողություններ

4. Մեկիք-Շահնագարյանի ստեղծագործությունների լեզվի ուսումնասիրությունը անհնարին է առանց գրողի օգտագործած քառապաշարի քննության, որովհետև քառապաշարի ոլորտում հեղինակն իր մտքերի հաղորդման նպատակադրմանը համապատասխան լեզվական միջոցների ընտրության ու գործունեության լայն հնարավորություններ ունի:

Մեր կարծիքով՝ ճիշտ չի լինի նույն մոտեցումով ուսումնասիրել գրական լեզվի մշակման շրջանում գրված որևէ երկի քառապաշարը և ժամանակակից գրական լեզվով գրված որևէ ստեղծագործության քառապաշարը, քանի որ մի դեպքում գործ ունենք այնպիսի երկի հետ, որը ստեղծվել է գրական լեզվի մշակման նախաշեմին, երբ որոշակի հստակությամբ դեռևս կանոնավորված չէր գրական լեզվի (բնականաբար և գեղարվեստական գրականության լեզվի) ընդհանուր մակարդակը, իսկ մեկ այլ դեպքում, երբ արդեն մեծ խնդիրներ չկան, և քառապաշարի շերտերի ուսումնասիրությունը տարվում է նրանցից յուրաքանչյուրի գործառույթը բացահայտելու ուղղությամբ:

«Զուռնա-Տմբլան» գրվեց այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ աշխարհաբարն արդեն գրական լեզվի մակարդակի էր բարձրացել, գրական մշակման ենթարկվել, բայց դեռևս գեղարվեստական գրականության մեջ հաղթանակի չէր հասել: Այդ շրջանի գեղարվեստական գրականության լեզվի երկվության մասին էդ. Աղայանը գրում է. «Մի կողմից մեր գեղարվեստական գրականության լեզուն մշակվում է գրական լեզվի օրինաչափություններով, իր մեջ առնելով նաև ժողովրդախոսակցական լեզվի բառ ու բանը, դրանք գրականացնելով կամ անփոփոխ կերպով, մյուս կողմից ստեղծվում է ժողովրդախոսակցական լեզվով գրականություն» (16-133): Այդ պատճառով էլ նույն հեղինակի միևնույն ժամանակաշրջանում գրած տարբեր ստեղծագործություններում մի դեպքում գերակշռում են բարբառային, խոսակցական բառերը, փոխառությունները, մեկ այլ դեպքում՝ գրական լեզվի մշակված

քառապաշարը: «Զուռնա-Տմբլայի» քառապաշարի համեմատ՝ տարբեր է Մեկիք-Շահնագարյանի գեղարվեստական մյուս ստեղծագործությունների քառային կազմը: «Հայ գյուղացու սև օրը», «Փշրանք», «Փնջիկ» մանկական երկերը, բազմաթիվ փոխադրությունները, գյուղատնտեսական երկերը գրված են ժամանակի գրական լեզվով: Նույնիսկ բառօգտագործման առումով որոշակի տարբերություն է դիտվում քննարկվող երկի առանձին հատվածների միջև: Համեմատելով «Զուռնա-Տմբլայի» Ա և Բ հատորների քառային կազմը՝ նկատում ենք, որ Բ հատորը լեզվի գրականացման առավել միտում է դրսևորում. կան նաև գրական լեզվով գրված հատվածներ:

Քառապաշարի արժեքը, սակայն, չի որոշվում բառերի թվաբանական քանակով, այլ նրանց ճիշտ ընտրությամբ ու գործածությամբ, իմաստային նրբությունների հաշվառումով, ինչպես նաև ոճական դերով:

Ըստ բառաշերտերի՝ Մեկիք-Շահնագարյանի բարբառային ստեղծագործությունների քառապաշարի քառային կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Համագործակցական բառեր, կենցաղագրական բառաշերտ, գրական բառեր
2. Բարբառային բառեր
3. Գրաբարյան բառեր, արտահայտություններ
4. Փոխառություններ արևելյան լեզուներից, ռուսերենից
5. Օտարաբանություններ

Համեմատելով այդ բառաշերտերի հարաբերակցությունը՝ տասը պատահական էջի վրա կատարել ենք վիճակագրական քննություն. (Աղյուսակ 1):

Վիճակագրական քննությունից երևում է, որ երկի լեզվի քառապաշարի կեսից ավելին՝ 51.2%-ը կազմում են համագործակցական բառերը, ընդ որում դրա 18%-ը կազմում են գրական բառերը. բարբառային բառաշերտը կազմում է երկում օգտագործած բառերի 30.5%-ը:

Վիճակագրական քննություն  
«Ջուռնա-Տմբլայի» բառապաշարի շերտերի.  
Ըստ Ա հատորի 35, 100, 150, 188, 217 և Բ հատորի 65, 77, 102, 165, 237 պատահական ընտրած էջերի

Բառաշերտեր	35	100	150	188	217	Ընդ. Ա գիրք	65	77	102	165	237	Ընդ. Բ գիրք	Ընդամենը	%
1 Դամագործական բառեր այդ թվում՝ գրական	62	70	69	68	73	342	67	68	60	81	67	343	685	51.2
2 Բարբառային բառեր	6	15	10	12	20	63	8	5	12	15	20	60	123	18
3 Գրաբարյան բառաշերտ	43	30	42	35	37	187	63	26	42	59	32	222	409	30.5
4 Փոխառություններ արեւելյան լեզուներից	-	-	-	1	4	5	5	1	7	1	-	14	19	1.4
5 Փոխառություններ ռուսերենից	21	16	14	18	15	84	18	12	20	4	13	67	151	11
6 Օտարաբանություններ	5	6	12	8	-	31	2	12	12	10	3	39	70	5
<b>Ընդամենը</b>	<b>131</b>	<b>122</b>	<b>140</b>	<b>130</b>	<b>129</b>	<b>652</b>	<b>155</b>	<b>120</b>	<b>142</b>	<b>155</b>	<b>115</b>	<b>687</b>	<b>1339</b>	<b>99.5</b>

Տոկոսային այս հարաբերակցությունը խոսում է այն մասին, որ ինչքան էլ գրողը նպատակ է ունեցել գրել մատչելի և պարզ լեզվով (պըպական լեզվով), այնուամենայնիվ, նա չէր կարող շրջանցել ժամանակի գրական լեզվի օրինաչափությունները և չգործածել այն: Արևելյան լեզուներից փոխառությունները կազմում են երկի ընդհանուր բառապաշարի 11%-ը, իսկ ռուսերենից փոխառությունները՝ 5%-ը: Փոխառությունների այս հարաբերակցությունը ցույց է տալիս, որ արևելյան ժողովուրդների հետ ունեցած շփումների հետևանքով բարբառը ներմուծել է ավելի մեծ քանակությամբ փոխառություններ, իսկ ռուսների հետ հարաբերությունը ավելի նոր ժամանակներին է պատկանում: Այս փաստը վկայում է, որ արևելյան լեզուներից կատարված փոխառությունները գործածության ավելի լայն ոլորտ են ընդգրկում: Ինչպես երևում է քննությունից, գրաբարյան բառաշերտը երկի բառապաշարի 5.4%-ն է կազմում:

Օտարաբանությունները չնչին թիվ են կազմում՝ 0,4%-ը: Քննենք երկի բառապաշարի այս շերտերը:

*Դամագործական բառեր:* «Ջուռնա-Տմբլայի» բառապաշարի հիմնական կորիզը հայերեն ընդհանուր բառաֆոնդի բառեր են, որոնք պատկանում են լեզվի ժողովրդախոսակցական ոլորտին: Սրանք, ի տարբերություն բարբառների, տարածքային նեղ սահմանափակում չունեն, ավելի մոտ են կանգնած գրական լեզվին և մատչելի ու գործածական են տարբեր բարբառներով խոսող մարդկանց համար: Բառերի այս խումբը անվանում և պարզորոշ է դարձնում այնպիսի հասկացություններ, որոնք բնութագրում են այդ ժամանակաշրջանի կյանքը, կենցաղը, ապրելակերպը, հասարակության տարբեր խավերին, նրանց սովորություններն ու հասարակության կողմից ստացած վերաբերմունքը՝ այդ ամենը շղարշված երգիծաբանի քննախույզ հայացքով ու փայլուն գրչով:

«Ջուռնա-Տմբլայում» գործածվում են բառային տարբեր ենթախմբեր, որոնցից գերակշռողը ժողովրդի կյանքը, կենցաղը, բարքերն ու սովորույթները նկարագրող բառեր են, այսպես կոչված՝ կենցաղագ-

րական բառաշերտը, որի զգալի մասը անվանում է ժողովրդի կենցաղին յուրահատուկ առարկաներ և հասկացություններ, դրանք մասամբ նաև փոխառություններ են և չունեն համարժեք հայերեն ձևերը գրական լեզվում, ուստի և անհրաժեշտության դեպքում այդ բառերից շատերը անցնում են գրական լեզվի բառաշերտ՝ գեղարվեստական գրականության միջնորդությամբ:

Այս առումով Մելիք-Շահնազարյանի երկը մի հարուստ շտեմարան է գրական լեզվի բառապաշարի հարստացման և զարգացման համար: «*Հագար* օթ *հարիւր* օխնասուն *թվին* աշունքւա մին թօխալ իւրիւգիւն Շօշւա Ղալին քիւչէքը *մարթավ լիգնար*. վըէրը բզարան ար կեան, վըէրն էլ դիւզերան, վըէրը թօփխանան, վըէրը *ժաման*, եաւաշ *ման կեալը* դըլըցէք *գիղալ չըն*», - այսպես է սկսում իր պատումը Տմբլաչի խաչանը «*Ղըլըցէ կնանոց պընըփեշակը*» պատկերում (1-1):

Կենցաղագրական բառաշերտի գործածությունն ամբողջական է դարձնում շուշեցի կնոջ *արդուզարդի* նկարագիրը, որ հեղինակը տալիս է նկարչի վարպետությամբ: «Ինքը պըրկ-պէրակ, էրզըն-էրզան, աչկերը չախմուր, օնքերը շէգ-շէգ, թօշերը տիւս տեռած, քէթը վէչ մըլէժ, վէչ պուճուր, զառխառա մըթանան կեցին, թեւքերքը սիւրմա կոճակած, վըննէրին բըրըբար ալըշի հալաւը, վէսկի կոճակը կըօլան կախ տւած, կլխին էլ մին եքքա պեռնը կիւտած հուա գիղըմ վըէր քանդիս մին ծեռք եօրդան դեօշակ կտեռնա, տասներկու լըհա մին-մին կեզանուց ըչը-ծախ կակպորած տըկըլէչակ, կըլխը-լէչակ կա. էրկու գըվանքաչափ կլօնդրակնէն էլ չանին տակը-կլօխը տարսած, վէր հինչա իրեսը կօկլէգ ըրէվա, սիպտակ քէթկալը պրանաւը ածած՝ վէր կռքնէն եա պէրանը պէց չինի, հանութ ա, իրեսին էրկու ղօլան հրսանուցը տրած, վէսկի թօփերը դրաղաւը շարած, խամութու նման պալին տփըկոցին դրած կլխին, արալղունն էլ մին քանէ փալաս փլուս կակպորած, վրսըեալը-խը կլխաւը քաշած, քեաշանու զառ չարղաթը դէղաճ ծալած կտարին քցած, մին տօտնան վէսկի չանգեալը կապած, քթկալումը դայիմցրած, կանաչ չընըշկընէն լեաւ դայիմ նալած՝ վէնները քցած, զընգզընգալաւ տօն ա քինըմ...» (1-4): Ի թիվս գեղարվեստական բազմաթիվ արժա-

նիքների՝ «Ձուռնա-Տմբլայի» կարևոր առավելություններից է շուշեցիների կյանքի, կենցաղի, սովորությունների, վարք ու բարքի պատկերավոր նկարագրությունը:

Մեր կարծիքով՝ Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլա» ստեղծագործությունը նշանավոր գործ է նաև այն առումով, որ դա առաջին *գեղարվեստական* ծավալուն երկն է, ուր նկարագրվում է

ա) Ղարաբաղի Շուշի քաղաքի և այլ տարածքների պատմաաշխարհագրական դիրքը: «...Դիզըփաղա սարը Ղարաբաղընը Մռաւ սարան քաշ ա, ամնա քիրսան<sup>18</sup> պեցուր, տակը մին ընկիւնան խանձածորն ա, քեօհնա Թաղլարը, մին ընկիւնան խեժա ծմակը, կիլօխը ելաղնէ, մախմիւր խոտը հզեր ջուռայ ծղկընէ խալի խալիչու նման փռուած, ըստեղավ ընտեղավ չոչըռալի ախբիւրնէն վըրխկալիս մարթու օշը խելքը տանըմ ըն. ամնա հինչ կանիս էտ կանաչ խուտերընը, էտ ամնահական ախբիւրներին կլխին, թորքին օբէքըն վէր եկած ու թորքին տաւարը ընտեղէք ըրած... Սարին կլխան երևում էր հեռվում ըրծաթու նման պսպղին տալիս Քիւռը, Արասխը, մին ընկիւնան Ղփանու, Իրանու չոլերն ու սարերը, Քիրսը, ծեօր, ծմակ, շէներ, արտեր...» (1-107):

բ) Սովորույթները, լեզուն, ընդգծվում հայ նահապետական գյուղացու կերպարը՝ իր հուճորով ու բարությամբ, աշխատասիրությամբ: «Մզանըմ մին աղաթ կայ, վէր քշերաւ անխօս եր կըկենան էրկու քար եօր օնին մինը հարամ տեղա, մէկալը հալալ ու դարաղամին հիւրթին կաղնին, քարերը իւրիւր քսին ասին. Աղամ-Աղամ՝ լիւն աղամ, վէչիլն աղամ,... հինչ փիս պէներ կայ, լոխ էլ աղըմ ըն, վէր տարին բախտաւէր ինի: Ես էլ էտ պըպական աղաթը պիելաւ էտ օրը էս աղամն արի: Աղամ-աղամ՝ Ղալին տղամարդոց բմբասանքն աղամ, զրպարտութիւնն աղամ, սուտ խօսելն աղամ, փող օտելն աղամ, մին-մինու վըննատակ քանդելն աղամ, քար կտրած խղճմտանքնէն աղամ, խաթրիւչիւն մինին տոն շինելը, մէկալին քանդելն աղամ, սրտներին նախանձն աղամ, կարտի տալն աղամ, օրը չրու իւրիւգիւնը թոփխանընը պարապ

18. Բնագիրը մեջբերված է անփոփոխ: Հասուկ անվան փոքրատառ գրությունը հնարավոր է՝ տպագրական վրիպակ լինի: Նման անկանոնությունները երկում հաճախ են հանդիպում:

սարապ կաղնեւն աղամ, աղամ և աղամ...» (1-80):

գ) Բնակիչների կենցաղը, նրանց ցավերն ու հոգսերը, ուրախությունն ու վիշտը: Մերկացվում են հասարակական կյանքում բույն դրած կեղծիքը, խաբեությունը, չարախոսությունը, շահի համար սրբություններ ոտնակոխելը, և այդ ամենը ներկայացվում է մերթ երգիծանքով, մերթ թեթև հուճոքով, բայց միշտ էլ վեր հանելով վեհը, մարդկայինը, գեղեցիկը, որին ծառայել է Մելիք-Շահնագարյանը իր ողջ գիտակցական կյանքում:

«Ձուռնա-Տմբլայի» կառուցվածքին բնորոշ է, Աբովյանի «Վերքի» նման, հեղինակային միջամտությունը, հեղինակային գնահատական տալը այս կամ այն երևույթին, կարծես հեղինակը երբեմն քաշում է վարագույրը և ցուցադրում կատարվող իրադարձությունները. դա և՛ կենցաղային տեսարան է, և՛ հարսանիքի, և՛ կանանց արդուզարդի նկարագրություն, ընտանեկան նիստ ու կացի ու տնեցիների հարաբերություններ են, հավատալիքներ ու սովորություններ:

Շուշեցուց կենցաղի ոչ մի մանրամասն չի վրիպում Մելիք-Շահնագարյանի տեսադաշտից: Նա աշխատում է ընթերցողին ներկայացնել հայ ժողովրդի կենցաղում արմատավորված ամեն մի ազգային *սովորույթ ու ծես*. Շատ բնորոշ է ժողովրդի՝ *փալչուն* հավատալու հետևյալ դրվագը՝ «...չին դալընը լոխչունց կլօխ, մարթի դիարդի դեարման անողը փալչին ու ջինդարնըն, վեր համ իժանըն պրծըցնըն, համ էլ ըսկի փիս պեն չըն ասըն. վեր մարթի սերտ կոտրվի, էս ջինդարն էլ հիմջ փեանդ. վեր օնար, ըստեղ ար օզըն պընըցնի. առաջ մին սեւ հաւ մորթել տըլաւ, արնաւը ծուին երա խզմզորից տըլաւ վեր օջաղընը թաղին, մին քշկոռ շինից մէջը ասեղներ խրից՝ տըլաւ վեր կըլխըտակի պերցընը տնին, մին երկան թողթ շինից, երան կիրոտից աչուծախ, խչըփարթ, տըլաւ վեր ջրին մեջը քցին խմըցնին, ետման ջամը տրաւ ըռաչին, սըտընոցը կանչից, վերին բախշից, վերին էլ փռնից դարդուին մեջը քցից, մումաւ ռէխը պենդ կալաւ, վեր տիւս չի կեան փախչին, էն էլ տըլաւ վեր տանին հանգիստարանընը մին մռալի կլխի տակի թաղին...» (1-12):

Նկարագրությունների ժամանակ Մելիք-Շահնագարյանը հաճախ է

դիմում նմանաձայնական բառերի կամ բնաձայնությունների, որոնք «Ձուռնա-Տմբլայում» բավականին հաճախված են և Մելիք-Շահնագարյանի ոճի յուրահատուկ բառային միավորներ են:

Նմանաձայնություններից «Ձուռնա-Տմբլայում» ավելի հաճախ են գործածված արմատի կրկնությամբ կազմված բնաձայնական բայերը, որոնք բնորոշ են լեզվի խոսակցական ոլորտին և խոսքն ավելի պատկերավոր ու արտահայտիչ են դարձնում՝ հատկապես բնության երևույթների, տարբեր իրավիճակների ու պահերի նկարագրության ժամանակ: Ահա՝ «Իստի չգիդալըս տիրած՝ մին հովուր տէս ու տէն ընգի, ամանէքը *չրըխկչրըխկցրի*, սմաւարը թափ տուի, եանի թէ օզըն ըմ թեադարիք տեսնամ...» (2-3): Երկում գործածական են նաև *ծխծխւպըն*, *բշբշաց*, *վրթվրթալ*, *սրթսրթալ* և այլ նմանաձայնական բառեր:

Ինչքան էլ «Ձուռնա-Տմբլան» հագեցած է ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտով, արևելյան փոխառություններով, այնուամենայնիվ, երկի բառապաշարի զգալի մասը կազմում են համագրական բառերը: Սրանք, եղ.Աղայանի բնորոշմամբ, այն բառերն են, որոնք գործ են ածվել մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում՝ որպես գրական բառեր, և որոշ քանակով անցել են նաև ժողովրդախոսակցական լեզվին, մասամբ նաև բարբառներից՝ իբրև գրական փոխառություններ, իսկ նոր գրական լեզվում դրանք գործածվում են մեծ մասամբ ածանցմամբ և բարդություններում:

Ահա մի շարք գրական բառեր ու արտահայտություններ, որոնց մեծագույն մասը և՛ բարբառներում, և՛ ժողովրդախոսակցական բառաշերտում չի հանդիպում. *համբարծվել*, *անմահական*, *մտքի սնունդ*, *խեղկատակ*, *խղճի վերջին նշույլ*, *գրականական թմրության մեջ խորասուզված պարոն*, *լաւութիւն*, *աչեր*, *պաճուճանքնէ*, *հանգույց*, *պայծառութիւն*, *կարգադրութիւն*, *բարեկամութիւն*, *լիւսաւորութիւն*, *ազատամիտ*, *շրջադարձութիւն*, *ուժասպառ ասպետ*, *պաշարասպառ պարոն*, *դոնքիշոտ*, *պաժանորթ*, *որդեկորույս*, *մայրակորույս*, *կատարելապես*, *պարտաճանաչ*, *ուղերծ*, *շղթաթախ լիւս*, *մտքի ու գիտության լիւս*, *հողաթափ*, *հակառակաթոռ նախագահ*, *շռայլ*, *խրթին*, *հողվածներ*, *հրա-*

տարակշռութիւն և այլն:

«Ձուռնա-Տմբլայում» կան հատվածներ, որոնք համարյա ամբողջովին գրական լեզվով են գրված, ինչպես օրինակ՝ «Գիտես, հոգեակս, ես ուզում եմ ճիշտն իմանալ, քո սերը անկեղծ է դեպի ինձ, թե՞ ոչ: Ես վախենում եմ, որ պսակուելուց յետոյ, մի օր թողնես ինձ ու մեր ապագայ երեխաներին և նոր սիրոյ ետևից ընկնես, պատճառաբանելով, որ քո սերն անկեղծ չէ եղել» (2-177):

Մշակված, կանոնավոր ու համեմատաբար գրական լեզվով են գրված երկի չափածո հատվածները, որոնց զգալի մասը ժողովրդական բանահյուսության կամ նրա նմանողությամբ գրված նմուշներ են, հիմնականում՝ առակներ:

Ուսումնասիրելով Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուի բառամթերքը, գտնում ենք, որ, ինչքան էլ հեղինակը ջանացել է իր խոսքը պարզ ու մատչելի դարձնել ընթերցող հանրությանը, ձգտել է օգտագործել Ղարաբաղի բարբառի «ընտիր ու ճոխ դարձուածները», այնուամենայնիվ, չի կարելի զուտ բարբառային գրվածք համարել այսպիսի մի ստեղծագործություն, որում կան մշակված, կանոնարկված, գրական լեզվի համակարգ ունեցող հատվածներ:

Հետևաբար՝ «Ձուռնա-Տմբլան» մի երկ է, որի մեջ Մելիք-Շահնազարյանը ժողովրդախոսակցական լեզվի և բարբառի հետ գործածել է նաև գրական լեզվի բառեր ու արտահայտություններ, առավել ևս՝ քերականական միջոցներ ու ձևեր, իսկ որոշ դեպքերում էլ նա զուգահեռաբար դիմել է և՛ գրական, և՛ խոսակցական ու բարբառային ձևերին:

*Բարբառային բառաշերտ:* «Ձուռնա-Տմբլայի» բառապաշարի հաջորդ շերտն են կազմում բարբառային բառերը, որոնք երկում գործածված են և՛ անվանողական, և՛ ոճական տարբեր գործառույթներով: Ղարաբաղի բարբառն ունի հարուստ բառապաշար, որը, ցավոք, դեռևս ուսումնասիրված չէ, և այդ հանգամանքը բավականին դժվարացնում է Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարի բարբառային բառաշերտի ուսումնասիրությունը: Երկում գրողն օգտագոր-

ծել է այն բառերն ու արտահայտությունները, որոնք գործածական են ժողովրդի խոսակցական լեզվում: Սա Մելիք-Շահնազարյանի՝ քերականական ձևերի և բառապաշարի ընտրության առաջին և հիմնական սկզբունքն է՝ առանց հաշվի առնելու գրական լեզվի մշակման ու կանոնավորման անհրաժեշտությունը: Շատ լավ գիտակցելով, որ յուրաքանչյուր լեզվի բառապաշարի զարգացման հիմքը բարբառներն են, որ նրանք են գրական լեզվին շունչ ու կենդանություն մատակարարում, գրողն այնպես ստեղծագործաբար է օգտագործել ժողովրդական խոսքի այդ անսպառ շտեմարանը, որ, թերթելով Սահակ Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912թ.) և Հր.Աճառյանի «Հայերեն գավառական բառարանները» (1913թ.), նկատում ենք, որ Ղարաբաղի հարուստ բառագանձից բերված օրինակների մեծ մասը Կ.Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլա» Ա և Բ ժողովածուներից են:

Կ.Մելիք-Շահնազարյանը առաջին հայ գրողն էր, որ իր ֆելիետոնների համար ընտրեց Ղարաբաղի ճոխ, կենդանի ու պատկերավոր բարբառը, սկսած 1878թ., երբ սկսեց գրել «Ղըլըցե կնանոց պընըփեշակը», հետո՝ «Տնգլբազ», և ապա՝ «Ձուռնա-Տմբլայի» շարքը, որոնք պարբերաբար լույս են տեսել «Նոր-դարում», ապա՝ առանձին գրքով:

Վարպետ գրողը իր գրքի մեջ որպես գրական կերպար է ընտրել հասարակ մի գյուղացու՝ Տմբլաչի-խաչան անունով, որը Ղարաբաղի հայ գյուղերից մեկից եկել էր Շուշի (հիշենք, որ Խ.Աբովյանից հետո մեր գրականության մեջ ընդունված էր հասարակ գյուղացուն գրական կերպար դարձնելը) և որպես թմբկահար, Ղուռնաչի, մտել տուն առ տուն, ուր կար ուրախություն, նշանդրեք ու հարսանիք: Նահապետական գյուղացու սուր աչքը տեսնում է հասարակական կյանքում տեղի ունեցող պախարակելի երևույթները և այդ ամենը երգիծելով՝ հունորով մատուցում է որոշակի հնարներով՝ *զուռնա, տմբլա, պարովակիր, արլալենի, թլորամ, դրամաֆոն, տիլիփոն*, որոնց միջոցով իր ժողովրդի «ահալաթն» (վիճակը) է հասցնում աշխարհին՝ այդ ընթացքում ծախված բացելով մայրենի լեզվի հարուստ շերտերը:

Մելիք-Շահնազարյանը միտումնաբար օգտագործել է Ղարաբաղի



բարբառի գրեթե ամբողջ բառաշերտը՝ գիտակցելով, որ ժամանակի ընթացքում քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հետևանքով հնարավոր է դրանց մի մասի կորուստը (ինչպես և է), որպեսզի, ինչպես ինքն է նշում, ապագա բանասերը կարողանա ուսումնասիրել և ներկայացնել աշխարհի մի փոքրիկ անկյունում գտնվող այս չքնաղ լեռնաշխարհի անչափ հարուստ բառագանձը: Հետևաբար, նրա նպատակն է եղել կորստից փրկել ժողովրդի ստեղծած, նրա լեզվի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող բարբառը:

Սակայն հայ լեզվաբանության մեջ, թերևս կարելի է ասել, որ վերջնական սահմանագծված չէ բարբառային բառերի ցանկը: Իսկ թե որոնք են բարբառային բառերը, ըստ էդ. Աղայանի՝ «Այն բոլոր բառերը, որոնք չեն գործածվել գրաբարում, միջին հայերենում, վաղ աշխարհաբարում, հետևաբար և չեն կարող դիտվել որպես ժողովրդախոսակցական բառ և հատկացվել աշխարհաբարյան շերտին: Այս բնութագրությունը ենթադրում է աշխարհաբար գրական լեզու թափանցած բառերի գործածության սահմանափակություն, այսինքն՝ այդ բառերի պատկանելությունը մեկ կամ մի քանի բարբառների: Քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե հայերեն բառերի բարբառային տարբերակներին (*հեար, օխտը, արին* և այլն), և ոչ էլ այն կարգի բառերին, որոնք ընդհանուր են բարբառների մեծագույն մասին, հետևաբար, նաև ժողովրդախոսակցական լեզվին (*ծղել, պռոշ, յար, չոբան*), ապա այս կարգին պատկանող բառերի թիվը փոքրանում է, և դրանց որոշումն էլ դժվարանում» (16-128):

Փորձենք գրողի լեզվում գործածված բարբառային բառաշերտի ուսումնասիրությունը պայմանականորեն համակարգել հետևյալ ենթաշերտերով.

ա) *Բարբառում զգալի հաճախականություն ունեցող բառերի և հարադրական բայերի իմաստաբանական և ծագումնաբանական վերլուծություն.*

բ) *Գրաբարում չավանդված արմատական բառեր.*

գ) *Բարբառային կերպարանափոխություններ կրած բառեր.*

դ) *«Սխալ» գրչությունները բարբառում.*

ե) *Բարբառում անկախ գործածություն չունեցող արմատներ.*

զ) *Բառեր, որոնք բառարաններում ունեն թերի կամ սխալ բացատրություններ, կամ էլ բոլորովին չունեն.*

ա) Տմբլաչի Խաչանի ֆելիետոններում օգտագործած բարբառային մի շարք բառերի իմաստները հեշտությամբ են հասկացվում բառակազմական բաղադրիչների շնորհիվ՝ չնայած նրանց՝ հնչյունական և բառակազմական մի շարք փոփոխությունների ենթարկվելուն. «Յունվարի վեցին բլբբանիս թիսեցի, *գիւզգիւօնը* եր իլավ, թա Ղալին լուսաւերուած շլօլին ըխճըկորանցը մհար *զոզարդար* ըն սարբալ...» (1-59): *Ձոզարդար* բառը հանդիպում է և *ժոզարդար* ձևով, ակադեմիական հրատարակության բացատրական բառարանում *Ծառզարդար* բառահոդվածի 3-րդ իմաստով բացատրվում է՝ *զատիկի նախորդ շաբաթվա տոնը, երբ նոր բողբոջած ծառաճյուղերը օրհնում են, ծառզարդար, տոն:* Գավառական բառարանում բացատրվում է՝ *ծաղկազարդ*, իսկ Մելիք-Շահնազարյանը մեկնաբանում է՝ *ծաղկազարդ, տօնածառ:* Վերջին իմաստը համապատասխանում է բնագրում արտահայտված իմաստին՝ *աղջիկների համար տոնածառ են սարքել:*

*Գիւզգիւօն* բառը Գավառական բառարանում չի բացատրվում, իսկ Ս.Ամատունու բառարանում *գուալ, զըլգուալ* արմատի տակ բացատրվում է *դղրդիլ, թնդալ* իմաստներով: Արմատի կրկնությամբ կազմված բառ է:

Ղարաբաղի բարբառում և «Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում հաճախակի է գործածված *թորը, թոռնը* բառը՝ *ու՞ր, դեպի ու՞ր, դեպի ո՞ր կողմը, որտե՞ղ* իմաստներով: «Խաչան *թո՞րնըս քինըմ...*» (2-23):

Ըստ Հր.Աճառյանի՝ *թոր* // *թոռ* բառը սերում է գրաբարյան *ընդոր* ձևից. «ընդ նախդիրը, կորցնելով իր ռնգային մասը՝ դոր, և Ղարաբաղի բարբառում նախաձայն *ռ*-ի պատճառով թավանալով՝ *թօռն-ու՞ր* ձևն է տալիս»<sup>19</sup>:

19. Հր.Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էր., 1977, էջ 1040:

Ա.Պողոսյանը այն բխեցնում է *դեպի+ ուր* բառերից, որում *դեպի* բառի *դ*-ն, միանալով *ուր* բառին, կազմում է թոր // թօռն (17-42): Լեզվաբան Ալ.Մարգարյանը գտնում է, որ *թոր-թօռն* բառը ծագել է *ընդ ուր* կապակցությունից, որը *ընդ+ ուր-դուր-տ+հօր-տհօր-թոր* (թօռնը) ձևափոխություններով տալիս է քննարկվող տարբերակը:<sup>20</sup> Ըստ Կ.Դավթյանի՝ Ղարաբաղի բարբառում *դոր* բառի նախածայնը *օ* չի դառնում, իսկ *ուր* բառինը տալիս է *հօր* ձևը (18-447):

Տմբլաչի Խաչանի բառապաշարում տարբեր խոսքային իրադրություններում կրկնվում է *տունդի* բառը: «ժարկոյան մնացած հաւին չափարենն ու *տունդիքը* պիրըն թեաւագա անըն»: *Տունդի* բառը Գավառական բառարանում, այնուհետև Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանում» բացատրվում է որպես նստատեղի, երաստան: Ամատունու բառարանում՝ *տունտ-նստոց տեղին*: Նշված բառարաններում բառի ծագումը չի բացատրվում: Ալ. Մարգարյանի ուսումնասիրությամբ՝ այս բառը ծագում է գրաբարյան *տուտն* բառից, որ նշանակում է 1. *վերջք, ծայր երկայնեալ ի յետին մասունս իրաց և կենդանեաց*, 2. *զգեստի ծայր, վերջ, քղանցք*:<sup>21</sup> Նստատեղը ևս մարմնի ծայրամաս է և գրաբարյան *տուտն* ու բարբառային *տունդի* բառերն իմաստով իրարից չեն տարբերվում և երկրորդ՝ որոշակի է և հնչյունական ընդհանրությունը: Գրաբարյան *տուտն (ծայր)* դառնում է *տունդի տուտն-տօտնը-տօնդը+ի* ածանց: Գիտենք, որ Ղարաբաղի բարբառի բնորոշ է ն ձայնորդին հաջորդող *տ-ի դ-ի* փոխարկվելը, ինչպես օրինակ՝ *սանտըր-սանդըր, ընտրել- հընդրել, տունտ-տունդի*:

«Բարբառային բառերի մեկնություններ» հոդվածում Ալ.Մարգարյանը անդրադարձել է Ղարաբաղի բարբառում գործուն մի բառի և՝ *կըզըրվիլ* բառին, որը գործածության մեծ հաճախականություն ունի Տմբլաչի Խաչանի բառապաշարում: Այս բառը այսօր էլ շատ գործածակալ է ղարաբաղցիների շուրթերին՝ մեծից մինչև փոքրը: «Հաւերը՝ էն առաջուայ արթար հաւերը, վեր կլխըներընը ծտու մչանք խելք չօմին ու մի կլտըն ճիւրը օխտը հետ բուղագին հոփ տալաւ, երգինքին ըղաչանք

20. Ալ.Մարգարյան, ՊԲԳ, 1973, հ. 4, էջ 132:

21. Ալ.Մարգարյան, ՊԲԳ, 1971, հ. 3, էջ 102:

պղատանք ընելաւ ին խմւն, ընդրանք էլ մեզ պոզ ըն անըն, վրցակին դագին, միսիրհաւին ցիետ վենըն մեկնըն հերիք չի, հեալա փորը կոշտ վախտը տեսնըն ըս կեամ ըն թա մարթու աչքին էն լիւսն էլ հանին: Քիշ ըս տամ, էն դրադաւն ըն կեամ, *կզըրվըմ* ըս դահի բեթար արսզոթուն ըն անըն, ըստեղ ծրտըն, ընդեղ ծրտըն, վերչն էլ լոք տամ եր ինըն կտրին կլխին վրցակու նման ծուղրուղու կանչըն» (1-184): Ինչպես գիտենք, *կզըրվել* բառը Ղարաբաղի բարբառում նշանակում է *բարկանալ, զայրանալ*: Հր.Աճառյանը գրում է. «Ղարաբաղում կա նաև կզնուիլ «բարկանալ», որ թվի թե ծագում է հին «գագանիլ» բարկանալ, կատաղիլ բայից», այնուհետև մերժելով այս բացատրությունը, նա բառը բաղդատում է կծնուիլ (բարկանալ) ձևի հետ և դիտում իբրև դրա մի տարատեսակը»:<sup>22</sup>

Ալ.Մարգարյանի համոզմամբ՝ *կզնվիլ* բառը ծագում է գրաբարի *կիզանել* բայի կիզանիլ (այրվել, բորբոքվել) կրավորական ձևից, որ պահպանվել է մի խումբ՝ իրար սահմանամերձ բարբառներում՝ չկրելով հնչյունական ու իմաստային մեծ փոփոխություններ. ինչպես՝ *մտանել-մըդնել-մըննել, կիզանիլ-կիզանուիլ-կիզնուիլ-կըզըրվիլ-կըզըրվել*, այս օրինակաչափական հնչյունական փոփոխությունները կրելով, բարբառում պահպանվել է միայն երկրորդական, փոխաբերական նշանակությունը՝ *բարկանալ, զայրանալ*:<sup>23</sup>

Իր ստեղծագործությունների մեջ փորձելով ընթերցողի, հասարակության ուշադրությունը բևեռել հասարակական, սոցիալական, քաղաքական կյանքում տեղի ունեցող մերժելի երևույթների վրա՝ «*Ծիծաղում եմ, որ չլացեմ*» երգիծաբանության այս սկզբունքին հավատարիմ մնալով՝ երգիծաբան գրողը օգտագործում է ժողովրդական մտածողությանը հարիր դարձվածներ ու հարադրական կազմություններ, որոնց մի մասի բացատրությունը, ծագումը կփորձենք ներկայացնել: Նշենք հարադրական կազմություններից մի քանիսը՝ *աշ տալ, արշա ընգնել, այնընը քցել, մտքին դօնը ընգնել, բշտի բշտի անել, խնոթուն առնել*,

22. Հր.Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էր, 1971, էջ 498:

23. Ալ.Մարգարյան, ՊԲԳ, 1973, հ. 4, էջ 134:

բրչոցն ընգնել, հիւրթմիշ լինել, մեչկին հոռը կոտորել, ճընճըպոմբի անել, գիւիր պերել, գիրաւ տալ, իստը նի կենալ և այլն:

Դիտարկենք այս հարադրական բայերից մի քանիսը:

*Արշա ընգնել*- Բա իտի պէնը *արշա ընգնելան* ետը էլ մէր համքեարընը հեալ կմնայ, մնըմա եա քինի ծիրն ընգնի, եա իլած չիլածը տայ դրամաֆոնու» (2-163):

Հայոց լեզվի բացատրական բառարանում *արշա* բարբառային բառի դիմաց նշվում է՝ *միայն ընկնել բայի հետ է գործածվում*՝ կազմելով հարադրություն՝ *լույս ընկնել-հայտնվել, ծնվել, մեծանալ, ածել* իմաստներով: Գավառական բառարանում *արշա ընգնելը* բացատրվում է՝ *մեծնալ (տարիքով կամ դրամով), նշանավոր դառնալ, լույս ընկնել, հայտնվել, ինքզինքը հայտնել, թե ինքը ով է*, սակայն *արշա* բառի ծագումը չստուգաբանված բառերի շարքին է դասվում:

Ղարաբաղի, Գորիսի, Երևանի բարբառներում գործածական են *արշա գալ, արշա գցել, արշա բերել* հարադրությունները: Ահա այս *արշա կեալ, արշա քիցել, արշա ինգնել* հարադրավոր բայերը համարժեք են գրական լեզվում գործածվող *աշխարհ գալ, աշխարհ գցել, աշխարհ ընկնել* հարադրական բարդություններին և իրենց նշանակությամբ համապատասխանում են դրանց: «Հախ միայն Տերը քանդի ըտրա *աշխարհ քցողին* տօնը հա» (2-163): «*Արշա-ն աշխարհ(ք)* բառի բարբառային արտահայտություն է և առաջ է եկել հնչյունների անկման ու դրափոխության հետևանքով»<sup>24</sup>, ինչպես՝ *ճանապարհ-ճընհապա-ճընապար-ճըհապա-ճընապա-ճընապա*:

*Աշ տալ*-«Մնացած իրեք կաշին էլ պակաս չըն, լեաւ *աշ ըմ տալ* հզըրալ, տեսնանք մէչան հինչ տիւս կկայ» (1-133): Գավառական բառարանում *աշ տալ* հարադրությունը չկա, կա *աշ ընկնել*՝ *մնալով հոտի* բացատրությունը. «Մորթին, իւղը, պանիրը *աշ են ընկել*»: *Աշ* բառը չի ստուգաբանված: Ս.Ամատունու բառարանում բացատրվում է *աշ դնել* հարադրությունը. *գարու ալիւրը լցնում են թանի մեջ և շաղախում, ապա տրիսացու կաշին մեջը դնելով՝ պահում են այնչափ, մինչև որ մա-*

24. Ալ.Սարգսյան, ՊԲԳ, 1979, հ. 4, էջ 131:

*զը թափվում է, որից հետո հանելով՝ ձէթ են լցնում վրան և ծեռքով տրորում. այս գործողությունը կոչվում է աշ դնել*: Մելիք-Շահնազարյանը բացատրում է՝ *կաշին լեղել, պատրաստել* իմաստով: Չստուգաբանված է մնում *աշ* բառը. հավանաբար *կաշի* բառի՞ց (Ե. Մ.):

*Մտքին դօնը ընգնել*-«էլ ասըն չըն Տմբլաչի հաչանն էլ մարթ ա, պըրվոթուն կայ, վէր մարթի վէննա, ծեռքա քցըմա, մնըմ մեալիւ մշկիւ մտքին դօնն ընգած...» (2-162):

Դօն-բառի գոյությունը առաջին անգամ նկատել է Աճառյանը՝ Գավառական բառարանում նշելով. «*Դոն* կըսվի միայն *մտքին դոնը* ընկնել-խորասուզվել խոկմանց ու մտածմանց մեջ» (ԳԲ-283): Բառը այդպես բացատրված է նաև Ստ.Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանում» և Ա.Պողոսյանի «Հադրութի բարբառը» աշխատության մեջ: *Դոն-դօն* բառը, հատուկ է Ղարաբաղի, Ղազախի, Գորիսի ու Հադրութի բարբառներին, գործածվում է միայն *մտքի(ն) դոնը ընկնել* դարձվածում և նշանակում է *մտքերի մեջ խորասուզվել, մտորել*: Մելիք-Շահնազարյանը բացատրում է՝ *մտքի տունը ընկնել՝ մտածել*:

Չր. Աճառյանը և Ստ.Մալխասյանը այդ բառը ներկայացնում են իբրև ծագումով անհայտ բառ, ստուգաբանություն չեն տալիս, իսկ Ա.Պողոսյանը տալիս է հավելյալ բացատրություն. «*Դոն* բառը ոչ մի առնչություն չունի *տուն* բառի հետ, քանի որ տուն բառը բարբառում դառնում է *տօն*, բայց ոչ *դոն*. *Մտքին դոնը ընգնել-մտքի տունն ընկնել* բացատրությունը հիմնավորում է Ալ. Մարգարյանը, որը գտնում է, որ *դօն և տօն* բառերը իմաստաբանորեն և հնչյունաբանորեն նույնն են»<sup>25</sup>

*Մտքին տունը (ընկնել)* դարձվածում *տ-ն* հաջորդելով *ն* ձայնորդին, ձայնեղանում, դառնում է *դ*, օրինակ՝ *սանտր-սանդր, ընտրել-հընդրել* և այլն:

Ըստ Ալ.Մարգարյանի՝ *տուն* բառը *դօն* է դարձել և ձևավորվել իբրև այդպիսին միայն *մըտքին դօնը* բառաշղթայի մեջ: Սակայն *դօն-տօն* բառը այլ կերպ է մեկնաբանում Լ.Հովհաննիսյանը. *դօն-տօն* աղերսի վերաբերյալ վերոհիշյալ փաստարկները առարկելի են, որովհետև, նախ

25. Ալ.Սարգսյան, ՊԲԳ, 1979, հ. 4, էջ 131:

չի արդարանում հնչյունափոխված երևույթի հիմնավորումը միայն մի բառաշղթայի օրինակով, երկրորդ՝ գրաբարի *տուև խորհրդոյ* եզակի օրինակը նշանակում է *խորհրդարան* (տեղի իմաստով),<sup>26</sup> այնուհետև նա նշում է, որ *մտքն դօնը ընկնել* կապակցության մեջ *դօն*-ը կապ չունի *տուև* բառի հետ, այն նշանակում է *խորք*, որ կարելի է բխեցնել *հ.-ե. bhundhos-ի dhubnos-խոր* տարբերակից, որից՝ հայ.՝ *ան-դունդ*։ Գրաբարում եզակի վկայությամբ պահպանված այս արմատը բարբառում էլ ներկայանում է դարձյալ եզակի օրինակով, *դունդ-դուն-դուն-դօն*։ Իսկ *հ-ե* նույն արմատից հ.լ. *dun*, ռուս.՝ *ДНО-խորք* բարբառային *դօն*-ի ակնհայտ զուգահեռներ են։

*Ձուիր ըն պերալ* - «Յու վեր եր ա կենըմ անգուճիս մեսն օտըմ ա, թա բալբանիդ թխի էս կիրի, էն կիրի, մեր կանտորը լաֆ *զուիր ըն պերալ* քինալ կեալան, կիրըմ ըս վայ ա, կիրըմ չըս, էլիա վայ ա...» (1-68)։ Այս հարադրության անվանական բառը՝ *զուիր*՝ նշանակում է *ձանձրույթ*։ Ըստ Յր.Աճառյանի՝ գործածվում է միայն *զուիր անել*, *զուիր բերել*՝ *ձանձրացնել*, *զահլա տանել*, *զուիր գալ* իմաստներով։ Արմատը չի ստուգաբանված։

«Ձուռնա-Տմբլայի» էջերում բազմաթիվ կազմություններում հաճախակի է գործածված *նի* մասնիկը. *նի մնըմ-ներս մտնում*, *նի հսնըմ-վրա հասնում*, *նի եկողը - ձեռք տվողը*, *քեֆին նի կըկեայ-կվիրավորվի*, *նի կեալ-կպչել*, *նի կըցնել-վառել*, *բարկացնել*, *նի մնալ-սպասել*, *նի ըն-զընել-մեջ ընկնել*, *նի քցիլ- ներս գցել*, *նի տալ- կոկորդը լցնել*, *նի խո-կըվըմ-ներս խցկվում*, *թոռը նի կալալ-անծրևը սկսեց*։

«Ժամին փողին *նի եկողը*, խային աչքալ եշողը մխթոթուն չի տեսնալ, ընդրա տոնը սիւնգ (ավերակ-ե.Մ.) կտեռնայ» (2-156)։ *Նի* մասնիկի՝ տարբեր բայերի հետ բազմաթիվ գործածությունները խոսում են այն մասին, որ այն Ղարաբաղի բարբառում կիրառության մեծ հաճախականություն ունի։ *Նի*-ի բառակազմական դերը ժամանակին նկատել են վաստակաշատ գիտնականներ Յր.Աճառյանը, Ս.Ամատունին Ստ.Մալխասյանը, Էդ.Աղայանը։ Յր.Աճառյանը գտնում է, որ *նի* մասնիկը

26. Լ.Յովհաննիսյան, ՊԲԳ, 1981, հ. 3, էջ 283։

որպես *նի* նախդիր, ծագել է *նստիլ (նիստ)* բառից *հնիս*. set արմատից, մյուս լեզուներն ունեն աննախդիր պարզ արմատ, օրինակ՝ լտ. *Sedeo*, գերմ. *Sitzen*, անգլ. *Sit*, միայն արիականն է, որ գործածում է *նի* նախդիրով ձևը, օրինակ՝ սանս. *Nisidati* (14-86)։ *Նի* մասնիկով բայակազմության հարցին անդրադարձել է և Լ.Յովհաննիսյանը։ Նրա կարծիքով՝ բայակազմության ժամանակ հանդես եկող *նի*-ն երկբնույթ է։ Եթե *նի ընկնել-ներս ընկնել*, *նի ծծել-ներս ծծել*, *նի անել-ներս լցնել* և նման այլ բառերի դեպքում ընդունելի է *նի*-ի *ներս*-ից առաջանալը, ապա հետևյալ բառերի մեջ այդ կապը չի արտահայտվում. *նի թակել-թակել*, *ծեծել*, *նի կապել-փաթաթել*, *նի կօկել-հարել*, *կոկել*, *նի չռել-ակնապիշ նայել*։

*Նի (ոյ)* մասնիկի այս գործառնությունը բավական հաճախական էր հին և միջին իրանական լեզուներում։ Այն ուներ բայակազմական և բառակազմական արժեք, որը առկայանում է հայերենի իրանական բազմաթիվ փոխառություններում՝ *նզար*, *նզով*, *նժար*, *նկան*, *նման*, *նրան*։ Նի մասնիկով բայակազմության և բարբառային ու իրանական լեզուների համապատասխանությունն ակնհայտ է։<sup>27</sup>

«Էտ անիծածնէն հանց լէթուալ ըն, հանց իրես առալ, վեր մարթ վախըմ ա թա խոսըցնի, լակ ծուի նման *նեստա կենալ*, շնաւետը եր անին» (2-38)։ *Նեստա կենալ* հարադրությունը *կպչել* իմաստով է այստեղ գործածված։ Լեզվաբան Ա.Պողոսյանը գտնում է, որ նիստ արմատից է ծագել բարբառում գործածվող *նըէստա* բառ-մասնիկը։ «*Նըէստա-ն* նախապես առանձին, անկախ բառ է եղել՝ *հպել*, *կպչել*, *միանալ* նշանակությամբ, իսկ հետագայում իմաստի շրջմամբ՝ ձեռք է բերել *պոկվել*, *անջատվել*, *հեռանալ* իմաստները։ «Այս նըէստա-ն պետք է որ հյ. նիստ բառից լինի, որ ստացվել է ցեղակից լեզուների nisdo ձևից։ Պահլավերենում և պարսկերենում հանդես է գալիս nisastan «նստել» ձևով, իսկ սոգդ. nista «նստած»։ Նիստ բառի արմատն է *ստ*-ն, իսկ *նի*-ն մասնիկ է։ *Նի+ստ*», - գտնում է Ա.Պողոսյանը (17-91)։

Ղարաբաղի բարբառում *նիստա-նըէստա* ձևերը, դրվելով որոշ հոլո-

27. Լ.Յովհաննիսյան, Լրաբեր, 1990, հ. 11, էջ 66։

վածների վրա, ցույց են տալիս տարբեր բառահարաբերություններ: *Նիստ-նըստ*-որպես *ա* հոլովման բառ, սեռական, տրական և բացառական հոլովներում նույն ձևն ու վերջավորությունն ունենալով հանդերձ, մթագնել է իմաստի անկախ գիտակցումը և այժմ իբրև քարացած հոլոված, կցվելով բառի այս կամ այն հոլովական վերջավորությանը, ցույց է տալիս զանազան բառահարաբերություններ և արտահայտում է ոճական երանգներ:

բ) «Ձուռնա-Տմբլայի» բարբառային բառաշերտի մեջ հատուկ տեղ են գրավում գրաբարից չավանդված արմատական բառերը և դրանցից կազմված բարդությունները, օրինակ՝ *պեզնիզ-ջարդված կավե աման, խըլել-գոռով վերցնել, թռ-անձրև, կօլ-կուլ-կոկորդ, պիւլ, պէխի, թընթորալ, կօլա, սըլկըիէլ, փիրփուտ* և այլն: Այս և նման բառերն ու բառարմատները լեզվապատմական արժեք են ներկայացնում. «հնարավոր է, որ դրանց մի մասը վաղ ժամանակներում այլ լեզուներից (փոքրասիական, խալդերեն, ասորերեն, կովկասյան լեզուներից) է փոխառվել և ցայսօր պահպանվում է Ղարաբաղի բարբառում», - գտնում է Զր.Աճառյանը (14-119): «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում Զր.Աճառյանը, խոսելով գավառական բառերի մասին, նշում է, որ դրանց մեծ մասը բարդություններ և ածանցներ են, որոնք շատ կարևոր են հայերենի բառագանձը ճոխացնելու համար: Կան նաև այնպիսի ձևեր, որոնք նոր արմատներ են ներկայացնում և կարևոր են հայ լեզվաբանության համար: Այդ բառերը կապվում են հնդեվրոպական լեզուների հետ: «Նման բառերը պատահամաբ չեն մտել հին գրականության մեջ, մոռացության են տրվել հայ լեզվի կողմից և պահվել են մի գավառի անկյունում» (14-119): Նման բառերի ցանկում Աճառյանը հիշատակում է *առռէ, պիւլ, կուլ-կուլ, կիզէլ, թոր* և այլ բառեր, որոնք տարբեր ձևափոխություններով գործածվում են Մելիք-Շահնազարյանի կողմից՝ լավագույնս նպաստելով երգիծանքի խտացմանը տարբեր իրավիճակներ ներկայացնող նրա ֆելիետոններում:

*Առռէ* բառը բազմիցս գործածվում է «Ձուռնա-Տմբլայի» էջերում՝ «Հու ա գիղըմ բեալքաս մին օր էլ սիպտակ շարին ռէխը տան կիպի

տատ (դեպուտատ-Ե.Մ.) ճոկին ու մին քան անվեսկե թիքայ *կու տար՝ առէ* լիա պեներս լեալ քինայ» (1-52): *Առռէ*-Ղարաբաղի բարբառում նշանակում է *հույժ, շատ*:

Զր.Աճառյանը նկատում է, որ այդ բառի «հին ձևը պիտի լինի *առռի*, ուր *ռ*-ն կրկնված է սաստկության համար: Ուշադրություն դարձնելով նույն բառի ստուգաբանությանը՝ լեզվաբան Ալ.Մարգարյանը գտնում է, որ *առռի* բառը նույն ձևով գործածական է Գորիսի, *առռէ* ձևով՝ Ղարաբաղի և Մեղրու խոսվածքներում և ծագում է *առնուլ-առնել* բայի *առ* հրամայականից: «Այդ բառը ոչ ածական, և ոչ էլ մակբայ, այլ եղանակավորիչ բառ է և նշանակում է *հենց, իսկը, իբրև թե, կարծես թե, ի հեծուկս, դե*»-նշում է Ալ.Մարգարյանը:<sup>28</sup> Վերոբերյալ նախադասության մեջ *առէ* բառը արտահայտում է *իսկը* իմաստը: Սակայն հարկ է նշել, որ ինչպես Ղարաբաղի բարբառում, այնպես էլ Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարում հանդիպում ենք և *առռէ* բառի մի այլ իմաստով գործածության, որով հանդիմանում կամ անիծում են մեկին: Օրինակ՝ «*Առռ է, վեր ինձ լսըմ չըս*»: Նման դեպքում խոսողը չռված մատներով չանչ է անում դիմացինի երեսին, հաճախ էլ իմաստի սաստկացման նպատակով կրկնվում է բառը, ինչպես՝ *առռէ-առռէ*: Երբեմն էլ որևէ մեկի հանդեպ առավելությունը ցույց տալու համար գործածվում է *դէ առռ* ձևը: Այսպիսով՝ *առ* հրամայականը, ենթարկվելով հնչյունական ձևափոխության, մի կողմից կրկնել է *առ*-ի *ռ* հնչյունը, մյուս կողմից՝ *առռ*-ը միահյուսվել է *է* միջարկությանը և առաջ է բերել *առռէ* ձևը: «Եվ այդ դեպքում դա նշանակում է ոչ թե «գավառի անկյունում» պահված բառ, այլ հնդեվրոպական ծագում ունեցող *առնուլ-առնել* բայի եզակի հրամայականի բարբառային մի արտահայտություն, որը գրականության մեջ տեղ չի գտել զուտ գրական աստիճանի չբարձրանալու պատճառով»<sup>29</sup>, - գտնում է Ալ. Մարգարյանը:

Զր.Աճառյանը նույն՝ «գավառի մի անկյունում պահված» բառերի ցանկում է դասում և *պիւլ* բառը՝ *խմորի գունդ* նշանակությամբ՝ բառը հնիս *dhul* արմատից ծագեցնելով: Զննադատելով եկեղեցիների «կան-

28. ՊԲՀ, 1971, հ. 3, էջ 213:

29. Ալ.Մարգարյան, ՊԲՀ, 1971, հ. 5 էջ 213:

ծապետների» աչքածակությունը և իրենց կոչումին ոչ վայել պահվածքը, մեջբերելով «շան ու աքլորի մեասալը», երգիծաբան գրողը բերում է հետևյալ օրինակը՝ «շոնը լիզուն կախ տաճ, ճարը կտրած ինքն էլ կեանա ծառին տակին *պիւլորվըմ (բուլորվում)*, աչքը քցըմ վըրցակին, վեր եր կնալուց էլիա հետը փռնի տոն պիրի...» (2-155): *Պիւլ* գոյականից կազմվել է *պիւլորվել* բայը՝ իմաստային ընդհանրությունից ելնելով:

Բարբառում պահված և գրաբարից չավանդված հնդեվրոպական ծագում ունեցող բառ է համարում Յր.Աճառյանը նաև *կուլ-կուլ-կոկորդ* բառը, հնի ցւլ արմատից, լտ. *gula-կոկորդ*, սանս. *gala-վիզ* և *կոկորդ* իմաստներով.<sup>30</sup>

Մելիք-Շահնազարյանի բառապաշարում այս բառին հանդիպում ենք բազմիցս՝ հարադրությունների և բարդությունների մեջ՝ *կօլաւ ընզնել-վզովն ընկնել, կըլըկուլ անել-փաթաթվել (վզով), կոլտըմ-մի կաթ*: Մելիք-Շահնազարյանը իր երգիծանքով ավելի է խտացնում այս բառերի արտահայտած իմաստները: «Մին *կըլտըմ* ճրի միար շան կիւլու ռէխ ընզնին, բիաբուռ տեռած՝ տոն կեան» (1-200): «Վերջն էլ *կոլ տայը* ընդեղ նստի» (2-157): «Մեր կիպիտատնէն էլ (դեպուտատները-Ե.Ս) հէնց էտ ին օգըմ «վայ քու ծնունդը օրինւի բիւրօկրատ դայի, քէզ սալըսելան աչքընէս ճիւր կտրից, մին քանէ օր առաջ կիր էլի: «Յու՞նց թա մէռաւ, բա մեր սնամերն ասմա էրէզ կոլտանը պէց, սարքուած, գրեհուած էն ար հայոց վեչերըմը, նիետն էլ խօսալ ա» (2-124): *Կոլտանը* այստեղ *վիզ, պարանոց* իմաստն է արտահայտում:

Յր.Աճառյանը բարբառային *կիզել* բառը *վախենալ* իմաստով ներկայացնում է իբրև գլխաբառ և դասում այն արմատական ձևերի շարքում, որոնք «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ սը երևան կըհանէն» (ԳԲ-569):

Ըստ Ալ.Մարգարյանի՝ *կիզել* բառը պարզապես գրաբարյան *գոզել (գոզ<sup>31</sup> մեզ, շեռ) միզել* բայի բարբառային արտահայտություն է<sup>32</sup>: Ղա-

30. Յր.Աճառյան, ԳԱԲ, հ. 2, էջ 575:

31. Յր.Աճառյան, ԳԱԲ, հ. 1, էջ 571, «գոզը» չստուգաբանված արմատ է համարում:

32. Ալ.Մարգարյան, ՊԲԳ, 1973, հ. 4, էջ 134:

րաբաղի բարբառում բառը հանդես է գալիս *կիւզել, կիւզիլ* ձևափոխությամբ, որը իր հիմնական *միզել* իմաստից բացի ունի երկրորդական կամ փոխաբերական *վախենալ* իմաստով գործածությունը, որն էլ օգտագործում է Տմբալաչի հաչանը: «Թա դերերը էդ դադիմի կանծապետներան հունց ըն *կիզալ* պատմըմ ըն, թա Ղալին Ղազանչեցուց ժամին կանծապետ Մղղուսին մին հետ ընզնըմա մեծ տեր Կրիքոր ա նիետ (չիւն ողորմած հոգին ռունաւ եւ ըրաղաւ փունջը շատ ար սիրըմ) ու տրա միար աչքա տամ, իշեղ չի տամ...» (2-152): Խոսելով բարբառային բառերի տարբեր շերտերի մասին՝ «Յայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ ակադեմիկոս Գ.Ջահուկյանը նշում է մի խումբ բառեր, որոնք «գրաբարում չվկայված հնդեվրոպական ձևեր են» (9-317): Այդ ցանկում ընդգրկվում են ոչ միայն այն արմատները, որոնք գրաբարում զուգահեռներ չունեն, այլև այն ձևերը, որոնք հնչյունապես, իմաստով կամ կազմությամբ համեմատական լեզվաբանության տեսակետից հանդես են բերում կարևոր տարբերություններ: Սրանք, ըստ Ջահուկյանի, երկու տիպի են. ա) արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին. բ) արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ, կամ հին փոխառություններ են որևէ հնդեվրոպական լեզվից, «որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ» (9-317): Իր մեծարժեք գրքի մի առանձին գլուխ նվիրված է ա խմբին. առանձնացված են այդ կարգի բառերը՝ ստուգաբանություններ՝ *հ-ե* զուգահեռների և բարբառային ձևերի տարածքային ընդգրկման հղումներով՝ *այա -մայր, տատ, անգի-բարակ, միհար, անձող-ածուխ, առի-հույժ, արց-հյուսվածքի սկիզբ, բուլ (պուլ)-խմորի գունդ, գոսել-ծեծել, թալ (բույս է), թոնթոռալ-բողոքել, քրթմնջալ, թոռ-թարմ, թակել-ծեծել, լակ-հոտած, լեմ-ատամ, լեպ-լեզվի փառ, լեպո-թաղանթ, թույլ կախված միս, լնլամել-ծամել, լոսվել-մաշվել, լոք-ցատկ, լպզտել-լիզել, ծպուտ-ծայն, կալանչել- ոռնալ, կլմբոս-հարուստ, կլոնդրակ-գնդակ, կնթռ-մաշված ավել, կլոնծ-մեծ կտոր, գունդ, կոլոլ-կանացի գլխազար-*

դի վրա կախված գնդիկ, կուլ-կոկորդ, կոռ-կեռ, կտիտ-կենդանու կղկղանք, կուտիկ-շան ծագ, ճիթ-ողկույզ, ճմիւ-ոլորվել, մալանջ-փաթիլ, մղմող-ցեց, շէք-լայն քայլ, շքեռ-բացված ոտքերի արանքը, պող-չիանգած ածուխ, պուքել-անմիջապես փախչել, սեռ // սեռն-ողնաշար, լեռան թիկունք, սլկիել-սահել, սղալել-կոկել, հարդարել, տեփ-խմորը թոնրին կայցնելու բարձ, տկողիմ-արքայակաղին, տնգզել-ծեծել, տուզ տալ, աչքը հառել, տուտուզ-հետույք, ցեթ-մեզ, ցլեփ-շյուղ, ցոփլիկ-կոկիկ, փիփերթ-բուժիչ բույս, փուստ, (փըստ) փստալ-պարապ, անհաջող, փալ-փալի փալի անել-գետին փռվել, շուռ, շորջ-պտույտ-շոտպանի-պտտվել-շողբանի, կլպոր-կլպնդրեգի-գլուխկոնձի, ցուփ-հանկարծ վեր կենալ, շեխ տալ-փռվել, տարածվել:

Ղարաբաղի բարբառում բազմաթիվ են այն բառերը, որոնք վկայված չեն մատենագրությամբ, բայց հնդեվրոպական ժագում ունեն: Լ.Յովհաննիսյանի կարծիքով<sup>33</sup> հնդեվրոպական ժագում ենթադրող բառերի ցանկը կարելի է մեծացնել՝ ազի-մայր, ազգականուհի, դօն-խորթ, լէթված-երես առած, խըրթլոկ-շնչափող, ծօռնը-թռռան որդի, կէփ-պարանի ծայրը անցկացնելու կեռ փայտ, կօռնը-թռռան թռռը, հեասի-ազգականուհի, պըլօրը (տանել), պըլ-գիժ, չավ (ածել)-լուր տարածել, սըլեթա-երես առած, սըտ-տեղյակ, իրագել, տըհանիլ-հևալ, շնչասպառ լինել բառերով, ինչպես նաև մի մասնիկով մի շարք կազմություններ, որոնց մասին արդեն խոսվել է:

Հայտնի է, որ թ-ով սկսվող բառերը հայերենում ունեն ե կամ ա նախահավելվածը. արագ-երագ, արեգակ: Երկուն գործածված են, ինչպես հնդեվրոպական արմատներում, բարբառային ձևերը՝ առանց նախահավելվածի՝ արեգ-րիքնակ, երամ(ակ)-րամակ, երեկո-րիգուն: Սրանք կամ հնագույն ձևեր են, կամ էլ հնագույն ձևերի վերջընթեր շեշտի հետևանքով ունեն առաջնավանկային ձայնավորի թուլացում և անկում:

Նման բառեր ու բառաձևեր բազմիցս գործածված են Մելիք-Շահնազարյանի «Զուռնա-Տմբլա» ստեղծագործության բարբառային բառաշերտի մեջ, որի վերհանումը և պարզաբանումը վերստին լուսաբանում

33. Լ. Յովհաննիսյան, Լրաբեր, 1990, հ. 11, էջ 116:

է Ղարաբաղի բարբառի կազմավորման բնույթն ու ընթացքը:

գ) Ղարաբաղի բարբառում կան բառեր, որոնք սկզբնական ձևերի համեմատությամբ կերպարանափոխված են, չկա որևէ բառ, որ բոլոր խոսվածքներում պահպանվի նույնությամբ, առանց հնչյունական ձևափոխությունների: Սակայն բարբառային կերպարանափոխությունները միատեսակ բնույթ չեն ունենում: Կան բառեր, որոնց ձևափոխությունները շատ չհեռանալով նախավոր ձևերից, մատնում են իրենց ծագումը՝ բան-պէն, սիրտ-սըրտ, տեր-տեար: Բայց կան նաև բառեր, որոնք բարբառում հաճախ նույնիսկ անճանաչելի փոփոխություն են կրում և ձեռք բերում ինքնուրույն բառային արժեք: Հայերենի բարբառներում այս ճանապարհով առաջ են եկել բավական թվով բառեր, որոնց մի մասի ծագումը հայ լեզվաբանության մեջ դեռևս պարզաբանված չէ: Նման բառերից է Տմբլաչի Խաչանի բառապաշարում հաճախ գործածվող *խոխա*// *ըրախա* բառերը: *խոխա* բառը Ղարաբաղի բարբառում նշանակում է *երեխա*, *ծնողի չհասունացած որդի*: Հր.Աճառյանը այս բառը համարում է փոխառություն և, բխեցնելով թուրքական *xaxa-տխամար*, *անմիտ* բառից,<sup>34</sup> ծագումնաբանական կապ չի տեսնում նրա և երեխա բառի միջև և այդ պատճառով իր «Հայերեն արմատական բառարանում» չի ներկայացրել: *խոխա* բառը թե իր ներքին իմաստային և թե իր արտաքին հնչյունական կողմերով *երեխա* բառի բարբառային այլատեսակ է:<sup>35</sup> *երեխա* բառը նշանակում է՝ 1. *նորածին կամ անխոս մանկիկ*, 2. *տղայամիտ, անմիտ*: Այս բառը բարբառներում ստացել է տարբեր արտասանություններ՝ *ըրեխա* (Երևանի բարբառ), *ըրախա* (Ղարաբաղի), *րախա* (Գորիսի): Իմաստային ընդհանրությունն ու նույնությունը թույլ են տալիս ասելու, որ *խոխա*-ն ունեցել է և ունի *երեխա* բառի իմաստը: *երեխա-ըրախա-հըրեխա-հըրօխա-հօխա-խօխա*, նույն ձևով ունենք *երախ-ըռեխ* հնչյունական փոփոխություններով բառը:

*Րիւզիւնաշ-երեկոյան կողմ* արտահայտությունը կազմված է *երեկո* և *առաջ* բառերի բարբառային հնչյունափոխությամբ. «*րիւզիւնաշի* ընտան, քթև անըմ, մին քան էլ դեալլաք ըռըչներին կաղնած՝ կլխընէն

34. Հր.Աճառյան, Թուրքերենից փոխառյալ բառերը հայերենի մեջ, էջ 569:

35. Ալ.Սարգսյան, ՊԲԳ, հ. 3, էջ 212:

սապուն ըն տամ, քոռ ծիլավ վեր անըն» (2-114):

դ) Ըստ Յր.Աճառյանի՝ «լեզվաբանության մեջ հայտնի է, որ «սխալ» գրչությունները ներկայացնում են այնպիսի գրություն, որը հեռու է բառիմաստից: Մեր մեջ դեռ չկա մի այնպիսի աշխատություն, ուր հավաքված լինեին մեր բոլոր հին ձեռագրերի սխալագիր գրչությունները» (13-418):

Մելիք-Շահնագարյանի «Ղլըցուց Բխճիկ ճոկելը կնանոց պարլամենտը» ֆելիետոնում քննադատվում է շուշեցի կանանց քաղքենիությունը, հաշվենկատությունը՝ գործածելով նման բառեր. «Վույ ցաւս քաղի նա, օսերը լիա մալականու օսեր ինի, իրըսկըհատը պընպենուտ, աչքերը լիա տրաքած շմբալութ, կիշըկիրողը նրան տանի» (1-62): Ի պատիվ Մելիք-Շահնագարյանի՝ պետք է ասել, որ երգիծական այս պատումը արդիական հնչեղություն ունի և նրա ֆելիետոնների մնայուն մասում է դասվում: Վերոհիշյալ հատվածից քննության առնենք *շմբալութ* բառը: Ըստ Յր.Աճառյանի՝ 1788թ. առաջին անգամ *շահղանակ* բառը *շագանակ*, *շամբալուղ* ձևով արտագրվել է և այդպես էլ մտել գրական լեզվի մեջ, որով էլ կազմվել են *շագանակագույն*, *շագանակենի* և այլ բառեր:<sup>36</sup> Բարբառում գործածական է *շմբալութ* տարբերակը:

*Կրեայ* բառը հին գրականության մեջ ավանդված է *կրայ*, *կրիայ*, *կիրիայ*, *կիրայ* տեսքով. արդի բարբառներում այն հանդես է գալիս 18 ձևով, բայց, որովհետև ծագում է *կուր* (*տաշտակ*) բառից, ուստի բոլորն էլ ձևափոխվում են *կրեայ* ձևից (13419): Ղարաբաղի բարբառում այն գործածվում է *կորա*, *կորի* ձևերով, օրինակ՝ «Փողու տարի ա, խելքի տարին վեր կեայ, էն վախտը ոչ *կորան* իւրան չնաղան տիւս կըկեայ, վէչ էլ էշը իւրան ախուռը կըկուրցնի» (1-134):

է. «Ձուռնա-Տմբլայի» բարբառային բառաշերտում հանդիպում են և այնպիսի բառեր, որոնք բարբառում անկախ գործածություն չունեն, բայց հանդես են գալիս բառակապակցության մեջ, ինչպես օրինակ՝ *պըլօրը քեզ տանե*, *պըլօրը պըկատ կենա* կապակցություններում գոր-

36. Յր.Աճառյան, ՅԱԲ, հ. 3, էջ 484:

ծածված *պըլօր* բառը բարբառում ինքնուրույն գործածություն չունի, բայց կապակցությունների մեջ գործածվում է որպես անեծք: Ըստ Լ.Յովհաննիսյանի՝ այդ արմատը գրաբարում առկայանում է *պալար* բառում, հ.-ե. *ուռուցք* արմատից:<sup>37</sup>

*Որբևայրի* բառի (բարբառում՝ *ըրփըվերի*) բաղադրիչները՝ *որբ* և *այրի*, բարբառում ինքնուրույն գործածություն չունեն: Առաջին արմատի փոխարեն գործածվում է փոխառյալ *եթիմ* բառը, իսկ երկրորդի իմաստն արտահայտվում է հարադրությամբ՝ *մարթը մեռած* բառակապակցությամբ: Բարբառում գործածական է միայն *ըրփըվերի* կամ *իրփիվերի* ձևը, որը գրական *որբևայրի* բառի բարբառային հնչյունափոխված տարբերակն է. «Վեր մին *իրփըվերի* կնգայ ռաստ գայ» (2-55):

*Տենդ-դողերոցք* բառը ևս բարբառում գործածական չէ, բայց Մելիք-Շահնագարյանի «Ձուռնա-Տմբլայում» հանդիպում է *ճիրմիտենդ* բաղադրյալ կազմությամբ. «*ճիրմիտենդը* անց կացավ» (1-15):

*ժիժիպապա* - *ժիժի* արմատը բարբառում առանձին գործածություն չունի, բարդության մեջ նշանակում է *ժողովել*, *պարապ խոսել*, *ժամածություններ անել*: «*ժըժըպապա* անող ազկի պարծանքըս լիւսըթաթախ ջահիլ ջիուլնե»... (2-124):

*Վարս* գրական բառը ևս գործածական չէ Ղարաբաղի բարբառում, բայց «Ձուռնա-Տմբլայում» մեծ հաճախականություն է դրսևորում կապակցությունների և հարադրությունների մեջ՝ *վարսըտ կտրիմ*, *վրսընալլընիս*: «*Վրսընալլընիսը* կլխաւը քաշած...» (2-3), «Վույ, իմ աչկերս ինձ կենա, *վարսըս կտրիմ*...» (2-11): Այս կապակցությանը հոմանիշ է բարբառում հաճախ գործածվող *պչըկուտուր* (պոչը, մազը կտրած) բառը, որը քննարկվող երկում ունի բազմաթիվ կիրառություններ:

զ) «Ձուռնա-Տմբլայի էջերում գործածված են մի շարք բարբառային բառեր, որոնց արմատները և կազմությունը պարզ չեն. դրանց մի մասի բացատրությունը տալիս է հեղինակը Բ հատորի վերջում տրված բարբառային դժվարիմաց բառերի ցանկի մեջ:

*Ձբըթորոս* - «Սեղանընը մին խալիչայ քցած, երկու *զբըթորոս* մարթեք

37. Լ.Յովհաննիսյան, Լրաբեր, 1990, հ. 11, էջ 117:



ծըրպատակ երան նստած իրեսնեն ժըղովուրթին, հարի երդայ սեւ ու սպիտակ փող ին թուփ անըմ» (2-50): Հայոց լեզվի բացատրական բառարանում նշված է *զբնել* բառը՝ *զրկել, կողոպտել, հարստահարել* իմաստներով:

*Ջբնել*-Գավառական բառարանում նույն իմաստով չստուգաբանված բառ է համարվում և Ղարաբաղի բարբառին ոչ բնորոշ: Հայոց լեզվի բարբառային բառարանը *զբնել* բառահոդվածի տակ նշում է և Ղարաբաղ բառը (ԲԲ-406): Հակված ենք կարծելու, որ ինչ-որ ժամանակ եղել է Թորոս անունով կողոպտիչ, հարստահարող մարդ, որի անունը էլ որպես հասարակ գոյական գործածվելով *զբնել* արմատի հետ, դարձել է ածական, հատկանիշ արտահայտող բառ՝ *զբնորոս մարդիկ*: Ենթադրում ենք, որ *զբնել* (*զբնել*) և *թորոս* արմատներից է կազմվել այս բառը:

Տմբլաչի Խաչանը խոր ցավով քննադատում է և պետական ծառայողներին, որոնք, ոչ մի միջոցի առաջ չկանգնելով, խաբուն և թալանում են ժողովրդին, գողությունը այնպես վարպետորեն կոծկում, որ ոչ ոչ չհասկանա, իսկ բռնվելու դեպքում՝ լացում են՝ լացացնելու չափ՝ «Հունց չի լալկուի պրանին հոփ տայ, քանի վեր սոր տեսնըմա մե շհարներին ըխտիարը (իրավունքը -Ե.Մ.) ծըռքըներին մեծ ու պուճու ծառայողներ, հուքըվրական ինին թա աշխարական *բեռվու նման մկնը մանդիլ* շինած՝ հզեր ու մին ֆեանդ ու ֆիլաւ յայտնի ու անյայտ կու մարնե ըն թովլամիշ անըմ, փրթակըմ ու մինը վեր վխվխելավ դրադա տիւս ա կեան մանընը թող անըմ, դեաստի անեծքաչոր ըն անըմ» (2-136):

*Բեռվ*-Ղարաբաղի բարբառում *սարդ* է նշանակում: Բացատրությունը տալիս է Մելիք-Շահնազարյանը: Ուրիշ ոչ մի աղբյուրում այլ կան նույն բացատրության չենք հանդիպել: Նույնիսկ հայոց լեզվի բարբառային բառարանը այդ մասին ոչ մի նշում չունի: *Մկնըմանդիլ* բառի բացատրությունը ևս ոչ մի տեղ չի հանդիպել: Ղարաբաղի բարբառում *մկնըմանդիլ* բառը նշանակում է *սարդի գործած ոստայն*՝ *սարդոստայն*: *Մանդիլ* նշանակում է *բարակ քող, թափանցիկ կտոր, թաշկմանակ*, իսկ *մկնը* բաղադրիչը հավանաբար *մուկն* բառից է (իմաստը բացատրվում է ժողովրդական ստուգաբանությամբ): Գավառական բա

ռարանում Ակնի բարբառի համար աստղանիշով *մլուր* բառը բացատրվում է՝ *սարդի ոստայն*, իսկ 2-րդ իմաստը՝ *ծայնախարիթ, ծուխին կապած մուրը*, բարբառում՝ *օնջ*: Կապ կա՞ արդյոք այս բառերի մեջ: Բարբառում *մկնըմանդիլ* բառը օգտագործվում է և *մկնըմանդիլ* տարբերակով: Եթե *կ*-ն այստեղ ածական է, ապա բարդ բառի առաջին արմատը հավանաբար թե *մլուր* բառից է:

*Ծնըթկեվաթ* բարբառային բառը հանդիպում է և *ծընըթկեվաթ* տարբերակով: Հայոց լեզվի բացատրական բառարանում նշված է՝ *ծննդագաթա*: «...Մինչի սոր էլ խռաւըն՝ թա հինչ ա, մեր Օլիսկին կնընքաւը պէլունց պերած *ծնըթկեվաթան* փայ չըմ հանալ» (1-8): Գավառական բառարանում *ծննդաւաթ* բառի դիմաց բացատրվում է՝ *մեղրով շինված ծվածեղ, խաւիծ կամ ուրիշ համով ուտելիք, որ իբրև նվեր ուղարկվում է ծննդկանին՝ նորածին մանկան մկրտության օրը*: Այժմ ընդունված է նորածնի 40 օրը լրանալուց հետո (որին ասում են «քռասունըր տիւս ա եկալ») այցելել՝ շնորհավորելու, աչքալուսանք տալու՝ նորածնի և մոր համար տարվող նվերներով, որին էլ «*ծընըթկեվաթ քինալ*» են ասում:

*Գիւռըբչոց*-«Էնա կարմունջին հալալ կեսը ընցալի, տեսնամ անդուդքան մին *գիւռըբչոց* ա եր ինըմ, մին ծվվոց ծկլթոց կեան, մին ուրուտըմ կծակին անըմ, վեր մարթու օշ օզումա թա տանի» (2-17): Գավառական բառարանում *գիւռուբչոց* բառահոդվածի տակ բացատրվում է՝ *գոռում, գոչում, աղմուկ, աղաղակ*՝ առաջին արմատի *գոռ-գիւռ*-ի իմաստով, իսկ երկրորդ արմատի՝ բչոց բառահոդվածի տակ Արմատական բառարանում բացատրվում է՝ *բնչել*-բնածայն. բառ, որը կազմված է *բ* պարզ ձայնից՝ *ն* և *չ* ածանցներով, առանց *ն*-ի ունենք *բչալ, բչել, բչիւն*, իսկ առանց *չ*-ի՝ *բբել, բբիւն*: «Այս բառը նշում է ՆՅԲ-ն երկու անգամ, նախ՝ *բչալ* բառի մոտ և երկրորդ՝ *բբչալ* բառի մոտ»:<sup>38</sup>

գ) «Ձուռնա-Տմբլայում» գործածված են մի շարք բարբառային բառեր, որոնք բառարաններում ունեն ոչ ճիշտ բացատրություններ կամ բոլորովին չունեն:

38. Դր.Աճառյան, ԴԱԲ, հ. 1, էջ 458:

**Պրզկաթան** «Օզըն չընք վէչ ծեր մածունը, վէչ ծեր *պրզկաթանը*, վէ ծեր խնամոթունը» (2-212): Ղարաբաղի բարբառում այսօր էլ գործածության մեծ հաճախականություն ունեցող այս բառը ստուգաբանված չէ Հր.Աճառյանի և Ս.Ամատունու բառարաններում: Հայոց լեզվի բարբառային բառարանի Ա հատորը «Բառարանի կառուցվածքը» ենթաբաժնում տալիս է սխալ բացատրություն՝ *մեջը բազուկ ջարդած թան* իսկ *Բ տառի բազկաթան* բառահոդվածի տակ նշում է՝ (արհմրհ) *կաթ մածուն*: Մելիք-Շահնազարյանը բացատրում է՝ *թթու թան*: Գիշտ, բայց թերի բացատրություն է տալիս Ալ.Մարգարյանը՝ 1. *եփած ու քամած թան*, 2. *քամված թանից եփած կերակրատեսակ* (քիլընգոշ-Ե.Ս): Ինչու՞ *պրզկաթան*: Քամված թանի զանգվածը բաժանում են փոքր մասերի (*բազուկի տեսքով*)՝ շուտ չորանալու նպատակով, կամ որ ավելի հավանական է՝ բառը կազմված է *պրզտըցնել* բառի *պրզտ* արմատի և *թան* բառի կապակցությունից: Այսինքն՝ *պրզտ(մի քիչ)+ա+թան*: Բացատրության երկու տարբերակն էլ երևի թե ժողովրդական ստուգաբանությանը կարելի է հիմնավորել: Բարբառում *պրզկաթան* բառի հոմանիշ է *չուրաթան* բառը:

*Իստըս նի ա կացալ* արտահայտում է *բարկացել եմ* իմաստը: Չ ստուգաբանվում ոչ Հր.Աճառյանի և ոչ էլ Ս.Ամատունու բառարաններում: *Իստը նի կենալ-բարկանալ* իմաստով հարադրությունը լայն գործածություն ունի Ղարաբաղի բարբառում և բացատրվում է Մելիք-Շահնազարյանի կազմած դժվարիմաց բառերի ցանկի մեջ: «Ղալին մի փարայ մարթոց *իստին նի ա կացալ...*» (1-68):

Տմբլաչի Խաչանի երգիծանքը հասարակական հնչեղություն ստանում: Հասարակության բարքերի թերությունների խտացումը նրա խոսքը, ցավը հասցնում է ողբի աստիճանի և անհնարին է չտեսնել մեծ խորենացու «Ողբի» ազդեցությունը: «...առուտուրը ֆալշովի, պարեկանութիւնը ֆալշովի, օտել խմելը ֆալշովի, մստել երկենալը ֆալշովի, խոսքը ու զրիւցը ֆալշովի, խղճմտանքը կորած, հաւատը փախած կնանէքը բոշբողազ, քամի կոլ տուող, ըխճըկերքը սլեթա, կապընեն կորած, իւրանց քթին *հաւաւը* ման եկող, վարժապետնէն անսէրտ, *աւա*

*խընեն ճլկաւեր ընգած*, մունթերը սըրթըղ, քոռ ուղուբ, իւրանց տափակ խելքաւը մին մին ֆիլիսոփայ, փրիքաշիզը կեօղ, ուսումնականը անբարիշ, գիտութիւնա փախած՝ փողի երայ շայիր կտրած, տէրտէրը ֆորմի մհար, կարք կատարելը ֆորմի մհար...» (2-138): Մեջբերված հատվածից երևում է, որ 19-րդ դարում ևս հասարակական կյանքը ողբալի էր: Բնագրային վերոհիշյալ հատվածից քննության առնենք *ճլկաւեր ընգած* արտահայտությունը: Քննարկվող երկում հանդիպում է և բախտը *ճլկավերն ընգած միրգա* արտահայտությունը, *ճլկաւեր*՝ բարդ բառ է՝ *ջուլիակի հոր* իմաստով: Գավառական բառարանը այս մասին լռում է, իսկ Ամատունու բառարանում բացատրվում է *ջուլիակ* բառի մոտ՝ աստղանիշով: Մեր կարծիքով՝ բառը գործածված է փոխաբերական՝ *պատիվը ոտնակոխ*, այսինքն՝ *հորի մեջ ընկած* իմաստով:

*Թիսի*-Գավառական բառարանը նշում է միայ մեկ իմաստ՝ *կրակի վրա քիչ մը խորոված*: Բարբառն ունի նաև բառի երկրորդ՝ *վախկոտ* իմաստով գործածությունը, որի մասին նշված չէ ոչ մի բառարանում: «Քեզ նըման *թիսին* հինչ պեդմա անի» (2-64):

Բառարաններում չբացատրվող հետևյալ բառերի բացատրությունները տալիս է հեղինակը՝ երկի վերջում տրված հավելվածի մեջ:

*Տրվոստ-գավազան*. «Տրվոստը տէն տիրաւ» (1-148):

*Կռածմունք-դժվարություն, նեղություն*. «Երկու հզեր մանէք ըմ պէրալ հզեր *կռածմունքաւ*, ենէլ մարթս ամըն օր կիրըմա թա հըրեաթ ըրա...» (2-78):

*Ծիւսը ճնանչէլ-չափը իմանալ*. «Խէ՞ չըն իւրանց չափը, *ծիւսը ճնանչըմ*» (2-40):

*Ըռըփակ-առաջը փակ* (նորահարսի շղարշ). «Խեղճ խուխիս մին շափթանը ետը *ըռըփակը* կըլխավը քցած հարանց ղարկէ...» (1-71):

*Ըռըկեօծի-առ աչոք*. «Հային պոլիտիչեսկի պէնը ըրագի եա *ըռըկեօծի* փուլն ա...» (2-115): (Ս.Ամատունին Թիֆլիսի բարբառի համար նշում է արագոճի բառը):

*Ձառի կեալ-համաձայնվել, խղճահարվել*. «Էրգեան խուսեւան ետը *զառի եկան*» (1-180): (Հավանաբար կազմված է *առնուլ* բայից *զ* նախդիրով-Ե.Ս):

Մասան նորին -«Տեսնըմ ա վեր Յերսիլիան ճիւրը կակող կնեգ ա մասան նորին ա կցըմ...» (2-169): Բառարանները չունեն բացատրություն: Բարբառուն այս կապակցությունը գործածվում է *գրույցը անտորեն երկարացնել, ծանծրացնել իմաստով*: Հավանաբար փոխառյալ մասալ-պատմություն, գրույց բառից է:

*Պիւթակ-սագի ականջներ*. «Վերը սիմերնա քեօք անըմ, վերը պիւթակնէն շոռտը շոռտու անըմ» (2-23):

*Ցունծըխնը -լուսաբաց*. «Ըռաւօտը լիւսըպեցին էն *ցունծըխնը* տամ վախտը զիւրթնացի...» (1-109): Ենթադրում ենք, որ *ցնցուղ* բառից է ստուգաբանվում է՝ *արևի առաջին ճառագայթների՝ ցնցուղի* հետ համեմատվելով: Երկրորդ ց-ն տարնմանությամբ հնչյունափոխվել է ծ-ի, *դն>խ, ը-ն* լիաձայն հնչյուն է, *նը-ն* բարբառային վերջնահավելված:

*Ճղուպուր-կակալ*. «Լոխ խանըմնէ տեռած՝ իւրանց մարթօցը կլխին նստած՝ *ճղուպուր ըն կոտորըմ*» (2-101): Ըստ Մելիք-Շահնազարյանի՝ բառը ծագել է *ճողոպրեմ* բառից, երբ ընկույզը կաղաղից ազատվում է:

Բարբառային բառաշերտի մեջ զգալի թիվ են կազմում այնպիսի բառերը, որոնք գրական լեզվի բարբառային տարբերակներ են՝ արտասանությամբ կամ գրությամբ. *էկալ, ընդեղ, վէչ, ծուան, ծրտըմ, տեսի, տղըներան, հեար, ախպեր*: Մելիք-Շահնազարյանը նախընտրում է դրանց բարբառային ձևերն ու ձևափոխությունները: Ահա բնագրային մի քանի օրինակներ. «*Ընդեղ վէչ* նոր *ծուան տիւս եկած* դոթուր մոթուր տզըթևած ճտեր տեսի, վեր վրցակու նման ծուղրուղու *կանչին*, խալխին *իւրանց երայ* ծիծաղել տան...»: (2-29):

Այսպիսով՝ «Ձուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուի բառապաշարում եղած բարբառային բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը, խորությամբ տիրապետելով մայրենի բարբառին, օգտագործել է այն հիմնովին, ոչ այն ձևով ու չափով, ինչ իրեն նախորդող բարբառագիրները: Նա կարծես թե պեղել, հանել է ժողովրդի շուրթերին հնչող բոլոր բառերը իրենց իմաստային տարբեր կիրառություններով՝ լեզվաբանի նման ուսումնասիրելով ու ստեղծելով յուրաքանչյուր բառի համար յուրահատուկ իմաստային դաշտ: Ղարաբաղի բար-

բառով գրող իր նախորդներից ոչ ոք նման հոգատարությամբ ու խնամշով չի վերաբերվել մայրենի լեզվի բառ ու բանին: Բարբառային բառերի գործածությունը «Ձուռնա-Տմբլայում» ոչ թե տվյալ ժամանակի գրական լեզվին յուրահատուկ իրողություն է, այլև հեղինակի՝ լեզվական միջոցների գործածության որոշակի միտումի արտահայտություն:

Հաճախ արդեն իսկ գործածական գրական և խոսակցական զուգահեռ ձևերից Մելիք-Շահնազարյանը նախընտրում է բարբառային բառերը: Քանի որ ֆելիետոնները գրվել էին տարբեր ժամանակներում և տպագրվել «Նոր-դարի» էջերում, ժողովածուն կազմելիս Մելիք-Շահնազարյանը անդրադառնում է երկի լեզվին, և երկու տարբերակների համադրական քննությունը ցույց է տալիս, որ ժողովածուն հրատարակելիս Մելիք-Շահնազարյանը հաճախ վերամշակել է որոշ բառեր ու արտահայտություններ: Գրողը վերամշակումները կատարել է ոչ թե հօգուտ գրական լեզվի, այլ, ընդհակառակը, գրական ձևերը հաճախ փոխարինել է խոսակցական կամ երբեմն նեղ բարբառային բառերով: Բարբառային մի շարք ձևեր փոխարինվել են գրական համարժեքներով, շատ գրական ձևեր փոխարինվել են բարբառային համարժեքներով: Եվ, ըստ երևույթին, դա կատարվել է «Ձուռնա-Տմբլա» երկի գեղարվեստական արժեքը բարձրացնելու, ավելի դիպուկ պատկերներ ստեղծելու նպատակով:

Համեմատենք «Էս այամին կնանեքը» պատումից մի հատված՝ տպագրված «Նոր-դարի» 1900թ. թիվ 14-ում և 1907թ. հրատարակված «Ձուռնա-Տմբլայի» Ա հատորում:

Համեմատված հատվածներից նկատվում է, որ Մելիք-Շահնազարյանը 2-րդ հրատարակության ժամանակ մեծ ուշադրություն է դարձրել բարբառային արտասանական ձևերին, մասամբ՝ բայական վերջավորություններին, հնչյունական փոփոխություններին, ինչպես նաև գռեհկաբանությունները ավելի մեղմ բառերով փոխարինելուն: Բարբառային բառերի գործածությամբ ոչ միայն միջավայրին ու կենցաղին բնորոշ երանգավորում է ստեղծված, այլև լեզվական այս միջոցների օգնությամբ Մելիք-Շահնազարյանը հաճախ ներկայացնում է առանձին

Թերթ	Գիրք
տռնեն	տռնին
ճրօխնէկնքին	ճրօխնէնքին
կտռռըցնեն	կդռռըցնին
խբարնէ	խբըրնէ
հսցնեն	հսցնին
մենակ	մինակ
աքմնատաղ	ա քմնատաղ
մըտօ	մտօ
աղքատի	քեասիբի
տեսնողին	տսնողին
գենգադվըմ ըն	կենգատվըմ ըն
բուղազաւը	պկաւը
լաֆ	լափ
գեադի ռխի թողած	ուճուդի
տըսնելուց	տըսնալուց
արշա եկած	արշա ընգած
ցաւեց	ցաւից
խուրդաֆարա	խուրդաֆարա
կեայ մըեր Բաքուն	կեայ Բաքու
կտրցնեն	կտրցնին
երգընանըմա	իրգընանըմա
խնդիկի տան	խրտնին
էշտըղան	հշտըղան

կերպարների լեզվամտածողությունը, ոճավորում նրանց խոսքը: Կերպարի խոսքը ոճավորելիս գրողը նկատի է ունենում նրանցից յուրաքանչյուրի էությունը, վարքագիծն ու գործունեությունը, այն անհատականացնում է նաև ըստ իրավիճակի:

**Գրաբարյան բառաշերտ:** Յայ հին գրական լեզուն՝ գրաբարը, որ պես լեզվական բարձր մշակույթի արտահայտություն, իր ճոխ գանձե

րով հայ նոր գրական լեզվի համար ծառայել է որպես մշակման ու հարստացման լավագույն աղբյուր, որից հյութեր է քաղել նա իր անցած ողջ ճանապարհին: 19-րդ դարի ոչ մի գրողի լեզու գերծ չի մնացել գրաբարի հարուստ բառամթերքից: Լեզվական բազմաթիվ փաստերը հավաստում են, որ Մելիք-Շահնագարյանը, ժողովրդական բարբառային լեզուն դարձնելով գրականության լեզու, ժողովրդի համար հասկանալի լեզվով ստեղծելով նոր գրականություն, գործածել է նաև գրաբարյան մի շարք բառեր ու արտահայտություններ: Քիչ չեն այդ բառերը՝ *ինչևիցե, հիրավի, վասն, ընդդեմ, հանձն առնել...*, որոնք զգացնել են տալիս իրենց գրաբարայնությունը և մինչև իսկ պարունակում են մեր գրական լեզվի բառային կազմի մեջ չմտած մի քանի հին ձևեր:

Մելիք-Շահնագարյանի ստեղծագործությունների բառապաշարում ուշադրության արժանի տեղ են գրավում հատկապես գրաբարից ավանդված բառերն ու արտահայտությունները, որոնցից գործածական են *փըսպարել-ասպարել, փըրտակել-պարտակել, ըշկապեց-աչքաբաց, ըռչընակ-առաջնել, իրիքնեակ-արեգակ, պըռանչել-բառաչել, պերուր-բարուր, պիիր-բիր, պըծեզն-բծիծ, կըխտըկօռնը-գաղտիկուր, պեռնել-բառնալ* և այլն: Կան բազմիմաստության, իմաստափոխության հետաքրքիր իրողություններ: Ինչպես իրավացիորեն նշում է Աճառյանը, գրաբարի հիմնական բառաֆոնդի մեջ եղած բառերի մեծ մասը պահպանվել է հայերենի բարբառների ու ազգային լեզվի մեջ և նոր բառեր կազմելու անսահմանափակ հնարավորություններ ստեղծել (23-141):

Մելիք-Շահնագարյանի ստեղծագործությունների բառապաշարում հանդիպում են բարբառում գործածվող այնպիսի բառեր, որոնք իրենց ձևով իսկ ապացուցում են գրաբարից ավանդված լինելը: Դրանք, այսպես կոչված, *գրաբարյան փոխառություններ են*, որոնք ստուգաբանությամբ և կազմությամբ ենթարկվում են գրաբարի բառակազմական և ձևաբանական օրինաչափություններին, ինչպես օրինակ՝ *հասցէ կիրքս, հովուր, շուհաւ, քեցի(քինալ), գինքը, ինք կալ, առ(առնուլ)* ձևերը:

Գրաբարյան բառերի, արտահայտությունների օգտագործումը գրողից պահանջում է խոր գիտելիքներ, այն գործածելու հմտություն,

գրական ճաշակ, լեզվական նրբությունների իմացություն: Մելիք-Շահ-նազարյանը զարմանալի նրբությամբ է օգտվում գրաբարից Ղարաբաղի բարբառ ավանդված բառերից և միաժամանակ պատումի արտահայտչական ներքին շղթային՝ ներդաշնակելով այն երգիծանքի լեզվական այլ միջոցներին:

Ղարաբաղի բարբառում պահպանված են գրաբարի բազմաթիվ իրողություններ: Հենց միայն Մելիք-Շահնազարյանի բառապաշարում գործածված գրաբարյան շերտը այս առումով խոսում է: Քննարկենք, թե գրաբարյան ձևաբանական համակարգից քերականական ինչ իրողություններ են պահպանվել բարբառում և մասնավորապես «Ձուռնա-Տմբլայում»:

**1. Գոյական:** Բարբառային *հովուր* բառը առաջին անգամ նկատել է Հրաչյա Աճառյանը և Գավառական բառարանում ներկայացրել է *մի քիչ ժամանակ, մին սպասե* տարբերակով՝ իբրև առանձին բառահոդված, սակայն ծագման մասին ոչինչ չի ասվել. «Իստի չգիղալըս տիրած՝ *մին հովուր* տես ու տեն էլ ընգնի, ամանեքը չըղխկըղխկցրի, սմավարը թափ տուի, եանի թա օզընըն պատիւ տամ...» (2-3): Լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանը, «Բարբառային մի քանի բառերի ծագման մասին» հոդվածում, անդրադառնալով *հավուր-հովուր* բառին, գրում է. «*Հավուր-հովուր* բառը հատուկ է Ղարաբաղի և Գորիսի բարբառներին և չունի անկախ գործածություն և, իբրև կանոն, հանդես է գալիս *մի (մին) մըն, մը* բառի հետ և միասին նշանակում են 1. *մի քիչ, փոքր-ինչ* 2. *դիցուք, ասենք թե*. առաջին դեպքում՝ մակբայի, երկրորդ դեպքում՝ եղանակավորիչ բառի նշանակությամբ: Եվ հատկապես իր արտահայտած առաջին նշանակությամբ ծագումնաբանորեն և իմաստաբանորեն կապվում է ժամանակ ցույց տվող *օր (աւր)* բառի հետ և հանդիսանում է դրա գրաբարյան նախորդ տրականի (հմմտ. *օր-աւուր-յաւուր-հ+աւուր*) ձևը, որ հարազատորեն պահպանվել է երկու բարբառներում էլ»:<sup>39</sup> *Օր* բառը գրաբարում իր հիմնական *տիվ՝ գիշեր և ցերեկ* միասին իմաստից բացի նշանակել է նաև *ժամանակ*: Այն հետզհետե սահմա-

նափակել, նեղացրել է իր արտահայտած ժամանակային իմաստը՝ «*մի կարծ ժամանակ, մի քիչ*» նշանակությամբ: Այս երկու ձևերը միասին ձեռք են բերել մակբայի արժեք և կարող են նույնիսկ գործածվել թեք հոլովածներով՝ *մին հովուրան ետը-մի որոշ ժամանակ հետո, մին հովուրան տենը-մի քիչ ժամանակից դենը*: Այսպիսով՝ *հավուր-հովուր* բաղադրիչը սերում է *օր* բառի գրաբարյան նախորդ տրականից և մեկն է բարբառում պահվող գրաբարյան քարացած հոլովածներից:

*Սառն*-բարբառում նշանակում է *սառույց*: Այդ իմաստով էլ ավանդվում է գրաբարից՝ «նման սպիտակութեան սառին. (Յայտ.Դ.6)»: Ֆելիտոններում *սառը* բառին երբեմն փոխարինում է *ցուրտ* բառը, օրինակ՝ *սառը ճիւր-ցօրտ ճիւր*: Տմբլաչի խաչանը *սառն* բառով կազմում է դարձված՝ *սառնին կիրի*, որը նշանակում է *երկար սպասիր*, ասել է թե՛ մի սպասիր: «Ինձ մհար քու շափաղու մաշինան մինը դարկի, հինչ կինն ա կտամ, ամնա նիսիան *սառնին կիրի*...»: Խոսքը ռեմտգեն ապարատի մասին է: Մարդու «ներքինը» տեսնելու կարողությունը Տմբլաչի խաչանը ուզում է օգտագործել՝ շրջապատը լավ ճանաչելու համար: *Սառնին կիրի* արտահայտությունը Գավառական բառարանում նշվում է՝ *արևին դիմանալ, ասածը չկատարել*, կոնկրետ՝ *վարձին երկար սպասել*:

Բարբառում *վեր* բառը նշանակում է *հոր*: Եիշտ է, *հո* կապակցությունը բառասկզբում փակ վանկով բառերում դառնում է *վրօ, վրե-վը*, իսկ որոշ բառերում էլ դառնում է *հօ*, բայց *վերը* կարելի է կապել գրաբարյան *վիրապ* բառի հետ (14-70): «Վերը *վերըմը*, վերը կրակըմը, վերը սրի, թրի ողխի...» (1-43):

*Շանաճանճ-շընաճանջ* բառը է. Աղայանը համարում է բարբառային, սակայն այն վկայված է Աստվածաշնչում. «Եվ լցցին տունք շանաճանճի (Ելից 0.21)»: «Ախր խաչանը կը կարի տմբլին թխի, թա մեր շկոլներին, կնդստուրներին եա շհարներին դումերին մեջին մին քանե *շնաճանջ* ասին, թա պրթաճանջ բիան եկած՝ էլ պեն ու կործ չոնին, տզզըն ըն ըստեղ, տզզըն ընդեղ, ստիւր խրտըհարըն, ընդիւր խրտըհարում, էլիա տզզըն, կորչըն» (2-37):

39. ԴԲԴ, 1973, հ. 4, էջ 130:

Տմբլաչի Խաչանի բառապաշարում հաճախակի են հանդիպում գրաբարում գործածված և բարբառում անփոփոխ պահպանված բույսերի անուններ, որոնք գրողը կիրառում է այս կամ այն պատկերը, երգիծանքը համալրելու նպատակով, ինչպես՝ *սիբեղնը, փիփերտ, կրմը-գուկ, բանգի, կապար* (փշոտ, գետնատարած բույս), *ճիրիկուտեմնը* (ջրկուտեմ), *սրզնը* (սնձնի), *պեխի (բոխի), տեանդոռնը (տանդոռ)*:

**Թվի և հոլովման կարգում բարբառային որոշ ձևեր հարազատ են գրաբարին.** Ֆեխիտոններում առանձնապես աչքի է զարնում գրաբարածև հոլովման առկայությունը: Զ-ով հոգնակիի կազմության շատ օրինակներ են հանդիպում այստեղ: Օրինակ՝ *տղերք, մոլթանէք, մըծմը-ծոնէք, պատուիրանքներ, (կրկնակի հոգնակի), վարծք, վրժուհոնէք, հոքեպարծուք, կնանէք* և այլն: «...Քանի *կուսանք*, սուրբեր, արթար անմեղ մարթիկ կուտուրեցին» (1-43):

Գրաբարյան *ք* հոգնակերտը, գրկվելով հոգնակիության իմաստից, ժամանակակից հայերենում, ինչպես և բարբառում, մնում է իբրև քարացած ածանց: Չնայած իր գրաբարյան ծագմանը՝ այդ մասնիկը թափանցել է բարբառները և գործածվում է նաև առօրյա-խոսակցական լեզվում թե՛ առանձին, թե՛ այլ ածանցների միացած: Ուշագրավն այն է, որ երբեմնի գրաբարյան այդ ձևույթը ոճական դեր է ստանձնել մի շարք բառերի համար, որոնց *ք*-ով ձևերը հատուկ են ժողովրդական խոսքին, իսկ առանց *ք*-ի ձևերը՝ գրականին: Օրինակ՝ *արյուն-արունք, աշխարհ-աշխարհք, աշուն-աշունք*:

Բարբառում պահպանվող գրաբարածև հոլովման մնացորդներ կան, որոնք, մեկ իբրև քարացած ձևեր գործածվում են առանձին դարձվածքներում և արտահայտություններում, մեկ՝ իբրև հատուկ ոճ, երրորդ՝ իբրև հավաքական իմաստ ունեցող բառեր, որոնք հոգնակի ուղղականում տարբեր վերջավորություններ ունենալով հանդերձ, տարբեր են նաև մյուս հոլովածներում: «Ձուռնա-Տմբլայի» էջերում հանդիպում է *կոլուքը ընգնել* արտահայտությունը, որ նշանակում է *վզին փաթաթվել, գրկել վիզը*: *Կոլուքը* գրաբարյան հոգնակի գործիականի հոլովածն է: Ղարաբաղի բարբառում այն քարացած ձև է: Գործա-

ծության մեծ հաճախականություն ունեն և *աչուք-աչօք, ծեռուք-ծեռօք, վէտուք, օսուք* քարացած հոլովածները: «Էլ տակաւն ըրած մեծ ու պիծի կուճարնէ չի մնալ, վեր իւրանց *վէտուքը* լիւս աշխարք չի կեան, իրես իրես չիճին...» (2-71): «...վերն էլ շալվարին էրկու թայը տոզանաւ եազկուաւ լցած հեալա խունջանաւն էլ (վարտիքով-Ե.Ս.) պերանը գիւդակած *օսուքը* քցած՝ տօն կըկեար, խօխայ ըրախայ կուրխընին, հընգեր հրեւանու փայ ու պեժին կըհանար, միէգ այամը փիսացալ ա...» (1-31): *Ծեռուք, վէտուք, խելունք* և նման բառերը բարբառում դիտվում են ոչ իբրև հոգնակի գործիական, այլ՝ եզակի. օրինակ՝ *վէտուքը կեալ-ոտով գալ, ծեռուքը կեալ-ծեռօքից գալ* կապակցություններում ընդգծված բառերը կորցրել են գործիականի իմաստը և վերածվել դարձվածքներին հարող ձևերի, իսկ *խելունք* բառը դարձել է ածական՝ կորցնելով երբեմնի գործիականի իր նշանակությունը: «Մարթ ճոխտ *վէնուք* մէջին բաթմիշ կինի» (2-25): «Բոզ էշին անգաճը *աչուքն* ա ընգնըմ» (2-182): Երբեմն գրական ձևերին զուգահեռ գործածվում են և բարբառին յուրահատուկ բայական գործիական հոլովածները. սրանք հանդիպում են սակավ. «Ասըմ ըն բըբանիտ թխիս ես էլ շիլ *ընկնելուք* նի *կեալուք* մի օր բիրդան թխեցի» (1-75),

*Տեր* գոյականը գրաբարի սեռական-տրականում ստանում է *տեառն* ձևը, որը բարբառում հանդես է գալիս *տըռնը* տարբերակով: «Էտ շանը *տըռնանը* հու չի ճմանչում» (2-19): «Ձուռնա-Տմբլայում», այս տարբերակից բացի, Մելիք-Շահնազարյանը օգտագործել է և *տրուչ* գրական հոլովածը՝ *տիրոջ* իմաստով: Այս հոլովածը յուրահատուկ է Մարտակերտի խոսվածքին. «Էտ ծեռացակիրին *տրուչ* պարովակիրին կոպիան ըստեղ տիւս ըմ կիրըմ» (1-135):

Է.Աղայանը հնագույն բարբառային տարբերակներ է համարում բարբառի *քրվոր, քրվեր* ձևերը: «Գրաբարյան քեռ և բարբառային քուոր, քուեր ձևերը զուգահեռ ձևեր են, որոնք բուլորն էլ հնդեվրոպական swesor բառի սեռականից են ծագում՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով և ներկայացնում են հին հայերենի բարբառային տարբեր ձևերի շարունակությունը (19-73): «Օր չի ընցնըմ՝ վեր հեարիւր մարթ չի

կախ տան, օր չի ընցնում, վեր հեարիւր ջեահիլ ջւան սրի, թրի փայ չի տեռնա, մեարը խուխին ըռաչին չը մորթին, խօխան՝ մօրը, *քւերը*՝ ախպօրը, ախպօրը՝ *քւօրը*, նշանածը իւրան փըսին...» (2-44):

Է.Աղայանը, ստուգաբանելով *կից(կուց)* բառը, նշում է այդ բառի *գույգ* իմաստով գործածությունը հին մատենագրության մեջ և բարբառներում, բառը հունարենում ևս նշանակում է *ծեռք, ձեռքի ափ*:<sup>40</sup> Յետաքրքիր է, որ Ղարաբաղի բարբառում *կից(կուց) կիցկը* օգտագործվում է *ձեռքի ափ, բուռ* իմաստով: Օրինակ՝ «Մին աղքատ կնգայ բախշալա մի գիրվանքայ շեաքար, էրկու քցելի չայ, մին *կիցկը* պրինծ, մին էլ քօծին քեօհնա շորերը...» (2-213):

*Մուգ* (մթնագույն) բառը, ըստ Գ.Ղափանցյանի, պահպանվել է միայն երկու բարբառում, այդ թվում և Ղարաբաղի բարբառում (հմմ.смуглый, հնդեվ. smugh) (20-60): «Էտ մօգ տղերան տո» (2-129):

2. Յետաքրքիր առնչություններ կան գրաբարի և բարբառի բայական համակարգում: «Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում հանդիպում են գրաբարի անցյալ դերբայի ձևերի, օրինակ՝ *անցյալ-անցեալ, գրկյալ-գրկեալ, ուսյալ-ուսեալ*: «*Անցեալ* տարի՛, հա՛, հա՛, հա՛, չէ՞ որ անցեալ տարուայ մոդան ուրիշ էր, այս տարուանը ուրիշ» (2-176):

Բարբառում ավելի գործածական է *զարմանալ* բայի *արմանալ* տարբերակը, առանց *զ* նախդրի: Ֆելիետոններում գործածության մեծ ոլորտ են ընդգրկում *ըրմանալ* բայի տարբեր դրսևորումները՝ *ըրմացած, ըրմընալի* և այլն, ինչպես նաև դրան հոմանիշ *մաթ մնալ* հարադրությունը: «Մախլաս հունց վեր տեսնըմ ըք, *ըրմընալու* պեներ շատ կար ու ըտրա պատճառը անիրաւ բուբուղուլին (բացիլ Մ.Շ.) ար, վեր շատերին ռեանգը նշանց տուա, շատերին անըմը չրու լիւս աստղը հանից, շատերին եղից, շատ շատերին էլ դաղից. դաղդղորից ու չրու սօր լոխճու սրտում էլ մին մեծ դաղ թողից» (1-109):

Գրաբարի *թրուեն* բառի *փնտրել, քաղել, ոջիլներից մաքրել* իմաստով գործածությունը հաճախադեպ է բարբառում՝ *քրքրվքրթեվ անել* հարադրությամբ: Ահա օրինակ՝ «Է՞ս հինչան ա, վեր հեմգ տարէ առաջ

40. Էդ.Աղայան, ՊԲՅ, 1971, հ. 2, էջ 260:

քեասիբ ի ինծ տարալիք տռնըտակին նըստըցրալ, խեօրագին էլ տականքն իք քթաւքթաւ ընելաւ պիրըմ առաջս...» (1-207):

*խաղամ* բայածևի գրաբարյան մի շարք իմաստներից բարբառում գործածական է *ներկայացնել, շարժվել, նվազել* իմաստով կիրառությունները: Իմաստային այս նուրբ երանգներով կիրառությունները իր արտահայտությունն է գտել և Տմբլաչի հաչանի գրչում. «Քեգ պերինք, վեր տրախտըմը վեր ընգնի՞ս, թա կեաս ըստեղ էլ մաններտ *տիրիւր տաս, խաղ անիս*, ըստեղին անցվածքն էլ կիրիս...» (2-30): *խաղ* բառի *նվազել* իմաստը պահպանված է *խաղ անել* հարադրության մեջ: «Բլըբանիս թխեցի մին դըրնգդըրնգոց եկաւ, թա դեկտեմբերի 21-ին Ղալըմը թիատր *խաղ ըրին...*» (1-57) (ներկայացրին):

*Պարեն*-գրաբարում *հար* արմատով են կազմվում *հարեն* և *հարկանեն* բայերը: Մելիք-Շահնագարյանի բառապաշարում գործածական են *հար* արմատով կազմված բարդություններ՝ *պիրիհարենք, փուրքհարենք*, ինչպես նաև *հարել* բայից՝ *հարու տալ* իմաստով հարադրությունը: Երկու ձևերն էլ գործածական են բարբառում և ուսումնասիրվող երկում և դրսևորվում են իմաստային հետաքրքիր գործառնությունով: «Կափրէլ դային թևերին ըրաւ, ինծ տակին տիրաւ, հանց պկիս *հարից*, վեր աշկերըս չըռուից (2-5): «Յավըտ վեր թինդիւի, *փուրուհարենք* տեռնա, Ղլըմը քեգ հու՞ա ճար անողը...» (1-36): *Փուրուհարենք* բառը գրաբարի բառակազմության օրենքներով կազմված ձև է:

Գրաբարի ածականների կամ բաղադրյալ ձևերի փոխարեն Մելիք-Շահնագարյանը հաճախ օգտագործում է արմատական ձևերը՝ *ճառագայթ- ճռաքել, շուրջ-շուռ-շոռ*: «Սօր սաղ աշխարքը մեր հվատին, մեր ժամին, արարողութիւնին ու ծեսերին երայ *մաթ մնացած* ինի, տիւք իրեսնէտ *շոռ ըք տուալ* ձեր պըպական հւատան, ձեր տօն իլալիւմ քցաւ, մօրը խուխան պըժենալ, ախճիկը մօրան...» (1-44):

Որոշ բայեր ունեն իմաստային բազմաբնույթ կիրառություններ: Լեզվական այս իրողությունը դարձյալ առնչվում է գրաբարին: Օրինակ՝ *ածեն* բայը գրաբարում ունի տասնյակից ավելի իմաստային նրբերանգներ, որոնք նույնությամբ առկա են Ղարաբաղի բարբա-

ռուն և իմաստային տարբեր դրսևորումների կիրառությամբ իրակացացնում են հեղինակի նպատակադրումը: «Վեր մետոս ա կեամ էն ըլալիւմը, էն գիւռըբչոցը, էն ճղըցներին *մեչն ածած* մըծմըծոնաց աղալը, թփըհան անելը, օշըս ոզըմ ա թա քինի...» (2-21): *Մեչն ածած* հարադրությունը այստեղ գործածվում է *լցրած* իմաստով: «Պարի քիշեր, շտարար դատաւերնէ, սիլեստչիք, պրիկուլուլ, կրօժնու չլեն, պրիստաւ նաչալնիգ, մնըմա վեր դինջ օտիք. դինջ խմիք, քսօրա ետ էլ *ճինջի ածիք*, կերածնէտ մարսիք...» (2-72): *Ածիք* բայը այստեղ հարադրություն է կազմել գրաբարյան *ճինջի* գոյականի հետ: *Ճինջի ածել* հարադրությունը Գավառական բառարանում բացատրվում է *ճինջեխ ածել* հարադրությամբ՝ *ճլորթու վրա օրորվել* իմաստով: (Բարբառում առկա է նաև *ճինջիպոմբի* բառը՝ *ճոճվել, շարժվել, տատանվել* իմաստով): «Դե ես հինչ ասիմ. հայ ժողովուրթ, մեր մին քանէ քեանդիրբազնէ քեզ օղտու տեղ ըն տիրալ, նոխտան քցալ ճիտդ, *ման ըն ածըմ*, օզած վախտն էլ դեաւա եղխ ասըմ, չուքըցընըմ, պեռնըմ...» (2-40): Այստեղ՝ գործածվում է *շրջել, քայլել, ման տալ* իմաստով: «Ախր հինչ սրտաւ ես *քեօչարի ածիմ*. մակարներին քէֆաւ գողաւ ժամ տանիմ. քանի վեր ընդրանց նման հզեր հզեր ջահիլ ջւան տղէք սօր բխոված զարգամբէքը քցած. սոված ծարաւ տանջըվըմ ըն...» (2-45): *Ածիմ* բայը այստեղ գործածված է նվազել իմաստով:

Առանձնապես հետաքրքիր կառույցներ ունի գրաբարյան *առնուլ-առնել* բայը Ղարաբաղի բարբառում, մասնավորապես՝ Մելիք-Շահնազարյանի երկերում: Ըստ լեզվաբան Կարո Դավթյանի՝ «այս բայը մեծ մասամբ փոխարինվում է գրաբարյան *ունիլ* և *կալնուլ* պակասավոր բայերով և *առ* արմատով: *Առնել* բայի հետ գործածական է *ինք* բառը, որը մնացել է գրաբարի նախդրիվ ձևից» (28-120):

Ֆելիտոններում բազմաթիվ կիրառություններ ունի և *ունիմ* բայը՝ *ունենալ, բռնել, վերցնել, տիրել* գործառույթներով: *Ունիմ* բայի գրաբարյան անցյալ կատարյալի՝ *կալայ* ձևի բազմաթիվ կիրառություններ է օգտագործել Մելիք-Շահնազարյանը: Ահա գրաբարի խոնարհման հետքերը *ունիմ* բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում.

<i>գրաբարում</i> ՝ կալայ	կալանք	<i>բարբառում</i> ՝ կալի	կալինք
կալար	կալայք	կալիր	կալիք
կալաւ	կալան	կալալ	կալին (ան)
		ինք ըմ օնըմ-առնում եմ	
		ինք կալի - առա	
		ինք կալաւ- վերցրեց, առալ	

Հրամայականն է՝ կալ-ինք կալ, ինք կալէք

«Լիւսննգին շհարնէն մին մին շոռ կեալան մխթովեալան ետը Սերոպը էլիա ինձ թկին պտոկը *կալաւ*՝ տարաւ տրախտին անմահական ախպիրին կշտին վեր պերաւ...» (2-30): «Դէ լեաւ ա *եր կալ* (վերցրու- Ե.Ս.), լեաւըմ տըւալ, հանց տըւալըմ վեր խօսիս վէչ, ախր իմ շանճախիս մալեաթը հինչ ա, ֆալշովի գատ ա, դէ հը, *ինք առ*, մին աբասի ընի» (1-15):

Գրաբարյան *պարտակել* բայը, ըստ Արմատական բառարանի, *պարտակ-ծածկոց, պարտակել-ծածկել, թաքցնել* իմաստներով գործածվում է Մելիք-Շահնազարյանի բառապաշարում *փրթակել* տարբերակով. «Յայտնի ու անյայտ կունարնէ ըն թովլամիշ անըմ, եա թովլամիշ անողներին արարքը ծածկըմ, *փրթակըմ*...» (2-136): «Մախլաս էլ կոլ տուած վէքսիլնէ, *վրդըփարտակ* ըրած կտակնէ, տակաւն ըրած մեծ ու պիծի կունարնէ չի մնալ, վեր իւրանց վէտուքը լիւս աշխարք չի կեան...» (2-71):

Գրաբարյան *հասանել* բայից Մելիք-Շահնազարյանի բառապաշարում գործածված է *հասցէ կիրքս* արտահայտությունը, որն առաջացել է *հասանել* բայի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքից, որ նշանակում է՝ *հասնի*: «*Հասցէ կիրքս* այս խալիչին տակը, չրու վեր բերզեններին իփած քիլընգեռշը կսառչի» (2-60): Հետագայում *հասանել* բայի և մյուս բայերի ապառնիի այդ ձևը՝ ստորադասական ապառնին, վերացել է, բայց բառի այդ ձևը, նշված կիրառութան մեջ մնալով, վերածվել է գոյականի՝ ստանալով այժմյան իմաստը: Հարկ է նշել, որ բարբառում ավելի շատ ընդունված է *աղրէս* բառի գործածությունը: Մելիք-Շահնազարյանը հավատարիմ է մնում բարբառին: «Միէգ իմ *աղրէսը* ըստի կիրի. Ղալա-խչըփարք քիւչին երա պիծի տան տակի գլխի տանը կէնող



Խչանհին...» (1-84): Այս հատվածում Մելիք-Շահնազարյանը Տմբլաչի Խաչանհի անունով քննադատում է եվրոպական մեծ տերությունների դիվանագիտությունը: «*Եւրոպու պալիտիկան կամ եանի թա ըշկը կապուկի տալը*» գլուխը գրված է պարոնյանական շնչով:

Հարադրական կազմություններից գործածության լայն ոլորտ է ընդգրկում առանձնապես *ակը տալ* հարադրությունը: Գավառական բառարանում այն նշված է *նայել, քննել, աչքի անցընել, տեղեկանալ*.  
2. *այցելության երթալ* իմաստներով:

«Պէլի, տրախտը *ակը տալան* ետը մի օր Սերոպին ըղաչանք պըղատանք ըրի, թա Սերոպ ջան, ինձ տար տժոխկն էլ *ման աժի*, էդ դեարդան էլ պրծնիմ...» (2-13):

Բարբառային որոշ հարադրություններ պահել են գրաբարյան հայցական հոլովի *ւն*: Օրինակ՝ *խաղս լինել, փախս տալ, ծառս լինել* (դարձվածի արժեք է ստացել), *ծախս անել* «...լիս վեր մուտանըմ չի, շոնը *ծառս ա ինըմ*, թիւքը ցրև տալաւ *փախս տամ*...» (2-156): «Փառք *ի բարձունըս*...» (1-70) արտահայտությունը բարբառին ոչ բնորոշ գրաբարյան կառույց է՝ գործածական հոգևոր ոլորտում:

Գրաբարում *գեն* արմատը հանդիպում է *գ* նախդիրի հետ՝ *զգենուլ, զգենալ, զգեստ*: *Կենալ-հագնել* բայը բարբառում գործածական է *գեն-կեն* արմատական ձևով: Այս արմատը առկա է նաև բարբառի այլ եղանակաժամանակային ձևերում. *կեց տալ-հագցնել, կէց-հագնվիր, կեսկը (ց > ս)* ձևերով:

Գրաբարի *զգենուլ* բառի դիմաց բարբառում ունենք *կենալ* բայը. *կենամ, կեց* (զ>կ հնչյունափոխությունը օրինաչափություն է): Առկա է նաև գոյականական ձևը՝ *կեսկ-հագուստ*: «Աննա Պետրովիչ, հրէն բարիբախը կեամ ա. տեսնըմ ըս սօր էլ հինչ շիկըմնա, հուկնց ջուռա ա *կեցուալ* ու քանի կաւալերնէ օնի հետան քցած...» (277):

Գրաբարյան որոշ բայական կառույցներ իրենց դրսևորումն են գտել «Ջուռնա-Տմբլայի» շարադրանքում. *անցանել ընդ քուն-քնաւ ընցընել* (1-60), *անկանել յուղի-հոլէ ընգնել* (1-49), *անկանել ի մտաց-մըննալ (մըտան) ընգնել* (2-77), *ակն աժել-աչք աժել (չորս կողմը նայել)* (1-82) *կալ աչաց-աչքերը կալիլ (կուրանալ)* (2-87), *յոտն կաց-վընը (վըտը*

*կաց* (1-12), *յոտաց-վըտեց(ոտքերի վրա)* (2-87): «Միենգ էլ ասըմ ըն Ղարաբաղին քիւրսին *մտան ընգած* պարիժան ա մօղնի մօղնի տան սարք պիրել տամ-էն էլ տարին մի փոխըմ» (2-72): «Մին տեղ փարթամութիւնը հանց *քուռըցրալ* ա մարթոց աչքերը վեր տասսը չեշմակաւ էլ աղքադ ըղքուդու տեսնըմ չըն» (2-87): «Մին օրիշ տեղ՝ ամմեն հինչան գուրկ հեալվըմ ըն, մաշվըմ, փորընեն մեշկըներան կենըմ, *վըտեց* չուրանըմ...» (2-87):

3. Գրաբարի *թվականների* համակարգից բարբառը պահել է *մին* (ոչ թե մեկ) և *չորք* (չորս) քանակական թվականները: Պահպանված են գրաբարի անձներական թվականները՝ *երկոքեան, բարբառում՝ ըրկոքեան, երեքեան-իրեքեան, չորեքեան-չուրեքեան* և այլն: Անձներական թվականները ցույց են տալիս առարկաների և քանակի միասնական գործածություն խոսքի մեջ, այսինքն՝ *երկուքեան*, նշանակում է՝ *երկուսն էլ*: Տարբեր լեզուներում այդ իմաստները նկարագրական ձևով են արտահայտվում (ռուս.՝ все тры), իսկ Ղարաբաղի բարբառում այդ ձևերը ցայժմ կենսունակ են և գործածված են նաև Տմբլաչի Խաչանհի ֆելիետոններում: «Շնահաւեր ա անըմ հարսին ձեռքին եսիր մնացած սկեսվորը և սկեսվոր ձեռքին եսիր մնացած հարսին թեազայ տարին ու *երկուքեանոցն* էլ Աստուծանց խնդրում խելք» (1-55): Անձներական թվականները հոլովվում են գրաբարածէ՝ *երկուքեան, երկուքեանին, երկուքեանա, երկուքեանոց... իրեքեան*: Ըստ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի՝ անձներական թվականների գործածությունը հատկապես բնորոշ էր դասական գրաբարին՝ 5-րդ դարի առաջին կես, իսկ հետագա շրջանում՝ 9-12-րդ դարերում դրանք կենսունակ չէին (10-37):

4. Գրաբարյան *ով, երբ, ինչ, ոյր* դերանունների դիմաց Մելիք-Շահնազարյանի բառապաշարում արտահայտություն են գտել *հու, հիր, հինչ, հիւր* ձևերը, որոնց մեջ, ըստ Հր.Աճառյանի, «բառասկզբի *հ*-ն հնդեվրոպականից մնացած հավելադիր է» (13-413):

5. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարում հանդիպում են նաև բարբառում գործածվող գրաբարյան նախդիրների դրսևորումներ:

Բարբառում առանձնապես գործուն է *զ* նախդիրը: Գրաբարից ավանդված լինելով՝ այն գործածվում է մի շարք բարբառներում և վերապրուկորեն հարատևում է նաև ժամանակակից հայերենում՝ *զգեստ, զարդ, զետեղել, զարտուղի, զարմանք, զարթոնք* և այլ բառերում: Այն գործածվել է իբրև որոշիչ հոդ հայցական հոլովի հետ, ապա տարբեր նշանակություններով՝ մյուս հոլովների հետ. բացառականի հետ՝ *մասին* իմաստով, գործիականի հետ՝ շուրջ և այլ նշանակություններով, բայի անորոշ ձևի վրա դրվելով՝ սաստկացրել է բայիմաստը:

Ըստ Գ.Ջահուկյանի՝ այս նախդիրը իր նշանակությամբ մոտ է ռուսերեն *за* նախդրին (8-250), որը նույնպես գործածվում է հայցական հոլովի հետ:

Գրաբարի պարառական հոլովը՝ *զ+*գործիական հոլով կազմությամբ, արտահայտում է *շուրջը, մի բանի շուրջը* գաղափարը: Դրա կիրառման բազմաթիվ օրինակներ կան Մելիք-Շահնագարյանի բառապաշարում.

*զիրա* անց կենալ-վրայով անցնել

*զիրա* տալ-փաթաթվել

*զիրա* ընցնել-որպիսությունը իմանալ

*զիրա* ընգնել-ինչ-որ արգելքի հանդիպել:

Ավելի հաճախ գործածվում է ինքը դերանվան հետ. «...շատ աղքատ ըղջուտ *զինքընեն* խմիչքի ըն տուալ...» (1-45): Ինքն դերանվան *զինքըն* հայցականը բարբառում պահպանվել է և *ինքըզինքը* տարբերակով: «*Ձինքս* մին տոնըմը լեաւ բաբաթ շինալ ըմ» (1-134), «Փխչելաւ *զինքը* բցըմա ծմակը...» (2-155), «*Ձինքըտ* քեզ հըւաքի» (1-36):

Մելիք-Շահնագարյանի բառապաշարի գրաբարյան բառաշերտի մեջ հանդիպում են նաև այլ նախդիրների գործածություններ: Դրանցից են *ի-ն* (որը երբեմն հնչյունափոխվում է *ը-ի*) «Անուք զվարձն *ի Տեառնե*»: Ի նախդիրը գործածվել է բացառական հոլովի հետ՝ *ի Տեառնե*: Այս կազմությունը բարբառում գործուն է, գրաբարյան հնաբանություն է: Ի նախդիրը գործածվում է բարդությունների մեջ՝ *պըրտիյէր-պորտն վեր, պըրտըվէր-պորտն ի վար, պըրտըտուս-պորտն ի դուրս, փըսըվեր*

*փորս ի վար, փըսըեր-փորս ի վեր*: Այս բառերը ավանդված են մատենագրությամբ: «Աստուած հոքին լիւսաւերի, խէ շատ *պրտիւտիւս* խոսող մարդ ար...» (2-65): «Թա չէ վէր շիլ ընգաւ *անդուտընըվէր-անդունդներն ի վար* ընգաւ, էնա ստընու փայ ա տէռնըմ» (2-8):

Առ նախդիրով ևս կան մի շարք կազմություններ: Այս նախդրի մասին հայ լեզվաբանական գրականության մեջ հայտնվել են տարբեր կարծիքներ: *Առիս-Յր.* Աճառյանը այն կապել է *ես* դերանվան հայցականի *իս* ձևի հետ. առ+իս-առիս, առիդ, առին և այլն: *Առիս* բառի ծագումը այլ կերպ է բացատրել Ստ.Մալխասյանցը, այն է՝ *առիս* բառը առաջացել է *առ և ի* նախդիրներից, դրանք միասին դիտում է իբրև մի առանձին բանական միություն, Ալ.Մարգարյանը գտնում է, որ *առիս* բառում պարզապես *առ (մոտ, քով)* նախդիրը *ի* հոլովակազմիչ է ստացել, իսկ *ս-ն* ստացական հոդ է, ինչպես և *դ>տ, ն>ն*: Նա ելնում է այն իրողությունից, որ աշխարհաբարում և մանավանդ, բարբառներում, տեղի իմաստ արտահայտող կապերը մեծ մասամբ հոլովվում են՝ ենթարկվելով ի հոլովման՝ *մեջը-միջի(ն), միջից, միջով*: Դրանք կարող են գործածվել և հոգնակի թվով՝ *առիներիս կամ առներիս*, որը նշանակում է *մեզ մոտ՝ ձեռներիս, առներիդ...* Բարբառում *առ* նախդիրը բարդություն է կազմում ներքոբերյալ օրինակներում՝ *ըռըկեօճի-առ աչոք* (ըստ Մելիք-Շահնագարյանի), *ըռչընէկ-առաջնէկ, ըռըփակ-առաջը փակ*:

Ղարաբաղի բարբառը հարազատորեն պահել է գրաբարի մի շարք միավանկ բառերի *ն* վերջնահանգը՝ *ծուկն-ծիւկնը, մուկն-մօկնը, կաթնկաթնը, դուռն-տօռնը, բեռն-պեռնը, նուռն-նօռնը, թոռն-թոռնը, եզն-եզնը*: Տմբլաչի խաչանի բառապաշարում նման երևույթները անսպառ են, որն էլ հենց վկայում է բարբառում *ն* վերջնահանգի գործուն լինելու մասին: «Սյունիք-Արցախի տարածքը եղել է բաղաձայն+ն զուգորդման գործընթացի հիմնական խառնարանը և այս հիմքի վրա է, որ այստեղ առավել ուժգնությամբ է դրսևորվել այս երևույթը», - գտնում է Յ.Սուրադյանը (33-326): Յր.Աճառյանը այդ առթիվ գրում է. «Այս բարբառների մեջ կա սակայն մի ուրիշ երևույթ էլ: Հաճախ գրաբարը չունի վերջնահանգ *ն*, մինչդեռ բարբառներն ունեն» (23-416): Այն բառերը, որոնք

գրաբարուն և բարբառուն ունեն *Մ* վերջնահանգը, բարբառուն ստանուն են նաև *ը* հոդը. *անդամ-անդամներ, սիրեխ-սիրեխներ, եղյամ-եղյամներ, երդում-խլրթիւմներ* (վերջինս չկա Յր.Աճառյանի կազմած ցանկում): Յր.Աճառյանի ներկայացրած նման բառերի մի մասը Ղարաբաղի բարբառուն հանդիպում է երկու տարբերակով էլ. *խեժ-խեժներ, թուզ-թուզներ*: «Բարբառուն նկատվող այս երևույթը ոչ թե բարբառային նորանուծություն է, այլ հնուց եկող նորանուծության օրինաչափության արտահայտություն: Հնարավոր է նաև, որ բարբառներում ն ունեցող որոշակի բառեր, որոնք գրաբարը պահել է առանց *ն-ի*, իրենցից ներկայացնում են հայերենի տվյալ բառի ավելի հնագույն տարբերակը, որը գրաբարը չի պահել»: 41 Ըստ Գ.Ջահուկյանի, այդ *Մ-ն* կարելի է ընդունել որպես հին հայցականի մնացորդ (9-282): «Ըստեղ, պելի վէջ *ամենը* կայ... վէջ *ծմենը*... վէջ կեարունք, վէջ աշունք... (2-8):

Յր.Աճառյանը գտնում է, որ գրաբարի մի խումբ բառեր, համեմատելով նախալեզվյան ձևերի հետ, բառասկզբից մի բաղաձայն ընկած ունեն հայերենում, մինչդեռ բարբառային ձևում մնում է: Օրինակ՝ *arbh* արմատը տալիս է հայերեն արբ(ենալ), *perθ* >երի, *porthu*>որթ, իսկ սրանց բարբառային ձևերը լինում են *հարբել, հերի, հորթ*: Բնականաբար, այս բարբառային ձևերը, որոնք ունեն *հ* նախաձայնը, ավելի հին են, քան գրաբարը» (13-411): Այս առթիվ Յ.Մուրադյանը նկատում է. «Պետք է կարծել, որ հայերենի նախապատմության ինչ-որ շրջանում արևելյան տարածքի բարբառներում բառասկզբի ձայնավորից առաջ եղել է խուլ *հ-ի* հավելման մի որոշակի միտում, որը հետագա զարգացում է ապրել սահմանափակ տարածքում» (15-319):

Այս երևույթը բնորոշ է Ղարաբաղի բարբառին ևս և ունի բազմաթիվ գործածություններ «Ձուռնա-Տմբլայի» էջերում, ինչպես՝ *ալևոր-հըլեվոր, ընկեր-հընգեր, երի-հերի, ամօթ-համօթ, ինչ-հինչ*: Բարբառը որոշ բառերում պահել է *յ* ով գրությունը՝ *նայել-յէշիլ* (նկատել, տեսնել), *հաղթել-յէխնել, հետո-յետնան, հետուհետ-յըտըյետ, ուշ-ուշ յիտըյետի, ուշանալ-յըտանալ, եղան-յըղօլի* (որը երևի *յեղուլ՝ շուռ տալ* բառից է, *ի* ածականակերտ ածանցով),

41. *Լ.Յովհաննիսյան, ՊՔՀ, 1977, հ. 1, էջ 121:*

Մի շարք բառերի բառասկզբի *յ-ն* ուղղագրական բարեփոխությամբ վերածվել է *հ-ի՝ Յիսուս-Յիսուս, յարմար-հարմար, յօժար-հօժար, յըղի-հըղի* (երկուս գործածական են երկու ձևերն էլ): «Պարուն կազե կիրող, բախշի, թեհտի ըմ, էքից *յոէ ըմ ընգնըմ* դեպի էջմիածին...» (1-137): «Շօշվա Ղալին, Բաքուայ ու շատ տեղերի *հըղըցընեն* կապուած ինելաւ՝ Ձուռնա-Տմբլին օզգեայ բաբաթ խբրենն թողընըք օրիշ վախտի» (2-207):

Յր.Աճառյանի բերած մոտ 30 բառերից Ղարաբաղի բարբառում բուլորն էլ առանց *հ-ի* են, բացառությամբ *ուղի-հղէ* բառի, որը գրաբարյան *ուղի-(յուղի-ի+ուղի)* տարբերակն է:

Մելիք-Շահնազարյանի բառապաշարում հանդիպում են այնպիսի բառեր, որոնք հավանաբար եղել են հին հայերենի խոսակցական լեզվում, կազմված են գրաբարյան ձևերից, սակայն գրաբար գրականությանը չեն ավանդվել: «Սրանցից մի քանիսը ներկայացնում են ավելի հին վիճակ, քան գրաբարն է՝ *պատուրիան, նապաստրակ*» (13-430): Կարելի է շարունակել այս ցանկը՝ *ագի-հեաքիւ, ակնթարթ-ըշկըճըպի* (բարբառը պահել է գրաբարյան *ճեպ* արմատը), *ագռավ-քաշկ, ակոայ-կընեռիք, ածելի-ծիլի, ամպ-թօխպ, ակիշ-ծիան (հացիան), այգողք-ինքնավըեղ, ալևոր-հըլեվոր, այնուհետև-ընդետնըս, անկարգ-շըրփռի, որբևայրի-իրփըվերի*:

Գրաբարյան բառաշերտի մեջ հատուկ ուշադրության են արժանի հնացած բառերը: Խոսելով գրողի բառապաշարում եղած հնաբանությունների մասին՝ պետք է նշել, որ դրանցից յուրաքանչյուրն ունի հնության տարբեր աստիճաններ: Բառի և նրա տարբեր իմաստների հնացած լինելը որոշելու համար կարևոր նշանակություն ունի իմանալ, թե բառը երբ է դուրս եկել ամենօրյա գործածությունից: Հնաբանությունների մեջ կան բառեր, որոնք չեն գործածվում ժամանակակից բարբառում և անհասկանալի են բարբառախոս միջավայրին: Գործածված գրաբարյան բառերն ու արտահայտությունները հաճախ բավականին երկարաշունչ են, և Մելիք-Շահնազարյանը դա օգտագործում է, երբ բարոյախոսի կամ քննադատի կեցվածքում է, կամ վերարտադրում է պատմական որևէ իրողություն ու քննադատական վեր աբերմունք դրսևորում:

Բազմաթիվ են Մելիք-Շահնազարյանի օգտագործած գրաբարյան արտահայտությունները, ասացվածքները, աստվածաշնչից մեջբերված ամբողջական հատվածները: Սրանց հեղինակը դիմում է այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է բարոյախոսությանը: Ահա «Տուք և տացի ծեգ» գլխում «ես ժմանակը, ա քմատաղ, էն ժմանակը չի, վեր աւըմար «ծրի առէք և ծրի տւէք» միէնգ Ասծու պարի լիւս, պարի իւրիւ գինն էլա փողաւը առնվըմ եա ծախվըմ: Դաւիթ մարքարէն Սաղմուսունը միմ տեղ աւըմ ա «Տուք և տացի ծեգ»: Ամնա հո՞ր ա, ինձ տո քեզ տամ, հո՞ւա հիւր ըռըխի յէշըմ» (2-65):

Բարոյախոսության իր խոսքը եզրափակելով՝ Տմբլաչի Խաչանը դիմում է հանրությանը՝ «Վէր ունիցի ականջըս լսելու, լու իցէ...» (2-66):

Հարկ է նշել, որ «Ձուռնա-Տմբլայուն» օգտագործված գրաբարյան արտահայտությունները՝ *անձանց մերոց ա տեռալ, տուք գողորմիթիւն աղքատաց, առնուք զվարծս ի Տեառնէ, եկեսցե ի վերայ իմ ողորմիթիւն քո, խոնարհեցո, ապրեցո, եղիցի լալ և դրժդրժել ատամանց, քավեալ եմ յարենե արթարոյտ ըսելավ, մեղաց հաց, բաղխեցեք և բաղջի ծեգ, հոգոց հանգուցելոց ասի, հարկս հարկաւերաց անին, պատիւս արժանաւերաց, զուղոսս կլանէք և զմժղուկս քամէք, ի վերին երուսաղեմ, ի բնակարանս հրեշտակաց* (հատվածներ հոգևոր երգերի տեքստերից), *հոքուն սրբոյ շնորքը նորընծին-ըջրհամփիւրն էլ հոքներ դէրին*, բնորոշ չեն ո՛չ Ղարաբաղի բարբառին և ո՛չ էլ Տմբլաչի-Խաչանի բառապաշարին: Հակված ենք կարծելու, որ գրաբարյան այսքան արտահայտությունների օգտագործումը կապված է հեղինակի՝ գրաբարին լավ տիրապետելու հետ:

Ղարաբաղի բարբառի գրաբարյան բառաշերտը Մելիք-Շահնազարյանի շնորհաշատ գրչով անմահացել է նրա ստեղծագործություններում և այսօր Ղարաբաղի բառապաշարն ուսումնասիրող լեզվաբանին հարուստ նյութ է մատուցում, ինչպիսին էր նրա փափագը:

*Փոխառություններ արևելյան լեզուներից:* Հայոց լեզվի համար փոխառությունը եղել և մնում է նրա բառագանձի հարստացման աղբյուրներից մեկը: Դարերի ընթացքում հայ ժողովրդի շուրթերին խոր ար-

մատներ են գցել արևելյան լեզուներից՝ պարսկերենից, ասորերենից, արաբերենից, կովկասյան լեզուներից ու թուրքերենից փոխառված բառերը:

Ղարաբաղի բարբառի բառային կազմում կան բավականաչափ փոխառություններ արևելյան լեզուներից՝ պարսկերենից կամ պարսկերենի միջնորդությամբ՝ արաբերենից, նաև՝ թուրքերենից: Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլայուն» գործածված փոխառյալ բառերի քանակը, ըստ վիճակագրության, կազմում է բառապաշարի մոտ 12 տոկոսը: Թվարկենք Մելիք-Շահնազարյանի գործածած փոխառյալ բառերից՝ միաժամանակ տալով հայերեն բացատրությունները:<sup>42</sup>

Արաբերենից՝ *ըմանաթ-ավանդ, գրավական; ախմախ-հիմար, անհասկացող; գէջդանգէջ-վերջապես, ի վերջո; խասիաթ-բնավորություն, աջալաման-ժամանակ, հեսաթ-հաշիվ* և այլն:

Պարսկերենից՝ *քոռ-կույր; արուռ-պատիվ, ամոթի զգացում; աչառ-բանալի, ասման-աշխարհ, բազար-հրապարակ, շուկա; թեազայ-նոր, խանգադա-խանի որդի, հարուստ; չարա-ճար, միջոց; հաւա-եղանակ* և այլն:

Թուրքերենից՝ *սիլլա-ապտակ, փիս-վատ, օթադ-սենյակ, ախսախկալ-ծերունի, մեծահասակ; աջըդ-վրեժ, բողազ-բերան, կոկորդ; թոփ-խանա-հրապարակ, օղլուշադ-կին, երեխաներ, տնեցի; բեին-ուղեղ, խելք, գլուխ; աֆաշկարայ-ակնհայտ, բացահայտ; ալիադդա-հատկապես, ուղուբ-հաջողություն* և այլն:

Այս բառերը բանավոր հաղորդակցման ճանապարհով անցել են հայերենի մի շարք բարբառներին, այդ թվում և Ղարաբաղի բարբառին: Փոխառյալ բառաշերտի օգնությամբ անվանվում են առարկաներ, երևույթներ, որոնցից շատերը նոր ձևավորվող գրական լեզվում դեռևս չունեին հայերեն համապատասխան համարժեքները. դրանց մի մասը աստիճանաբար փոխարինվեց հայերեն բառերով և դուրս մղեց օտար ձևերը գեղարվեստական գրականության և գրական լեզվի բառային

42. Նշված բառերի բացատրությունները տալիս օգտվել ենք Գ.Գասպարյանի, «Արովանի երկերի», Գ.Սարտիրոսյանի «Օտար լեզուների», Բաղդասյանի «Հայ-արթրբեջաներեն», Աճառյանի բառարաններից:

կազմից, իսկ մի մասն էլ դեռևս գործածական է գրական լեզվում և նույնիսկ մոռացվել է դրանց փոխառյալ լինելու հանգամանքը:

Հարկ է նշել, որ այս բառաշերտի գործածությունը ոչ թե ոճական նպատակ է հետապնդում, այլ պարզապես տվյալ ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ լեզվական իրողություն է: Այստեղ ևս նկատվում է Մելիք-Շահնազարյանի որոշակի միտումը՝ ժողովրդին հասկանալի լեզվով գրելու մասին, և այդ նպատակով էլ նա ժամանակի գրական լեզվում եղած հայերեն բառերի փոխարեն նախընտրում է ավելի գործածական օտար ձևեր՝ երբեմն նշելով դրանց հայերեն համարժեքները: Այսպես օրինակ՝ «էրկու թուրք մին մինու բուղազա ըն կենըմ ու մին խընծորու երայ կոեվ տամ, «աղա՛, վուրմա՛, թխի...» (1-60): Ինչպես երևաց, միևնույն նախադասության մեջ գործ են ածվում նույն իմաստով և՛ փոխառյալ, և՛ հայերեն բառերը, նման դեպքերում կամ պարզաբանվում, կամ էլ ավելի սաստկական երանգ է տրվում տվյալ հասկացության արտահայտած իմաստին, ընդգծվում է այն: «Ըստեղ պէլի՛, վէջ գաստիննիցէք կան, վէջ էլ քինջու պուճախում Մատրոնա Վասիլևնէք, վէր էտ տղոցը թովլամիշ անին՝ կըլխընէն եղին, իլած չիլածնէն պլոկին, լիւթ թողին, շատ վախտ էլ քեօխա շինած՝ տոն դարկին» (2-11):

«Հունց վէր տեսնըմ ըմ, էլիա Թիֆլիզ քինալը լեաւ ա, ընտեղ շատ լեաւ հեաքիմնէ կան, համ ցաւին ծար կանին, կամ էլ Ղալին հեաքիմ սհաքին հթեթայ կտայ, վէր էլ դալաթ չանի իտի հեաքեր տայ մարթու... Ամմա ըրմնալուն էս ա, վէր Մանաս ապերը քինալ չքինալին երայ հեալա ծնդրթիթեւ ա անըմ. օխնուած, հսկացալ չըս թա վէրսը բեարըմը երա կանին, եա արկաթը տաք տաք կթակին...» (1-36): Սակայն փոխառյալ բառերի բացատրությունը միշտ չէ, որ տրվում է, դրանց զգալի մասը մնում է անհասկանալի, և հարկ է լինում դիմել բառարանների օգնությանը:

Մելիք-Շահնազարյանի բառապաշարում հանդիպում են բառի իմաստային տարբեր գործածություններ, երբ փոխառյալ բառը գործածված է երկրորդ կամ այլ իմաստով: Օրինակ՝ արաբերենից պարսկերենի միջնորդությամբ փոխառված *մաթթահ-mattah* բառը, որը նշանա-

կում է *սքանչելի, արժանավոր, հազվագյուտ*, գրողն օգտագործում է հեզմական իմաստով «Վայ, ընտրանց խնձլոզն էլ վեր քինի, էտ ար պալաս, եանի ախճիզը *հինջ մաթթահա՛ լղար, հանցա լիա ալակուշկուշ ինի»* (2-63):

Արաբերենից պարսկերենի միջնորդությամբ բարբառին անցած *միննաթ (minnat)* բառը փոխատու լեզվում նշանակում է *երախտիք*, թուրքերենում այն ունի նաև *խնդիրք* իմաստը: Ղարաբաղի բարբառում այն ստանում է նաև *գանգատվել, դժգոհել մեկից*, ինչպես նաև՝ *պարտքի տակ թողնել* իմաստները «... հեալա մին պատառ էլ *միննաթ* տինին, թա վէր մունք չինինք՝ նաչաղը դահի բեթար փորցանքու կըպտահար» (2-10): «Ասըմըն նոր տաքսի ըն տիրալ վէր *միննաթչէքը* (խնդրատուները-Ե.Ս.) մեզգատեմը սեկլատարին մին կիլոխ շեաքար պերին իւրան չայալը...» (1-32): *Միննաթչէքը*-թուրքերեն *չի* ածանցին ավելացել է հայերեն հոգնակերտը: Բառը ենթարկվել է հայերենի քերականական ձևափոխություններին:

Պարսկերեն *band* նշանակում է *արգելք*: Պահելով այդ իմաստը՝ Ղարաբաղի բարբառում բառը ստացել նոր նշանակություն. այն է՝ *ճանապարհ, փողոցի մի հատված*: Այն ունի նաև *կապ* իմաստը՝ *չնաբանդ, ինչպես նաև մասնագիտություն անվանող մասնիկ է՝ սազբանդ-նվագող, նալբանդ-պայտար*:

*Թուրքերեն* խոսակցական լեզվից կատարված մեծ քանակով փոխառությունները, բացի հայ բարբառների համար ընդհանուր օրինաչափություն լինելուց, բացատրվում են և այն հանգամանքով, որ XIX դարի վերջին Շուշիի բնակչության զգալի մասը մահմեդականներ էին: Ըստ Մակար Բարխուդարյանի «Արցախ» աշխատությունից բերված հիշատակության (36-89)՝ չնայած հայերն ու թուրքերն ապրում էին քաղաքի տարբեր մասերում, այնուամենայնիվ, թուրքերի խոսակցական լեզվից շատ բառեր ու արտահայտություններ գործածում էին հայերը, և երևի թե այդ է պատճառը, որ Տմբլաչի Խաչանը հասարակության տարբեր խավերի հանդեպ իր վերաբերմունքն ու երգիծանքը դրսևորելիս բազմաթիվ թուրքերեն բառեր, արտահայտություններ, դարձվածք-

ներ ու համեմատություններ է օգտագործում: «Թոփխանան ցի մտի քիւչէքը, քիւչէք, հի՞նչ քիւչէք, հեալած եղը վեր վեր ածիս, էլաւը կըհաւաքուի, էնքան *թեամուզ* ար, վեր ըրըլիւսաւ եա ճըրըլիւսաւ մարթ ճոխտ վէննուք մեչին հանց *բաթմիշ ինի*, վեր կարի վեչ թա տիւս կեայ, հունց վեր մեր *շհարներին քիւչէքըմը*» (2-25):

«Որևէ բառ, որ օրինակ՝ արաբերեն է և հայերենի մեջ գործածական է, կարող է թե արաբերենից, թե պարսկերենից և թե թուրքերենից անցած լինել բարբառներից, բայց հնարավոր չէ ամեն անգամ ճշտել, թե հատկապես որ լեզվից է: Կան բառեր, որոնք ծագումով արաբերեն կամ պարսկերեն են, բայց հայերենը փոխ է առել **թուրքերենից**: Արա **պացույցն է այն, որ փոխառյալ 1147** արաբերեն ու պարսկերեն բառերից այսօր մեր լեզվի մեջ մտել են այն բառերը, որոնք թուրքերենի մեջ էլ կան», -նշում է Զր.Աճառյանը (23-255): Օրինակ՝ *գափանք* բառը, որ նշանակում է *երդիկի ծածկոց*, հայերենից անցել է թուրքերենին և հետո՝ թուրքերենից նորից անցել հայերենին և այժմ Ղարաբաղի բարբառում օգտագործվում է *ղափաղ* ձևով, մաս՝ *որխկալի*, այսինքն՝ *բերանը փակող, կափարիչ*: Այս նշանակությամբ էլ գործածված է «Ձուռնա-Տմբլայում»:

Երբեմն հանդիպում են այնպիսի ձևեր, երբ թե՛ հնչյունական օրենքները և թե՛ բառի իմաստը բավական չեն լինում բառի ծագումնաբանությունը որոշելու համար, որովհետև բառը թե՛ բնիկ և թե՛ փոխառյալ լինելու դեպքում նույն ձևն է ստանում:

*Դավ* բառը «Ձուռնա-Տմբլայում» տարբեր հարադրություններում գործածվում է մի քանի իմաստներով: 1.«Ձատեկ ախար օրը մատաղ պըժընողներին կտակ ըմանըմ, վեր ամեն հարուստու տօն մին-մին բադեա յա ունկնաւեր կճոճ տըմըկաջիր դարկին, վեր պորտընէն եղըկալի, էլ *դաւի-դառաբայ* չի սարքին...» (1-101). այստեղ գործածված է *աղմուկ, վեճ, կռիվ* իմաստով: 2.«...Վէչ մի հեաբզիբախտ կապլի եա *դաւադեարման* էլ քիար չի անըմ, փոր ա վեր քըմա ու փրտակող չի կայ, շնաւետը սաղ շհարը եր ա կալալ»: Այս նախադասության մեջ *դաւա* բառը գործածված է *դեղ, ճար* իմաստով: Նույն նշանակությամբ բառը

գործածվում է և հոգնակիով՝ *դաւրանք* «Ըստեղ թեազա մօդա ընգած ներվննի ազարնէ չկայ, ըտրա մհար էլ վէչ ապտեկ պահող կա, վեր մինին քսան կին երայ տիրած *դաւրանք* ծախս անին»: *Դաւրանք-դաւադեղ* բառի հոգնակի կազմությունն է: 3.«Դէ՛ ես հինչ ասիմ, հայ ժողովուրթ, վեր մին քանէ քեանդիրբազնէ քեզ օղտու տեղ ըն տիրալ, նոխտան քցալ ճիտդ, ման ըն ածըմ, օզած վախտն էլ *դեաւա*, երխ, ասըմ, չուքըցընըմ, պեռնըմ; ուրանք էլ կլխաւը եր ինըմ սալլանաւ հշտեղ *ասիս քըմ ու տու տուս ըս ընըմ..*» (*դեաւա-ուղտ*): 4.«...Հու ա գիտըմ՝ մին շաքթան ետը բեալքեան *դաւի տուաւ* թա վէսկի սիաթ եա թոխկա չըս տուալ» (*դաւի տուաւ-պահանջեց*):

Ըստ Զր.Աճառյանի՝ *դաւ* բառը կարող է լինել թե բնիկ հայերեն (որովհետև հնիւ. ձևն է dhabh. dh-տալիս է *դ*, որ պիտի տար հայերեն *դաւ*, և թե փոխառյալ, որովհետև իրանյան ձևն է զենդերեն *dava*, որ նույնպես պիտի տար հայ. *դաւ*) (13-229):

Արդյո՞ք այս համանուն բառերը փոխառություններ են, իսկ *դաւրանք* ձևում այն նույնիսկ ենթարկվել է հայերենի քերականական օրինաչափություններին՝ ստանալով գրաբարյան *անք* հոգնակերտը:

Ղարաբաղի բարբառում գործածական է *փիթելա* բառը, որը նշված չէ Գավառական բառարանում, միայն *փիլթա* ձևն է նշված Երևանի բարբառի համար: Սելիք-Շահնազարյանի բառապաշարում հանդիպում են բարբառում *փիթելա*, գրական, բայց բարբառային արտասանությամբ հնչյունափոխված *պատրուկ/պատրույզ* երկու տարբերակներն էլ «...Վերին մաթխաբքեամանավ ծկոտըմ ըն, փիթիլէք անցկացնըմ, փորը մազութաւ լցնըմ, ճրագի մման վառում...» (2-21), «... ջուբան մի քանի մուծու կուտուրնէ հանից, ծեռքըմ ճըմոհից, *պատրուկը* հանից տէն տիրա...» (1-12): *Փիթելա-պատրույզ* բառի բուն աղբյուրն է եգիպտական *petura*, ասորերենից՝ *fetile* ձևը: Սրանցից փոխառությամբ պարսկական *pitila* ձևից թուրքերենում կա *pilta* ձևը, որից էլ հայերենի *փիլթայ*, ռուսերենի *фитиль* բառերը: *Նեարմա նեազուկ* հարադրությունն ունի ընդգծված արևելյան երանգ, պարսկական հին փոխառություն է (*nazik*), որի նախկին իմաստն էր *նիհար, բարակ, բարալիկ*,

*նուրբ, փափուկ*, սակայն իմաստի որոշ փոփոխությամբ և վերաբերական նշանակության հավելումով գործածվում է Մելիք-Շահնազարյանի բառապաշարում: «Էս ա մին քանէ տարի կա, վեր Կվկազին *նեարմանեազիք* հարս ու ախճկերքն էլ ըն ելաղ քինըմ...» (2-74):

Մելիք-Շահնազարյանը փոխառյալ բառերից և հայերենի բառածեղից կազմում է հարադիր բարդություններ, իսկ հաճախ էլ բայական վերջավորությունների միջոցով՝ բայեր, ինչպես՝ *դինջ-դինջանալ, մուռտառ-մուռտառել, դամմազ (անհասկացող, անմիտ)-դըմմըզանալ, ղըմմըզօթուն, սարսաղ-սըրսըղանալ, սըրսըղօթուն, քեսասիբ-քիսիբանալ, քիսըբթուն, քեամբախտ-քիմբըխտանալ, քիմբըխտթուն, սէյրակ-սէյրըկանալ*:

Մելիք-Շահնազարյանի բառապաշարում գործածվող փոխառյալ բարդ բառերն ունեն յուրահատուկ կազմություն. ա) մի շարք բաղադրյալ բառեր բաղադրված են թուրքերեն+թուրքերեն կաղապարով, բայց հանդես են գալիս հայերենի քերականական կազմություններով. Օրինակ՝ *բողազեալլուխավ-վզաշորով, հեաքիմբաշէք (գլխավոր բժիշկներ), բ*՝ մի շարք բառեր հանդես են գալիս թուրքերեն+պարսկերեն *խանա-տեղ* ցույց տվող մասնիկի կազմությամբ՝ *բախկալխանա, բեազազխանա-շուկա, հրապարակ, դուսաղխանա-բանտ, դավթարխանա-գրասենյակ, խարաբախանա-ավերականոց, շիրախանա-հնձան*:

Հարկ է նշել, որ նման կազմությամբ բառերը գործածվում է նաև ժամանակակից բարբառախոս սերունդը. գ) բաղադրյալ բառերի մի առանձին մաս են կազմում հայերեն+պարսկերեն կաղապարները՝ *սըռնըխանա-սառնարան, ասպաժխանա-խոհանոց*. դ) թուրքերեն+հայերեն կաղապարները՝ *սիլլատրաք-ապտակ, քիմսամեռ-ամուսինը մեռած, իզամեռ-ազիզը մեռած*: ե) հայերեն+թուրքերեն՝ *վըննըբրեհ, վըր-սըրեալլեխ, պըցըրդաբան-բարձրակրունկ, սնդողչա-սնդուկ*: Վերջինս կազմված է *գիւլբոխչա* բառի նմանությամբ. նշանակում է՝ *սնդուկում պահվող, փունջ*: Այս հարադրությունը՝ *սնդոխչա-գիւլբոխչա*, շատ գեղեցիկ և արտահայտիչ կիրառություն է գտել «Ձուռնա-Տմբլայի» «Մեր երգրին հաւքերը» գլխում, ուր, խոսելով Կովկասի նագուկ կանանց մա-

սին, երգիծում է նրանց քաղքենիական կեցվածքը, պահվածքը: «Թամէր երգրին էտ հաւքերը, Ղարաբաղի նեանամ սեանամ խանըմնէն, Բաքուայ նարմա-նեազուք խաթունէն, Թիֆլիզու, Նախճուանու հազրաբութա *սնդոխչա գիւլբոխչա* հարսներն ու ըխճըկերքը հունց ըն իւրանց օրը ելաղըմ անց կըցըմ, ըտրա մհար թող իւրանք խօսին, մունք անգուն տինինք» (2-74):

Փոխառյալ *անվանական և բայական հարադրությունները* մեծ թիվ են կազմում «Ձուռնա-Տմբլայում»: «Հարադրավոր բայերն ու դարձվածքները, երբեմն լինելով գեղարվեստական պատկերների յուրահատուկ տեսակներ, անսահմանորեն հարուստ են արտահայտչական հնարավորություններով, գունագեղ պատկերավորությամբ» (9-108): Փոխառյալ բայական հարադրությունները, մեր կարծիքով, հիմնականում հարստացել են աշխարհաբարի կազմավորման շրջանում: «Ձուռնա-Տմբլայում» հարադրական բայական փոխառյալ բարդությունները գործածության մեծ հաճախականություն ունեն:

ա) Փոխառյալ բաղադրիչներով բայական հարադրական բարդություններից առավել տարածված են *անել* բայով ձևերը՝ *արամիշ անել, ափաթ անել, աչմա անել, բաթմիշ անել, բաստրմիշ անել, բադրիար անել, բութա անել, գիլեջա անել, դոնադ անել, հեքիմօթուն անել, վիրը-վուրդ անել, խաթըր անել, դեարդ անել* և այլն: *Անել* բառով կազմված փոխառյալ հարադրական բարդությունները հիմնականում ներգործական սեռի են, «...Հըզեր մնըթական շանճախըս լախլախ կոխալըմ ճակատեալլուխս, իսկի *դեարդ չըմ անըմ...*» (1-10):

Զեզոք սեռի գործածության պահանջով բայական հարադրություն է կազմում *լինել* բայը՝ *աչըլմիշ լինել, արթմիշ լինել, ախմիշ լինել, բաթմիշ լինել*,

«Ձուռնա-Տմբլայում» բազմաթիվ հարադրական կազմություններ կան նաև այլ բայերով: Ըստ Ա.Մարգարյանի՝ հայոց լեզվում կան շուրջ 450 բայեր, որոնք տարբեր քանակով հարադրավոր բայեր են կազմում՝ *անել, ընկնել, լինել, գալ, տալ, բերել, գցել, դառնալ, դնել, առնել, ածել* և այլն (20-86): «Մեզ այսօր փոխուելին երայ՝ ղոչչաղ ըն մեր էն պոր-

տը եղըկալած դերերն ու վըրթըբըղնեն, վեր խան խանգադա տեռած խուցերը մտած՝ ըչըհամփիւրին ըն *գոռ տամ*» (2-121):

բ) Բայական հարադրություններից բացի, «Ձուռնա-Տմբլայում» բազմաթիվ կիրառություններ ունեն և անվանական հարադրությունները՝ *եարադ-ասպար՝-զենք ու զրահ, դաւի-դարաբա՝-աղմուկ-աղաղակ, զուռնա-դավալ* և այլն:

գ) Մակբայական հարադրություններ՝ յաւաշ-յաւաշ, սարսաղ-սարսաղ, *գիժ-գիժ* և այլն:

Փոխառությունների մեջ հանդիպում են նաև ասացվածքներ ու երկարաշունչ նախադասություններ՝ «*դայմա մեանի, դայմիրըմ սանի... մի դիպչիր ինձ, ես էլ քեզ չվնասեմ*» «*աղբաթը խեր-վերջը բարի լինի*», «*գիւլնարն բիր գիւնընդա-օրերից մի օր*», «*բուռն բախ-սրան տես, այստեղ նայիր*» և այլն:

Արևելյան լեզուների փոխառություններից բացի, «Ձուռնա-Տմբլայում» գործածված են և փոխառություններ վրացերենից՝ *դիփունանք-բոլորը, լոթի-զվարթ, լոթի պաժառնի, գոզլան//գողրան, բիծա, թոխր, չիքիլա, ծիծա, պռոշ, խեզան, մոցիքուլ* բառերը, որոնք գործածական էին ինչպես ժամանակի խոսակցական լեզվում, այնպես էլ Ղարաբաղի բարբառում: *խեզան* վրացերեն բառը՝ *xesani-պանդուխտ* իմաստով, բարբառում նաև նոր իմաստ է ձեռք բերել՝ *երեխաներ, ժառանգներ*: «Միեզ վեր հալալ տոն հալալ *խեզան* տեռիք օլմիա ծեր ըխտըբարը ծեր ծեռքան տուղի-բուղի մարթոց ծեռք քցիք» (2-233): *Չիծա-պառավ կին*. Բառը երևի կազմվել է *բիծա-հորեղբայր, քեռի* բառի նմանությամբ: «Ըտրանցա մեր գիւրջին չրու սօր մին օքուտ չտեսաւ, մին օքուտ թա կա, էն էլ մինակ էն ա վեր գիւրջի պովրնէն ու լակէյնէն, *ծիծեքն* ու քոծերը ընտրանց տներըմը փլաւին տակն ըն օտըմ... » (2-165): *Գողրա-դատարկ գլուխ* բառը կիրարկված է և *գոզլան* ձևով «... ամնա հայիփ (ափսոս) վեր կարըմ չըս մին փիս պէն խօսած վախտը ձեռքտ տանիս, անգուճան փռնիս, մին լեաւ հլորիս, վեր ծէնը կտրի, *գողրան* տիւս եկածը ամմեն մարթու ըռաչի տիւս չի տայ» (2-164): «Աւստրիան օզըմա կոնսուլտացի ինի, ամնա վեր առաչ իւրան *գոզլան* չի տիւս եկալ էտ պէնը

չըմըխամի ա անըմ» (2-58):

Ֆրանսերենից փոխառյալ *պատրոն-սկեսրայր* բառը գործածական է Ղարաբաղի բարբառում և բազմիցս օգտագործվում է Մելիք-Շահնազարյանի ստեղծագործության մեջ: «... պեժինք էլ չօնիմ, վեր թամահ անող տանող ինի, տարաւ էլ, հուա գիտըմ մին շաբթան ետը բեալքում դաւի տուաւ թա սկեսվորն ու *պատրոնին* մախմուր քիւլք եա բուխարա փափախ չըս տուալ ...» (1-71):

Այսպիսով՝ «Ձուռնա-Տմբլայի» մեջ զգալի տեղ են գրավում մանավանդ արևելյան լեզուներից կատարված փոխառությունները, որոնք ձուլվել են բարբառի բառապաշարին: Ժամանակի ընթացքում (ավելի քան մեկ դար է անցել այս ստեղծագործությունը գրելուց) փոխառյալ շատ բառեր ու արտահայտություններ ստացել են իրենց հայերեն համարժեքները: Նոր սերունդը համեմատաբար քիչ փոխառյալ բառեր է օգտագործում իր խոսակցական բառապաշարում:<sup>43</sup>

Հարկ է նշել, որ փոխառյալ բառերի որոշ մասը այնպես է ձուլված Ղարաբաղի բարբառին և նույնիսկ հայերեն գրական լեզվին, որ դարձել է բառային կազմի մի մասը:

**Փոխառություններ ռուսերենից:** Հայոց լեզվի բառային կազմում որոշ տեղ են գրավում ռուսերենից փոխառված հասարակական, քաղաքական և այլ հասկացություններ արտահայտող բառեր, որոնք գործածվում են ոչ միայն գրավոր, այլև բանավոր խոսքում:

«Ձուռնա-Տմբլայի» բառապաշարի փոխառությունների շերտի մեջ թեև քանակով քիչ (մոտ 5%), բայց լեզվաբանական տեսակետից ուշագրավ են ռուսերենից փոխառյալ բառերը: 19-րդ դարում ցարական զորքը տեղակայված էր Շուշի քաղաքում: Հայերի շփումը զինվորականների հետ պատճառ է հանդիսացել ռուսերեն շատ բառեր և արտահայտություններ շուշեցիների բարբառի մեջ ներթափանցելուն: Երևի թե այդ է պատճառը, որ «Ձուռնա-Տմբլա» երկուն գործածված ռուսերենից փոխառյալ շատ բառեր վերաբերում են զորքի ու պաշտոնյաների

43. 20-րդ դարի 80-ական թվականներից սկսած հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած տեղաշարժերով պայմանավորված՝ 21-րդ դարասկզբին Ղարաբաղի բարբառի բառապաշարը մեծ վերելք ապրեց հայ գրական լեզվի ուղղությամբ:



կոչումներին, տեղական իշխանությունների կառուցվածքին, կայագործի սպայական կազմին, ինչպիսիք են օրինակ՝ *տիտուլյարնի սավետնիկ, չինուլիզ, գուբեռնյա, կոնգրուստ, կիպիտատնի, դումի չլեննե* և այլն:

Ռուսերենից փոխառյալ բառերը Ղարաբաղի բարբառում կրել են յուրահատուկ հնչյունական, բառակազմական և ձևաբանական փոփոխություններ:

Առանձնապես ուշագրավ են ժողովրդախոսակցական լեզվից բարբառին անցած փոխառյալ այն բառերը, որոնք կրել են բարբառին բնորոշ հնչյունական փոփոխություններ, այն է՝ հնչյունների հավելում, հնչյունների անկում, ձայնեղների խլացում, խուլերի շնչեղացում, առնմանություն, դրափոխություն և այլն:

*Չավելում՝ կրիզիստ*-крузис-բառին *տ* հնչյունի հավելում, *իրիվոլվեր-револьвер՝ ի* հնչյունի հավելում, աֆիշկա-афша՝ *կ* հնչյունի հավելում, *կոնգրեստ-конгресс-վեհաժողով տ* հնչյունի հավելում, կնդստուր-консултерия-*թեմական հոգևոր հիմնարկ՝ դ* հնչյունի հավելում: Այս բառի բարբառային ձևում նկատվում է ձայնավորների անկում, *Թ*-ից հետո *դ* բաղաձայնի հավելում (բնորոշ երևույթներ Ղարաբաղի բարբառի համար), ինչպես օրինակ՝ *մանր-մանդր, ծանր ծանդր*, երկրորդ *ս*-ի անկում:

*Չնչյունների անկում՝ պրավեախիշչի-управляющисն-դեկավար՝ ու*-ի անկում, *ելիսապետ-велосипед-հեծանիվ՝ վ*-ի անկում, օնվերստ-университет-*համալսարան՝ ու*-օ, *ի, ետ*-անկում, *կրեթալ-карета կառք՝ ա*-ի անկում, *ֆերշիլ-фельдшер -բուժակ, գործածական է և փեր շուլ ձևը՝ դ*-ի անկում:

«Ձուռնա-Տմբլայում» գործածված ռուսերենից մի շարք փոխառյալ բառեր արտահայտվում են հնչյունական և արտասանական խիստ ձևափոխություններով, ինչպես օրինակ՝ *փրիքաշիզ-приказчик-գործակատար, պօլըմփոթիալ-полумперуал-ռուսական ոսկեդրամ (15ռ.), կիպիտատ-денглат-դեպուտատ, սեկլատար-секретарь-քարտուղար մըտրըքկան-метрика-ծննդական, բուլախտեր-бухгалтер-հաշվա*

*պահ, պրիկուլուլ-прокурор-դատախազ:* Բնագրային օրինակներ՝ «...ընդեղ վէջ իւրանց խազայիններին քոռ աչքաւ եշող *փրիքաշիզնէ* տեսի, վէջ աթոռը քմակին կապած թեազա *մօղնի* ջահիլ ջիուլնէ...» (2-29): «Մին քսան էրեսուն տարի սրանա առաջ *մէր մէջին վէջ վէքսիլի աւնըմ կար, վէջ նատարիուսի, վէջ դագաւեր մագաւերի, վէջ էլ բուլախտերի* իւրան տասը կէզանուց դաւթարներաւը (2-153): «Տմբլիս չթխած՝ մին սեաս պցրացաւ, թա հինջ *մարքայ* վեր տանըմըն *կնդստորը մըտրըքկանու* եա օրիշ խնդիրքու հմար օթ օր *կրախտիւնըն անըմ...*» (2-30): Քննարկվող երկում փոխառյալ մի շարք բառեր գործածված են երկակի տառադարձությամբ. ինչպես օրինակ՝ *մագազին//մաղազին, գրադուս//դրադուս, գորնիշնի//դորնիշնի, գուվերնանկա//դուվերնանկա, պորտուպիան//ֆորտուպիան* և այլն:

Տմբլաչի խաչանը մուսեոսիկի իր խոսքը հասարակությանն է հասցնում հետևյալ միջոցներով՝ *հեռագրի՝ բլղրամ-телеграмма*-ձայնավորների անկում, խուլի շնչեղացում Ց-թ, չ-դ-ի փոխարկում, *հայտարարության՝ արլալեննի-объ явление*-հնչյունների դրափոխության երևույթ, *հեռախոսի՝ տիլիփոն-телефон*, ֆ-ի դիմաց *փ, գրամաֆոնի՝ դրամաֆօն-грамофон*, չ-դ: Վերոհիշյալ անվանումները գործածված են բարբառային արտասանությամբ:

Փոխառյալ բառերի քննությունը ցույց է տալիս, որ *Ֆ* հնչյուն ունեցող բառերը քննարկվող երկում միատեսակ գրություն չունեն: Ինչպես ասվել է, Ղարաբաղի բարբառը չունի *Ֆ* հնչյունը: Չնայած այս երևույթին՝ Մելիք-Շահնազարյանի բարբառային երկերում ռուսերենից կատարված փոխառությունների մեջ հանդիպում են *Ֆ*-ի գործածության բազմաթիվ դեպքեր՝ ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում: Գրող-երգիծաբանը գործածում է երկծություններ մերթ *Ֆ*-ով, մերթ *փ*-ով, ինչպես օրինակ՝ *Ֆարել, ֆեալշիլի, ֆանար*, բայց և կան *փանտալ, փարթուկ* ձևերը: Այս երևույթը ևս լեզվի գրականացման մի փաստ է:

Ռուսերենից փոխառյալ բառերը յուրահատուկ բառակազմական կաղապարներ ունեն. նրանք բաղադրված են՝ *ա)* ռուսերեն արմատներից, ինչպես օրինակ՝ *զէմլէմէր* բառում. այստեղ ունենք երկու ռուսերեն

արմատ՝ *земля* և *меруть*: բ) ռուսերեն+թուրքերեն արմատներ՝ *մարքա-փուլի*, *марка* ռուսերեն բառը *փուլ* թուրքերեն բառի հետ կազմել է բարդություն: գ) Ռուսերեն+պարսկերեն *խանա՝ տեղ* նշանակող մասնիկով՝ *փոշտխանա-փոստ*, *ապտեկխանա-դեղատուն*, *պոլիցխանա-ոստիկանություն* և այլն:<sup>44</sup>

«Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում գործածվում են և ռուսերեն բառերի ու թուրքերեն *չի* ածանցի բաղարկությամբ կազմություններ:<sup>45</sup> դրանք հիմնականում մասնագիտություն, զբաղմունք մատնանշող բառեր են, ինչպես օրինակ՝ *պարախտոչի*, *զավօտչի*, *պրիստինչի*, *մուզիկանչի*, *կամեդիասի*, *փօդրատչի*: Ռուսերենից փոխառված շատ բառեր ենթարկվել են հայերենի բառակազմական օրինակափոխություններին, ստանալով ածանցներ կամ այլ մասնիկներ, ինչպես՝ *պրիդանավեր ախճրկերք*, *զակուսկեղան*, *անտոլկ խարջեր*, *անզնակ*, *զնակաւեր*, *անպրիդան ախճիգ* և այլն:

Երկի լեզվին առանձին կենդանություն ու պարզություն են հաղորդում հարադրական բարդությունները, որոնք լեզվի ժողովրդայնությունը ապահովող անհրաժեշտ ու կարևոր միջոցներ են և ավելի գործածական են առօրյա բանավոր խոսքում, ուստի և պատահական չէ «Ձուռնա-Տմբլայում» դրանց զգալի կիրառությունը, մանավանդ փոխառյալ բառաշերտում՝ կազմության տարբեր եղանակներով ու տարատեսակներով. ա) *անվանական՝ դազաւեր-մազաւեր*, *զորաստի-պրաշչայ*, *նեժնի մարօժնի*, *պարպիսկի-րասպիսկի*, *կանվերտ-կանվերտ* և այլն, բ) *բայական՝ պուբլիկացի անըմ*, *կրախտին ըմ անըմ* (*արգելք դնել*), *պաղաւաս անող*, *դումիտ ըն անըմ*, *մնենին տամ ըն*, *պապրավիտց ինին*, *պաշօ պաշօլ ըրաւ*, *տանցավատ անըմ* և այլն:

«Ձուռնա-Տմբլայում» զգալի թիվ են կազմում ռուսերենից փոխառյալ այն բառերը, որոնք ունեն բարբառին յուրահատուկ հոգնակերս մասնիկներ և հոլովվում են համապատասխան հոլովական վերջավորություններով: Ահա բնագրային հետևյալ հատվածում «Ըստեղ, պելի,

44. Ինչքան էլ զարմանալի է, ժամանակակից դարաբաղի երիտասարդության բառապաշարում է հանդիպում ենք նման կազմությամբ բառերի՝ սապոժնիկխանա, դոխտուրխանա և այլն:

45. Այս կազմությունները ևս յուրահատուկ են Ղարաբաղի բարբառին:

վէչ տնատար կա, վեր օխտը կիմը երայ տիրած տոն քրեհաւը տայ, վէչ քեալվանսարա, վէչ դիւքան բազար, վէչ ալի ալւշան ճոթերի մաղազինն... վէչ էլ *զարաղավոյնէ*, *դվօռնիզնէ*, վեր կեօղերին նհետ խօսք մին ըրած՝ քշերնէն կեան կտրին, մէջըներին փայփայ անին: Ըստեղ վէչ *դումա* կա, վեր *զլասնէքը* քինան սաղ տարին անխօս նստին, անխօս երկէնան տեսնան լիւսը պէցուած, առանց իւրանց *մնէնին* հրցնելու՝ կործերը վճըռուած վերչըցրած...» (2-10) *մաղազիննէ*, *զարաղավոյնէ*, *դվոռնիզնէ*, *զլասնէքը*, (*դեպուտատները-Ե.Մ.*), ստացել են *նէ*, *էք* բարբառին յուրահատուկ հոգնակերտներ, իսկ *մնէնին* բառում նաև *ն* որոշյալ հոդը: «Վերին մեջքը ըրկաթի *կարսէտաւ* հանց քիֆընը խեխտալ ըն, մազու նման հանց պրակալ ա... վերին իրեսը, էնքան *պուդրաւ*, ալրաւ ծիփալըն, վեր տասը օրաւ տսներկու փեահլա պընըցմիս, անջախ քանդին ետ ետ անին կեսը պոժընին...» (2-20): Ընդգծված բառերը դրված են գործիական հոլովով: Հանդիպում են օրինակներ նաև այլ հոլովներով՝ *սպիկուռներին*, *պրոմիսլոցընը*, *խազայիններին*, *չկոլներին*, *ակուշկոցը*, *սպալնոցը*, *դանտիսկոցը* և այլն: Մի շարք փոխառյալ բառեր գործածված են բարբառին յուրահատուկ ու հոլովմամբ, այսպես օրինակ՝ *կնդստորու*, *շտրափու*, *պոլիցխանու*, *խլըպտուու*, *կոնգրեստու*:

Այսպիսով՝ Մելիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում գործածված ռուսերենից փոխառությունները բարբառի բառաշերտում հանդես են գալիս բարբառային «շղարշով», բարբառի հնչյունափոխությանը յուրահատուկ ձայնեղների խլացման, խուլերի շնչեղացման, հնչյունների անկման և հավելման, առնմանության և դրափոխության երևույթներով:

Անդրադառնալով Ղարաբաղի բառապաշարի ռուսերենից փոխառյալ բառաշերտի քննությանը, նկատում ենք, որ այսօր էլ ժամանակակից բարբառախոս երիտասարդության շրջանում գործուն է ռուսերեն փոխառյալ բառաշերտը:

*Օտարաբանությունները* (варваризм) Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների բառապաշարի շերտերի մեջ յուրահատուկ տեղ ունեն և գործածության բնույթով տարբերվում են փոխառյալ բա-

ներից: Գրական լեզվում անհարկի գործածվող այլալեզվյան բառերը, արտահայտությունները և խոսքային կառույցները, որոնց բարբառային համարժեքները գոյություն ունեն, օտարաբանություններ են: Այս բառաշերտի գործածությամբ գրողը իր խոսքին կարող է հաղորդել երգիծական, սատիրական երանգ: Հատկապես այս նպատակով էլ Մելիք-Շահնազարյանը դիմել է օտարաբանություններին «Զուռնա-Տմբլայում» հաճախ մեջբերելով օտար բառեր և արտահայտություններ:

Տիրապետելով ռուսերեն, թուրքերեն, վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն լեզուներին՝ Ղարաբաղի բարբառով գրված ստեղծագործություններում այդ լեզուներից բառեր, նախադասություններ, նույնիսկ արտահայտություններ մեջբերելով՝ հեղինակը ստեղծում է նկարագրվող երևույթներին կամ հերոսների խոսքին ու վարքագծին յուրահատուկ երգիծական միջավայր՝ միաժամանակ դրսևորելով իր վերաբերմունքը:

Գրողի գործածած օտարաբանությունների մեջ առավել շատ են ֆրանսերեն բառերը՝ *բոնժուռ*, *միսիո-բարև*, *պարոն*; *բոնժուռ*, *մադամ-բարև*, *տիկին*; *քոման սաւա-ինչպես են գործերը*; *վիվա Ֆրանսիա-կեցցե Ֆրանսիան*; *բուլանժե-հացթուխ*, *մոնպլեզիր-հաճույք*, *ռևերանց-խոնարհում* և այլն: «Պարիժու վիստավկան» ֆելիետոնում, նկարագրելով «Պարիժի կազեթ կիրողներին մեջազկային կոնգրուստըմը» իր ներկայանալը, Տմբլաչի խաչանը երգիծաբանի փայլուն գրչով նկարագրում է «մեջազկային կոնգրուստումը» հավաքված հասարակությանը՝ «լեմս, պալակ, ռուս, ինգլիզ, բերզեն, սպանացի, հոլանդացի, պորտուգալցի, իտալացի»: «Բալատ մեռնե կոնգրուստ, վեր մղակավը նի չի մտի, մէջին 5000 ա իւիլ կազեթ կիրող կար, լոխ էլ վէննը կացին, *բոնժուռ միսիո* ըսեցին, եկին, մին մին պրըվոթուն ըրին՝ *քոման սաւա՛ քոման սաւա*, իրեսս եր քլըմստոեցին, ես էլ իրանց *բոնժուռ* ըսեցի, ծանդր ծանդրեանա քեցի ճիւլ Սիմոնին դիւբադիւբը նստեցի...» (1-148): «Կոնգրուստ» մտնելու իր պատմությունը համեմտելով ֆրանսերեն բառերով և արտահայտություններով՝ Տմբլաչի խաչանը ստեղծում է ֆրանսիական միջավայր: Գրողը երգիծում է թիֆլիսում հրատարակ-

վող «Աղբյուր» ամսագրի խմբագրին, նրա՝ «կոնգրուստին» չներկայանալը համարելով «կոնգրուստի» չկայացման պատճառը: «*Վիվ լա Ֆրանսա*», *վիվ լ՛ Ախպիր*» բառերով մեծացնում է երգիծանքի չափը՝ համեմատության մեջ դնելով Ֆրանսիան և «Ախպիրի» խմբագրին՝ *կոնգրուստի* կայացման գործում:

Օտար բառերի գործածությունը «Զուռնա-Տմբլայում» հիմնականում հանդիպում է հեղինակային խոսքում. երբեմն նաև՝ հերոսների խոսքում՝ ծառայեցնելով այն որպես խոսքի ոճավորման և անհատականացման միջոց: Ահա Պապակլոնձանց Ջավահիրի Փարիզից Շուշի ուղարկած նամակի տողերում երևում է շուշեցի կնոջ քաղքենիությունը, ինչպես նաև պարզամտությունը: Օտար բառերի գործածությունը ստեղծում է ֆրանսիական կոլորիտ. «Ազի դէ էլ հինչ կիրիմ, փեսատ ըստեղ մին ֆռանգի *գուվերնանդկա* ա փոնալ տարին էրկու հազար մնէթի. ամըն օր ինձ ասմա *բոնժուռ մադամ* (մադամը կնգան ըն ասըմ, բոնժուռն էլ սաքի թա մեր պարիլիսն ա). իրեսս պուդրի ա քսըմ, մազերս ծամ անըմ ֆռանգվաչի սարքըմ «*օ քու վու զեթ շառման մադամ*» եանի թա հինչ սազ ա կեան, ինձ սղալըմա վիստավկա դարկըմ, ետնան փսիտ կոկըմ. շատ նախշուն կնէգ ա փեսատ շատ հավան ա» (1-155): Օտարաբանությունների անհարկի գործածությունը ժամանակին նկատել է Լեոն և իր՝ 1889թ. հունվարի 28-ի թվակիր նամակում գնահատության խոսքի հետ արժեքավոր դիտողություններ արել խաչան ապորը. «Շուշուց շատ մի՛ հեռանար, քո աշխարհդ այս է: Այստեղ միայն տմբլատ եղած կլինի: Այն ինչ ֆրանսերեն է, որ դու ես շարում, թող, ի սեր Աստուծո, այդպիսի բաները: Գրիր իբրև Տմբլաչի խաչան, իբրև անհասկացող, իբրև անզարգացած մարդ և տես այն ժամանակ, թե ձայնըդ ուր կհասնեյ...» (գ. 265):

«*Գենովֆեն* պատմըմ ա Սոտոմ-Գոմորի քանդուելը» (1-89) ընդգծված բառը գերմաներեն օտարաբանություն է: Երգիծաբանը նկատի ունի Շուշիի ռեալականի գերմաներենի ուսուցչին: «Ես մեր կլուբին փողորաթչին ախր լափ զեահլա տարավ, վեցին քինըմ ըս ճիրագ չի կայ վառած, կարտ ըս օզըմ, նոր ա դարկըմ վեր բզարան պիրին, ուժինը

հու վեր գատու նման չի, ամբն օր կատլետ, ժարկոյ, *բիշտեքս*, կատլետ, ժարկոյ, *բիշտեքս*, *անդերկոթ*» (2-54): Ընդգծվածները անգլերեն բառեր են: Հեղինակը օգտագործում է և լատիներեն օտարաբանություններ՝ *օմնիբուս-երկու հարկանի ավտորուս*, *օվիդիում-այգու ծառերի հիվանդություն*, *արխիարվարուս*, *արխիար-վարուս՝ արխիվի վարիչ-ուս (օս)-լատինական* վերջավորություն: «Խնթիրքավ տւալ ըմ, վեր կնդստորընը ինձ *արխիարվարուսի* օգնական շինին»: Լատիներենով հատված է մեջբերված 1-131 էջում՝ բացատրությամբ՝ թարգմանությունը տես Օհաննու ավետարանչի Զ գլուխ 48-57 տողը:

Լատիներենով արտահայտություն է մեջբերված նաև «Ինգլիզի պառլամենտըն խօսած պղնձռեխ(մեծաբերան-Ե.Ա.) Ուհանին վերջի ճառուն»՝ «այժմ տիկնայք և պարոնայք-*alta jacta est-վիճակը ծգուած է*- մենք բանում ենք մեր դրօշակը (դօշակը) և կռիվ ենք մղում (էլիս կռիվ. խաթաբալա էլի, կռիւ. անվերջ կռիւ...)» (2-40):

Այս օտարաբանությունները գործածված են անհարկի, ծանրաբեռնում են հեղինակի խոսքը: Մելիք-Շահնագարյանի երգիծանքին դա ոչինչ չի ավելացնում: Գրող-երգիծաբանը օտար, բարբառին ոչ բնորոշ բառեր ու արտահայտություններ է մեջբերում ռուսերենով, վրացերենով, թուրքերենով: «Ահա Ղալին լուսավերուած շկօլին ըխճըկորանցը ծոզարդարին եկալ ըն հայ, թորք, բախկալ, դասաբ, լոխ, սհաթի օթին *պուլկովի մուզիկը* փչընա ռեալնի շկօլին մուսթերը ծլոնկ ըն ինըմ. *«պոզվոլտե, բարիշնա, սվամի տանցառատ* ասըմ բարիշնան էլ՝ մէկալ օրուայ քար կոտրող թիւնուն ախճիկը, սբլդրան լոք ա տամ, կաղնըմ» (1-59): Ընդգծված նախադասությունը ստեղծում է երգիծական իրադրություն: Մեզ վեր քոծ, բիճ, լակեյ, պովր, կուչեր հռանան, ծեր ճարը հու՞նց կինի, վայը եկալ ա ծեգ տարալ: *Պրաշչայ Թիֆլիզ, Չակագալից-կի կրայ պայդոմ, սադիս...*»: (2-168): «Նա ասնավաննի տակոյ-սեակոյ ստատոյի» (2-122): Ռուսերեն օտարաբանությունները ևս ստեղծում են երգիծական իրադրություններ:

Իրենց ոճական յուրահատուկ երանգի շնորհիվ այդ բառերը և նախադասությունները ծառայում են որպես միջոց այս կամ այն ժողովրդի

կյանքի ու կենցաղի մասին որոշ պատկերացում տալու և տեղական բնորոշ երանգ ու համապատասխան կոլորիտ ստեղծելու համար:

Գեղարվեստական երկի բառապաշարի քննության համար կարևոր է նաև տվյալ երկի բառամթերքի իմաստային-ոճական վերլուծությունը, որը, ինչպես Լ.Եգեկյանն է նկատում, պայմանավորված է բառի ձևիմաստային առանձնահատկություններով, ինչն էլ ավարտում է դարձնում ստեղծագործության բառային կազմի ուսումնասիրությունը (22-258):

Գեղարվեստական երկի բառապաշարի ոճական հնարավորությունները արտահայտվում են հոմանիշների, նույնանիշների, հականիշների ճիշտ ընտրությամբ ու գործածությամբ:

Հոմանիշները «Զուռնա-Տմբլայում» ոճական տարբեր կիրառություններ ունեն, նպաստում են երկի պատկերավորությամբ, հեղինակի երգիծական ոճի ինքնատիպությանը:

Ի տարբերություն գեղարվեստական այլ երկերի՝ Մելիք-Շահնագարյանի երկում հոմանիշների գործածությունը պայմանավորված է տվյալ ժամանակի գրական լեզվի վիճակով: Եթե գեղարվեստական երկերում հոմանիշները գործածվում են խոսքի պատկերավորման ու արտահայտչականության նպատակով, ապա «Զուռնա-Տմբլայում» նրանք հաճախ հանդես են գալիս իբրև նույնանիշներ՝ գործածվելով լեզվի տարբեր շերտերից՝ մեկը մյուսի իմաստը պարզաբանելու նպատակով: Եթե Մելիք-Շահնագարյանը որևէ հասկացություն նկարագրում է արևելյան որևէ փոխառությամբ կամ բարբառային որևէ արտահայտությամբ, ապա դրա կողքին հաճախ հնչում է այդ բառի կամ արտահայտության գրական համարժեքը, երբեմն էլ՝ հակառակը, ինչպես օրինակ՝ «1892թ. մեարդի տասն օխտին Տմբլաչի հաչանին հետն ու թեփուռը կորաւ. շատերն ասըմին եր *հմբարցուից*, շատերն էլ թա *մեռաւ*. թա դորթ ինի, ըսեցէք աստուած հոքին լիւսաւերի» (2-1): «Թողալ չըն իւրանց մօր ու քուրց *արուռն* ու *պատիւը շան կիւլու* ռեխ ընգմի» (2-11):

«Զուռնա-Տմբլայում» հոմանշային շարքի երկու և ավելի բառեր հաճախ համատեղ են հանդես գալիս, որով և ընդգծվում է հասկացությունը, այն ներկայացվում է իմաստային համապատասխան նրբերանգնե-

րով: Միևնույն նախադասության մեջ, իբրև հոմանշային ձևեր, միաժամանակ գործածվում են գրական և ժողովրդական, բարբառային կամ փոխառյալ տարբերակները:

Տարասեռ հոմանիշների կիրառությունը՝ իբրև բառերի կրկնություն, նաև սաստկական երանգ է հաղորդում խոսքին, նպաստում նրա հուզաարտահայտչական երանգավորմանը, ինչպես՝ «Էնա օգըմի եօրղանիս տակը *նի խռկըվիմ*, մըծմըծոնաց նման *չեշտ քոն տամ*, տեսնամ մին լեաւ *չեափաքի* տրաքից իրեսիս. քեզ ասըմ ըմ ե՛ր, ե՛կ, քանի *թակ չըս կերալ...*» (2-3), կամ՝ «*ծվվանս կտրից. վննը ծեռքս թիւլացաւ...*» (2-3), «Մարթ կնեգ մաղազիննէն լիգը, *անխօս, անծպտուն առանց չանա թկելի* առուտուրըն անըմ» (2-26), «հինչ ասելա աֆիշկաներըմը *տիպիլ, չաւ քցիլ*, թա պէնը փիսա» (2-125), «Էքսն էլ նստին՝ *թակաւ միակաւ սուղու ատվակատու* շէմքեր մշելաւ՝ հզեր հետ խեղճին գեռռեագեռ ընելաւ՝ իլած չիլածը պեժին անին...» (2-3):

Խոսքը ավելի արտահայտչական ու հուզական է դառնում հատկապես այն դեպքում, երբ համասեռ հոմանիշները ստորոգյալ են. «Լօխ էլ ինձ տսնալուց՝ քքընէն *կախ տուին*, կլխա *ռադ ըրին*. ասես իւրանց օրըմը վէչ ինձ *տեսալ ըն*, վէչ *ճնանչըմ ըն*, վէչ նիետաս *նստալ կերալ, խնալ*, չոռլամիշ իլալ...» (2-90), «Ասծու օրհնութիւնը, խէր բարաքեաթը մեչան եր ա կենըմ, *քանդվըմ, պրիշակ տեռնըմ*, բայղուշնէն մէչին պիւն տինըմ...» (2-138):

Ոճական-արտահայտչական համապատասխան գունավորում են արտահայտում նաև հականիշ բառերը: Հականիշները ևս ժողովրդախոսակցական ոճում հաճախակի գործածվող բառային միավորներ են, որոնք հակադրություն են ստեղծում և խոսքը դարձնում կենդանի ու արտահայտիչ:

«Օրն օրի երայ մեր ժղովուրթը *առաջ քինալին տեղը ետ ետ* ա քինըմ, *հարուստին* ու *քեասիթին*, *շհարցուն* ու *չոլըցուն* արալըղըմը մին խոր անդունք պէնվըմ. առուտուրը *Ֆալշովի*, պարեկանութիւնը *Ֆալշովի*, *նստել երկենալը* *Ֆալշովի*, *օտել խմելը* *Ֆալշովի*, խղճմտանքը կորած, հաւատը փախած, մըծմըծոնէքը *ամբարդաւան*, կնանէքը բոշբո-

ղազ, քամի կոլ տուղ, ըխճըկերքը սլեթա, վարժապետնէն անսէրտ, աստխընէն ճլկաւերն ընգած, մունթերը սըրթըղ, քոռ ուղուր, ուսուննականը *անբարիշ*, գիտութիւնա փախած, տէրտէրը *Ֆորմի միար*, ժամերը տեռալ ըն թիատր, դէր ու տիրացու կամեղիաչիք...» (2-18): Այստեղ Մեւլիք-Շահնազարյանի ոճը նմանվում է Խորենացու և Ֆրիկի ոճին:

«Սօր հային տոնը պրիշակ, օջաղը քանդուած տաւարը թալան, *մենաձը* անթաղ, *սաղը* կըսաջան, արտերը անտեր, բաղերը քարուքանդ: Սէրտս սըւանըմ ա, լիւզուս կտրվըմ...» (2-214):

«Մէր հայերը մին մինու *օքնելին տեղ* մին մինու *ռեխ ըն գործըմ*, *առաջ քինալին տեղ*՝ ետ ետ *քինըմ*, *պցորընալին տեղ*՝ դահի բեթար *քշանըմ*, էլ *վէչ մեծ կայ*, *վէչ պուճուր*, վէչ վէրթի, *վէչ աղա*, վէչ *նեօքար*, վէչ ամի, վէչ դայի. լոխ էլ իւրանց քթին հաւան ըն ման կեամ» (2-188): Հականիշների առատ գործածությամբ ուժեղանում է Մեւլիք-Շահնազարյանի ոճի երգիծական բովանդակությունը, խոսքը ստանում է հասարակական հնչեղություն:

#### ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Լեզվի բառապաշարը, արտացոլելով ժողովրդի կյանքի բոլոր իրադարձությունները, շարունակ փոփոխվում է ու զարգանում: Այդ ընթացքում բառերը ոչ միայն հնչյունական ու ձևաբանական, այլև իմաստային փոփոխություններ են կրում, որոնք դրսևորվում են նաև բարբառների մեջ: Ղարաբաղի բարբառի բառակազմն ունի հարուստ իմաստաբանական բովանդակություն: Բառապաշարի զգալի մասը իր արտահայտած իմաստներով ընդհանրանում է հայերենի ու այլ բարբառների հետ, մի շարք բառեր էլ արտահայտում են նրանցից տարբերվող իմաստներ:

Մեւլիք-Շահնազարյանի «Ձուռնա-Տմբլայուն» զգալի թիվ են կազմում այն բառերը, որոնք բարբառում գործածվում են նաև այլ նշանակությամբ, ինչպես օրինակ՝ *անդամ* բառը՝ *անդեմնը* տարբերակով բարբառում ստացել է նոր իմաստ՝ *անասունի, թռչունի ազդր*: «Թեաք եզանը *անդեմնը* իւրան միար պահած ինին, էլ հինչ դեարդ» (1-209): Ժողո-

վուրդը յուրահատուկ վերաբերմունք է ցուցաբերում նաև բարբառային ծագում չունեցող գրական բառերի նկատմամբ՝ նրանց հաղորդելով ժողովրդական-խոսակցական իմաստներ: Ժողովրդական խոսքին բնորոշ հատկանիշներից է փոխաբերականությունը: Փոխաբերական գործածության շնորհիվ բառերը ստանում են նոր իմաստներ ու երանգներ, որոնք, ժամանակի ընթացքում կայունանալով, բառը դարձնում են բազմիմաստ: Մելիք-Շահնագարյանի բառապաշարում բազմաթիվ են այնպիսի բազմիմաստ բառերը, որոնք իրենց իմաստների մի մասը ստացել են խոսակցական լեզվում գործածվելով, ինչպես օրինակ՝ բռնել (փրռնել) բայը ժողովրդախոսակցական լեզվում գործածվում է իր բնիմաստից տարբեր՝ հարմարվել, համապատասխանել իմաստով:

Բռնել բառը «Ձուռնա-Տմբլայուն» գործածված է նաև հետևյալ իմաստներով՝ ձեռքի մեջ առնել. «Սուսըփուս ծեռքը տանըմա, արխալդին փեշքը փռնըմ» (1-216), հաշիվ պահանջել. «Ժողովուրդը ընդրանց ետխան փռնելին տեղ փեշքերքն ա փռնըմ» (1-210), որսալ. «Չեարդը տեսնողը հանցա գիդացալ, թա էնա փռնալա խրաւալ կերալ՝ պռըշնէնա լիւզ տալ» (1-208), վարձել «էս տօնը փռնալ ա, վեր մէջին կենա» (2-25), պտուղ բռնել «ծառը լեաւ բար ա փռնալ» (1-95), հանդիմանել. «մինը տիւս չի կեամ, ընդրանց անգուճան փռնըմ» (1-218) (հարադրություն), կարողանալ պահել. «ծեռքս կասիս պատ չի կեամ, վեր տմբլիս կուպըլնեն փռնիմ...» (2-44):

Բառապաշարի իմաստափոխական իրողությունները հաճախ օգնում են գրողին՝ վեր հանելու ազգային սովորությունները, մանրամասն նկարագրելու այն. «Արաշտ տարին Ղարաբաղըմը մին սովորութիւն կա, վեր խօխէքը մին փաղի տիկիներն շինըմ, կլխին փափախ տինըմ, տնըտոն ման կեամ, եղ, ծու, հւաքըմ, վեր հինգա անձրև կեայ...» (2-67): Տիկին բառը այստեղ գործածված է տիկնիկ իմաստով, բարբառային արտասանությամբ՝ դեգիւն: Մելիք-Շահնագարյանը հավատարիմ է մնում բառերի գրության երկձևությանը՝ գրական և բարբառային, և բնագրային օրինակում նախընտրել է գրական գրությունը:

Ղարաբաղի բարբառում պոչ բառը գործածվում է և մագ իմաստով,

որը հմտորեն օգտագործել է Մելիք-Շահնագարյանը. «Բո՛, բո՛, բո՛ նեռը ծնվալ ա, էսքան տարվա պոչըս սիպտակ կնէգ ըմ, հու՛ ա իտի պէն տեսալ եա հսկացալ» (2-127): Նեռ-նառ բառը, որ փոխառություն է պարսկերենից և արու է նշանակում, բարբառում ստացել է հաղթական, զորավոր տղամարդ, որը դժվարությունից չի վախենում իմաստը, ինչպես օրինակ՝ «հանցա նեռ ինի», իսկ բնագրային հետևյալ հատվածում՝ նաև աշխարհի դատաստան, սատանա իմաստը. «Նեռը ծնվալ ա, աշխարքը վրչընալու երայ ա, մահ ու մահտարածամ կլխներիտ կաղնածա» (1-57):

Ցնցուղ բառից իմաստափոխությամբ բարբառում ունենք ցունծուխնը բառը՝ արևի առաջին ճառագայթները իմաստով, «Ըռաւօտը լիւրպեցին էն ցունծուխնը տամ վախտը զիւրթնացի...» (1-109): Փոշի գրական բառը, բարբառում փուշի, ունի այլուր իմաստը: «Թա չէ տեսի մաղին կլխին փուշի չի մնըմ...» (1-126): Մելիք-Շահնագարյանը գործածում է նաև այլ իմաստներով՝ իրեսու փուշի- դիմափոշի. «մին փարա հարսներ կենգատ ըն կիրալ, վեր սկեսուրնէն աչքըներին իշեղը կտրած՝ օրընէն սևըմթեն ըն անըմ, սաղ օրը իրեսներան ըն կեամ, վեր իւրանք փուշըտատըմըն» (1-177): Փուշըտատել ածանցավոր բայը գործածված է դիմափոշի քսել իմաստով:

Ոստ բառը (որը հավանաբար ոստայն բառի արմատն է) բարբառում ստացել է վէստան-ջուլիակի դագճահ իմաստը. «էս այամի կնանէքը վէչ պիւրթ ըն կիզըմ, վէչ չխարակ եա իլիզ մանըմ, վէչ վէստան հինըմ գեաբա, կարպետ, խուրջին կեօրժըմ...» (2-101):

Մի շարք բառեր բարբառում ստանում են բազմաթիվ իմաստներ և Մելիք-Շահնագարյանը, իրեն հատուկ գիտակությամբ, դրանք օգտագործում է համարյա բոլոր կիրառություններով, ինչպես օրինակ՝ հաւա բառը, որը փոխառյալ բառ է արաբերենից. և նշանակում է՝ եղանակ՝ «Չաւան ցուրտալ ա» (1-50), մեղեդի՝ «Յինչ հաւա ասիս պար ըն կեամ» (1-60), բարկություն՝ «Ըտրանաւ էրգեան քթաւերներին հաւան նստըցնըմ...» (1-220), բարդության մեջ՝ տնըհաւա.-տնեցիներ «Ամէսը օխտը օթ փուր լաւաշ հաց կթխար, տեարսար ու տոն տնըհաւա մին ամէս կո-

տին» (2-216):

Խոսակցական լեզվում գործածվող *ճար* բառը և դրանով կազմված հարադրությունները իմաստային տարբեր կիրառություններ ունեն «Զուռնա-Տմբլա» երկում. *ճար ըրա-օգնիր*. «Թա ախպերս ըս՝ ինձ մին *ճար ըրա»* (1-35), *ճարը կտրի-ստիպված*. «Շոնը լիզուն կախ տած *ճարը կտրի* ինքն էլ կեամ ա ծառին տակին պիւլորվըմ» (2-155), *հնար, միջոց*. «Ղլըմը քեզ հու՞ ա *ճար անողը*, բեալքա ցրտերը ընգալա ընտրանա ըս վախըմ. դրան էլ *ճար կա»* (1-36), *դրություն*. «բա իմ *ճարը* հու՞նց կինի...» (1-71), *դեղ*. «Բալքի Աստուծ օգի մեր մօդնի տիւրիւր եկող խանըմներին ցաւի *ճար* տեռնա...» (1-198):

«Զուռնա-Տմբլայում» մի խումբ բառեր պահում են իրենց նախնական բուն իմաստը և միաժամանակ գործածվում են նաև այլ նշանակությամբ, ինչպես օրինակ՝ *ուզել/օզել* բառը նշանակում է ոչ միայն *խնդրել կամ ցանկանալ*, այլև *սիրել, ամուսնանալ*, ինչպես օրինակ թիվ 16՝ «Ղլըցուց ախճիկ ճուկելը կնանոց պարլամենտըմ» ֆելիետոնը. «Ախճի գիղըմըբ հինչ կայ, իմ տեաքոր տղին մհար պարեկենդանին *օզըմ* ընք ախճիկ *օզինք»* (1-62), *Ախճիկ օզել* հարադրությունը այստեղ նշանակում է *ամուսնացնել*:

*Ծաղեզ* բառը բնագրում իր հիմնական իմաստից բացի օգտագործվում է և *ծաղիկ հիվանդություն* իմաստով: «Խօլեր դայում, ե՛կ, քզանայ իսկի վախըմ չընք, *ծաղեզն էլ* եկաւ, հինչ ըրաւ» (1-66): Բարբառում գործածվում է *և ծաղկել՝ զավակներ ունենալ* իմաստով, հաճախ՝ որպես օրինանք՝ *ծիլիս-ծաղկիս*:

*Խալաթ* բառը, որը արաբերենից փոխառություն է, պահպանել է իր հիմնական իմաստը՝ *նվեր, ընծա*. «Ըխճըկանը սկեսվորը, տաքիրներին, պատրունին, պելուն *խալաթ* պեղմա ինի, վեր սկեսուրը շիւտ-շիւտ իրեսաւը չի կայ» (1-40): Ժողովրդախոսակցական լեզվում *խալաթ* բառը ձեռք է բերել իմաստի նեղացում և գործածվում է նաև *հագուստի, շորի* իմաստով:

*Թակել* բառը նշանակում է ոչ միայն *ծեծել*, այլև *նվազել* (որևէ հարվածային գործիք), *դուրդուփել*: «Ինձ մհար տասսը, քսան օրաւ տմբլա

*թակելը* խուխու խաղար» (2-163), իսկ ներքոբերյալ նախադասության մեջ՝ *դուրդուփել* իմաստով. «վերը չրթմայ ա թխըմ, վերը տաշի, վերը վենները տափը *թակում»* (1-60): *Վենը թակել-դժվարությամբ ծանապարհ գնալ*. «Շատերը *վենը թկելաւ* ժամ ըն քեցալ...» (1-79):

«Զուռնա-Տրլայում» որոշ բառեր արտահայտվում են հնչյունական կամ բառային տարբերակներով, ինչպես՝ *հարսն-հարթնը-հառթնը-հեասի*, վերջինս՝ *մեծ հարս, հորեղբոր կին* իմաստներով էլ է գործածվում. «Էս դեարըմն էլ Գիւլիւմին սկեսուրը՝ Նազլու *հեասին* նի մտաւ (1-12): *Օխտըհարթնը* բարդ բառը գործածված է *տավարի որովայնի շատ ծալվածքներ ունեցող մասի* իմաստով:

Ղարաբաղի բարբառում բառիմաստային փոփոխությունները տարերայնորեն չեն կատարվել, դրանք պայմանավորված են իմաստափոխական որոշակի օրենքներով և արտացոլում են բարբառախոս ժողովրդի կյանքը, միջավայրը, մտածելակերպը, սովորույթները, հավատալիքները և երևույթների ըմբռնման յուրահատկությունները:

Բառիմաստային փոփոխությունների ժամանակ գործել են բառիմաստի նեղացման, բառիմաստի ընդլայնման, նմանական զուգորդության, կցորդական զուգորդության և այլ իմաստափոխական օրենքներ, որոնց համապատասխան էլ տեղաշարժեր են կատարվել բառերի իմաստաբանական համակարգում. շատ բազմիմաստ բառեր դարձել են մենիմաստ, մի շարք մենիմաստ բառեր՝ բազմիմաստ, մի շարք բառեր կորցրել են իրենց երբեմնի հիմնական իմաստը և պահել երկրորդական նշանակությունը, մի շարք բառեր էլ իրենց բուն իմաստին հավելել են այլ իմաստներ ևս: Բերենք վերոհիշյալ իմաստաբանական փոփոխությունները վկայող բնագրային օրինակներ «Զուռնա-Տմբլա» երկից:

*Ճրռաքել-ճառագ* (այթ) ել-արտահայտում է ոչ միայն *ճառագայթել, լուսապայծառ փայլել*, այլև՝ *առատ պտուղներով բեռնավորվել* իմաստը: Այս երկրորդական իմաստը ստորադասվում է առաջինին և նրա հետ կապվում է երևալու ընդհանուր նշանակությամբ. «Էն *ճրռաքեած* ստուլին երի կըլխին նստըցրին» (2-59),

*Կեռեք-ատամ, պճեղ, կտոր*. «մարթիտ պերած գեոզամա խուրջինան

մին կեռեք էլ չի դրկեցիր...» (1-9), *ջաղացքարի ակռաները*. «չարխը շոռ տուողնէն էտ չարխին *կռքնէն* եր ըն թակըմ փշրըմ...» (2-188):

*Պտոկ-կատար, գլուխ, ծնվել, ծայր, ինչ-որ բանի վրա*, «Սերոպը ինձ քևին *պտոկին* առաւ, տարաւ լիւսնընգին կլօխը...» (2-25), «Մին հայ կնէգ կա՞յ, վէր իւրան անա *պտկուած* խոխան գիւրջու ծիծին ռէխը չքցի...» (2-167), «Վններին պտկին կաղնած խաղ ասի...» (1-190), «Չանիս *պտկին*» (1-148):

*Պռոռանչ-տեառնընդառաջ*. «Չրըքշաբթի օրը մուս չըն տարալ խաչին տակին վառալ. *ղռոռանչ* ըրալ» (1-78), *կրակ տալ* «հայերը հանց ըզկասեր ըն տեռալ, վէր քշեր չի անց կենըմ խոտու տիզեր չի կրակ տան *ղռոռանչ* անին» (1-179):

*Խրտըհարել-խարտ* արմատից, *խայթել, նեղացնել, չարչարել* «մին ցաւաւ տանջող ժողովուրթը եր կըկենա մին մինու *խրտըհարի*...» (2-214), *բզբզել*՝ որևէ իր սարքելու նպատակով:

«Ձուռնա-Տմբլայից» բերված բնագրային օրինակները ցույց են տալիս, որ բառերի մի մեծ խումբ Ղարաբաղի բարբառում անցել է իմաստափոխության հետաքրքրական ճանապարհի, ձեռք բերել այլ իմաստներ՝ հարստացնելով բառապաշարի իմաստաբանական համակարգը:

#### ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

«Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում պարզ արմատական բառերից բացի ծանրակշիռ տեղ ունեն հայերենին հատուկ բառակազմական միջոցներով (*բառաբարդում, ածանցում*) կազմված բառերը: Կարելի է ասել, որ այդ բառերը միատեսակ բնույթ չունեն. ա. Այստեղ կան բառեր, որոնք գործածական են ոչ միայն շատ բարբառներում, այլև գրական լեզվում, օրինակ՝ *սրտաճանք, քմբրծէժաղ, շնաճանջ, լիւսահոգի, հոգեվերթի, ըխպըհար, ծիւնըթաթախ, ըխճկատեր, ջարդաջուրդ, իրըսըհան, տասնօխտը, քէկալ, փսականչ, չուրաթան, կիրափառ, տիքրակէն, կեարունքրիան, ընրծքաչոր, հիւնըթթո, վղըմոխտր, ըրնըփալալ, վսկապեռնը, վըննատակ, ծրըմօտ, տինիկավեր* և այլն: Բ. «Ձուռնա-

Տմբլայում» հանդիպում են բառեր, որոնք, գործածական լինելով այլևայլ բարբառներում, գրական արժեք չեն ստացել, ինչպես՝ *չլըպլիթ, վռըկալին, պընըփեշակ, խմորիունցի, պզկաթան, քրըքաշան, խտտակոխ, կնղըկաթուկ, պիւնակալ, բողչամիջի, սըրսըռօտ, թիւլըբոշ, մըռնընքշոթուն* և այլն:

Հարկ է նշել, որ այս խմբի մի շարք բառեր բառակազմական հետաքրքիր իրողություններ են դրսևորում: *Համադրական* գրությամբ այս բաղադրյալ բառերը գրական լեզվում *վերլուծական* կազմություն ունեն: Ինչպես օրինակ՝ *տլակօծ-ճյուղից կտրած կոճ, ըռչակապ-հնձ-վորի կաշվե գոգնոց, ըռըփակ-առաջը փակ, ծրղոտուն-կտրելու փայտ, սմախեխտ-սամիով խեղդված, պըչըկուտուր-պըչը կտրած, ըխպրակեն-եղբոր կին, ճուտըհանել-ճուտեր բերել* և այլն: Նման կարգի բառերի գործածության բազմաթիվ օրինակներ կան «Ձուռնա-Տմբլայում»: Գ. Լայն գործառություն ունեն Ղարաբաղի և նրան մերձակից բարբառներին յուրահատուկ բաղադրյալ բառերը, ինչպես՝ *կըթնահունց, լըփլըփիան, ծղմաղինք, հըրփռամէչ, մըկլըմանդիլ, տըմբտըմբալ, սրտըհէռէչ, եղըծու, թրսըպարան, պուճըխտակ, կլուկապ, հըշտեղ, խլըշկոտուն, ժըժըպապա, պրտըտիւս, կլակռաւ, պիւլորվել, քըշաթոխպ* և այլն:

«Ձուռնա-Տմբլա» երկի բառապաշարում գործածված են բարդությունների տարբեր տեսակներ՝ *1. քարացած բարդություններ, 2. իսկական բարդություններ, 3. անիսկական բարդություններ*:

*1. Քարացած են* կոչվում այն բարդությունները, որոնց բաղադրիչները այնքան են ձուլվել իրար, որ վերածվել են պարզ բառերի կամ արդի լեզվական զգացողությամբ գիտակցվում են իբրև այդպիսին, ինչպես օրինակ՝ *տէս (ու) տէն-ընդ այս (ու) ընդ այն, տիւրիւր-ընդ իրար, ադէր-հայր տեր, աքէր-հորաքույր, դօրփէր-հօրեղբայր, տըղորմատէր ողորմեա, ծըհան-հացիան, ծէղաց-ջրաղաց, ստարի-այս տարի* և այլն: «Իւրանց տներընը տուր ու թակաւ, խանչալաւ *տիւրիւր* կեան» (2-29):

*2. Իսկական բարդություններ*: Այս տիպի բարդությունները լինում են հողակապով և անհողակապ: Հողակապով բարդությունները մեծ թիվ են կազմում «Ձուռնա-Տմբլայում»: *ա.* հողակապ *ա-*ն անփոփոխ է



մնում, երբ շեշտ է կրում և հանդես է գալիս միավանկ բաղադրիչով վերջացող իսկական բարդություններում, ինչպես, օրինակ՝ *ըխպըրակին, խըզնատօն, մըրթամեռ, չուրաթան, սըմախեղտ, վըռակալ, քըշաթոխա, պըզկաթան, ժնածեմք, հրաթաթ* և այլն: ք. հոդակապ ա-ն դառնում է ք շեշտակիր վանկից առաջ և հանդես է գալիս բազմավանկ բաղադրիչով վերջացող իսկական բարդություններում, ինչպես օրինակ՝ *ըղըտիրի, կըռըհաքի, մըկլըմանդիլ, փուրըհարինք, քըռըթանթոռչ, տըղընըկոթած, ծխտըլափակ, ծնըթկեվաթ, քըռըքաշան, ըրնըթաթախ* և այլն:

Բազմավանկ բաղադրիչով վերջացող որոշ իսկական բարդություններում ա հոդակապը ձայնավորների ներդաշնակության օրենքով փոփոխության է ենթարկվում՝ դառնալով *ի* կամ *ու*, ինչպես, օրինակ՝ *քրիյատակ, ճընջիպոմբի, չրթիփրթի, կլուկապ, թիլիթափել, քարուկուտր*:

Անհոդակապ իսկական բարդությունները թվով շատ չեն «Ձուռնա-Տմբլայուն» *լըկաման, ճըղմաղինք, մըխթասեղ, յըզնարած, ճըրօխնենք, սըվիրես, խմորիունցի, պենջարփսոկ, խրըվխարաւ, քռանգուծ, քթկալ* և այլն:

3. «Ձուռնա-Տմբլայուն» գործածված *անիսկական* բարդությունները հանդիպում են *կրկնավորների, հարադրությունների և կցականների* տեսքով:

ա. Երկին ոճական յուրահատուկ երանգավորում են տալիս *կրկնավոր* բարդությունները, որոնք հարադրությունների մի առանձին տեսակ են և յուրահատուկ են ժողովրդական մտածելակերպին: Կրկնավոր բարդությունները քննարկվող երկու ձեռք են բերել ոճական բազմապիսի երանգավորումներ: Ըստ Մ.Աբեղյանի՝ դրանք սաստկացնում են ածականով կամ մակբայով արտահայտված հատկանիշների իմաստը՝ միացնելով նաև բազմակիության նշանակությունը, այդ իսկ պատճառով էլ սովորաբար դրվում են հոգնակի գոյականների հետ (26-181):

Սովորաբար իբրև կրկնավոր բարդության բաղադրիչներ հանդես են գալիս կարճ, միավանկ, երբեմն նաև երկվանկ բառերը, ինչպես՝ *ափռում-ափռում, հեապուն-հեապուն, քիսի-փիսի, տիեր-տվեր, էրկու-էր-*

*կու, գեահ-գեահ, պրըկ-պերակ, շեգ-շեգ, մին-մին, փնթի-մնթի, թամիւզ-թաքիւզ, լախ-լախ, հանգը-հոնգը, չոմփ-չոմփ, տոռնը տոռնը, ճօկ-ճօկ, մուլուլ-շուլուլ, սեաք-սեաք: «Էս դեօնըմ ըլըտրանին խոր-խոր տըղերան ար խօսում...» (1-19):*

«Ձուռնա-Տմբլայուն» ոճական տարբեր երանգավորումներով գործ են ածվում անվանական և բայական հարադրություններ:

1. *Անվանական հարադրությունները* բարդության պարզագույն տեսակ են և կարող են արտահայտել նաև փոխաբերական իմաստ: Նրանք կարող են հանդես գալ ցանկացած բառակապակցությունների ձևով՝ լրացում-լրացյալի, համադաս անդամների և նույնիսկ միևնույն արմատի կրկնությամբ, ինչպես օրինակ՝ *«Թակաւ միակաւ սուդու ատվակատու* շեմքեր մշելաւ իլած չիլածը պեժին անին» (2-1):

Երկու հաճախակի են գործածվում գոյական հարադրություններ: Յանդիպում են և ածականներից, թվականներից, դերանուններից կազմված հարադրություններ. ինչպես՝ *գրի սևն ու սպիտակը ջոկող, ազիգ-մեազիգ, պարապ-սարապ, ծիրտի-պիրտի, ըստեղ-ընդեղ: «Ընդեղ վէչ տուր ու թակ տեսի...» (2-29):*

2. «Ձուռնա-Տմբլան» հարուստ է հարադիր բայերով. դրանք ժողովրդախոսակցական լեզվում տարածված արտահայտություններ են՝ բնորոշ հայ մարդու լեզվամտածողությանը. դրանք հյութեղ են դարձնում խոսքը, արտահայտում են պարզ ժողովրդական մտածելակերպ: «Բայական հարադրություններ են կազմվում հիմնականում տալ, առնել, լինել, գալ, անել բայերի ու որևէ գոյականի կամ մակբայի հարադրությամբ: Այս բարդությունների զգալի մասը, որ հիմնականում անվանում է այդ միջավայրին ու կենցաղին յուրահատուկ հասկացություններ, հաճախ չունի իր համարժեքը գեղարվեստական խոսքի ոլորտում», - գտնում է Լ.Եզեկյանը (23-219): Նման հարադրություններից են՝ *քյար անել, յուա գնալ, թամահ անել, հալ անել* և այլն, որոնք գրական լեզվում չեն կարող փոխարինվել համապատասխան համարժեքներով: Դժվար է, ասենք, գրական լեզվի որևէ համարժեքով նույնությամբ արտահայտել խոսակցական լեզվում գործածական *թամահ անել* հարադ-

րությունը, որ մի դեպքում կարող է նշանակել *մի բանի ցանկություն, տենչանք ունենալ*, իսկ մեկ այլ դեպքում՝ *ազահություն, ընչասիրություն* և այլն: «...Ախճի 15 տարին ընցալ ա, ընդրան էլ հու՞ քամահ կանի» (1-63), «...ախճի վեր ասըմըն չտեսին նըհետ պըրկըմօթուն մանել է, դորթ ա, մարթու *զեահլա ա քընըմ*» (1-6): «Սօր էքիւց հարսըս պիրելու, վախըմըս ծեռքիտ *չօփ տընի*» (1-9): «Բաջի ինծանաւ *տնագըս անըմ*, համութ ա, համութ, խէ ըտի պեներ ըս անըմ...» (1-15):

Որոշ հարադրավոր բարոյությունների հարադիրը կամ բարբառային է, կամ փոխառյալ: Ահա բնագրային օրինակներում՝ «...վերը բաշլըղը ուսերին ու զալըմը պապիրոս քշելաւ խուխոց արալըղը մտած՝ *թմաշայ ըն անըմ...*» (1-59), «Բախկալ Ծատուրը չուխան *քիլաւանդ ըրած՝* մին պուճախըմ *բուլդի ա կտորըմ*» (1-60), «...հինչ գրիւցում ասիս, իւրանց *մնենին տամ ըն*» (1-75): *Թմաշայ անել* նշանակում է՝ *դիտել, նայել. քիլաւանդ ըրած* հարադրությունն ունի *կապել* իմաստը, *մնենին տալ* նշանակում է՝ *կարծիքը* ասել և այլն:

Ինչպես նկատում է Ռ.Իշխանյանը, «Չարադիր բայերը հայ ժողովրդական խոսքի ամենաբնորոշ բաղադրիչներն են, հայոց լեզվի ազգային բնույթի գլխավոր հատկանիշներից մեկը: Չայերենի դարձվածքները և դարձվածքային արտահայտությունները, որ մեծ մասամբ ծագել են հարադրական բայերից, ինչպես և լեզվական այլ միջոցներից, իրենց մեջ կրելով հայ ժողովրդի դարավոր ձևավորված լեզվամտածողության բնորոշ կողմերը, լեզվի ժողովրդայնության, հետևաբար նաև ազգային բնույթի էլ ավելի կարևոր ցուցանիշներն են: Միաժամանակ հարադրական բայերն ու դարձվածքները, երբեմն լինելով գեղարվեստական պատկերների յուրահատուկ տեսակներ, անսահմանորեն հարուստ են իրենց արտահայտչական հնարավորություններով, գունագեղ պատկերավորությամբ» (22-108):

Մելիք-Շահնազարյանը քննարկվող երկում գործածել է այնպիսի բայական հարադրություններ, որոնց համարժեքները գրական լեզվում արտահայտվում են մեկ բառով, բայց նա, հարազատ մնալով ոճական իր սկզբունքներին, նախընտրում է խոսակցական (հաճախ նույնիսկ

բարբառային ու փոխառյալ) տարբերակը, այս դեպքում ևս պահպանելով պատումի ժողովրդական պարզ լեզվամտածողությունը: Ահա բնագրային հետևյալ օրինակներում բացահայտված է հարադիր բարոյությունների ոճական արժեքն ու խոսքի մեջ ունեցած երանգավորումը. «*Մարթ համութ ա քաշըմ քշտաւն անցկենայ...*» (1-28)-*ամաչում*, «*Դելաւ ա լեաւ, հօր ըս իւրթըմնը օտըմ...*» (1-8)-*երդվում*, «*Եօր կօնին բաթմիշ անին...*» (1-16)-*կորցնեն*, «*Կնանոցը բաղրիար ըն ըրալ...*» (1-107)-*վախեցրել*: «*Մեալիւր միւշկիւլ թմաշայի անըմ*՝ Ղարաբաղու սարերին՝ տեսնամ ծիւնը *հեալ ա ընգալ...*» (1-151)-*դիտում էի, հալվել է*, «*Մեարդի օթի ընդորթիւնը փոզմիշ ըն անըմ...*» (1-220)-*չեղյալ անել* իմաստով է գործածվում: «*Չինի թա խեղճին փորը մտաւ՝ սեաքիթ ըրալ...*» (1-222)-*սպանեց*, «*գուռնաս քեօք ըրած...*» (1-222)-*լարած*, «...վեր ամեռնը քինջ սրտաւ ելաղ փախչին, իւրանց *քեֆը արամիշ անին ...*» (1-224)-*վայելեն*: «...Քիւֆթա բոզբաշին մեծ թիքոցը երայ ին դաւի տամ...» (1-224)-*պահանջում*:

Բայական հարադրությունների զգալի մասը բազմիմաստ է. օրինակ՝ «Ասըմ ըն չրու սօր էլ հնգերու ա *ման կեամ*» (1-35): *Ման կեամ* հարադրությունը այստեղ ունի *որոնել, փնտրել, գտնել* նշանակությունը, ինչպես նաև արտահայտում է *շրջել, քայլել, զբոսնել* իմաստները, ինչպես՝ «*Դու հշտեղ՞ իր, վեր ես շնըտքընէն ընգած՝ տմբլա թկելաւ ման ի կեամ...*» (1-36): Կամ՝ *քիամ տալ* հարադրությունը նշանակում է՝ *գոյանալ, ստեղծվել, աճել, հասցնել* և այլն. «*Մարթը հունց կկարի մէյմունա քիամ կեալ, ընդրանք չար կենթանի ըն...*» (1-90), «*Ձուռնիս փշըմ ըմ, տմբլիս թիւրմ, ըստեղ ընդեղ քիամ եկած* կորաներին հսկըցնըմ, վեր հինջքան էլ չվսվսան, չթսթսան, վեր խալխին աչքըմը ասլան իրևան, պէն չի տռնալու...» (1-229): «*Չըշտեղ մին եղալի տեղ ա ինըմ, քշերին կէսըմն էլ չափ ըն ընգըմ*» (1-34): Այստեղ *չափ ընկնել* հարադրությունը գործածված է *վրա հասնել* նշանակությամբ: Երբեմն գործածվում է նաև *մրցել, ձգտել* իմաստներով: «*Ա քմատաղ, էշեր կան, էն էլ չըմսըզ, հեաքին դոթուր էշեր, վեր քեօհլան ծիանց նիետ ըն չափ ընգըմ*, թեկուզ լիա վերչը թեահնաֆասն ընգած՝ ճգտընէն տիւս ա

կեանք» (2-150): *Բլբիւ կտրած* հարադրությունը գործածված է *ապա-քինվել, լավանալ, նաև երգել, երգիչ դառնալ* իմաստներով: «Իրեք օրը-նը *բլբիւ կտրած* եա տեղան երա կենըմ եա էն դիւնեան քինըմ» (2-65):

«Ձուռնա-Տմբլայում» բավականին շատ են բարբառային կամ փոխառյալ հարադիր ունեցող բարդությունները, որոնք նույնպես բարբառային ուղորտին են պատկանում, ինչպես՝ *բեղամաղ իլալ, եախա թափել, դուլլուղ մննիմ, դիւզմիշ լինել, բուլդի կտրցնիմ, ախմիշ լինել, բաթմիշ լինել, դոնմիշ լինել, թեազալամիշ անեն, դուղու կանչել, վարավիրդ անիմ, դիւղար քցել-հաջողացնել, ճըխըպիրթ լինել*: Չատկապես տարածված են թուրքերեն միշ վերջածանցով հարադիր ունեցող բարդությունները՝ *ախմիշ, բաթմիշ, դոնմիշ, երըմիշ, չեաշմիշ իլած, դուլամիշ լինել, դիւզմիշ լինել* և այլն:

«Ձուռնա-Տմբլայում» հարադրությունները, ինչպես տեսանք, պատկանում են ժողովրդախոսակցական ուղորտին, եթե այս հարադրությունները փոխարինվեն գրական լեզվի իրենց համարժեքներով, ապա խոսքը կկորցնի իր կենդանությունն ու բնականությունը: Ընդհանրապես հարադրություններն ու դարձվածները Մելիք-Շահնազարյանի լեզվի բառապաշարի անկապտելի բաղադրիչներն են:

Գրողը չէր կարող հայ մարդու, հայ գյուղացու պարզ լեզվամտածողությունը, կենցաղը, խոսքը պատկերավոր ու թանձր երգիծանքով ներկայացնել գրական լեզվով:

«Ձուռնա-Տմբլայի» լեզվին յուրահատուկ է *կցական* բարդությունների գործածությունը: Տարբերակվում են կցական բարդությունների մի քանի տեսակներ.

*ա.* Տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի կցմամբ կազմված բարդություններ, ինչպես՝ *դիբէտ, ըստեղ, ընդեղ, հըշտեղ, մըհենգսատենը, մէշտեղ, զիրիւցիընգեր, դիբիլիզը, տիզիվավա կամ թիսիվավա, քիսօր, խըռուվիթթ*: «Նման կազմություն ունեցող որոշ բառեր վերածվել են քարացած բարդությունների», - գտնում է Ալ.Մարգարյանը: (23-17):

*բ.* Բաղիյուսական (գլխավորապես ու շաղկապով կապակցվող) բարդություններ, ինչպես՝ *առուտուր, տրութակ, ճընջըմընջեղ, տեղուա-*

*տեղ, խերուշառ, քարութանդ, քըրպոռշ, լիցըկոծ, վննըծեքաւ, տկըտիեր, սըվըմթէն, ըչվըծախ, մթնըքշեր, գահրըմար, քըըմոր, շըռըփըռի, քընըքօն* և այլն. այսպիսի դեպքերում ու շաղկապը երբեմն հնչյունափոխվելով՝ դառնում է *ը*:

«Ձուռնա-Տմբլայի» լեզվին առանձնապես ժողովրդախոսակցական երանգ են հաղորդում բազմիցս գործածված բաղիյուսական բարդությունները: «Ժամանակակից հայոց լեզվում ու համադասական շաղկապն է բառակազմական դեր կատարում և բաղիյուսական բարդություններ կազմում: Դրանք կազմվում են այնպիսի բառերի հարադրությամբ, որոնք իրար առնչակից նշանակություններ և բնականաբար նաև՝ զանազան իրողությունների, երևույթների միջև դրսևորվող սերտ կապեր ու հարաբերություններ են արտահայտում», - նշում է Ալ.Մարգարյանը (23-17):

Բաղիյուսական բարդությունները կազմվում են գերազանցապես պարզ-արմատական, իսկ ավելի քիչ՝ ածանցավոր բառերի հարադրությամբ՝ *խոսք ու զրիւց, տուր ու թակ, քիւնջ ու պուծախ, սար ու ծոր, խաս ու դումաշ, քեֆ ու զօղ, ծոխ ու մոխ, կեր ու աւազ, յարգ ու պատիւ, վէշեր ու պիկնիկ, հարս ու ախճիկ*:

«Ձուռնա-Տմբլայում» գործածվող և շաղկապով կապակցվող միակ կցական բարդությունը *իրփըվերի (ըրփըվերի)-որբևայրի* բառն է, որ ժառանգվել է գրաբարից. «Ասըմ ըն ամէն տարի էտ ջահիլ-պառաւը ճրերն ա կեան, վեր հինչ ա մին հարուստ տեղա *իրփըվերի* եա ազափ ախճիզ փռնըցնի...» (2-84):

«Ձուռնա-Տմբլայի» լեզուն ինչպես արդեն նշել ենք, հարուստ է *ի* նախդիրով կազմված կցական բարդություններով՝ *կըլխըր-գլուխն ի վեր, կըլխըվեր-գլուխն ի վար, փըսըվեր-փորն ի վար, պրտըտիւս-պորտն ի դուրս, վըննըծօց-ոտն ի ծոց, պըտնըր-պատն ի վեր* և այլն. «Աստուած հոքին լիւսաւերի, խէ շատ *պրտիւտիւս* խօսող մարթ ար» (2-65):

Չանդիպում են և կրկնավորներից առաջ եկած կցական բարդություններ՝ *լայլայ, մղմէղ, լախլախ, փայփայ, քաշքաշ, հայհայ, հայա-հայըմը, քըլըքօլա, մըղմօղ*: Ավելի հաճախ գործածվում են բայական

կցական կրկնավոր բարդությունները՝ *լկլրկոտվել, ծկծկոտվել, հաչմա-  
չել, կուտկոտել, բիշտբշտորել, դաղդղորել, ծխծխսպել, կրնծկոնծել,  
տըմբտըմբալ, վրթվրթալ, հղլղորել, ծըմծամել, չարչարել, սըրթսըրթալ*։

Մի շարք կրկնավոր բայեր կազմված են գործողություն արտահայ-  
տող բնածայնական արմատներից, ինչպես օրինակ՝ «Իստի չգիղալըս  
տիրած՝ մին հովուր տես ու տեն էլ ընգի, ամանեքը *չրթխկչրթխկցրի,*  
սմավարը թափ տուի...» (2-3)։ «Էտ սազը էս ա 16 տարի ա, վեր  
*ճնգճնգցնըմ ըն,* թող անըմ...» (2-23)։ «...անգուճնես *թշթըշաց,* աչքերս  
պէծին ըրա...» (2-31)։ «Ճեանջու *տգվգոց* էլ չի կեամ, վեր մարթ էլա սր-  
տըվանուի» (2-13), ինչպես նաև՝ *շրռշրռալ, կըրկեռռալ, ճըռճըռալ, վըս-  
վըսալ* և այլն։ Կրկնավոր շատ բայեր, բաղաձայնների փոփոխություն  
կրելով, կորցնում են առաջին բաղադրիչի վերջին բաղաձայն հնչյունը,  
կամ երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայն հնչյունը փոխարինում  
են մի այլ (մեծ մասամբ *մ* կամ *լ*) հնչյունով, օրինակ՝ *խըզմըզօրել,  
ճըխլըխօրել, հըղլըղօրել* և այլն։

*Ածանցում*։ «Ձուռնա-Տմբլայի» բառապաշարում գործածված են  
բազմաթիվ ածանցավոր բառեր։ Ածանցման միջոցով բառակազմումը  
բնորոշ է ինչպես ժամանակակից գրական լեզվին, այնպես էլ բարբառ-  
ներին։ Դարաբաղի բարբառն ունի ածանցման իր կուռ ու հարուստ հա-  
մակարգը, որով առանձնահատուկ տեղ է գրավում հայերենի բազմա-  
քանակ բարբառների շարքում։

*ա*) Զննարկվող երկուս գործածված ածանցավոր բազմաթիվ բառե-  
րի շարքում հանդիպում են *ան* և *չ* նախածանցներով կազմություններ,  
այսպես՝ *ան* նախածանցով՝ *անհրես, անդեսար, անխօս, անճեսար, ան-  
համանչ, անսեսաս, անսերտ*։ *չ* նախածանցով՝ *չըհաս, չըմէթկը, չըպեր,  
չըտես*։ *տ* նախածանցը իմաստի մթագնմամբ պահպանված է *տհալ-  
չհալած, դավուրմա* բառերում։

Պարսկերենից փոխառնված *բէ-բի* ժխտական նախածանցով բազ-  
մաթիվ կիրառություններ կան քննարկվող երկուս։ Ինչպես՝ *բէհիւշ, բէ-  
շընօրթ, բէխաբար, բէքէփ, բիյարուռ*, «Յա, դորթա ընդիենց *բէքէֆար*»  
(1-2)։

*բ*) Վերջածանցները հիմնականում համապատասխանում են գրա-  
կան լեզվի վերջածանցներին՝ *ալի, ելի* ըոխալի, ճիրալի, տուրալի, յի-  
ղալի, տուղտուղալի...

*ած* - խըրաված, նըշանած, հըսած, տոճած, կըտաղած, և այլն։

*ակ* - վերցակ, խէչակ, մէշնակ, ճիճեանակ և այլն.

*(ա)կան* - պըրտական, պըպական, ծըմըթկան, վերսկան, տիմասկան  
և այլն

*ան* - թացան, փոխան, պըլկան, խափլան, մերան, քըրքաշան և այլն.

*անի* - ըշկանի, լիզվանի, կըլխանի, ճըղնանի, վըննանի.

*անուկ* - մըծընալուկ, շըթանուկ, պրանուկ և այլն

*անց* - առըվտանց, հոնանց, շիւտանց, իրեսանց, սրտանց.

*ավէն(աւուն)* - իրզընավուն, սըվավուն, մըծավուն.

*ենի* - ըմըռնենի, ծըմըռնենի, իրկընենի, կըճենի.

*իկ(էգ)* - կարճէգ, կոկէգ, քըթքըթէգ, ցուփլէգ, տըպտըպուրէգ.

*կոտ(կուտ)* - վըխլըկոտ, հըմանչկոտ, մոռասկոտ.

*հան, հանա(յանա)* - ծընդըրյանա, մըծըհանա, քըշըրհանա.

*պատ(տակ)* - չուրըքտակ, հինգըտակ, հարիւրտակ.

*վասկ(վածք)* - թըխվասք, փեադվասկ, նըեղվասկ.

*ատ, ուտ(ոտ)* - ճըպըռոտ, փըսլընքոտ, քընձոտ, փուշըտատում,  
խլատում։

«Ձուռնա-Տմբլայում» գործածված են նաև քարացած բառաձևերում  
պահպանվող ածանցներ՝

գ) ասկ-թըռմասկ, ութկ-սըվորութկ, ոնք-կըռճոնք, որթ-փոխնորթ,  
ռի-տակռի, եռ-շըքեռ,

դ) թուրքերենից փոխառյալ ածանցներով կազմություններ՝

*չի, ճի* - դեամիրչի, թալանչի, թըքուչի (գուլ) ժէշտանչի, փողրաթչի և  
այլն.

*լու* - ամալլու, կեօղլու, բուղլու

*ինջի* - վէցինջի, օխտինջի և այլն,

*լու* - մազալու, ջանլու

*սըզ* - թայսըզ, վախսըզ։

*Դարձվածքներ:* Ինչպես արդեն ասվել է, միշտ չէ, որ հարադրական բարոյությունները հանդես են գալիս իրենց ուղղակի, անվանողական նշանակությամբ. դրանց մի մասը հաճախ ձեռք է բերում այլաբանական-փոխաբերական իմաստ և վերածվում դարձվածքի:

Մելիք-Շահնագարյանի «Ձուռնա-Տմբլա» ֆելիետոնների ժողովածուն հարուստ է գեղեցիկ ու ինքնատիպ դարձվածքներով, որոնք վեպի բառապաշարի ողնաշարն են կազմում և ավելի պատկերավոր ու ազդեցիկ են դարձնում հեղինակի երգիծանքը նկարագրվող այս կամ այն իրողության նկատմամբ:

Դարձվածքի հիմնական ոճական արժեքը խոսքին պատկերավորություն հաղորդելն է, որին Մելիք-Շահնագարյանը հասնում է *նորակազմ* բառակապակցությունների գործածությամբ, որոնք, հանդես գալով ժողովրդախոսակցական լեզվում, ավելի տեսանելի ու ամբողջական են դարձնում հեղինակի պատկերավոր մտածողությունը: «1892 թիւ Մեարդի տասն օխտին Տմբլաչի Խաչանին *հետն ու թեփուռը կորաւ...*» (2-1): «Ողորմած հոքին ասըմ ին վէչ մէծ կայք ար թողալ, վեր իւրան ժեռանգնէն *մին մինու կլխաւ լօք տալաւ* երայ հւրքուին, ժըղովորթ կանչին, առօք փառօք տանին թղին...» (2-1): «Աւստրիան մնացալ *ա էրկու կրակին մեչտեղը*, վէչ կարըմ ա մին հետան խաշլաման ինքն օտի պրծնի վէչ էլ հանց թիքէք աքցըմ, վեր համ *կատուներին մլաւոցը կտրուի, համ շներին շնըհաչոցը*» (2-114):

«Իմ *աչքի լիւս* կրթեցող, դորթ ա ես մին տմբլաչի մարթ ըմ, կրթեցած չըմ, վեր *կիրին տական էլ խբար տամ, կլխան էլ* ու խօսած վախտս հանց *լիւզվաթակ անիմ, լօխճու ռէխ ցեաքիմ*, վեր *մնան ցմաքուած, տաւար կտրած...*» (2-117): «*էրկու վէնը մին չըմըչքըմ տիրած՝ սըռըմ ա, թա լիա սևը սև չի, սիպտակն էլ՝ սպիտակ*» (2-117): «Վէչ տղէքն ըն ռիսկ անըմ անպրիդան ախճիգ օզըմ, վէչ էլ ըխճըկէրքն ըն ռիսկ անըմ *ջուքը տէրտակ* տղի քինըմ, *պրըններին ծուլուլը թափըմ ըն*, թառանչ քաշըմ» (2-56): Ընդգծված դարձվածքներում նկատվում է Մելիք-Շահնագարյանի պատկերավոր մտածողությունը, խտացած երգիծանքը, որը լրացվում է թարմ, նորաստեղծ դարձվածքներով, ինչպես՝ *հետն ու*

*թեփուռը կորաւ, մին մինու կլխաւ լոք ին տամ, կատուներին մլաւոցը կտրուի, կիրին տական էլ խաբար տամ, կլխան էլ, լիւզվաթակ անիմ, մնան ցմաքուած, տավար կտրած:* Այս դարձվածքները ժողովրդի մտածելակերպը դրսևորող լեզվական միավորներ են, որոնք հաճախ պայմանավորված են նաև նրա սովորույթներով, կենցաղով, աշխարհընկալմամբ, կենսափորձով և այլն:

Դարձվածքների գործածությունը նպաստում է խոսքի սեղմությանը, ինչպես՝ «Պատառ ար մնացալ մին լեաւ *ժեռքաւս տամ...*» (1-6): «Չու վեր ինձանա նղանայ, թող քինա *ցորտ ծիր խմի*» (1-18): Գինու հարաքեաթան էրկու մարթ ըն *էն դիւնեան քեցալ*» (1-26): «Չեաբերին երայ խեղճ Մանաս ապօրը *լիւզիւն կտըրվըմա*» (1-35): «Խեղճին *տօնը կլխին քանդուալ ա*» (1-40): «Ամնա ինքը *վէզը տակաւը չի տամ...*» (1-62): «Խեյ ըք *բախտին քացի տամ*» (1-63): «Մին հնարքաւ էտ պէնը *զլօխ պերին*» (2-58):

Ինչպես նկատում ենք վերոհիշյալ օրինակներից, «Ձուռնա-Տմբլա-յում» գործածված են դարձվածքներ մարդու մարմնի մասերի անուններով: Սա լեզվաբանական իրողություն է. խոսքի պատկերավորության ու արտահայտչականության համար յուրաքանչյուր ոք աշխատում է օգտագործել առավել մատչելի, առօրեական բառեր, որպիսին էլ հենց մարմնի մասերի անուններն են: «Ձուռնա-Տմբլայում», բացի սովորական, խոսակցական լեզվում լայն գործածություն ունեցող դարձվածքներից, ինչպես՝ *ժեռքըս պատ չի կեամ, կլօխը եղել, վընը ժեռքա ընկնել, սէրտը կրակ ընկնել, կլօխը վըղել, սէրտը պենալ, փողերը տակավ անել, քթից բռնած* և այլն, որոնք շատ-շատ են, հանդիպում են և այնպիսի դարձվածքներ, որոնք թերևս հեղինակային նորաբանություններ են, ինչպես՝ *կլօխս փոխալ ըմ-զլխարկը, ուշքս երայ մնայ-ցանկանալ, օխտը պորտը տիւս ըն տամ-անիծել, օղտեր ըն կոլ տամ-գռփում, սևը սիպտըկացնի, սիպտակը սևըցնի, պիւնը ծխեվլավ քանդըմ-վերացնում, փողերը սառնին կիրի-ուրանալ, դուզը տփերին ա կեամ-գայրանում, չրու վեր բերգէններին իփած քիլընգեօշը կսառչի-խառնաշփոթությունը կանցնի, աչքընէն կորէկ չըն քցիլ-չեն տեսնի, հ՞ուա հիւր ըռըխի*

եշըմ-լսըմ, վըննածեռքը լիւզ տալ-քծնել, սիրաշահել, ճոլին ընգալ ա ծովը-(հայոց հարցը-Ե.Մ.), վարսն ու պորտը եղ քսող չկա, բախտին ճոնդը պեցուած, կոլ տւած ըջըհամփիւրներին տեղը մահլըմ ինի, միէնգ պետմա տանը նստիք, ծեանջ փռնիք և այլն:

Ժողովրդական բանահյուսութեան նմուշներ: Մելիք-Շահնագարայանի «Ձուռնա-Տմբլա» ստեղծագործութեան մեջ խոսքի պատկերավորութեանն ու ժողովրդայնութեանը մեծ առավելություն են հաղորդում ժողովրդական բանահյուսութեան բազմաթիվ նմուշները՝ առակները, հանելուկները, շուտասելուկները և հատկապես առածները, ասացվածքները, թևավոր արտահայտությունները, որոնք, որպես լեզվի պատրաստի միավորներ, կարող են նաև դարձվածքներ համարվել:

Այս լեզվամիջոցները կրում են ժողովրդական լեզվամտածողութեան և դարավոր կենսափորձի ու իմաստութեան խտությունը և սեղմ, պատկերավոր ու արտահայտիչ ձևով ներկայացնում են կյանքի տարբեր երևույթները, բնութագրում կերպարների էությունը:

Մելիք-Շահնագարայանը ոչ միայն օգտագործել է ժողովրդական խոսակցական լեզվից և կենդանի բարբառից ժողովրդի կենսափորձն ու իմաստությունն արտահայտող առածներ ու ասացվածքներ, այլև ինքն է գրել բուն ժողովրդական ոգով, երբեմն ստեղծել դրանց նմանողութեամբ պատրաստի, կայուն բառակապակցություններ և խորիմաստ արտահայտություններ: Մելիք-Շահնագարայանը հաճախ մեջ է բերում խիկար իմաստունի, Լաֆոնտեմի առակներից՝ կապելով այն իր ժամանակի հետ.

«խիկար իմաստունն ասմա՝ աշխարքըս տմակ ա, մէջի մարթը տեմակ, հու վեր դոչչաղ ա, տեմակը սոր ա, խօսքը ընդրանն ա» (2-193): «Ախր տերտակ տեղան չըն մեր պապերն ու հեարերը էտ զապասը տները՝ մը պահալ. գիտացալ ըն. վեր լէն օրին նեղ օր էլ կայ» (2-217): «Ա քմմատաղ, մին դոլան ընտրանց հախն էլ ա է, խէ՞ չըն հանց պէռնը փռնըմ, վեր կարին տանին, խէ՞ չըն իւրանց չափը, ծիւսը ճնանչըմ՝ եօրդաններին գեորայ իւրանց վէնը մէկնըմ. խէ՞ չըն էնքան օտըմ, վեր կարին մարսին» (2-140):

Թարգմանելով և փոխադրելով ֆրանսիացի մեծ բանաստեղծ, երգիծաբան Լաֆոնտեմի առակներից մի քանիսը, որոնցում գործող անձինք հանդես են գալիս այս կամ այն կենդանու կերպարանքով, Մելիք-Շահնագարայանը դարձյալ օգտագործում է Ղարաբաղի բարբառի արտահայտչական հնարավորությունները:

Գործող անձանց խոսքը համեմվում է թևավոր ու խորիմաստ փոխաբերական արտահայտություններով, առած-ասացվածքներով. «Ղըցուց ախճիկ ճոկելը կնանոց պարլամենտըմ» ֆելիետոնում Յուռին, Ջառին, Վառին, Թեազան, Թեառին, Գիւլին, Շուշին, Սօլթին, Անան, Սոնան գալիս են այն հետևության, որ «Ճպատը իւրան քօլան կըտրին, քեասիբու ախճիկ չընք օզիլ, հանց վեր կեան մեր տօն վեր կօխին» (1-36): Յեղիմակը ցավով նկատում է. «Ետման պարլամենտին կնանոց տեր ողորմեան ըն ընկնըմ Ղալին սաղ ըխճըկերքը ու տիւս կեան մին-մին փոտ երայ տիրած, չրու վեր մթնըմա, չայը խմըմ ըն, ամեն մինը իւրան կանդիդատին եալլուխըմը քշկռած՝ տօնա տանըմ, վեր են մին պարլամենտըմը էլիա վեսկըջրած մէյդան տիւս պիրի» (1-65): Եվ իբրև ընդհանրացում՝ «Ղալին լօխ ըխճըկերքն էլ պարլամենտին մկրատաւն ըն ծիւվըմ, կարող կրկատողն էլ տատմարն ու հացթուխնն ինըմ, խմորիունցին ու դեալլաքը» (1-65): «Եկին հայոց ազկի կիպիտատնէն, շատ զուլում եկին, քթընէն ցեցցեց, ամեն մինին սրտըմը էրկու ասլան նստած, պրաններին կրակ ու ալալ, հու՞ ա կլխան ծեռք եր կալալ ասի տեղտ ծոխ ա, եր կաց ընդեղ նստի, եա հու՞ ա հետատ կեարմիր խնծոր դարկալ...» (2-227): Տմբլաչի խաչանը այնուհետ ընդհանրացնում է՝ «Թեազա հաւեր տիւս կըկեան, թեազա ջուռա ծւաներ կածին ազկն էլ եղծու կանի, կօտի, կլխանայ, զկոտալալ ման կըկեայ...» (2-226): «Ձուռնա-Տմբլա» ֆելիետոնների հետագա շարադրանքում գործածված առած-ասացվածքները՝ «շանը քթան ճիւր կխմըցնին», «կիրին տակն էլ գիրդող, կլօխն էլ», «ա կոժ քեզ ասիմ, ա կոլա դու լսիր», «քեօհլան ծին տակիս ա», «վէքը ալչու ա կաղնըմ», «վարթը վեր վարթ ա, էլիա փոշեր օնի կոթին երայ», «երկու վէնը մին չըմըջքըմ տինի», «սև էծին մեջքը եր ինի», «ախրը խեր ինի, վերջը պարի», «ըրըսհան հիլի, տըկըհան

*ծիլի»*, լրացնում են հեղինակի երգիծանքը, ընդգծում նրա նպատակադրումը՝ ուսուցանել և դաստիարակել իր «աչքի լիւս դարաբաղցիներին»:

Շարահյուսական-կառուցվածքային առումով դարձվածքներին և մյուս կայուն բառակապակցություններին մոտ են նաև անեծքները, բարենաղթանքներն ու օրհնանքները, որոնք քննարկվող երկում հաճախ են հանդիպում: Դարձվածքների նման սրանք ևս ձևավորվում են ազատ բառակապակցությունների վերաիմաստավորմամբ, կամ կապվում են կրոնի, եկեղեցու և դիցաբանության հետ:

«Ձուռնա -Տմբլայուն» գործածված շատ արտահայտություններ անցել են Աստվածաշնչից ու պահպանվել են ժողովրդական բանահյուսության մեջ և իբրև լեզվի ժողովրդախոսակցական ուղորտին պատկանող միավորներ, համապատասխան հուզաարտահայտչական գունավորում են հաղորդում խոսքին:

Անեծքներ՝ «*Քիւլիմ ընդրա կլոխը*», «*Դու իմ ցաւըս քաղիս*», «*Լկլկոտվիմ, ծկծկոտվիմ, ճուխտ բալաս թորենը ընգնին*», «*Աչքերըտ քուռանա, տիւս տրաքի, ումբըրըտ սև կենա*», «*Տօնըտ պրիշակ մնա*», «*աչքը տիւս տրաքի*», «*մահրում, մաղբուն մնաս տու*, «*վարսըտ կտրիմ*», «*Ծամրտ կտրիմ*», «*Վէչ տափան պցրանաս տու*»:

Օրհնանքներ՝ «*Քու մոր ծրեծը քեզ հալալ ինի*», «*Աստված վերջը պարի անի*»: Նոր տարվա շնորհավորանքների կապոցը բացելով՝ խաչանը իր խոսքը ուղղում է բոլորին՝ «Շնհաւեր թեազա տարի, այ էրուած, խանծուած, *վէզը* ծոռ, ճկատին քրտննքավը ապրող շինական, պարաւ ամեն տարի էս օրին հասնիս, սաղ ջանաւ, խոխավ ըրեխավ, օղլաշաղաւ, ըպրանքաւ, *վարածտ կանաչի, տնկածտ տիլարի, ծաղկի*»:

Տմբլաչի խաչանի խոսքը մեկ խնդրանք է, մեկ անեծք, մեկ օրհնանք, մեկ պահանջ, մեկ սպառնալիք, մեկ բարոյախոսություն, մեկ շնորհավորանք:

Կապված հայկական Մեծ եղեռնի հետ՝ գրողը դառնում է հասարակության զգոնությունը արթնացնող մունետիկ և պահանջում է. «Յիւր անըմ ջան կայ, ծեռքըմը դւաթ, պէդմա մէյդան տիւս կեայ, էտ *չարխը*

*պէն քցի, արաբան ցխան հանի*, թա չէ մէր կլխին օրկուն օրկուն շատ *կարկուտ պէդմա կեա*» (2-214):

Երկի չափածո հատվածներում ևս՝ «Ղարաբաղցու աղօթքը», «Կիւլերն ու վեխճարնէն», «Ըսլանու մորթի կեցած էշը», «Կերթնուկն ու կովը» հեղինակը դիմում է ժողովրդական բանահյուսությանը՝ օգտագործելով բազմաթիվ առակներ՝ իր խոսքը ավելի ազդեցիկ դարձնելու նպատակով:

### Գլուխ III

#### Քերականական իրողությունների առանձնահատուկ դրսևորումները Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում

Քերականական կարգերի գործածությունը Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում տարասեռ է ու բազմաբնույթ, ուստի և կքննարկվեն այն ձևերը, որոնք ավելի հատկանշական են Մելիք-Շահնազարյանի ստեղծագործությունների լեզվին և՛ ժամանակագրական առումով, և՛ հեղինակային նպատակադրմամբ:

#### Ձևաբանական առանձնահատկությունները

Մելիք-Շահնազարյանի բարբառային ստեղծագործությունների ձևաբանական համակարգը քննելիս նախ և առաջ պետք է նշել այս կամ այն իրողության կիրառությունը, որ յուրահատուկ է նրա ստեղծագործությունների լեզվին, միաժամանակ դրանք համադրել Ղարաբաղի բարբառի և ապա գրական լեզվի համանման կարգերի հետ և ցույց տալ հեղինակի միտումն ու ոճավորման նպատակը տվյալ ձևերը գործածելիս:

**Գոյական անուն:** Գոյականի բոլոր քերականական կարգերն այս կամ այն չափով օժտված են ոճական-արտահայտչական հնարավորություններով, առավել ևս գոյականի քերականական այն կարգերը, որոնք հարուստ են զուգաձևություններով և ձևաբանական այլ տարբերակներով: Գոյական անվան քերականական կարգերը հետևյալ դրսևորումներն ունեն Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում:

1. **Հոգնակի թվի կազմությունը:** Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում և մասնավորապես «Ձուռնա-Տմբլա» երկում ընդհանուր առմամբ պահպանվում են Ղարաբաղի բարբառի, գրաբարյան և գրական լեզվի հոգնակի թվի կազմության հիմնական օրինաչափությունները. միավանկ բառերի հոգնակին կազմվում է *-եր*, իսկ բազմավանկ բառերինը՝ *-ներ* մասնիկներով:

Որքան էլ հոգնակի կազմության ժամանակ զգացվում են գրական լեզվի օրինաչափությունները, Մելիք-Շահնազարյանի ստեղծագործություններում հանդիպում են և՛ գրաբարյան, և՛ ժողովրդախոսակցական, և՛ բարբառային անմիօրինակ ձևեր:

Հաճախ միևնույն գոյականը հոգնակի թիվ է կազմում և՛ գրաբարյան *ք*, և՛ գրական-եր կամ-ներ մասնիկներով, ինչպես նաև բարբառային *-նէ* կամ-նի հոգնակերտով, ինչպես օրինակ՝ *կատուներ-կատուէք-կատունէ*. «Թա էտ թիքեան շներն են չանթըմ, *կատուէքն* ըն հեաքինէն կոըցնըմ, թա *կատուներին* ռեխն ա ընգնըմ, շներն ըն քուլու կէնըմ» (2-114): «*Կատունէն* էլ ըն երատ ասլան կտրալ» (2-130): Միևնույն գոյականը հոգնակի է կազմում և՛ *ք*, և՛ *-ուք*, և՛ *-նի* մասնիկներով՝ *հնգերուք*, *հնգերք*, *հնգերնի*: «*Հնգերուքս* էլ նոթընէն կիւտած, քթը-պոռչ ըրած՝ հետաս ընգին» (1-115): Կամ հետաքրքրական է հետևյալ օրինակը. «Մեր ըշխարքին հաւքերը» ֆելիտոնում գրողը նույն նախադասության մեջ գործածում է *հաւքերը* և *հաւքերը* գոյականները: «Ձուռնին կողքին Տմբլին մեազրա ընգնէլը, տպտպուրիգ եա չխչխկատար *հաւքերին* տուր չի կեալ, ամմա հինչ անիս միեգուայ ժամանակը սև ինի՛, էն ժմանակն ա՛, վեր տանը պառաւը ըռաւօտը եր կը կէնար կոտը շաղ տար, ճիու՛, ճիու՛ անար, էտ *հաւքերը* կլխին հաւքար...» (1-183): Հեղինակը *հաւքեր* բառով նկատի ունի ընտանի հավ թռչունին, իսկ *հաւքեր* կրկնակի հոգնակերտով նկատի ունի *ընտանի բոլոր թռչուններին*: Հարկ է նշել, որ *հավ* բառը ժամանակակից գրական լեզվում ստացել է իմաստի նեղացում՝ *ընտանի թռչուն* և ընկալվում է եզակի թվի գաղափարով, իսկ *հավքեր* հոգնակի ձևը՝ նախկին իմաստով՝ ընդհանրապես՝ *թռչուն*: Երևի թե այստեղ ևս նկատելի է Մելիք-Շահնազարյանի միտումը. մի կողմից գործածում է խոսակցական կամ հին հայերենի ձևեր, մյուս կողմից դիմում է գրական ձևերին՝ նպատակ ունենալով լեզվի գրականացումը: Ք մասնիկով հոգնակի կազմության ժամանակ նկատելի են և՛ հին հայերենի, և՛ ժողովրդախոսակցական ու բարբառային իրողություններ՝ *գործք*, *լուծք*, *վարծք*, *երեխք*, *մարթք*, *փըսք*, *բողչք*, *կնանէք*, *փչատկէք*, *դուխք*:



Մեկիք-Շահնագարյանի ստեղծագործություններում հոգնակիի կազմության օրինակներ կան նաև թուրքերեն *լար* մասնիկով՝ *աղալար, բաջիլար, քեօխալար, հաջիլար*: Համախոս նման կազմությունները ստանում են գրական հայերենի-ներ հոգնակերտը, ինչպես օրինակ՝ *աղալարներ, բաջիլարներ, հաջիլարներ, քեօխալարներ*: «Ու էտ թեարիֆլու պեներին մհար *քեօխալարները*, սուդիեքը համեշա պարեկեմթանի ըն տամ» (1-179): Գրողի լեզուն լեզվական այս մակարդակում ևս հավատարիմ է մնում գրական լեզվի օրինաչափություններին:

Գրաբարյան *-ունք* և *-մունք* մասնիկներով հոգնակի են կազմում մի շարք բառեր՝ *ծաղկունք, շարժունք, կռածունք, կարթունք, պելունք*:

Հոգնակի թվի կազմության ժամանակ մի շարք բառերի հիմքերի վերջում ավելանում է *ք* ձայնավորը, ինչպես՝ *աչկընեն, օրընեն, մըսընե, կլխընե, ծեռընե, պարընե* և այլն: Սա կազմում է ստացական հատկացյալ: «*Աչկընես* երայ մնաց մի կուլուլակի եա լոբու տիրևաւ դոլմի» (1-155): *Աչկընես*՝ նշանակում է *մեր աչքերը*: Լեզվաբան Հր.Պետրոսյանը վերոհիշյալ բառերի մասին նշում է, որ երբ միավանկ բառերի վրա ավելանում է *ք* ձայնավորը, միավանկ բառը դառնում է բազմավանկ և ձայնավորահանգ բառերի կազմության օրինաչափությամբ *ստանում-ներ* մասնիկը (31-227):

Երկում նկատելի են հոգնակի կազմությամբ այլ ձևեր ևս՝ *մըռլոտենք, տղարանք, դւարանք, պըռըվօտենք, դաշտորայք, տղայք, փշուրտանք, կուսանք, կիրանք, քիրվենի, կլխնե, հեաքիմնե, տականք, քերանք, տունդիք*:

«Ձուռնա-Տմբլայուն» կիրառված է հոգնակիի բարբառային կազմության առանձնահատուկ մի երևույթ ևս: Մի շարք բառերում *իկ=ք* հոգնակերտից հետո դրված է *-եր* մասնիկը և հավաքական գոյականի իմաստով նաև-*անք* (սեռ. տր.-*անց*) վերջավորությունը՝ *որդկերանց, մարդկերանց*: «*Որդկերանց* տանից դուրս գան» (4-34): (Որդի *+ք+եր+անք*, մարդ *+իկ+եր+անք*):

Փոխանվանաբար գործածված բառերի հոգնակի թիվը Մեկիք-Շահնագարյանի լեզվում, որպես կանոն, կազմվում է գրականի նման՝ միա-

վանկ բառերը *եր*-ով, բազմավանկերը՝ *ներ*-ով: «Նիժնու եարմուկան *քեցողներան* պեդմա հրցնել» (1-194), «*տեղըներան* տիրիւր կեան» (2-29) «Ճխելլաւ հւաքած *լիւսավերներան* Աստուծ ըզադի մեր երգիրը» (2-38): Հանդիպում են նաև բացառություններ՝ կազմված *անք, նե, եքլիք* մասնիկներով. «Ողորմած հոքին *սաղիքան* նիետը շատ դօստ ար» (2-2), նաև՝ *բոլորեքեանք, փխչցնողնե, քթածնե, հինգանոցնե և այլն*: «Էս ամեռնը մեզ մհար բայրամ ար. մինին տասսը երայ տիրած ծախսեր ինք անում ու ծէր *հինգանոցնեն, տասսանոցնեն* մեր դախլընը փոփռըն ին» (1-202): Բերված բազմաթիվ օրինակները հաստատում են այն կարծիքը, որ քերականական շատ կիրարկություններ Մեկիք-Շահնագարյանի ստեղծագործություններում դեռևս չունեին միօրինակություն, հանդես են գալիս երկակի, եռակի քերականական զուգաձևություններով և գտնվում էին գրաբարից կամ խոսակցական լեզվից գրական լեզվին անցման վիճակում:

2. *Առկայացում*: Մեկիք-Շահնագարյանը լեզվի առկայացման կարգում հավատարմորեն արտացոլում է Ղարաբաղի բարբառի ձևաբանական յուրահատկությունները: Հոգնակիի կազմությունը քերականական կառույցներում համախոս ուղեկցվում է *ս, դ, ն* հոդերի զուգորդությամբ՝ արտահայտելով տարբեր առումներ:

Ղարաբաղի բարբառին հատուկ է այն երևույթը, երբ հոգնակիի կազմության մի շարք կառույցների՝ *ին, իք, ք* ուղղական հոլովածները, հակառակ գրական լեզվի, ստանում են ստացական հոդեր: Բարբառային այս իրողությունը նկատելի է Մեկիք-Շահնագարյանի ստեղծագործություններում. «Սաղ օրը *կերածնես* (մեր կերածները-Ե.Մ.) խաշած ծիւ ա, *աչկնես* երայ մնաց մի կուլուլակի եա լոբու տիրևաւ դոլմի» (1-155): Հոդերի նման կիրառությունը երբեմն նկատվում է նաև թեք հոլովածներում, ինչպես՝ «Կոռոցնիմ, Ղլին կնանեքը *կլխիս* հւաքիմ» (1-51), «*Մըծմըծոնացը* տների լիւսը կընընչ կարմիրա» (1-19), ինչպես նաև՝ *որդկերանցը, տղերքանցը*, «Սկեսվորը եա տէքը կնգանը խրտըհարելն աղան» (1-81), «*Դաւթարխանցը միրգէքը* թուշ ընտեղ ըն քինալու» (1-80):

Մելիք-Շահնազարյանի երկերում նկատվում են և հողագեղջման դեպքեր, որոնք հատուկ են հին հայերենին և արևմտահայերենին, ինչպես՝ «Շատեր կսեն, որ *Կովկաս* կրթական մեծ շարժում մը կայ, ատոր *պատճառ* ինչ է...», «Միայն Տեր<sup>46</sup> ընդդեմն աչքը կուշտըցընի» (1-54):

Բարբառում գոյականները հող են ստանում սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներում, ի տարբերություն գրական լեզվի: Այսպես՝ «Հի՞ք պեղմա Բաքուայ Յայոց աղքատանուցի *ա-կուշկոցը* (սեռ+հող) շուշեքը կցուխն» (1-205): «Դաւութ *ապօրը* (սեռ+հող) մին լամպաւ չորս ութաղի լիւս տալու փորձը մին փարա *տնե-րըմը* (ներգոյ.+հող) շատ հաջող քինըմ ա» (1-47): «Էս հինչ կրակ ա, վեր ինձ քցալ ըն մաչը, իմ *լիւզվանը* (բաց.+հող) տիւս պէներ կիրալ կազէք քցալ» (1-36): «Ինքը սուսուփուս երի *դրվազաւը* (գործ.+հող)տիւս եկաւ դիբի սարին են ղօլը» (1-52): «Հշտեղ բախտ, դեօվլաթ կայ ընդդեմն *հիւրթաւը, տրոնաւը* (գործ.+հող) եր թափի» (1-37): «Սովդաքեարներան խնդրըմ ա, վեր *օրըներըմը* դորթ չխոսին, *կեազըմը* (ներգոյ.+հող) իւիլ չկտրին» (1-54):

Հանդիպում են և նշված հոլովածների առանց հողի կիրառության դեպքեր. «*Սոււմարանի* գեալուրներին ախապիւրը ցմաքուալ ա» (1-33): «Միէգ մին փարայ մարդկանց *խելքաւ* փիս ա տիւս եկալ... վերը վերըմ, վերը կրակըմ կուտըրվեցին» (1-43): «Մին մարթ *կնդստորան* հրաման ինք կալաւ»: Նման կիրառությունները գրողի լեզվի գրականացման վկայություններ են:

Հայցական հոլովում որոշ գոյականներ ուղիղ խնդրի պաշտոնով անորոշի փոխարեն դրվում են որոշյալ առումով՝ երբեմն անձնավորվելով: «*խելքին* կտրածան փայ համեց հընգերներին» (1-49): «Իրանցին օցին էրգեան *ոււրըրը* խնթրում ար, հռանում» (2-141): «Հեաքիմնն իւրանց կոնսուլցին վերչըցրին, մնըմ ա կոնսուլտացու *սիլը սաթիլջամը* կիրին, տակին ծեռք քաշին» (2-60): «Լիւսավերութեան կենացը խմալ ըն, վեր եկալ ա Ղալըմը պիւն տիրալ, *ճտերը* ըրալ» (1-61):

Երբեմն էլ հանդիպում են օրինակներ գործիականի իմաստով, բայց գործածված հայցական հոլովով. «Հուվեր օզըմա *ալանթալան* ապրելը սվերի, մեռելոց եա տնօրհնէք օրերին կեայ Բաքու» (2-104):

46. Տեր և Աստված բառերը հող չեն ընդունում:

Նույն հոլովածներում երբեմն որոշյալ հողով է գործածվում նաև տեղի պարագան. «Խալիչին *տակը* տիրած կոնսուլտացու կիրը, հեաքիմսհաբնէն կրթեցին» (2-60): «Մեր հայ ժողովուրթը գիղըմ չի հինչ ա-նի, *թորը* քինա...» (2-204):

Այսպիսով՝ հոգնակի թվի կազմության և հողերի կիրառության քննությունը ցույց է տալիս, որ Մելիք-Շահնազարյանի երկերի լեզվում նշված քերականական կարգերն արտահայտված են ոչ միայն գրական լեզվի օրինաչափություններով, այլև զուգակցված են գրաբարյան, ժողովրդախոսակցական և բարբառային իրողություններով, երբեմն՝ միաժամանակ, նույնիսկ միևնույն բառի մեջ՝ ստեղծելով հոգնակիի կազմման երկձևություններ և եռաձևություններ:

3. *Հոլովման համակարգը* ևս Մելիք-Շահնազարյանի երկերում իր բարբառային-խոսակցական երանգներով մոտենում է գրական լեզվի մակարդակին:

Նկատելի տարբերությունները հիմնականում պայմանավորված են գեղարվեստական գրականության լեզվի տվյալ ժամանակի մակարդակով և ապա հեղինակի միտումով՝ ամեն կերպ պահպանել երկի ժողովրդախոսակցական երանգավորումը, այն է՝ գրել պարզ ու մատչելի լեզվով:

Ձևաբանական հոմանշությունն առավել ևս նկատելի է հոլովման համակարգում, ինչպես տարբեր հոլովակերտ մասնիկների օգնությամբ, այնպես էլ նույն հոլովի կապով և առանց կապի գործածության, որոնք կարող են արտահայտել ինչպես նույն քերականական իմաստը, այլև՝ երբեմն նաև քերականական նրբերանգներ (24-228):

Մելիք-Շահնազարյանի երկերում գործածված են նաև գրաբարյան հոլովածներ՝ ավելի հաճախ՝ հոգնակի սեռականը. «Ա՛յ հարստացած *ախպորց* քեասիբ քուրեր, եա հարուստ *մարթոց* քեասիբ պարեկաննէ...», ինչպես նաև՝ *դիփունանց, մըծմըծոնաց, ըխճըկորանցը, շիրախանոցը, քվորտանց, կնանոց, մեղաց ախտ, պատվիրանաց, խուխոց, ծուանցը, մնացողաց* և այլն:

Մի խումբ հատուկ անուններ, հատկապես տեղանուններ, որոնք

գրական լեզվում հոլովվում են *ի*, իսկ բարբառում՝ *ու* հոլովիչով, երբեմն հանդես են գալիս գրաբարյան *ա* հոլովմամբ: Բազմաթիվ են հոլովական զուգաձևությունները, որոնք, ինչպես արդեն ասվել է, նաև տվյալ ժամանակի գրական լեզվի քերականության անմշակության հետևանք են:

«Ելլատեղն էլ վէչ *Ղարաբաղա* սարերն ըն, վէչ *Շամախու*, վէչ *Դիլիջանու*: Բա մէր երգրին էտ հաւքերը, *Ղարաբաղի* նեանամ-սեանամ խանըմնէն, *Բաքուայ* նեարմա-նեագիւք խաթուննէն, *Թիֆլիզու*, *Նախծուանու* հարսներն ու ըխճըկերքը հունց ըն իւրանց օրը անց կըցնըմ, թող իւրանք խոսին, մունք անգուճ տինինք» (2-74), «*Էջմիածնա* կոնդակը տիւս ա եկալ» (2-226):

Ղարաբաղի բարբառի հոլովման համակարգին յուրահատուկ է սեռականի *ու* հոլովիչով կազմությունը, որը և բազմաթիվ կիրառություններ ունի Մելիք-Շահնագարյանի երկերում, ինչպես՝ «վէչ մին *օրէնքու* խառնվի վէչ» (1-73), «Յանց գիղացի թա *թորքու* օբայ ա վէր եկած»: Մի շարք բառեր սեռականում հոլովվում են գրաբարյան *ո* հոլովիչով, որոնց մի մասը՝ իբրև քարացած ձևեր, անցել են գրական լեզվին: «Բինալու ըմ Յոռոմ-Պապին խելքին նստըցնիմ, վէր *Իտալիոյ* վեղան տիւս չի կայ» (1-149), «Յոքուն *սրկոյ* շնորքը նորընծին դէրին» (1-48), սակավադեպ գործածություն ունեն նաև սեռականի կազմության նման ձևեր, ինչպես՝ *Ասծու սէրին*, (1-205), «էտ թոփխանըմը մարթը *մարթին* ջեարգըմն ար» (2-25) և այլն:

*Ոջ* հոլովման պատկանող որոշ գոյականներ հոլովվում են զուտ բարբառային օրինաչափությամբ և ստանում տարբեր հոլովիչներ, ինչպես՝ *տեարին/տիրոջը, ընկերին/ընկերոջը*, այնպես էլ՝ «ժըմհարին *կնգան* թակողը ինքը չի» (2-143), «Յարսին ձեռքին եսիր մնացած *սկեսվորը* շնհավեր ա անըմ» (1-55), «իմ *տեաքոր* տղին մհար ախճիկ ընք օզըմ» (1-62): «*Տերան* ըմ խնդըմ» (2-55), «Ղաբուլ չի *քւորը* մարթի տա» (2-64):

Հոլովական այս զուգաձևությունները երկի թե բացատրվում են այն հանգամանքով, որ XIX դարավերջին դեռևս որոշ հոլովիչներ (*ոջ, վա,*

*ու*) լայն կիրառություն չեն ունեցել, մյուս կողմից էլ՝ ավելի տարածված էին խոսակցական լեզվի քերականական օրինաչափությունները:

Այս ամենով հանդերձ՝ «Ձուռնա-Տմբլա» երկում հանդիպում են նաև *ոջ*-ի կիրառության օրինակներ. «էտ ծեռացակիրին *տրուչ*» (տիրոջ-Ե.Ս.) պարովակիրին կոպիան ըստեղ տիւս ըմ կիրըմ» (1-135): 1. «*Տանտերուչ* շոնը էտ տեսնըմ ա» (2-155):

Մելիք-Շահնագարյանի երկերում գործածական է *ց* հոլովիչը, որով հոլովվում են *ք, անք, ենք, տինք, երք* հոգնակերտ մասնիկներ ունեցող գոյականները (մըծմըծոնաց, կնանոց, մարթոց, խոխոց, ընկերտանց և այլն): *Տ* հոլովումը ունի և՛ բարբառային, և՛ գրաբարյան բնույթ: Ավելի տարածված է բարբառայինը, ինչպես՝ *որդկերանց, ախճկերանց, քվորտանց, երեխեքանց, եգանց, գիւղացոց, անասնոց* և այլն:

Բարբառային յուրահատուկ կազմություն ունեն *ըստոնան*-այս տարվա, *հրռնան*-անցյալ տարվա ձևերը, որոնք գրական լեզվում ենթարկվում են *վա* հոլովման. «Թա չէ էլիա ծէր *ըստոնան* եալլին կցեցիք, ծէր արարքը Ձուռնին ռըխին կը տինիմ» (1-201):

Տեղ ցույց տվող որոշ գոյականներ ներգոյականի փոխարեն հաճախ գործածվում են հայցական հոլովով: Սա ժողովրդախոսակցական լեզվին յուրահատուկ իրողություն է և գործածական է Մելիք-Շահնագարյանի երկերում. այսպես՝ «Մին քանէ զօրբա հրսնքնէ ա իլալ, ամմա դիփունանց կիլօխ ասըմ ըն *Բաքու* բախտին ճոնդը պեցուած մեր խնամունց տղինն ա իլալ» (2-68): «Ըտրանց պեռնը *Թիֆլիզ, Մուսկով* եա *Պարիժ* կարել տուած շորերա ա ինըմ» (2-74): «Ախպէրը դաբուլ չի կացալ, հինչա քուրը *Ղարաբաղ* ա ծնվալ» (2-68):

Երբեմն հանդիպում են նաև հոլովական անկանոնություններ, ինչպես օրինակ հետևյալ օրինակում՝ «Իսկի դայիք չօնի նչաղին զուր *տեղան* են դիւնեան դարկող հեաքիմնէն» (2-122). *տեղան* բառը դրված է բացառական հոլովով, բայց գործածվում է հայցականի իմաստով: «*Ստամբուլին* չիասած՝ դաբեալաս հանեցին, մին պուքեցին» (1-115):

47. Ըստ լեզվաբան Կարո Դավթյանի՝ այս ձևը յուրահատուկ է Մարտակերտի խոսվածքին: Նայիր՝ քվագրված գրականություն, հ. 19:

*Ստամբուլի* ձևը արտահայտում է հայցական հոլովի իմաստ: Նման անկանոնությունները սակավադեպ են:

Ոճական հատուկ հնարանքով Մելիք-Շահնազարյանը օգտվում է գոյականների քերականական մի այլ հատկությունից. հասարակ գոյականները հաճախ գրում է մեծատառով կամ հակառակը և դրանով իսկ ընթերցողի ուշադրությունն է հրավիրում այս կամ այն բառի արտահայտած իմաստային ու ոճական նրբություններին: Նման ձևերով գրողի դրական կամ բացասական վերաբերմունքն է արտահայտվում նկարագրվող երևույթի նկատմամբ: Դրանք գրողի մտքի իմաստային նրբությունները դրսևորող քերականական միջոցներ են: Այսպես օրինակ խոսելով որևէ երևույթի հանդեպ Տմբլաչի Խաչանի՝ մուսուլմանական վերաբերմունքը Ջուռնայի կամ Տմբլայի միջոցով արտահայտելու մասին՝ նա անձնավորում է երաժշտական այդ գործիքները. «Ասծու մին անընը վկայ ծեր արարքը *Ձուռնին* ռըխին կը տինիմ, հանց փչիմ, վեր Պետի-գորսկն էլ կմուռանաք, թթոյ ճիւրն էլ» (1-201): «Հիբ պեղմա *Գեանջը-ցէք, Նուխըցէք, Շամախեցէք, Նախճուանցէք* օշընէն կլխընէն հւաքին, մարթու ջեարգ ընգնին» (1-205), «Ինքն իւրան կիպիտատ ճոկած *Մշակ* ախպէրը (նկատի ունի «Մշակ» թերթի խմբագրին-Ե.Մ.), առաջնորթարանան հանց փախա՛վ, հանց փախա՛վ...» (1-219), «Վեր մին ազկըմ իտի *Ըստուծապաշտ* սովորութքնէն արիւն ու մարմին ինին տեռած...» (1-233): «Դաւթարխանոցը միրգէքը Ողիմպոսին տակին մին խիւթ կայ անըմը *Ըռըշվաթ* (կաշառք-Ե.Մ.), թուշ ընտեղ ըն քինալու» (1-80):

Այս ամենով հանդերձ՝ Մելիք-Շահնազարյանի բարբառային երկերի հոլովման համակարգի ուսումնասիրությունից պարզվեց, որ որքան էլ բարբառային կամ խոսակցական բնույթի շեղումներ լինեն, այնուամենայնիվ, դրանք գերակշիռ մաս չեն կազմում: Հոլովման համակարգի երկձևությունները գրական լեզվի զարգացման տվյալ փուլին յուրահատուկ լեզվական երևույթներ են:

*Ածական* անվան գործածությունը Մելիք-Շահնազարյանի երկերում արտահայտված է գրական լեզվի օրինաչափություններով, սակայն նկատելի են մասնակի շեղումներ, որոնք երբեմն նեղ բարբառային են,

երբեմն՝ գրաբարյան, երբեմն էլ խոսակցական լեզվին յուրահատուկ երանգավորում ունեն:

Ինչպես նշում է Ար.Ղարիբյանը, բարբառում ածականի համեմատական աստիճանի համար գործածվում է *ավելի* բառը հազվագյուտ դեպքում, իսկ գերադրական աստիճանը կազմված է *ամենա* բառով, գերադրական աստիճան կազմող *գույն* ածանցը գործածական չէ: Համեմատական աստիճան կազմելու համար սովորական է բացառական հոլովի գործածությունը (25-114): «Խբարնէ շա՛տ, մին *մինու անա* բէթար, մին *մինու անա* սև ու մըթեն» (2-213): «Էտ թեազայ *հեաքիմներան* մինը էս մուտերքըմը էլիա մինին թեւեր ա տուալ էն դիւնեան թոցրալ. Աստուծ պարի ճանապարհ տայ քինացողին, հեաքիմին էլ էլ *իվիլի* շնորք» (1-134): «Մեր Լուսավերիչը, Մեծն Ներսեսը էտ անվեղար *Լիւտերան պակաս* ըն իլա՞լ» (1-44):

Որևէ հատկանիշի գաղափարը ընդգծելու և խոսքին սաստկական երանգավորում հաղորդելու նպատակով հաճախ միևնույն ածականը կրկնվում է. «Օնքերը *հաստ-հաստ*, աչքերը լիա բիզաւ ծկոտած, խզատակը *բրթբրթոտ...*» (1-64): «Ըխճըկորցս մին այիբ չօնին, իւրանք *լըտըն-լատան*, վըննը ծըռքընէն պենդ...» (1-69):

«Ջուռնա-Տմբլայում» նկատելի է ածականների համեմատության աստիճանների կազմության մեկ այլ եղանակ, որը գրական լեզվում բացակայում է: *Դիա* կամ *դահի* փոխառյալ բառը, որը նշանակում է *ավելի*, *առավել*, *էլ ավելի*, մի դեպքում դրվելով ածականի վրա, կազմում է բաղդատական աստիճան, իսկ մեկ ուրիշ դեպքում «ավելի» բառով կազմված համեմատականի հետ կազմում է գերադրական աստիճան. «Աֆաշկարա մօրը ծծան կտրող մարթոց պեննա օմգատ, վեր սղալըմըն թարիֆ անըմ *դահի մէժ* պատուի արժանացըմ» (2-120): *Ահա* բառը *բեթար* բառի հետ արտահայտում է գերադրականի իմաստ. «Փորին ցան էլ հեալա կտրալ չի, *դահի բեթար* թիւնդվալ ա» (1-35):

Ըստ լեզվաբան Կարո Դավթյանի՝ գերադրական աստիճանը Ղարաբաղի բարբառում կարող է կազմվել նաև *առի*, *լափ* բառերով, որոնք կարծես հաստատում են համեմատության տվյալ աստիճանի ճշտու-

թյունը: «Շատ ու շատ խնթրում ըմ ինձ մըհար մին *առո՛ւ լոխճանց նեղ* շալվար դարկիս» (1-67): «Ասի օրը իրեք ծոզարդար սարքիմ, բեալբեամ Ղալան *առ՛ էլիսաւերուի*, հեալա պատառ էլ դէնը անց կենայ» (1-67):

«Ձուռնա-Տմբլայում» գործածված է ածականի համեմատության աստիճան կազմելու մի յուրահատուկ եղանակ ևս, որը նույնպես խոսակցական լեզվին է յուրահատուկ, երբ բաղդատականի, մասամբ նաև գերադրականի իմաստ արտահայտելու նպատակով ածականի վրա բացականչական նշան է դրվում, ինչպես *մե՛ծ, երկա՛ր, խո՛ր* և այլն: «*խելու՛նք, շատ խելունք* ըն մեր կիպիտատնէն: Եկին հայոց ազկի կիպիտատնէն, շատ զուլում եկին, քընէն *ցեց ցեց*, ամեն մինին սրտըմը էրկու ասլան նստած» (1-227):

*Քանակական թվականների* ձևերում զգալի տարբերություններ չկան: Բաղադրյալ թվականները «Ձուռնա-Տմբլայում» ունեն և՛ կցական, և՛ անջատական գրություն: «1892թ. Մեարդի *տասն օխտին* տմբլաչի խաչանին հետն ու թեփուռը կորավ» (2-1): Տասը թվականը գրվում է կրկնակ *ս-ով*՝ քանակը, չափը շեշտելու նպատակով, ինչպես՝ «Տասը տարի աչքիտ առաչը կալ...» (1-60): Տասնավորների գրության մեջ դիտվում են հնչյունական արտասանական տարբերություններ գրական լեզվի համեմատությամբ, ինչպես՝ *հիսուն-իծծուն, վաթսուն-վածծուն, յոթանասուն-օխնասուն* և այլն: «Չազար օթ հարիւր *օխնասուն* թվին...» (1-1):

Դասական թվականները Ղարաբաղի բարբառում կազմվում են քանակական թվականներին թուրքերեն *-ինջի* ածանցի կցմամբ, ինչպես օրինակ՝ *երկունջի, օխտինջի, հենգինջի* և այլն: Երկի բառային կազմը հարուստ է Ղարաբաղի խոսակցական լեզվում ընդունված այս իրողությամբ: «*Օխտինջի* քշերը անսէս պարի քշեր ըսեցի մնացողներին» (1-107):

Գրական լեզվի համեմատ զգալի տարբերություններ կան *դերանվանական համակարգում*: Անձնական դերանունները և նրանց հոլովումը հիմնականում նման է գրականին, միայն անձնական դերանվան եզակի II դեմքի բարբառային *քու* ձևի կողքին հեղինակը հաճախ նա-

խընտրում է *քո* ձևը. «Ես Արբաբենց աղջիկ Աննան չըլինիմ թէ որ *քո* անունը տափը չկոխեսն» (2-177): Երբեմն առանձին կերպարների խոսքում հանդիպում է նաև բարբառային *քու* տարբերակը. «Ա լակու, հու՛նց թա կտզտզայ, էտ *քու* ռխի լայեղ խօսքա» (2-221): Հոգնակի I դեմքի *մենք* դերանունը բարբառում և երկու գործածվում է *մունք* տարբերակով. «Իւրանք խօսին, *մունք* անգու՛մ տինինք...» (1-74): Հեղինակի երկերում հանդիպում են անձնական դերանվան հոգնակի թվի III դեմքի գրաբարյան ուղղական և սեռական հոլովածների գործածության օրինակներ, որոնց կիրառությունը պայմանավորված է խոսքը ոճավորելու նպատակով, ինչպես նաև ժամանակի լեզվին բնորոշ երևույթ է՝ *նորա բոլորեքեանք, դոցա, դոցանից* ձևերը: *Ինքը* դերանվան հայցականը հետաքրքիր կազմություն ունի Ղարաբաղի բարբառում:<sup>48</sup> Այն կազմվում է *զ* նախդիրով և դիմորոշ հոդերով: Գործում է նաև հոգնակի *զինքընէն* ձևը: Ցուցական դերանուններից գերակշռում են բարբառային ձևերը՝ *ես, եղ, էն*: «*Էտ* հմամընը պնըցնելի սանդրը, սապոնը պատրաստա» (1-48): Ղարաբաղի բարբառում բառակազմության ժամանակ այս դերանունների է ձայնավորը սղվում է, հաճախ էլ փոխվում է *ը*-ի կամ *ի*-ի՝ *ես-ստի* կամ *ըստը-հենց, այդ-տի, այն-ընդի*. այդպես՝ «Չեալա գեանքընըս *իտի* այդպես դինջը թունաւ յղէ չի քեցալ» (2-5): Սակայն, ի տարբերություն բարբառի, երբեմն այս հնչյունափոխությունը չի կատարվում, և է ձայնավորը չի հնչյունափոխվում. գործածվում է *եսենց* ձևը: Հաճախադեպ գործածվում է և գրականացված *այնպես* տարբերակը: Այնուամենայնիվ, սրանք գրականաձև մասնավոր դեպքեր են և որակ չեն կազմում: «Ձուռնա-Տմբլայում» դերանվանական համակարգը հիմնականում բարբառային է:

Բարբառային իրողություններ են նկատվում նաև մյուս խոսքի մասերի կիրառություններում: *Հիմա, արդեն* ժամանակի մակբայները գործածվում են բարբառային հնչաարտասանությամբ՝ *միենզ, էս ա*. «Տեսնընըմ *ես* մին մարթ ա կեամ» (2-14): «*Միտզ* այամը փոխուալ ա» (2-117):

48. Տես՝ գրաբարյան բառաշերտը, էջ 88:

Քարբառային *բազի* բառը գործածվում է և՛ *երբեմն* ժամանակի մակբայի իմաստով, և՛ դերանվան նշանակությամբ: Այսպես՝ «*Բեազ վախտ էլ բոնժուռ ըն ասըն*» (1-152): «Մին *բազի* մարթեք էլ գիդընըն թա այամը փոխվալա» (2-14): *Բազի* բառը դերանվան իմաստով երբեմն գործածվում է փոխանվանաբար՝ ստանալով գոյականի քերականական հատկություններ. «Ըսկի մին *բազինին* վերավիւրդ ըրի՞ր» (1-7): Ընդգծված բառն ունի *ինչ-որ մեկին* անորոշ դերանվան նշանակություն: *Բազի* կամ *բազէ* բառը բարբառում նշանակում է և *ծկան թեփ*:

Հաճախ որպես երկծություններ կողք կողքի գործ են անում միևնույն շաղկապի գրական և բարբառային համարժեքները: Առանձին դեպքերում բարբառային ձևերի կիրառության հաճախականությունը ավելի մեծ է. «Օրիշ պէն ա *թա վէր* էսքան կուտորվուծքան ետը մին ըստուծասերը տիւս կեայ հային աչքին ըրտասուենը սրփի, իւրան տոնը, տնատեղը *եա* օջախը նշանց տա քինա երա կչոռ անի, էլիա իւրան առիւն քրտնընքաւը *համ* իւրան տոնը պահի, *համ* մին սիրու նասրանու փոր կշտըցնի» (2-46): «*Եւ* պարտաճանաչ ու ազնիւ ընտանիքը բաժանում է և ամեն մին գնում է կեանքի սայլակը քաշելու...» (2-180):

«Պետք է թողնես, *որ* իմ բարեկամները գան ինձ մոտ *և* կամ ես գնալ գալ ունենամ» (2-178): Երբեմն էլ հեղինակը այդ երկծություններն օգտագործում է որպես հոմանիշային ձևեր, երևի թե կրկնություններից խուսափելու նպատակով:

Հեղինակը հաճախ գրականի *քանի որ*, *որովհետև* շաղկապների փոխարեն նախընտրում է *թեաքչի*, *թեաք*, *չիւն* բարբառային շաղկապները: Ինչպես՝ «*Չիւն* ուստաբաշին մեր հոքևեր դերին հուքը վերթին ա» (1-22): «*Թեաքչա* ինձ տերտեր շինիք» (1-20): «*Թեաք* մինը լոք տա եր ինի թախտափուշին կիւօխը» (1-32):

Երբեմն *քան* շաղկապի փոխարեն հեղինակը նախապատվությունը տալիս է բարբառային *քանց/քանզ* տարբերակներին, ինչպես՝ «*Քանց* մին սիրու մարթեք կաղմին» (1-90), «Լեաւն էն ա ես ու իմ խօխէքը ծարաւ կուտորվինք, *քանզ* իմ փշակիմ քօռ աչքաւ եշիմ» (2-44):

Տմբլաչի Խաչանը իր հույզերը, զգացմունքներն ու ապրումները մեծ

մասամբ արտահայտում է ձայնարկությունների, բնածայնությունների, կոչականների օգնությամբ: Գրական իրողություններից բացի գործածվում են նաև խոսակցական կամ բարբառային ձևերը. «*Է՛* պըլակէնը քար ու քացախ օտի» (1-7): «*Բօ-բօ*, ախճի բիաբուռ տեռինք» (1-6): «*Է՛* խաբարդար, հեռուանց մին ծիավեր քշտաւը անցկացալ» (1-9): «Տիլիփոնիս փչընըն *գու՛* սեասը ըստեղ ընտեղ շաղ եկած դըրցուց հսցընըն» (1-92): Հատկապես լայն գործածություն ունեն *տո՛*, *այ՛* կոչական ձայնարկությունները: «*Աղա* Մօսի, Մօսի...» (1-15). *այ տղա* կոչականական կապակցությունը հանդիպում է *աղա և այտա* տարբերակներով: «*Աղա՛*, քեօչարի ածի, քեօչարի, խնամէքը քինընըն» (1-1): «*Ատղա* Մօսի, Մարեան բաջուն ճնհապա քցի» (1-13):

Այսպիսով՝ անուն խոսքի մասերի քերականական կարգերի, հարաբերական, վերաբերական բառախմբերի գործածության ժամանակ Մեւլիք-Շահնազարյանի երկերում բարբառային, խոսակցական իրողությունների կողքին գործածվում են և գրական ձևերը, որը վկայում է նրա լեզվի գրականացման միտումի մասին և պայմանավորված է տվյալ ժամանակի գրական լեզվի ընդհանուր վիճակով:

*Բայ և խոնարհում*: Բայը խոսքի մասերի համակարգում առանձնանում է քերականական կարգերի և հատկանիշների բազմաձևությամբ ու իմաստային բազմազանություններով, որոնցով և պայմանավորված են նրա քերականական ու ոճական տարաբնույթ կիրառությունները: Մեւլիք-Շահնազարյանի երկերում նկատելի են բայական կարգերի բազմապիսի կիրառություններ: Բայական կարգերի գործածության ժամանակ են առանձնապես երևում գրական լեզվում եղած անկանոնությունները: Իսկ XIX դարավերջին դրանք բավական շատ էին. իշխող գրական ձևերի կողքին գործածական էին բարբառային խոսակցական և գրաբարյան լեզվական տարրերը: Բայերը հանդես են գալիս երեք լծորդությամբ՝ *ել*, *իլ*, *ալ*. ուլ լծորդության բայերը սահմանափակ կիրառություն ունեն:

Ղարաբաղի բարբառին ավելի հարազատ են *իլ*, *ալ* լծորդության բայերը, որովհետև սրանք ավելի շատ խոսակցական լեզվի ոլորտի

հետ են կապվում: «Վերը մին մարթու կիլօխ ար *ճըճեխալ* սուղին ձեռքունը *փախալ*, վերը տաւար *փխցրալ*, մտքընը *տիրալ*, վեր էլիա մին օբէքը ակը տայ» (1-106), «Խալխին բարբաշտութիւնաւը խաղ *ըրալ*» (1-111): «Ծիւնը կեալաւ կեալաւ՝ հանց *այցրացալ* ա սար ու ծեօր *կոխալ*, չուերին ենը *կտրցրալ*» (1-128):

Մելիք-Շահնազարյանի երկերում *ալ* լծորդության բայերի նման կազմութիւնները հանդիպում են և ժխտական խոնարհման ժամանակ: Դա հատկապես նկատելի է պայմանական եղանակի ժխտականի դեպքում, երբ բայը համապատասխան օժանդակ բայի հետ ժխտականի փոխարեն դրվում է անորոշ դերբայով, որը և Ղարաբաղի բարբառին յուրահատուկ իրողութիւնն է: «Յանդարդ խօսելը ղլըցէք գիդալ չըն» (1-1): Նշված կառույցը նկատվում է *ե* և *ի* լծորդության որոշ բայերի խոնարհման ժամանակ: Յարկ է նշել, որ Մելիք-Շահնազարյանը *ի* խոնարհիչի գործածությամբ նպաստել է քերականական այդ իրողության միօրինականացմանը, ինչպէս՝ «Յեալա թող պատառ քթթ *անին*, թա վեր իւրանք իւրանց տօն չըն կեալ, մին օր կը քինամ հանց տըմբլիս կը *թխիմ* վեր թեւ ու թեփուռէն էլ չի իրեալ» (1-77):

Ախոնարիչ են ստանում հիմնականում ըղձական եղանակի և նրանից կազմվող պայմանական, հարկադրական եղանակների ապառնի ժամանակի բայածները, որտեղ ևս նկատելի է խոսակցական լեզվի ազդեցությունը: «Վեր մին դարիբ մարթ *լսար՝ կգիդար*, թա ըստեղ հինչ թակ ու միակ կա» (1-1): «Վեր խալխը *գիտայ* թա աղօթքն անըն» (1-70):

Յարկ է նշել, որ *գիտենմ* պակասավոր բայը Ղարաբաղի բարբառում ենթարկվում է կանոնավոր խոնարհման և համարյա բոլոր եղանակաժամանակային ձևերով էլ գործածվում է Մելիք-Շահնազարյանի երկերում:

*Կարել* (*կարողանալ*) բայը քննարկվող երկում հանդես է գալիս եղանակային բոլոր ձևերով. «*Կրեցի վէչ* իւրանց խնթիրքը կտարել» (1-84): «Յու՞ *կըկարի* ասի՝ աչքիտ երայ օնք կա» (1-71): «Շատ շատերը *կարըմ* չըն քննին» (1-21), «*Պետմա կարիս* տիւս կեաս» (1-90):

*Ասել* բայը սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանա-

կում հիմնականում գործ է ածվում *եց* վերջավորությամբ. «Ընգուճենրին *ըսեցի* վեր կեառնու նման պըռըշկած կաղնին» (1-70): Յանդիպում են և *ասից* տարբերակով օրինակներ. «Կափրիել դային տարաւ մին անտակ անդունդքի երայ շինած մագի կարմունջի տեմըրաւ՝ *ասից* «Խաչան հիւնարըտ նշանց տո՛ւ...» (2-6): Յետաքրքրական երևույթ է Ղարաբաղի բարբառի խոնարհման համակարգում օժանդակ բայի՝ բայական ձևերի հետ կցական գրությամբ հանդես գալը. «Դարվինն ասմա» (ասում է-Ե.Մ.) (1-90):

*Առնել* կամ *ինք օնել* բայը վաղակատարում հանդես է գալիս *ինք կալալ* (*առնել*), հրամայականում՝ *ա՛ռ, ինք կա՛լ*, արգելականում՝ *ինք մօնել* ձևերով: «Դե հը՛ *ինք առ*» (1-115), «Թեա կեառնը պտահի, *ա՛ռ*, էս ա ասըմըմ փլավ էլ պետմա ինի» (91) «Փողերն էլ *ինք առ*» (1-81) «Ընդրանա շտրափ *ինք կօնինք*» (1-24) եղանակաժամանակային որոշ կիրառություններում *լինել* բայը գործ է ածվում բարբառային տարբեր ձևերով: «Քինալըտ *ինի*, կեալտ *չինի*» (1-80), «Իմ կլխիս մատաղ *իլած-նէն*» (1-80) (փոխանվանական հոլովում), «Թա իմ ծեռքիս *կինար* պառլամէնտին իրաւունքը» (1-180), «Թամաշաչէքը շատ ըն *իլալ*» (1-29), «Լեաւ *կընար* ծեր կնանէքն էլ պերիք» (1-21), «Ախճի Յուռում զօռաւ զատ *կընի*» (1-9), «Ըստի *բեղմա ինար*» (1-29):

Դերբայական համակարգը Մելիք-Շահնազարյանի երկերում հիմնականում գրականացված է, բացառությամբ մի քանի դեպքերի: Յստակորեն տարբերակված են վաղակատար, հարակատար դերբայները՝ իբրև գրաբարյան անցյալ դերբայի դրսևորումներ: «Շատ լեաւ պէներ ըն *խօսել*» (1-29), «Քու փեշքն ըմ *փռնալ*» (1-115), «Ընդեղի հայերը հանց *լուսաւերուալ ըն*» (1-179), «Գեանքըմըս իտի դինջըթունաւ յղէ *չի գեցալ*» (2-5), *Քեցալ* վաղակատար դերբայը բարբառային ձև է և տարբերվում է գրական լեզվի համապատասխան դերբայի կազմութիւնից, իսկ *չէի* օժանդակ բայի *է-ն* սղված է: «Թա վեր նստած իլին» (նստած եղան) (1-111), «Չեռքան փախած ա» (1-114):

Յարակատար դերբայի իմաստով գործածվում է հետևյալ կազմու-

թյունը. «Ի՞նչ *ասմունք* ա մշակին խոսքերը» (ասված է) (1-131): Հարակատար դերբայի իմաստն արտահայտվում է նաև այսպիսի հետաքրքիր կառույցով, ինչպես՝ «Ես *քոն ի*» (2-31) *քնած էի* իմաստով:

Սակավադեպ կիրառություն ունի գրաբարի անցյալ դերբայը. «*Անցեալ* տարուայ մօղան ուրիշ էր» (2-176): Հանդիպում են նաև *ուսեալ, գրկեալ* և նման ձևեր:

Ապակատար դերբայը հաճախ բարբառային կիրառություն ունի Մելիք-Շահնագարյանի երկերում՝ «Ըտրանա իւիւ չըմ *տլական հու*» (1-15), «*Քինըլական ըմ* Թիֆլիզ» (1-26), «Երըս *կնըլական* տեսնաս» (1-21), բայց մեծ մասամբ այն հանդես է գալիս գրականաձև: Ինչպես օրինակ՝ «Ասըմ ար ես *փսրկուելու չըմ*» (1-62), «Գիրակի օրը քարոզ *ըմ խոսելու*» (1-20): Երբեմն հանդիպում են և *քընդելին, մըռնելին* ձևերով կազմություններ: «Ծովերը *կապուելին* երայ խիզիլեալան քնգեացալ ա» (1-172): Հավանական է՝ անորոշ դերբայը գործածված է տրականի *-ին* վերջավորությամբ, քանի որ նշված օրինակներում այս դերբայները տրականի իմաստ են արտահայտում:

Համակատար դերբայի մասին պետք է նշել, որ այն երևի թե XIX դարավերջին դեռևս լայն կիրառություն չուներ, և Մելիք-Շահնագարյանի երկերում գործածված են անկատարի բարբառային ձևերը, ինչպես՝ «Բոխճենին *տրաքըմ* բմբասանքն աղամ» (1-81): «Էն իրեք *տրաքըմ* խոնչա կթնահունցը էն հու՞նց կերիք» (1-8): Այստեղ ընդգծված բառերը ունեն համակատարի իմաստ՝ *տրաքելիս*, և հանդես են գալիս որպես որոշիչներ: Սակավադեպ կիրառություն ունեն համակատարի *լիս*-ով ձևերը. «Տեսնըմ ըմ մին բելուկ մարթոց քաշքաշ *ընկնելիս*» (2-16): Ենթակայական և ժխտական դերբայները ևս բավականին գործուն կիրառություն ունեն երկում. «Էլ խեղճերին *ճնանչող* չիմըմ» (1-130): «Ըտեղ սաղ սալամաթ *քինացողը* վեր նաչաղ չի տօն կեայ, խիլայ ա» (1-107), բայց և կան *ա* լծորդության բայերի՝ անորոշի հիմքից կազմված օրինակներ՝ «Ըրեվըմա ըռըշվաթա *հռանողը* չի» (2-4): Նկատվում է ենթակայական դերբայի կազմության անմիօրինակություն:

Ընդհանրապես *տալ, գալ* անկանոն բայերը Մելիք-Շահնագարյանի

երկերում հետաքրքիր կիրառություններ ունեն. «Նիկրիպուշտին *կեամ* ա եօր օնըմ» (1-76): Ի տարբերություն գրական լեզվի, որտեղ նշված բայերի անկատար ներկան կազմվում է համակատար դերբայով, Ղարաբաղի բարբառում այն ունի անկատարի *մ* վերջնատառը. «Թողութիւնա *տամ (տալիս-ե.Ս.)*, հղէ տինըմ» (1-76), «Սէրաւ կը քինին կնըչկոտըմը կըրածին, շար ընգած տօն *կին*» (1-183), (գային) պայմանական ապառնի՝ անցյալ անկատարի իմաստով, «Մարթէ էլ ըն տիւս *կեամ*, վեր էտ դերերին փիլոնը եր ըն *օնել տամ*» (1-53), «Հի՞նչ սրտաւ *տիւս կի* թեազա տարի շնհաւեր անի, քանի վեր տեսնըմ ի մեր հայերին սերը ժաման կտրված» (2-198): Երկում գործածական է նաև անկատարի կազմության գրական ձևը. «Դեղին ծիւրը մեչան պլթալթալաւ տիւս *կեալիս*» (1-106):

«Ձուռնա-Տմբլայի» խոնարհման համակարգում կան բայի խոնարհված ձևերի յուրահատուկ դրսևորումներ՝ արտահայտված բայարմատով. «Չէ, քմնատաղ, էն մեր *սազ չի*» (1-63) (մեզ չի սազում): «Խէ ես *քոն ի*» (2-30) (քնած էի):

Միակերպություն չի նկատվում նաև հրամայական և հարկադրական եղանակների կազմության ժամանակ, որտեղ գրական ձևերին զուգահեռ, որոնք գերակշռում են, գործ են ածվում նաև բարբառային բառաձևերը: Այսպես՝ *ե* խոնարհման որոշ բայեր գրականի *-իր* վերջավորության փոխարեն ստանում են խոսակցականի *-ի* դիմային վերջավորությունը, կամ նրանից էլ զրկվելով՝ հրամայական կազմում միայն անցյալ կատարյալի ցոյական հիմքով. «Տու էլ *հարստաց*» (2-192): «Թա ծեր շհարըմը կնդստոր կայ, *կիրի* կեամ ըստեղ ղուլլուղ անիմ» (1-84), «Թա խելք օնիս, տիւս *ժլկի*» (2-4), «Հինարըտ նշանց տո՞» (2-6): Բայց հանդիպում են և նույն ժամանակաձևի *իր* վերջավորությամբ գրական կազմություններ. «Ոչ, նեղություն մի՛ *քաշիք*» (2-179): Եզակի հորդորական հրամայականի դեպքում որոշ բայեր երբեմն ստանում են նաև *ա* կամ *ի* վերջավորությունը. «*Ասի* բախշին, կրեցի վէչ իւրան խնթիրքը կատարել» (1-84), «*Ասի* խե՛...» (1-107), «Նհետը Պարիժ *քինի (զնա՛-ե.Ս.)*» (2-172), «Էքուց *խօսա* տեր հոր հետ» (2-94), Ղառնալ բայի հրա-



մայականը կազմված է արմատից՝ «Թա խելք օնիս, տերտեր *տե՛ն*, տերտեր» (1-25), ի տարբերություն գրական լեզվի «դարձի՛ր» հրամայականի: Բայց հանդիպում են և գրական լեզվի օրինաչափ ձևեր՝ «Տու էլ առաջ *քինա*» (2-192), «Մին *թո՛ղ ա...*» (1-64):

Արգելական հրամայականի կազմության առանձնահատուկ դրսևորումներ կան մասնավորապես «Ձուռնա-Տմբլայուն»: Նախ՝ շարադասության մասին: Ղարաբաղի բարբառում, ի տարբերություն գրական լեզվի, արգելականի *մի*, բարբառում՝ երբեմն *մէ* մասնիկը ետադաս է, իսկ բայը դրվում է անորոշ դերբայով, ինչպես՝ *ասել մէ, վախել մէ, կզնըվցնել մէ, հրցնել մէ*: «Էտ ըխարին առաջը էլ *հրցնել մէ*, նստելու եա կղնելու մին տեղ չի կայ» (1-105): Հանդիպում են և արգելական հրամայականի այնպիսի կազմություններ, երբ արգելական մասնիկը, միանալով անորոշ դերբային և կորցնելով *ի* հնչյունը, արտահայտում է արգելական հրամայականի իմաստ. այսպես՝ «Կափրել դայի, ըսեցի, եկ, փիսոթուն *մանել*» (*մի՛ անիր-ե.Ս.*) (2-4): Հոգնակի արգելականը ևս կազմվում է անորոշ դերբայով, իսկ արգելականը ստանում է երկրորդ դեմքի օժանդակ բայի *ք* մասնիկը՝ նախադաս կամ ետադաս կիրառությամբ: «Էշերը եր կալեք եկեք *վախել մեք*» (1-67), «Իմ գուռնան էտ չաթուքեսասաններին ռէխը *մեք քցել*» (2-2): «*Վախել մեք*, կուտուրեցեք, ձեր քեֆին նի եկող չինել» (2-194):

Ըղծական եղանակի բայաձևերը սովորաբար արտահայտում են որևէ գործողության կատարման իղծ, ցանկություն: Սակայն հաճախ դրանք կարող են արտահայտել նաև ոչ ըղծական իմաստ՝ գործածվելով իբրև համանիշ հրամայական եղանակի բայերի: Ինչպես՝ «Խե՞ջ ըս ումբըրտ *սւըցնըմ*» (2-171): «Հու վեր ասըմ ա մեր Ղալան ետ ա մնացալ, ստտ ա, *հւատասս վէչ*» (1-26): Ընդգծված բայաձևերը, չնայած ձևով ըղծական են, ավելի խիստ արգելական իմաստ են արտահայտում, քան եթե գործածված լիներ *մի՛ սևացրու, մի՛ հավատա* հրամայական ձևերով: Սովորաբար հրամանը, կարգադրությունը ստանում են երկրորդ դեմքի ձևավորում, քանի որ վերաբերում են խոսակցին: Սակայն Մելիք-Շահնազարյանը օգտագործում է նաև այնպիսի կապակցություն-

ներ, որոնցում հրամայական իմաստ է դնում ըղծական եղանակի հոգնակի թվի առաջին դեմքի մեջ: Այդպիսի ըղծականը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում են և՛ խոսողը, և՛ խոսակիցը. ինչպես՝ «Ռուբէն, գնանք, գնանք, հեռանանք այս մթնոլորտից» (2-170), «Լօխ էլ դուել (մենամարտ-ե.Ս.) տիւս կեան» (2-184):

Մելիք-Շահնազարյանի երկերում ժխտական խոնարհման բայաձևերը ևս հանդես են գալիս երկձևություններով. մի դեպքում չ ժխտականը դրվում է բայի վրա, ինչպես գրական լեզվում, իսկ մեկ այլ դեպքում ժխտական է կազմվում *չի* մասնիկով և գրվում առանձին՝ ետադաս կամ նախադաս: «Թա վեր իւրանց խերն ու շառը *չճնանչիւն*» (1-61), «Թեյ քո անունը տափը *չկոխենն*» (2-177), «Մին օյին *չի պիրի*» (2-81), «Մին մինու նի *չի կեան*» (2-106), «Սերտըս *օզըմ չի ծեգ տեսնամ*» (2-106), «Վեր ասըմ ի *հւատըմ չիւն*» (1-72):

«Ձուռնա-Տմբլայուն» հանդիպում են ոճական յուրահատուկ կառույցներ, երբ ժխտականն արտահայտվում է ոչ թե ձևաբանական համապատասխան միջոցներով, այլ հարցական երանգի նախադասությամբ, որտեղ հարցումը ճարտասանական բնույթ ունի: Այսպես՝ «*Հու՞ չի գիրըմ* վեր ըկռալին տեսած սերնը կնանչել չի» (1-186): «*Հո՞ր սեսս քցիմ*, թա դազանչեցուց ժամին երայ 160 հզեր մանեթ ըն խարջալ» (1-72):

Այսպիսով՝ ինչպես երևում է «Ձուռնա-Տմբլայի» 10 պատահական էջերի վրա կատարված վիճակագրական քննությունից, ձևաբանական իրողությունները երկուս տարասեռ են ու բազմաբնույթ: (Աղյուսակ 2)

Գոյականի հոլովման համակարգում բարբառաձև հոլովումը գերակշռում է գրական լեզվի համապատասխան օրինաչափ ձևերին՝ 101/78 հարաբերությամբ: Հոգնակի թիվը կազմված է համարյա հավասար հարաբերակցությամբ՝ 45/46: Այդ նշանակում է, որ հեղինակը գոյականների հոգնակին հավասարապես կազմել է և՛ բարբառային, և՛ գրական լեզվի հոգնակերտներով: Առկայացման կարգում բարբառային և գրական լեզվի իրողություններում նկատվում է թվային խիստ տատանում՝ 56/23: Ավելի քան երկու անգամ բարբառային առկայացումը գերազանցում է գրական լեզվի համապատասխան իրողություններին:

Վիճակագրական քննություն  
«Զուռնա-Տմբլայի» պատահական ընտրած 10 էջերի ձաբանական համակարգի

№	№	Խոսքի մասեր	U - 19		U - 86		U - 155		U - 200		U - 229		U - 29		U - 121		U - 173		U - 213		U - 237		Ընդամենը		
			Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք	Գրկ	Գրք
1		Գրական ա) հոլովման համ.	16	9	4	5	6	11	2	2	11	2	9	21	13	16	4	13	4	9	8	6	4	101	78
		բ) թվի կարգ	7	3	1	3	5	5	7	7	9	6	8	8	5	7	4	3	4	1	1	1	4	45	46
		գ) առկայացում	9	2	4	2	2	5	0	4	2	7	5	11	6	7	1	7	1	1	1	6	1	56	23
2		Ընդամենը՝ գոյական	32	14	16	10	13	21	9	24	10	24	34	29	29	23	9	23	9	11	10	13	9	202	147
3		Թվական	2	1	-	1	1	1	1	-	-	3	1	2	-	1	-	1	1	1	-	-	-	11	4
4		Դերանուն	17	5	8	8	1	5	6	11	-	8	2	4	1	5	1	5	1	9	4	11	1	87	33
5		Բայ, խոնարհում	11	19	12	13	18	7	20	4	12	7	9	7	11	8	7	8	7	4	6	4	7	77	128
6		Սակբայ	2	-	3	3	1	1	-	-	-	2	1	3	1	5	-	5	2	1	2	4	2	25	6
7		Կապ	2	-	2	3	1	3	2	2	-	2	1	9	2	5	2	5	2	1	1	-	-	27	7
8		Շարժյալ	2	-	7	3	-	2	-	5	-	4	1	7	2	2	2	2	5	1	10	2	47	10	
9		Զայնարկություն	1	1	-	-	-	-	-	-	1	1	1	-	-	-	-	-	-	1	-	-	1	4	4
9		Վերաբերական	2	1	2	2	1	1	-	-	-	2	2	2	1	2	-	2	1	1	2	1	14	8	

Վիճակագրական քննությունից պարզվում է, որ գոյական անվան քերականական կարգերում իշխում են բարբառային ձևաբանական իրողությունները: Սակայն գրական լեզվի համապատասխան քերականական կարգերը ևս բավականին գործուն են տվյալ ժամանակաշրջանի համապատկերում, ճեղինակը հավատարիմ է մնացել իր ժամանակի գրական լեզվում տիրող ձևաբանական օրինաչափություններին և վարպետորեն օգտագործել դրանք, բայց միտումնավոր ձգտել է գրել ժողովրդին պարզ ու մատչելի լեզվով: Բայի և նրա խոնարհման քննությունից պարզվում է, որ «Զուռնա-Տմբլայում» այն հետաքրքիր դրսևորումներ ունի: Բարբառային և գրական ձևերի զուգորդումը հանգեցրեց այն եզրակացության, որ քննարկվող էջերում խոնարհված 77 բարբառային ձևերի դիմաց կա 128 գրականաձև խոնարհում:

Այս հանգամանքից կարելի է եզրակացնել, որ երկը գրելու ժամանակաշրջանում արդեն ձևավորված նոր հայերենը ուներ կազմավորված բայական համակարգ, որն իր արտացոլումն է գտել Մելիք-Շահնազարյանի լեզվում:

Քննարկելով մյուս խոսքի մասերի գործածության հաճախականությունը՝ նկատում ենք, որ բարբառային ձևաբանական իրողությունները գերակշռում են գրական լեզվի խոսքիմասային համապատասխան արտահայտություններին:

Այսպիսով՝ լեզվական նշված փաստերի ուսումնասիրությունից պարզվում է, որ «Զուռնա-Տմբլայում» և ժողովրդախոսակցական լեզվով գրված Մելիք-Շահնազարյանի մյուս երկերում բարբառային խոսակցական լեզվի քերականական միջոցները զգալի թիվ են կազմում, այնուամենայնիվ, նշված բազմաթիվ ձևերից բացի ձևաբանական համակարգում զգալի գործածություն ունեն մեկ գրական լեզվով արտահայտված իրողությունները:

## ՇԱՐԱԳՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարահյուսական կառուցվածքի քննությունը նպատակ ունի բացահայտել շարահյուսական կառույցների այն հիմնական եղանակներն ու դրսևորման միջոցները, որոնք հարազատ են հեղինակի մտածելակերպին ու անհատականությանը, նրա ոճին: «Ձուռնա-Տմբլայուն» գերակշռողը հեղինակի խոսքն է: Սակայն այդ խոսքը միատարր չէ: Այստեղ միմյանց են հաջորդում նկարագրություններն ու վերլուծական հատվածները, որոնք շարահյուսական կառույցներով, հնչերանգով ու ռիթմով տարբերվում են իրարից: Զննարկենք երկուսն գործածված շարահյուսական տարբեր կառույցները.

ա. «Ձուռնա-Տմբլայի» շարահյուսական համակարգն արտահայտվում է բարդ, երկարաշունչ նախադասություններով: Եթե դիմենք վիճակագրությանը և պատահական էջերից նախադասություններն ուսումնասիրենք ըստ կառուցվածքի և կազմության, ապա կտեսնենք, որ 1-3 էջերի վրա կան ութ երկարաշունչ նախադասություններ, որոնցից 5-ը բարդ համադասական են, իսկ 3-ը՝ բարդ ստորադասական: Ամենաերկար նախադասությունը 78 բառ է, իսկ կարճը՝ 11 բառ: Հաջորդ պատահական էջերի (51-53) 7 նախադասություններն էլ բարդ ստորադասական են, ամենաերկար նախադասությունը 247 բառ է, ամենակարճը՝ 25 բառ: Այստեղ կան նախադասություններ, որոնք զբաղեցնում են ամբողջական էջեր՝ մոտ 27-28 տողերով: Այս նախադասությունները հիմնականում նկարագրական բնույթի են, ուր զգալի թիվ են կազմում հարակատար դերբայով դարձվածները: Բարդ նախադասությունների մի մասը կազմված է տարբեր բնույթի տարասեռ նախադասություններից:

Կենցաղային մանրամասն նկարագրությունները՝ սովորույթներ, արդուզարդ, արտաքին, մի կողմից ճանաչողական արժեք ունեն, մյուս կողմից երկարածում են հեղինակի խոսքը, ոճը դարձնում դժվարամարս: Նման նկարագրություններում նկատվում են նախադասության բազմակի անդամների կուտակումներ. «Շատ պեներ ինք հսկացալ,

սուրբը փողոթաթաւ տալ *հսկացալ չինք*, ժողովուրթը շատ կենգատաւեր ար էտ կարգադրութիւնան, ախր հունց կենգատաւեր չինի, վեր մին օրաւ էրկու օրվա փիադա *ճանապարհ կեայ*, վեր իւրան ազիզ սուրփին տակին *սերտը պենայ*, *ցաւերն ասի*, *դեարդին դեարման խնթրի*, *կեայ տեսնայ* սուրբին տեղը էրկու չարչի նստած առուտուր պեցած, էլ աղօթք *կանի*», էլ մում *կը վառի*», էլ հիւքի հաւատ *կմնա*» (1-111):

Նախադասության միևնույն անդամների կուտակումներն ավելի հաճախակի են հանդիպում առանձին կերպարների արտաքինի, էության երգիծական նկարագրության ժամանակ, երբ մատնանշվում են նրանց բնութագրող հատկանիշները:

բ. Ընդհանրապես կերպարի արտաքինի ու էության մանրամասն նկարագրությունը Մելիք-Շահնազարյանի ոճի կարևոր առանձնահատկություններից է, որ պարունակում է նաև երգիծանքի փայլուն ցնուշներ. «*Սիաթի իննին ծիւլ Սիմոնը զնգեակին տաւ, կոնգրուստը պեց ըրաւ ու մին լեաւ ճառ ասից փոնգերեն, ասից պարոննէ, գիղըմ ըք հինչ կայ, դորթ ա ծեգ կանչալ ընք մեչազկային կազէ կիրողների կոնգրուստին, ամմա հինչ ըրած ըս տարի էտ կոնգրուստը կլօխ չի կեամ, չիւն Ախպիրի խմբակիրը հեալա Պարիժ չի հալ, սօր Մուսկովա թլղրամա ըրալ, թա հեալա քինըմըմ Պետրպոլկ, ընդեղան քինալուրմ Վեննա ու Բերլին Ախպիրին միար քեօհնա կլիշանէ զակազ տամ, համ էլ տեսնամ հինչ սև կատու ա ընցալ Բիսմարկին ու Կալնօկուն արալղաւը, մին թեաիր անին բրշցնիմ. ետնան մննելու ըմ Վենետիկ հայր Ալիշանի Արարատին սխալնէն դիւզըցնիմ, վեր հարիֆա էն կիրը լեաւ տիւս կեայ. ետնան քինալու ըմ Հոնմ Պասպին խէլքին նստըցնիմ, վեր Իտալիոյ վեղան տիւս չի կայ, խօխէքը չուրըր քցի, ընդեղան Միլանաւ տալու ըմ ժենեվաւ Իռլանդու էսքան տարուայ հարցը վճռիմ Պարնէլին եախան թափիմ. ընդեղան թա վեր մջալ ինի, կը կեամ ծեր Պարիժի կոնգրուստին» (1-90):*

«Ձուռնա-Տմբլայի» շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրական լեզվից կատարված առանձին շեղումներ՝ և՛ նախադասությունների կառուցվածքի, և՛ համաձայնության

ու խնդրառության առումներով, պայմանավորված են ժողովրդական լեզվամտածողությամբ:

գ. «Ձուռնա-Տմբլայում» զգալի թիվ են կազմում շաղկապներով կապակցվող նախադասությունները. *վեր, որ, թա (եթե), կանց, քանց թե*, բայց կիրառության հաճախականությամբ գերակշռում է ստորադասական *որ>վեր* շաղկապը՝ իմաստային տարբեր առումներով: Որպես հարաբերյալներ գործածական են *հուվեր (ով որ), հիւր վեր (ում որ), հինչ վեր (ինչ որ)* բառերը: Ինչպես օրինակ՝ «Պարեկամնէն շռռ եկին, *վեր* մին շնորքին մարթ ճարին, *հիւր վերը* ճոկումին, Խաչանը հթեթայ ար տամ» (2-2):

Երբեմն բարդ համադասական նախադասությունների համազոր նախադասությունները ևս կարող են կապակցվել *վեր<որ* շաղկապով, ինչպես օրինակ՝ «Քեանդիրը կըքիցի բողազը, կըխեխտվի, *վեր* կապեկ չի տալ» (1-15): Գործածված է *բայց* շաղկապի իմաստով:

դ. «Ձուռնա-Տմբլայում» գործածված են բարդ ստորադասական նախադասության հետաքրքիր կառույցներ. «*Ողորմած հոքին ասըմ ից վէչ մէժ կայք ար թողալ, վեր իւրան ժեառանգնէն մին մինու կլխաւ լօք տալաւ երայ հւըքուին, ժըղովուրթ կանչին, դէր դիրացու դաթար քցած՝ առօք փառօք տանին թղին...*» (2-1): Նախադասությունը հասկացվում է այսպես. «*Ասում էին, որ ողորմած հոքին վէչ մէժ կայք ար թողալ...*»:

ե. «Ձուռնա-Տմբլա» երկում նախադասությունները հիմնականում երկկազմ են: Առանձին դեպքերում, թերևս ոճական նպատակով, նկատելի են թերի, միակազմ, երբեմն նաև առանց ստորոգման նախադասություններ, որոնք տվյալ խոսքաշարում ունեն հնչերանգային ավարտվածություն, ինչպես՝ «*Երկուշեփտի-բոզբաշ, սուկի, իրիւզիւնը կատլետ, իրեքէբթի-շիլաքաշ, ժարկոյ, սամթաւ փլաւ*» (1-65): «*Շուշ-վըցուց մհար սաղ տարին վչխարու թափան*» (1-66): «*Ախճի խէ չի պիրէլ տալ է՛, փանտալնէն թխըմ, մաղազինը ապրանքաւ տրաքըմ, փողը բանկունը տարսած տու մէզ ասի*» (2-78):

զ. երկում մեծ թիվ են կազմում հարցական, կոչական և բացականչական երանգի նախադասությունները, որոնք ճարտասանական երանգ ունեն և նպաստում են խոսքի հուզականությանը: Խոսքի արտա-

հայտջականությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ «Ձուռնա-Տմբլան» գրված է առանձին ֆելիետոնների ձևով, որոնց մի մասը ուղղված է «Նոր-դարի» խմբագրին և սկսվում է «Բարեւակիր» ողջունով՝ ուղղված «*Գերամեծար սհապ կազեթ կիրողին*» կամ «Իմ *աչքի լիւս կրթեցողին*»: Նման ճարտասանական երկխոսությունը խոսքը դարձնում է հրատապ, ներգործուն և ձեռք է բերում նաև հասարակական հնչեղություն:

Հատկապես հետաքրքրական են ճարտասանական-հարցական նախադասությունները՝ յուրահատուկ ժողովրդախոսակցական ոճին. «*Ախր մէզ հի՞նչ կսագի, վեր Ձուռնին փչինք, թա մին փարա սըլիրես հարսներ կենգատ ըն կիրալ, վեր իւրանց մարթոց հղէն պիելաւ աչկընէն ծիւր կտրից, ամմա ընդրանք սրտընէն ժեռ քար շինած, իրըսնէն չեաքմա պադոշ, չորս հէնգ տարի դարիբոթինըմ հու՞ ա գիղըմ վեր դուշինկի քշտի շնթոնած իսկի այնըմն էլ չըն քցըմ, թա տօն օնին, տեղ օնին, կնէգ օնին եա խոխա*» (1-178):

Հարկ է նշել, որ ֆելիետոններում նման կարգի նախադասությունները բավականին շատ են. սրանց մեծ մասը ձևով են հարցական և մեծ մասամբ ունեն ժխտական իմաստ: «*Ախր հու՞նց չի ծոռ փսնիլ, քանի վեր Մշակ ապօրը մըռնելան ետը մեր ժողովուրդը Սիւնն ու Շիա ա տեռալ*» (2-36):

է. Ձուռնա-Տմբլա» երկում գործածված են նախադասություններ առանց օժանդակ բայի, միայն դերբայով արտահայտված ստորոգյալներով, քերականական իրողություն, որ յուրահատուկ է Ղարաբաղի բարբառին. «*Ախճի, խէ չի պիրէլ տալ է՛, փանտալնէն թխըմ, մաղազինը ապրանքաւ տրաքըմ, փողը բանկունը տեարսած...*» (2-78): Հաճախ, եթե ա օժանդակ բային հաջորդում է ձայնավորով սկսվող բայ, *ա-ն* սղվում է. «*Վեր խօսըմ ա, հանց լանթ անըմ, ճկատան կենըմ, վեր սեասը փորն ա ընգնըմ*» (2-78):

ը. Հայերենի շարադասությունը բավականաչափ ճկուն է և ազատ: Այդ ճկունությունն արտահայտվում է նրանով, որ շարադասության փոփոխությունները իմաստային արտահայտչական նրբերանգներ են ա-

վելացնում խոսքին: Հիմնականում հարազատ մնալով հայերենի շարադասության օրինաչափություններին՝ Մելիք-Շահնազարյանը ֆելիե-տոններում կատարում է բազմաթիվ շեղումներ: Երգիծաբան-գրողը չէր կարող անտեսել երգիծանքի արտահայտչական իրողություններին մեծ լիցք տվող շարահյուսական այնպիսի մի ակտիվ միջոց, ինչպիսին շրջադասությունն է: «Քեզ քամու ըռեխ ընգած թեփուռու նման գեօգդա եօր կօնիմ» (2-196):

Ք. Շարահյուսական կառուցվածքի իրողություններից է նախադասության և նրա անդամների կապակցության եղանակների քննությունը: «Ձուռնա-Տմբլայում» երբեմն նկատվող թվային անհամաձայնության դեպքերից հանդիպում են հոգնակի ենթակայի հետ գործածված եզակի թվով ստորոգյալներ, ինչպես՝ «Անգուճնես թշթշաց» (2-31), «Վույ քու աչկերը քոռանա, տիս տրաքի, ումբըրըտ սեւկեմա» (1-9), «Թէկուզ ասողնէ կա, վեր շատ տեղ զիբիլը Վանկաբէգին աչքաւը չընգնըմ» (1-92):

«Ձուռնա-Տմբլայում» թվային անհամաձայնության առանձնահատուկ դեպքերից է նաև շարահյուսական այն երևույթը, երբ բարդ նախադասության առաջին նախադասության մեջ ենթական արտահայտվում է գոյականով կամ դերբայով՝ դրված եզակի թվով, իսկ երկրորդ նախադասության մեջ ստորոգյալը նրան կապվում է հոգնակի թվով, ինչպես՝ «Ըստեղ փուրացաւ, մեքքացաւ, պըկոռուց ներվննի ազարնէ չկայ, ըտրա մհար էլ վէէ ապտէկ պահող կա, վեր մինին քսան կին երայ տիրած դւարանք ծախս անին» (2-9), «Աթամա դեովրան հինչ մեղաւեր կա մէչն ածած, էրվըմըն մոխեր տեռնըմ» (2-14):

Խնդրառությունը «Ձուռնա-Տմբլայում» հիմնականում կանոնավոր է, իսկ մասնավոր շեղումները պայմանավորված են հեղինակին յուրահատուկ ժողովրդական լեզվամտածողությամբ: Օրինակ՝ ներգործական սեռի բայերը անձ ցույց տվող գոյականների ուղիղ խնդիրը պահանջում են տրականաձև, իսկ ահա Մելիք-Շահնազարյանի մոտ երբեմն նկատելի են ուղղական հայցականով. «Լիւտերը Լէմսին ժըղովորթը Հոռմայ պապին ձեռքան ըգատալա» (1-44), «Համբուրեց քնած

զաւակը» (2-94), «Իւրան խազայիններին ախճիզն էլ օզըմա օզի» (2-77):

Կետադրությունը «Ձուռնա-Տմբլա» երկում հետաքրքիր դրսևորումներ ունի. երբեմն այն նշանակվում է ըստ գործող կանոնների, երբեմն էլ չեն պահպանվում կետադրական անհրաժեշտ կանոնները.

«-Բա քեզ էլ դեարդ չօնի՞ս, տղամարթը իտի քոն կինի,

-Հու՞նց թա քո՞ն, խէ՞ ես քոնի՞:

-Վա՛ պէլ ըս թա գիժ, խէ՞ ես տաննըմ իլալ:

-Ա կնէգ, խելքիտ քամի ա նի եկա՞լ:

-Ա տղա գիժուալ ը՞ս...» (2-31):

Ընդհանրապես, կարելի է ասել, որ կետադրական նշանների գործածությունը «Ձուռնա-Տմբլայում» անկանոն է. պահպանված չեն ոչ տրոհության նշանների գործածության կանոնները, ոչ էլ, մանավանդ՝ բացահայտության նշաններն են գործում: Կարելի է ասել, որ երբեմն դժվարությամբ է տարբերվում խոսքի միջանկյալ կապակցությունը: Երբեմն խոսքի իմաստը հասկանալի է դառնում զուտ նախադասության իմաստին հետևելով «Ախր հու՞նց չի խոխոցն ընգնի հեալա կրի-գիստին ռըխին էլ բուլդի կտրի, քանի վեր բուննան աւալա մին քիւլլամա տան պէնը հարուստի իմար թա քեսսիբի, տանը կնանէքը ըխճըկերքը կնին...» (2-100): Դրանց փոխարեն՝ բավականին առատ է առոգանության նշանների գործածությունը: Ինչպես օրինակ՝ «Իսկ այժմ հայ ժողովուրդ, դէ՛, մեզ հետ, օ՛ն անդր առաջ, մի ձախ, մի յա՛ջ, հապո՛ն առա՛ջ, առա՛ջ ...» (2-40): Իսկ մի այլ հատվածում պահպանվում է հեղինակի միջանկյալ խոսքի կետադրությունը. «Իսկ հետո փոխվեցին հանգամանքները (քամին տեսնաս հշտղան ար փչալ) և մենք յաճաջադէմներս պաշտպան կանգնեցինք կղերին (կործը ուզալովնի ար, ի հարկէ պաշտպան կը կաղնիք)...» (2-39):

Առոգանության նշանների չափազանց գործածությունը «Ձուռնա-Տմբլայում» շարահյուսական ոճական հնարանք է, որի շնորհիվ խոսքը դառնում է հուզական ու արտահայտիչ, ձեռք բերում ուժգնություն և հնչեղություն:

Գրողի լեզվի վարպետությունն ու յուրահատկություններն ավելի

պարզորոշ են դառնում նրա տարբեր ստեղծագործությունների շարահյուսական կառույցների համադրական (զուգահղրական) վերլուծության ժամանակ: Շարահյուսական համակարգի ուսումնասիրությունը լիարժեք կլինի, եթե «Ջուռնա-Տմբլա» երկի նախադասությունների կառուցվածքը և կապակցության եղանակները համեմատենք Մելիք-Շահնագարյանի այլ գրվածքների հետ, ինչպես նաև որոշ փոխադրությունների հետ, որոնք գրված են տվյալ ժամանակի գրական լեզվի՝ արդեն մշակված օրինաչափություններով: Համեմատությունից պարզվում է, որ «Ջուռնա-Տմբլայի» քերականական համակարգը և շարահյուսական կառույցները ոչ թե Մելիք-Շահնագարյանի անհատական ոճի արտահայտությունն են, այլ պայմանավորված են երկի բովանդակությամբ, նյութի թելադրանքով, նաև հեղինակի նպատակադրմամբ՝ Ղարաբաղի բարբառի՝ տվյալ ժամանակի վիճակը բանասերին «հանձնելու» առաքելությամբ:

«Ջուռնա-Տմբլայի» համեմատ լեզվական այլ որակ ու շարահյուսական կառուցվածք ունի մանուկներին նվիրված «Փշրանք» ժողովածուն՝ «Նվեր» խորագրով. այստեղ հիմնականում պարզ նախադասություններ են, առանց երկարաբանությունների և բառային կուտակումների: Գերակշռում է պատմողական, ուսուցողական ոճը՝ համապատասխան լեզվական միջոցներով: «Դաժան ծմեռուան մի ցուրտ գիշեր էր: Թիֆլիզի մեծ փողոցներից մեկում, մի շքեղ տան առաջ, մի մաշուած քուրք ուսերին՝ փալանի վրա պագած էր Մշեցի գիշերապահ եկօն: Նա աչքերը ձգած գետնին տխուր մտածում էր.... (3-30):

Ինչպես երևում է հատվածից, այն էպես տարբերվում է «Ջուռնա-Տմբլայի» լեզվից և ավելի մշակված ու կանոնավոր է: Մելիք-Շահնագարյանի այլ ստեղծագործություններում բացակայում են թուրքապարսկական փոխառությունները, սակավաթիվ են գրաբարյան բառերն ու քերականական ձևերը, որոնք դեռևս գործածական էին այդ շրջանում: Շարահյուսական կառուցվածքը կանոնավոր է, գրական լեզվի տվյալ ժամանակի կանոններին հավատարիմ:

## Գլուխ IV

«Ջուռնա-Տմբլայի» ոճական առանձնահատկությունները  
Ա. Երգիծանքը և նրա դրսևորումները

Մելիք-Շահնագարյանը Ա գրքի «Երկու խոսքում» իր երգիծական ստեղծագործությունները ժանրային առումով համարում է ֆելիետոն՝ հաշվի առնելով դրանց թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները, պատկերվող դեպքերի և դեմքերի իրական գծերի պահպանումը, կյանքի որևէ արատավոր փաստի կամ հասարակական տեսակետից վնասակար երևույթի քննադատությունը:

80-90-ական թվականներին «Նոր-Դարի» էջերում լույս տեսած Տմբլաչի Խաչանի ֆելիետոնները պատկանում են այդ ժանրի սոցիալական և քաղաքական մոտիվներով հագեցած տեսակին: Տմբլաչի Խաչանի ամունը ծառայեցնելով որպես հնարանք՝ հեղինակը, իր ստեղծագործական մտահղացման համաձայն, միանգամայն ինքնուրույն ֆելիետոնները ներքուստ կապակցում է իրար՝ լեզուն հարմարեցնելով իր քաղաքական, սոցիալ-հոգեբանական ոգորումներին: Տմբլաչի Խաչանը պատմողի կերպարն է, և ամեն ինչ երգիծվում կամ արժեքավորվում է նրա տեսանկյունից: Հենց այս մեկնակետից պետք է կարևորել մարդկային առօրեական թվացող կապերն ու բախումները բարոյական մեծ հիմնախնդիրների ելակետից դիտելու հեղինակի համարձակությունը: Աշոտ Աթանասյանի (Սալ-Ման) կարծիքով «Տմբլաչի Խաչանի ֆելիետոնները իրենց բովանդակությամբ և ձևով հիշեցնում էին ռուս մեծ երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի «Гыберские очерки» պատմվածքները: Սուր դատողություն, կյանքի հումորով լի հեզմանք ու ծաղր բոլոր տեսակի և դիրքի հարուստների և մեծամեծների նկատմամբ»:<sup>49</sup>

Ֆելիետոնների թեմատիկ առանցք դարձնելով քաղաքական, հասարակական, կենցաղային երևույթները, մարդկային արատները՝ երգիծաբանը օգտագործել է երգիծանքի տարբեր միջոցներ՝ հեզմանք, հումոր, սատիրա, և պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ աս-

49. «Գրական թերթ», շաբաթաթերթ, 1940, ք. 20:

տիճանի է խոցելի ցկարագրվող երևույթը, նա դիմում է ամենամեղմ հեզնանքին, հուճորին կամ սատիրային:

«Ձուռնա-Տմբլալում» հանդես են գալիս տարբեր կերպարների՝ սկսած «ղըլըցե կանանց»-ից մինչև քաղաքական տարբեր գործիչներ: Ահա, օրինակ, հետևյալ հատվածում երգիծաբանի ծաղրը հուճորով է, բարեկամական. զըլըցե կանայք ուրախ հյուրընկալությունից վերադառնում են տուն. «*մին պատառ կաղնեցին, մին մինու ծեռքա փռնեցին*, իրեք չորս հետ պարի քշեր ըսեցին ու տըղըրներան տիւրիւր չեկան», այնուհետև հեղինակը տալիս է իր եզրակացությունը. «*Աստուծ ըզատի վերդ ղըլըցե կնէկը խոսքի փռնուի*, էլ օխտը սհաթ ետ չի կէնալ, *չրու մին օրիշը կեա վէչ գոռաւ քաշի տանի*» (1-2):

Մելիք-Շահնագարյանի երգիծանքին առանձնահատուկ երանգ է հաղորդում երևույթի երգիծական ցկարագրին հաջորդող եզրակացությունը: «*Ռուսվանջի կուտրատելը, անվետ, անծառ, անծաղէգ բուլվա-րըմը թրթշնած մանկեալը, ըխճըկորանց համարծակ հռհռալը, քոքռալը, սլէթա-սլէթա խլըշկոտալը վեր ղըլըցեք տեսնըմ չ'ըն, ասըմըն. «Ըհը, լիա էսա լիւսաւերութիւնը վեր կայ, փառք քեզ Աստուծ, անջախ վեր մուք էլ լուսավերութեցինք»:* Եվ եզրակացությունը՝ «*Մախլաս, պուկը-նիգին կնգանան կցած չրու քեծմիւրջի Մեքիւն կնէգն ու խխճիկը էս իրեք տռնըմը հանց լիւսավերուալըն, վեր մեր պուլիցխանան օզըմ չի շհարին ֆանարնէն քշերը քափայ քաշի վառի, չիւն ժըղովորթը քըլը-քօլա լիւս ատան*» (1-26):

Մելիք-Շահնագարյանի հուճորն ընդգրկում է բազմազան թեմաներ. ընտանեկան խնդիրներից, գծտություններից մինչև հասարակական նշանակություն ունեցող հարցեր:

Օժտված լինելով երգիծելու բացառիկ ձիրքով՝ Տմբլալի խաչանը պատկերում է դարավերջի գավառական քաղաքի անցուդարձը՝ սպանիչ ծաղրի ենթարկելով վերնախավի «դամաների պընըփեշակը», սպառողական հոգեբանությունը: «*Թիֆլիզ, Մոսկով, յա Պարիս կարել տված փռփռան դերյան հագին դամաները*» հարկ չեն համարում Ղարաբաղի դերձակների մկրատի տակից դուրս եկած հագուստները կրել:

«Ձուռնա-Տմբլալ» Ա գրքի ֆելիետոնները մեծ մասամբ արծարծում են ընտանեկան-կենցաղային և սոցիալական հարցեր:

Հուճորի դրսևորման միջոց է դառնում կերպարների վերամբարձ ու ճոռոմ խոսքը, որի շնորհիվ էլ հեղինակը իր ծաղրական վերաբերմունքն է դրսևորում:

Ահա հետևյալ պատկերում հեղինակը երգիծում է «*հուքեվուր դերերին*». «*աբուռին քարոզ տուռոզ դեր չօնինք, ամնա մազալուն էն ա*, վեր մըզանըմ մի ըշխարի վրթապետել տիւս եկաւ» (1-18): Եվ հեղինակը, խոսեցնելով «*ըշխարի վարթապետին*», երգիծում է նրա կերպարը ու արտահայտում իր ծաղրական վերաբերմունքը. «*խե'յըք եանի քօռ, բա էսքան քարոզնէ ըմ տամ, եկէք ինձ տէրտէր շինեցէք, եկէք թմաշայ ըրէք, թեաքչա ինձ տէրտէր շինիք, մին էլ թողիք վեր չըրու մահս մուքերին եա ուստա, եա ուստաբաշի ինիմ*»: Եվ եզրակացությունը. «*Մին ամէս չքաշած՝ անքննելին քննելի տեռաւ մին էրկու մարթ թոխտ ըն շինալ տոռնը-տեօռնը ընկալ ծեռք քաշել տամ, վեր ըշխարի վրթըպետին տէրտէր շինին Ղզընչեցունց ժամին երայ*» (1-22):

Հաճախ կերպարների խոսքը, մենախոսությունը դառնում է ինքնաբնութագրման միջոց. Մելիք-Շահնագարյանը ծիծաղում է մարդկանց թերությունների վրա և միաժամանակ ցավակցում նրանց, հեզնում է նրանց անգրագիտությունը, պարզունակությունը, ծաղրում է միամտությունն ու սահմանափակությունը. դա բացահայտվում է տարըմբռնման և դրության կոմիգմի միջոցով, հատկապես շուշեցի կանանց երկխոսության մեջ.

«*Ախճի, Հուռի, էն օրը թիատր քեցիր*»,  
*Բա հինչ ա, օխտը մանէթ ինք տուալ լոժա եր կալալ,*  
*Հի'նչ ին խաղ անըմ:*

*Անըմը գիղըմ չըմ, ամնա շատ երևելի թիատրը ար:*  
*Էնքան լեաց իլիմք, խեղճ Սիրանուշին խօխան մոլթանէքը ծեռքան խիլալին.. մուք կէսատ թուղեցինք տիւս եկինք, վխեցինք էտ մոլթանէքը մեր կալօշնէն էլ կիւղանան եա տռանը փայտոն չինի վեր նստինք...*» (1-22):

Մելիք-Շահնագարյանը կարեկցանքով ու հուճորով է պատկերում

հասարակ մարդկանց, նրանց վարքագիծը, հոգեվիճակը և միաժամանակ իր բացասական վերաբերմունքը դրսևորում ձրիակերների, պորտաբույծների նկատմամբ: «Ձուռնան շնորհակալ ա թլըղրամ թխողներան, լոխչու էլ բեղալը ցանկանըմա. *Խմբակիրներին՝ տասսը-տասսը հզեր նադդ պաժանորթ, փափուկ բիշտեքս, կախեթու լեաւ կեարմեր կինի: Յեաքիմներին՝ շհարըմը ջուռայ ջուռայ նչըղոթուն, անվերչ վիզիտնէ, կանվերտըմ տիրած հենգանոցնէ, զագրանիչնի նապիտկէք. Դումի չլեններին՝ ալիփ -ժէ-ճէ-ռայաւ դիւզմիշ ըրած շհարի վեղեր, ըեմոնտնէ, փողրաթնէ, փափուկ եօրղան դեօշակ, քաղցր քոն. Սովդաքեարներին՝ ֆեանդ ու ֆիլ, ոռւսէթա նիսիա կապ տուած ապրանք, իրըսըհան կոտորընգնէլ, տկըհան մարսել..» (1-165):*

Մելիք-Շահնազարյանի հումորական վերաբերմունքը փոխվում է ծաղրականի, երբ քննադատում ու ծաղրում է անհաշտ դիրքերից, երբ մերկացնում է մարդկային արատներն ու այլանդակությունները: Նրա երգիծանքը ուղղված է այն հասարակարգի դեմ, որի զոհերն են իր համերկրացիները, ուղղված է կյանքի բացերի, աղաղակող հակասությունների դեմ. «Սատիրական ծաղրը հարձակողական ծաղր է, այն չի ընկրկում և ձգտում է կործանել, ոչնչացնել, դեմ շարտել այն, ինչ կանգնած է իր ճանապարհին» (26-240):

Նրա սոցիալական սատիրան ուղղված է փողի վրա հիմնված անուսնությունների, անբարոյականության, դավաճանության, կեղծիքի դեմ:

Երգիծաբանը սատիրայի ոճական հնարներից գործածել է այլաբանությունը, անձնավորումը, հակադրությունը, ծաղրը, խոսքի վերամբարձությունը, կծու սրամտությունները: Մելիք-Շահնազարյանի երգիծանքին բնորոշ է նկարագրական ոճը. ահա դրախտից ուղարկած անակուն ներկայացնում է դրախտի երանելի կյանքը և այն հակադրում է իրականությանը՝ ծալ-ծալ բացելով կյանքի մերժելի երևույթները և իրեն յուրահատուկ ծաղրով մերկացնելով հասարակության տարբեր խավերին, նրանց սովորությունները: Նկարագրելով «դրախտի» առատությունը, հարուստ կյանքը՝ նա հեզմանքով հիշում է դըլըցե հարստա-

հարողներին. «*Յա գիղի մեր վանքերին աչքըծակ վրթըբըղոտենք, անկշտըմնը դերեր ու տիրացուէք, կնդստորու անթամնէ յա պոլիցխանու միրգեք, հշտեղըք, ասըլ ծեր տեղն ա, մին տիւս եկեք է՛...»* (2-8):

Տմբլաչի Խաչանը խարազանում է կուտակման մոլուցքով տարված դրամական աշխարհի տերերին և, որպես յուրահատուկ նախազուշացում, բավական արդիական հարցադրում է անում. «*Խէ՞ չըն էնքան օտըմ, վեր կարին մարսին, մին էլ զկռտալաւ ըռխներաւը վեր չածին»* (2-140): Այս առումով տեղին է Տմբլայի հեռագիրը. «*Պարիժ, Վիստաւկա սարքողներին: -Մին մեծ տեղ պիեցեք, Կաւկազան հենգ փրզոն փորը ծով շինած, ազկու հնգերու, պարեկամու փողեր կոլ տւած ազկային փորերընք թմաշա դրկելու»:*

Տմբլաչի Խաչանի *սոցիալական* սատիրայի մի ծայրը ուղղված է իրենց ազգային գործիչներ հորջորջող, ցուփ ու շվայտ կյանքի սիրահար կեղծ «պարեկործներին» ու նրանց կանանց մոլորություններին, մյուս կողմից դրսևորում է նորդարական պահպանողական բարոյախոսությունը՝ գերագնահատելով բարեգործական նպաստամատույց հիմնարկությունների ազգափրկիչ դերը:

*«Ջընգ, զընգ, զընգ, տիլիփոնը ընգուծին զընգընգընըմա քեարավուզանց Սառա բաջին:*

*Յու՞ ա խօսողը:*

*Ես ըմ Սեանամ, քմմատաղ, էքիւց ինձ քեօմագ պեղմա անիս:*

*Էլիա թեագա շորըս կարել տամ Խէյփեցին հա՛. մագագին պեղմա քինա՞ս:*

*Չէ՛, չէ՛, էքիւց նօրաթն իմն ա, օզըմ ըմ էն Ստամբուլայ փախած ախկատ հյերին հաց տամ:*

*Ախճի դէյդտ կտրի, տու էլ պէն չօնիս:*

*Ախճի բա էրեգ էն կլխիս մատաղ իլածը տեսնըմ չիր հինչեր ար աւըմ, բա ես կթո՞ղիմ վեր ինդի շոնը ինձ երայ հաչի՛...»* (2-52):

Տմբլաչի Խաչանը ոչնչացնող ծաղրի է ենթարկում լիբերալ մամուլի արատավոր բարքերը, երգիծանքի ուժով ընդգծում, թե որքան անտանելի են դարձել սնամեջ փաստերի հեղեղը, սուտը: Նա երգիծում է



լրագրերի «հայկոյախոս» լեզուն, «ուշուց տալու փողրաթում խեր չկա, թահ օրիշ փեշակ ա գիղըմ, էն պնըցնի» (1-130):

Սատիրայով մերկացրել է նաև հոգևորականության ընչաքաղցու-թյունը, շահասիրությունը: Դիմանկարներ հորինելիս՝ այլաբանական ծաղրանմանության, գրոտեսկային պատկերներից հետո տարբեր ար-տահայտչամիջոցներ, հնարներ գործածելով՝ Մելիք-Շահնազարյանը բացահայտել է նրանց ներքին էությունը: Նա հաճախ չի դիմել «եզոպո-սյան լեզվին», այլ նշել ու նկարագրել է այս կամ այն գործողությունը, երևույթը, հատկանիշը: Բերենք օրինակ. «Ես խորհուրթ կտամ մին թեազա կազէթ տիւս պիրել անըմ տինել «Պարեկործն է-Ռողորմածնէ»: Էտ կզեթըմը սաղ տարին իրեթ լիւզաւ տաճել էն մարթոց անըմնէն, վեր մին շեահա փռնած չրու մին մանեթ պարեկործութիւն կանին. ամեն մի-նին անըմին ըռաչին էլ անպատճառ իւրան շիքիլը պարզցնել, վեր բոյը բուսաթը իրևա, և կարթողը կըտեսնա, վեր էս Ղաշղաղանովին փորը հանց տիւս պրծածա, վեր օխտը հարիւր քեսսիրու վէքսիլ ածիս մէջը, էրկու հզեր իսպոլնիտելնի լիստեր, տասսը կլեաուզնի թղթեր կտանի, իսկի այնըմն էլ քցել չի» (2-49):

Մելիք-Շահնազարյանի քաղաքական սատիրան ուղղված է ազգա-յին գործիչների, ազգային ճնշման, օսմանյան բռնապետության դեմ: Թուրքական մոլեռանդությունը հայերի համար ստեղծել է ստրկական վիճակ: Նրա համոզմամբ, հայը պետք է և՛ տնտեսապես, և՛ քաղաքա-կանապես սթափ լինի՝ դիմագրավելու «իրըսրիան հիլի, տկըհան ծիլի» հակառակորդին: «Աստվածանա էնա խնթրվածքս, վեր մեգսատենը մեր չորաննեն սայաղ կենան, ու վեչխարներան շները անպակաս ա-նին» (2-211): Քաղաքական եզրակացությունը զարմանալիորեն այժ-մեական է: Մելիք-Շահնազարյանի քաղաքական սատիրայի գագաթ-նակետն է «Եվրոպու պալիտիկան» (Եւանի թա ըշկըկապուկի տալը) ֆելիետոնը: Ընդամենը մեկ էջի վրա երգիծաբանը ծաղրում ու մերկաց-նում է եվրոպական տերությունների դիվանագիտությունը, խոսքի և գործի հակասությունը: Ահավասիկ. Թուրքիայի սապատը շտկելու նպատակով Սոլսբերին նախաձեռնում է կոնսուլտացիա: «Իտալիան օ-

զըմա էտ կոնսուլտացինինի, ամմա Լեմսին աչքը օնքին ա եշըմ: Ավստ-րիան օզըմա կոնսուլտացի ինի, ամմա վեր առաջ իւրան գոզլան չի տիւս եկալ էտ պենը չմըխամի ա անըմ: Լեմսը հի՞նչ պեն օնիմ կարմուն-ջունը, վեր պտատուիմ յափընջըմը ըսելաւ, ծեռքը լւանում ա դրաղ կե-նըմ: Տռանգիստանը ասըմա թա Ռուսեթը էտ պենըմը կխառնվի, ես էլ կխառնվիմ: Ռուսեթն էլ դիւզ դիւզինա օզըմ չի, վեր կոնսուլտացի ինի, չին վախըմ ա հեաքիմ սհաքնէն դուզը տըկըռհանա կտրել տան, Օս-մանլուն հոքին տա, էն վախտը իւրան 1877 թվի արին առնելու, սի-լիւկնը կցնելի վիզիտի փողերը սառնին կիրվի» (2-30): Սատիրայի մի-ջոց է դառնում կերպարների սկզբունքների վերհանումը՝ դրանով իսկ նրանց դրսևորումը:

Չափազանցություն չի լինի և ոչ էլ ժամանակակիցների ստեղծած գրական արժեքների թերագնահատություն, եթե ասենք, որ Կոստան-դին Մելիք-Շահնազարյանի քաղաքական և սոցիալական սարկազմը XIX դարի երկրորդ կեսի արևելահայ երգիծանքի համապատկերում ի-րեն համարժեք մի այլ մեծություն չի ճանաչում:

Այսպիսով՝ բազմազան ու հետաքրքիր են երգիծական ոճի հնարնե-րը, որոնցից վարպետորեն օգտվել է Մելիք-Շահնազարյանը՝ ստեղծե-լով իր անզուգական «Ձուռնա-Տմբլան»:

#### ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայոց լեզվի պատկերավորման և արտահայտչական հարուստ մի-ջոցները Մելիք-Շահնազարյանի երգիծանքին յուրահատուկ գույներ ու ինքնատիպություն են հաղորդում: Նրա երգիծանքը հարուստ է սրա-միտ համեմատություններով ու փոխաբերություններով, մակդիրներով, չափազանցություններով, բառային այլևայլ կրկնություններով:

Համեմատություն: «Ձուռնա-Տմբլայուն» պատկերավորությանը նպաստող տարածված միջոցներից է համեմատությունը, որի միջոցով ավելի ցուցադրական ու տպավորիչ է դառնում նկարագրվող առար-կան, երևույթը: Ինչպես հայտնի է, համեմատությունը երկու տարբեր երևույթների զուգորդումն է՝ նրանց որևէ նմանության հատկանիշի հի-

ման վրա: Համեմատության ճիշտ կառուցումը կախված է գրողի դիտողականությունից և պայմանավորված է նրա գեղարվեստական մտածողությամբ, այսինքն՝ համեմատության հիմքում դրվում է առարկաների, երևույթների ոչ թե առարկայական հատկանիշը, այլ դրա սուբյեկտիվ, անհատական ընկալումը:

Համեմատություններ կազմելիս ևս նկատելի է Մելիք-Շահնազարյանի լեզվի ժողովրդայնությունը, կենդանի խոսակցական լեզվին ու մտածողությանը հարազատ մնալու նրա սկզբունքը: Տմբլաչի հաչանի համեմատությունները հիմնականում տեղին են, հարազատ, համահունչ իրականությանն ու իր պատկերացումներին և աչքի են ընկնում կառուցվածքային բազմազանությամբ: Մելիք-Շահնազարյանի խոսքի ինքնատիպ ոճը պայմանավորված է երգիծական համեմատությունների գործածումով: Գրողը խարազանում է ժամանակի հասարակական, կենցաղային բացասական երևույթները և միաժամանակ արտահայտում է իր վերաբերմունքն ու գնահատականը նկարագրվող երևույթի նկատմամբ: Ահա բնագրային հետևյալ օրինակում, պատկերելով շուշեցի կանանց քաղքենիությունը, մտքի սահմանափակությունը, հեղինակը «Ղըրցուց ախճիկ ճոկելը կնանոց պարլամենտը» ֆելիետոնում օգտագործում է այսպիսի համեմատություն. «*Եանի ախճիկը հինչ մաթախա, լղար, հանցա լիա ալակուշկուշ ինի*» (1-63), կամ «*Ծիւն հանց պէնդ խաշալ ին, հանց ար տեռալ քարուկուտր*» (1-5), «*Գեօզալ Սօլթիս հանց օռուալ ա, լիա ասիս տասսը տրեկան միսիրհաու թուխսըկան ինի*» (1-54): Համեմատության երկրորդական նախադասությունները կապվում են *հանցա* վերաբերականով: *Լիա* վերաբերականը կապվող բառերի հետ ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է այն առարկայի հատկանիշի նման, որի անվան հետ գործածվում է: «*Ախճիգ մարթու տուողներին կտակ ըմ անըմ, փըսին լեալին ու վատին եշին վէչ, մինակ եշին վեր փեսան փուղավեր ինի, թեկուզ լիա ինքը էրկու վըննանէ մին մազի տուպրակ, մէչն էլ թեկուզ լիա տրմանաւ լիզը պատնի ի եր տիրած*» (1-101):

ա) Անծի, երևույթների, նրանց որոշակի հատկանիշների նմանու-

թյան հիմքով կազմած համեմատությունները զգալի տեղ են գրավում «Ձուռնա-Տմբլայում»: Համեմատությունները ոչ միայն բազմազան են իրենց դրսևորումներով, այլև կարող են զուգորդվել ոճական այլ միջոցներով՝ ոճավորման առավել բարդ խնդիրներ լուծելու համար: Տմբլաչի հաչանի խոսքում հաճախակի են հանդիպում այնպիսի համեմատություններ, որոնք կազմվում են *չափազանցության հետ զուգորդումով*: «*Հայոց կործերը հարիւր չէ, էրկու հարիւր չէ, հէնգ հարիւր տարի ա, վեր ճուլուն օրն ա ընգալ՝ Ստամբուլու ծովընը բաթմիշ իլալ: Թա մին էլ հիք պեղմա էտ ճուլին լիւս աշխարք տիւս կեայ, յայտնի չի, ամմա ասողնէ կա, վեր էտ էն վախտը կինի, հիք վեր անծէնը կծնուի, անտատարը կըկաղնի, օղտին հեաքին տափաւը քաշ կինի, եա մարթու հափռմէչի մազ կըկնանչի*» (2-67):

բ) Մի շարք ծավալում համեմատություններ ստեղծված են հակադրության հիմքի վրա: «*Քաղաքական (եանի թա պոլիտիչեսկի պէներ)*» ֆելիետոնում երգիծաբանը սպանիչ ծաղրի է ենթարկում տերությունների դիվանագիտական խաղերը. «*Կրիկեր դային իւրան թռռներաւը հանց ճարթ ու փշուր արալ ինգլիզի ղոշունը (գորքը-Ե.Մ.), հանց օյին տիրալ Բուլլեր փաշին կլխին, վեր շանը կլօխը չի կեայ: Միէգ Չեամբեարաքենըը հանց ա տեռալ թան ընգած մոկնը, չաբալաշմիշ ա կեամ, վեր մին տեղաւ տիւս ծլկի, դահի բեթար ա թանընը խրվըմ: Մին փարա տերութիւննէ էլ, վերսկան շան նման մարաղ կացած, աչքընէն տուզ տաւած՝ եշըմ ըն, թա հշտղան ա վերսը տիւս կեալու, վեր երայ պրծնին չաթին, ծիլամորթ անին, փորընէն քցին*» (2-114): Հեղինակը ստեղծել է այնպիսի պատկերներ, որոնք հիմնված են ժխտման վրա: Ժխտելով եզրերի ընդհանրությունը՝ հաստատում է նրանց նմանությունը: Փարիզ այցելած Տմբլաչի հաչանի աչքերով «*Ըֆըլեանը ա քմատաղ վէչ տան նման ա, ասիս տոն ա, վէչ մինարու նման, ասիս՝ մինարա ա, վէչ պրտուտիւսած վեր ա, վէչ կարմունք, վէչ ժամ, վէչ համամ. մին եքքեա հիւրթու նման պուպուզ կացած ըրկաթէ փնջարայ ա, մին ճոնդը երգինքընը. մին ճոնդը կետինքընը, ստնու փեանդ ու ֆիլաւ կպկպորած*» (1-150):

գ) Մի շարք համեմատություններ կառուցվում են և՛ արտաքին, և՛

ներքին հատկանիշների նմանության հիման վրա: Համեմատվող երևույթների նկատմամբ հեղինակի վերաբերմունքի միջոցով կապ է ստեղծում նրանց միջև: Հասարակական որևէ շերտի կամ երևույթի էությունը ավելի պատկերավոր դարձնելու համար այն համեմատում է կենդանու հետ, որով էլ արտահայտում է իր վերաբերմունքը:

«*Բարուա եարմուկա*-եանի թա մաղազիներըմ տարիներաւ մնացած մղմող կերած փեասպանդու, փթած ապրանքների օթափոխություն: *Միսիրհաւ*-եանի թա քէթը ցեց արիստոկրատ, վեր վէջ իւրան ա հաւան, վէջ օրիշի: *Ղազ*-փորը կիւղընովի փողերաւ հստըցրած սովդաքեար, չինուլիզ եա մըծաւեր: *Հաւ*-օխտը տարաւ հցըփոր ապրած ցունգռի փրիգաշիզ: *Վերցակ*-սևը սիպտական ճոկող մղդուսի, եափըշխանաւ բառերը թղթան նեստա տուող պանաստեղծ եա կազէթու ղլմղալչի, սազին սիմերը կտորած աշըղ եա իրեսին պնդըթիւնաւը ամալ եկած խմբակիր» (2-180):

*Փոխաբերություն:* Մելիք-Շահնագարյանի նախասիրած ոճական հնարանքներից է փոխաբերությունը: «Մետաֆորան,- գրում է Արիստոտելը,-բառի սեփական նշանակությունը փոխադրում է այլ բառի վրա: Բառն ընդհանուր հասկացությունից փոխադրվում է մասնավորի վրա, մասնավորից ընդհանուրի վրա: Ամենից կարևորն է՝ հմտորեն օգտվել մետաֆորներից» (28-196):

Իբրև գեղարվեստական խոսքի անխուսափելի տարր՝ փոխաբերությունը նպաստում է ոճի հարստությանն ու արտահայտչականությանը: Ինչպես նկատում է Օ.Բաբայանը. «Փոխաբերության դերը բոլորովին էլ, այսպես ասած, արտաքին տպավորություն ստեղծելը չէ: Յուրաքանչյուր գրող իր յուրահատուկ վերաբերմունքը ունի փոխաբերության ընտրության, նրա գործածության չափի վերաբերյալ: Փոխաբերության միջոցով գրողը կարող է ընթերցողի մեջ որոշակի տրամադրություն առաջացնել: Դրանով էլ փոխաբերության գործածությունը դառնում է գեղարվեստական ստեղծագործության լեզվաոճական հատկանիշ» (29-44):

Երգիծելով շուշեցիների կենցաղը՝ Տմբլաչի հաչանը խմում է լուսա-

վորության կենացը, այն լուսավորության, երբ «*կարտոժնիկնէ, խանչալաւեր, բախկալ, չախկալ՝ խուխոց նհետ ծռզարդարի ըն տամ, եա մարերը իւրանց խուխոց անտար ընդերու թողըմ ըն տանան տիւս կեան մին էլ կես քշերըմը կեան, լուսավեր ըն: Օրը իրեք ծռզարդար սարքիմ, բեալքեամ Ղալան առէ լիւսաւերուի*» (1-61): Կամ «*Հու վեր օզըմա շիւտ հրուստանա, մին քեօք տեղա ախճիզ օզի*» (1-87): Քննադատելով շուշեցի մեծահարուստ կանանց անտարբերությունը բարեգործական ներկայացումների հանդեպ՝ հեզմանքով նկատում է, «*սանդուխըմ քլլած խելքը եա անճիւր ճեղացը մին ա, իսկի թափաւուղ չի կայ*» (1-57):

Բառը կամ արտահայտությունը փոխաբերական իմաստ է ստանում խոսքի հյուսվածքում, տվյալ բառային միջավայրում: Կանանց պարլամենտում որոշում են ամուսնացնել Պըտանին, «*ամնա ինքը վէզը տակաւը չար տամ*», որոշում են՝ «*հիիր ըխճկայ հաւան ըք, ըսեցեք, վէնը կապինք*» (1-62): «*եկի վեր մին ծառի տակ աչքիս վերթնը կտորիմ*» (1-107):

Նման բառակապակցությունները դարձվածքի արժեք են ստանում:

Տմբլաչի հաչանը ոչնչացնող ծաղրի է ենթարկում լիբերալ մամուլի արատավոր բարքերը, երգիծական փոխաբերությամբ ընդգծում, թե որքան անտանելի են դարձել սնամեջ փաստերի հեղեղը, սուտը: Դառնալով «Նոր-Դարի» աշխատակիցներից մեկը՝ աստիճանաբար նրա հրապարակախոսական երգիծանքը կուսակցական երանգներ է ստանում, և նա նույնպես նետվում է «Նոր-դարի» ու «Մշակի» միջև մղվող գաղափարախոսական պայքարի հորձանուտը: Նա երգիծում է «Մշակի» «*հայիոյախոս*» լեզուն, «Մշակ» և «Վրցըկանք» թերթերին՝ «*400 հզեր մանէթ մշակ ու Վրցըկանք կզըթներին, վեր տարին ու բիւթուն մին մինու կտարա կէնան, մին մինու ցեխին, լէլին, մէջը կոխին, ցալքունն էլ սրանաւ նրանաւ տան*», «*300 հզեր Աղբիւր-Տարագին*», վեր մին ֆիլտր առնի, աղբիւրին եխտուտ ծրերը պարզի ետնան խալխին խմըցնի» (1-117):

Փոխաբերական իմաստը հաճախ ձևավորվում է առարկաների ինչ-որ նմանության, ընդհանրության դիտարկման հիման վրա: Մի շարք

փոխաբերություններում հաճախ դա չի ըմբռնվում, օրինաչափությունը խախտվում է հատկապես հեգնական բնույթի օրինակներում: Հեղինակը քննադատում է ծաղրում է հասարակության այն շերտին, որը ինչ-ինչ անարժան ճանապարհներով հասել է որոշակի դիրքի և ամբարտավանությամբ է վերաբերվում շրջապատին: «Աքմատաղ, էշեր կան, էն էլ չլըմսըզ, հեաքին դոթուր էշեր, վեր լիա բախտընէն պենվըմա քիւլաշաւ լիզը փալանը եր ըն տընըմ, գառ ու գարբաբ չիւլ շոռ օնըմ, հանց ըն գիդըմ աշխարքս իւրանցն ա, վէնընէն տափան կտորըմ ա, քեօհլան ծիանց նհետ ըն չափ ընգնըմ, թէկուզ լիա վերչը թեահնեաֆասն ընգած՝ ճգտընէն տիւս ա կեան» (2-150): «Վայ ա, վեր էտ էշերան միւնը մէջլիսըմ տիւնչը ծոխց եա անգուճնէն խլըշից, եա չէ հեաքին բուլդի բուլդի ըրաւ, լօխ իւրիւրոցաւ կընցնին, առաչ կտրոկ անին, վեր ընդրա տերտակ չնաղան հեալա տիւս չի եկած մէտքը հսկանան: Վայ ա, վեր էտ էշերան միւնը վախտ բէ վախտ գռոաց, լօխ դեանը կպահին, օսաննա կանչին, օսըներին տիրած ման ածին, թեաք էտ վէսկաւ պեռնած էշերին փորին եա հեաքուին տակին եա շքըմէչըմը միւն շուքըհան ինելի տեղ քթին ...» (2-152):

Հավատարիմ մնալով ժողովրդական բանահյուսության ավանդական մտածողությանը՝ Մելիք-Շահնազարյանի փոխաբերությունները հաճախ արտահայտվում են կենդանիներին անձի հատկանիշ վերագրելով և հակառակը: Այսպես, երգիծելով թուրքական կառավարության հայերի նկատմամբ գործադրվող նենգավոր քաղաքականությունը, երգիծաբանը նկատում է, որ «Ղորթ ա, Ռուսնէն Կաւկազը ըռնելան ետը էտ կիւլերին քէթը առժամանակ հըղաղուից, չին սեարթ շներ տիւս եկին վէխարներին մղայիթ կացին, ամնա վերչերս մին դուլաւ էտ շները քնաւ ընցնին եա քոնու տիրին իրանց, վեր կիւլերը հինչ օզին անին, մին դուլան մեր չոբանէն շներին ումուդաւը արխային իւրանց փորըներին հայըմը կացին ու էն վախտը օյամիշ իլին, հիբ վեր կիւլին ճտերը, մըծմըծընալաւ՝ իւրանց խսեաթը պընըցրին, դիւդարը քցած՝ անտէր անտիրական վէխարներին երայ տուին, փրտոտեցին, դըրնդարան քցեցին: Միէզ էս սիաթըս հշտեղ կիւլին կէռէքը կտորըմա, արխային ան-

տեր անտիրական մնացած վէխարներան քաշ ա տամ, հշտեղ կէռէքը կտորըմ չի, հեաքին եր թողած, սիլի-բիլի անըմ բըրշոթուն քցի, էլիա կիւլի ճտերան գիրաւ տիրած՝ քնաւ անի, մին օր կլխներիս օյին պիրի» (2-211):

Եվ իբրև եզրակացություն՝ երգիծաբանը այսօրվա և բոլոր ժամանակների համար պատգամում է. «Ամնա բոլ ա՛, հայը բեդմա մին հետան գիդա, թա հիւր նհետ կործ օնի, միէգսատենը մեր չոբաննէն սայաղ կենան, վէխարներան շները անպակաս անին, վեր վախտ բեյ-վախտ կիւլերին եկած վախտը՝ երայ տան, բինոցան մօտ չթողին: Հու անգուճ օնի, թող լեաւ լսի» (2-212):

Մելիք-Շահնազարյանը անխնա է բարոյական, հոգևոր արատների նկատմամբ և ցավ է զգում, որ ազգի մտավորականությունը ևս ենթակա է այլասերման:

«Շնհաւեր թեազա տարի, ա ջուրը ծակ, սերտը լէն փորը նի ճճկած կիր կիրող, եա մէր քոռ ազկին յդէ նշանց տուող մէծ ու պիծի վարժապետն է: Տուք մեր սուփրին աղն ըք, մէր տան լիւսն ու ծրաքը, Աստուած վէչ անի, վեր ընհամիք, եա ծեր ծէթը պկասի, խաւրիք, քըրքոռի տալալա խալխին սարըսար հանիք» (2-199):

Մելիք-Շահնազարյանը փոխաբերության երգիծական հնարավորությունները գործածում է շատ լայն ընդգրկումով՝ կենցաղային, սոցիալական հարցերից մինչև համազգային, քաղաքական ոլորտները:

**Փոխանունություն:** Փոխանունությունը միջոց է, որի դեպքում իրար հետ կապված առարկաներից մեկի անունը գործածվում է մյուսի փոխարեն: Փոխանունության դեպքում առարկաները կապված են լինում փոխադարձ կապով: Երկու առարկաների կամ երևույթների կապը լինում է պարունակողի և պարունակյալի միջև, հեղինակի և նրա ստեղծագործության ու նրա միջոցի, երևույթի ձևի ու բովանդակության միջև և այլն: Այս դարձույթի ոճական արժեքն այն է, որ խոսքը դարձնում է սեղմ և հնարավորություն է տալիս խուսափել կրկնություններից: Փոխանունությունը, փաստորեն, բառակապակցության մեջ անդամի գործածությունն է երկու անդամի փոխարեն, որի դեպքում փոխանուն բա-

ընդ արտահայտում է և՛ իր, և՛ փոխարինած բառի իմաստը:

«Ձուռնա-Տմբլան» հարուստ է բազմաբնույթ փոխանունություններով, որոնք նպատակասլաց ու դիպուկ են դարձնում հեղինակի խոսքը. այն ունի իր բազմազան դրսևորումները.

1. Պարունակողը գործածվում է պարունակյալի փոխարեն: «Ղալին պտկան ծաղկած կնանեքը իւրանց մարթուց ջուբընը էլ բեարաքեաք չընթողալ» (1-39), «թոյ ճիւր ասածդ գիղըմ ի թա լիա շիլորու եա մախոխու նման թթոյ զատ ա մեալաւի թա մին մեծ աման տօն կը տանիմ ...» (1-105), կամ՝ «մին հաստ տկլոր ռուս իրեսը եղըկալած, օրդակու նման կիլոխը կոխըմա ճրին տակը, պատառ կենըմ, թեահնափասն ընգած տիւս կեան բութուկան կլխին քաշըմ» (1-106), «սաղ ծմակը կերալ ա» (1-107):

2. Բնակավայրի, տեղի անունը գործածվում է այնտեղ ապրող մարդկանց անվան փոխարեն. «Մեր Ղալան արթարա թա մեղաւեր» (1-89): «Քաղաքական (եանի թա պոլիտիչեսկի պէներ)» ֆելիետոնում հեղինակը սարկազմի է ենթարկում խոշոր տերությունների «դիվանագիտությունը», «Փռանգիստանը (Ֆրանսիան-Ե.Մ.) բալեր, վեչերնէ ա տամ, ֆշանգնէ տրըքցնըմ, մօդենի տիւս պերըմ, կնանոց կիժվըցնըմ» (1-175):

3. Հատկանիշի անունը գործածվում է այդ հատկանիշն ունեցող առարկայի անվան փոխարեն: Տմբլաչի խաչանը երգիծում է Շուշվա «կիպիտատների (դեպուտատ-Ե.Մ.)» գործունեությունը, ըստ որի Թոփխանան գրկվել է շուքից և «շատ մարթ, կենգատաւեր ա էտ կարքատրութիւնան, օզըմըն թողք շինին, վեր էլիա էրգան անգուճներին (էշերին-Ե.Մ.) իւրանց պըպական տեղը կղնըցնին, թա չէ Թոփխանան շնորքա ընկալ ա, հանց ա մին զատ կուրցրած ինի» (1-75), կամ՝ «խօլեր դայուն, ե՛կ, քզանայ իսկի վախըմ չընք, ծաղեզն էլ եկաւ, հի՞նչ ըրաւ» (1-66), «Դլան մին տարի ա վեր ծաղէզ շոռ ածողը տիւս չի կեան, փրթըմ ա հստեղ ընտեղ» (1-97):

Մելիք-Շահնազարյանի երգիծանքի ոճական հնարները հարստանում են և համընթանման (սինեկդոխ) օրինակներով: Համընթանումը

փոխանունության տարատեսակ է, որն առաջանում է առարկաների, երևույթների որոշակի առնչակցության հիման վրա: Այն հատկապես արտահայտում է ամբողջ երևույթի կամ առարկայի անվան փոխարինումը նրա մի մասի անունով, հոգնակի թվի փոխարինումը եզակի թվով կամ ընդհակառակը: Սինեկդոխը նման է փոխանվանը այն առումով, որ նրանում ևս որոշ դեր են կատարում առարկաների կապն ու առնչակցությունը, սակայն տարբերվում է նրանով, որ հիմնված է առարկաների քանակական հարաբերության վրա (մաս-ամբողջ, եզակի-հոգնակի):

1. Մասի անունը գործածվում է ամբողջի անվան փոխարեն: «Կէս քշերին խօխայ, ըրախայ քօն իլին, մինակ ջահիլ ջիլիլ լիւս պիեցին, վեր սուրբերը հեարանց քինիլիս տեսնան, խնդուածք անին ու սրտներին դիլակը կտարի...» (1-109): Երգիծում է փողորաթով տված սուրբերի «գորությունը»:

2. Որևէ թիվ՝ անորոշ շատի իմաստով.

«Իտի հարյուրավոր զուրաւեր օրինանքներին սուփրան շատ վախտ ա վեր հւաքուալ ա, միեզ վէչ ուրիւնընքներըմն ա զօրութիւն մնացալ, վէչ ընեծքըմը, աշխարքը «տուք և տացի ծեզն» ա տեռալ, հեալաւակն ընդ ական, ատամն ընդ ատամանն էլ նիետը...» (1139):

Ի պատիվ Մելիք-Շահնազարյանի՝ պետք է ասել, որ երգիծելով հասարակական, քաղաքային կյանքում բուն դրած բացասական ու մերժելի երևույթները՝ նա պասսիվ դիրքերում չի մնում, այլ, միշտ՝ իբրև եզրակացություն, հնչեցնում է բոլորին ականջալուր՝ զգոն լինել, պատրաստ լինել դիմակայելու:

Չափազանցություն: Չափազանցությունը ոճական հնարանք է, դարձույթ, որի դեպքում խոսքի պատկերավորության նպատակով առարկաները, երևույթները կամ նրանց հատկանիշները ներկայացվում են չափազանցված՝ դրանով իսկ ազդեցիկ դարձնելով տպավորությունը: Այն սկզբնավորվել է ժողովրդական բանահյուսության ժանրում: Ժողովրդական բանահյուսության երկերից հետո չափազանցությունը առավել շատ օգտագործվում է երգիծանքի մեջ՝ իբրև կյանքի կոմիկա-

կան կողմերը սրելու միջոց: «Չափազանցնելով ծիծաղելին, գրողն ավելի է բացահայտում նրա հասարակական վնասակարությունը: Երգիծանքը դժվար է պատկերացնել առանց չափազանցության» (26-241):

Մելիք-Շահնազարյանի երգիծանքը հարուստ է չափազանցություններով: Գրողը «Ձուռնա-Տմբլայում» չափազանցությամբ ստեղծում է երեսփոխանների, հասարակական-քաղաքական գործիչների, վաճառականների դիմանկարներ: «Ժողովուրթը ուզեցալ ա մին ջահիլ ուսում առած տղի կիպիտատ (դեպուտատ-Ե.Մ.) ճոկի, ամա մին քան է համփայ մարթէք ռազի չըն կացալ, ասալ ըն ուսում առած ջահիլ կիպիտատին փորը հինչ կըմննի մեզ *արշինուկէս տիւս պրծած փորաւ* կիպիտատ ա հրկաւեր, վեր սոր մեչը *քիւֆթայ ա, դօլմայա, խոզի կուրկուտ ա, տուարու օթ գինգ ա, եղաւ լիզը պուլիզ ա, թընըքսակ ա, ըչըհամբիւրա, հինչ ասիս մեչը կարի տղվարի*, իսկի այնըմն էլ քցի վէչ» (1-56): «Շօշվայ Ղալին խերին ու շառին ճոնդ ու պոճախ չօնի, վեր մին-մին շարիս, ըստեղան *Յնդստան կըհսնի*» (1-17): Երգիծաբանը անողոք ծաղրով քննադատում է շուշեցի կանանց քաղքեմիությունը, մողայասիրությունը, մեծամտությունը. «Պուլկմիգին (ռօսկօսուկ-Ե.Մ.) կնգանան կցած չրու քեծմիւրչի Մեքիւն կնէգն ու ախճիկը ես իրեք տոնընը հանց լիւսավերուալ ըն, վեր էլ մեր պուլիցխանան օզըմ չի շհարին ֆանարնէն քշերը ջափայ քաշի վառի, *չիւն ժըղովուրթը քըլըքըլա լիւս ա տամ...*» (1-26):

Յետևյալ չափազանցության մեջ հեղինակը հեզնանքով քննադատում է հերթական հերոսի բնավորության մերժելի գծերը, ժլատությունը: «*Դաւութ ապօրը մին լամպաւ չորս ութաղի լիւս տալու փորձը մին փարա տներըմ էլ շատ յաջող քինըմ ա. ասըմ ըն դիփունանց շատ Բաբա ապերն ա չալիշ կեամ մին հանց ամալ անի, վեր մին լամպը համ ներքի ըտաժին լիւս տայ, համ երի, համ էլ բալկոններին, հեալա վեր կարի պեղմա հայաթին երայ էլ քցի, վեր գեաղա գիւղա զատ չի թըցնին*» (1-47): Կենդանի, հետաքրքիր խոսք կառուցելու նպատակով հեղինակը թվականների գործածությամբ հասնում է չափազանցության. «Յանց էրկու կարկանոց մոմ կա, ասըմ ըն բիրաղի *չորս մարթի հիւքի ա լիւսավերըմ*» (1-94):

Մելիք-Շահնազարյանը ստեղծում է այնպիսի նկարագրություններ, որտեղ չափազանցված են մարդու արտաքինը, ֆիզիկական հատկանիշները: Իսկ ինչպես գիտենք, մարդու արտաքինը հաճախ արդեն բացահայտում է նրա էությունը, բնավորության գծերը, նաև՝ գործունեությունը: «Սերգեյ Պետրովիչին փորը հանց քիւլլամա տիւս պրծած ա, *վեր օխտը հեարիւր քեասիբու վէքսիլ* ածիս *մէչը, էրկու հզեր իսպուլնիտելնի լիստեր, տասսը հզեր կլեաուզնի թղթեր կտանի*, իսկի այնըմը քցել չի» (2-49):

Ինքնատիպ են այն չափազանցությունները, որոնցում ուռճացված, խոշորացված են ներկայացվում առարկաների չափերը, քանակը, հեռավորությունը՝ տպավորությունն ուժեղացնելու, խոսքի ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Իր Ձուռնայի բարեմասնությունները չափազանցնելով՝ Տմբլաչի Խաչանը այն հակադրում է Շուշիի հասարակական կյանքին. «Իմ զուռնան Նադիրին դեօվրան մնացած ա, Պարիժու վիստաւկան քեցած՝ վէսկի մեղալ ստացած. մին զուռնան փչիմ, վեր ծէնան նիետ չրու ստընէքն էլ *տժոխկըմը կըռըմփոնոկ* եալլի տան» (1-158):

Լուսնթագի վրա Տմբլաչի Խաչանը հայտնաբերում է մի իդեալական հասարակարգ, որի մասին գրողի երազանքը ձևավորվում է չափազանցությամբ. «*Կոնաս փոնից տարաւ* տրախտին անմահական ախպիւրը նշանց տաւա, ախպիւր *հինչ ախպիւր*, մին կոնան շամպանցկի, մաղէր, ռոմ, կանեակ, պիւա, մին կոնան *մեղր ա ծորըմ*, մին դոլան ծիւնի նման սիպտակ լաւաշնէն ա չաթու կապած տիւս *կեամ էմ մի դոլան լիւլաքեաբաբը*, հնդիւշկի ժարկոն, ամմա ովա էտքան պեներին միալ քցըմ, ես ու ես ասըմի հա գիդի մէր վանքերին աչքըծակ վրդըբըդտէնք, անկշտըմնը դերեր ու տիրացուէք, կնդստորու անթամնէ եա պուլիցխանու միրգէք, հշտեղ ըք, ասըլ ծեր տեղն ա, մին տիւս եկէք է...» (2-7):

Բարեգործությամբ «աշխարհի թարսությունները» շտկելու Մելիք-Շահնազարյանի ուտոպիան խարսխվում է նորդարական հրապարակախոսության այն գաղափարական ուղեմիջի վրա, թե հարստությունն ամենազոր է, և որ միմիայն այդ հարստությունը կարող է փրկել մարդկանց սոցիալական թշվառությունից:

Մելիք-Շահնագարյանը մեծ վարպետությամբ կիրառում է *գրոտեսկ (սահմանազանցում)*, երբ հեզնում է «ըշխարի վարթապետի» դատարկամտությունը, հաշվենկատությունը. «*խօսում ար, խօսում* մեր ըշխարի վրթապետը՝ սարան քոլ ընկնըմ, քօլան ծեօր, ծեօրան խիւթ, ես հինչ գիդամ՝ *ըշխարքիս տական փռնըմ ար, երկինքաւը տիւս կեամ, տնաշէնը ծով ար ծով, օվկիանոս ծով...*» (1-19): «*Հայոց ազկի կիպիտատների*» գործունեությունը երգիծում է հետևյալ գրոտեսկային պատկերով. «*Եկին հայոց ազկի կիպիտատնէն, շատ զուլում եկին, քթընէն ցեց ցեց, ամեն մինին սրտըմը էրկու ասլան նստած, պրաններին կրակ ու ալաւ, հու՞ա կլխան ծեռք եր կալալ ասի տեղտ ծոխ ա, եր կաց ընդեղ նստի*» (2-227): Այս գրոտեսկային չափազանցությամբ երգիծաբանը մերկացնում է նրանց ինքնագլուխ ու արատավոր գործունեությունը:

Տմբլաչի Խաչանը ատում է կուտակման մոլուցքով տարված դրամական աշխարհի տերերին և որպես յուրահատուկ նախազգուշացում՝ արդիական հարցադրում է անում. «*Խէ՞ չըն էնքան օտըմ, վէր կարին մարսին, մին էլ կերածնեն զկռտալաւ ըռխներավը վէր չածին*» (2-140): Գրոտեսկային պատկեր է նրա հեռագիրը. «Պարիզ Վիստաւկա սարքողներին: -Մին մեծ տեղ պիեցեք, Կւկազան *հենգ փրգոն փորը ծով շի՛նած*, ազկու, հնգերու, պարեկամու փողեր կոլ տուած ազկային փորեր ընք թմաշա դրկելու» (1-137):

Մելիք-Շահնագարյանի սուր երգիծանքը պայմանավորված է նաև գրոտեսկային չափազանցությունների առատ գործածումով: Չափազանցությունը «Ձուռնա-Տմբլայի» երգիծական ֆելիետոնների ամենաբնորոշ ոճական միջոցն է, և այս առումով նա ազատ կարող է մրցակցել մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանի հետ:

Չափազանցության հետ առնչվում է *նվազասույթը*, երբ առարկայի հատկանիշը փոքրացվում, անբնական չափով նվազեցվում է: Նվազաբանությունը չափազանցության հակառակ երևույթն է, բայց, ըստ էության, կատարում է արտահայտչական նույն դերը, գրողը նրանով ուշադրություն է հրավիրում առարկայի երևույթի կամ նրա այս կամ այն հատկանիշի վրա:

Տմբլաչի Խաչանը խիստ մտահոգված է հարազատ քաղաքում տիրող անարդարությունների և սոցիալական այլ երևույթների համար. «Տմբլաչի Խաչանը քանի մին ցաւի կեայ՝ Ղալին խերն ու շառը կիրի, վէր *ծովերը թանաք տեռնան երկիրն էլ թողթ* էլիա կիրելաւ պրծում չինիլ» (1-69):

*Շրջասույթ*: Խոսքի պատկերավորությանը հաճախ նպաստում է ոճական այն հնարանքը, երբ առարկան, երևույթը ուղղակիորեն անվանելու փոխարեն տրվում է նրա նկարագրական բնութագրությունը: Շրջասույթյան ժամանակ սովորաբար ընդգծվում և ավելի պատկերավոր է ներկայացվում տվյալ իրողության կամ գործող անձի հատկանիշներից որևէ մեկը կամ մի քանիսը, որոնք գրողը տվյալ պահին կարևոր է համարում: Մի բառի փոխարեն գործածվում է մի ամբողջ կապակցություն, նախադասություն, բառային միջոցին փոխարինում է շարահյուսական միջոցը, մինևույն բովանդակությունն արտահայտվում է լեզվական միջոցներով:

Մելիք-Շահնագարյանի ոճի հետաքրքիր հնարանք է ոճական այս դարձույթը, որը հանդես է գալիս լեզվական և հեղինակային կիրարկությամբ: Լեզվական շրջասույթունը անվանողական արժեք ունի և որևէ երանգ չի տալիս խոսքին: Այսպես՝ նկարագրելով «չիասը հաս անող տերտերների և տարին իրեք հետ ախսախկալներին սոտ իւրթիւմնը», հեղինակը երգիծում է. «*էտ կայքին եա վեղերին երայ մին օրիշը կեայ հոգուցն հանգուցելոց ասի*» (2-26):

Պատկերավոր են հեղինակային շրջասույթները: Դրանցում առաջ են քաշվում այնպիսի բնորոշումներ, հատկանիշներ, որոնք տվյալ պահին հետաքրքրում են հեղինակին: Մելիք-Շահնագարյանի ստեղծած հեղինակային շրջասույթները ունեն հեզնական, ծաղրական բնույթ: Դրանցում երևում է հեղինակի վերաբերմունքը նկարագրվող երևույթի նկատմամբ: Այսպես՝ բնութագրելով քահանաներին՝ նա գրում է. «*Սևը սպիտական ճոկողներին* թմահան պատառ կտրցնի...» (2-25): Եվ կամ քննադատում է *պըպական հւատան շեղվածներին*. «Ա ծեր տօնը չքանդուի, Քրիստոս իւրան *անծեռագործ պատկերը* Հային դարկած ինի,

տուք իրըսնէտ շօռ տա՞ք» (1-44): Հետևյալ բնագրային օրինակում հեղինակը երգիծում է Շուշիի Թոփխանայի «տեսքից ընկնելը», որովհետև *էրզան անգուճնէրն* իւրանց տեղան տիւս ըն ըրալ (1-75):

Երբեմն հանդիպում են այնպիսի շրջաստություններ, որոնցում անձի անվանման փոխարեն տրվում են նրա պաշտոնը, զբաղմունքը անվանող բառակապակցություններ. «մին էրկու *կուլը կապ անողներին* գործը փոզմիշ իլաւ» (1-68), «*Ծաղեզ շոռ ածողը* Ղլան տիւս չի կյամ», «*էն դիւնեան քեցողները* նամակ ըն կիրալ» (1-34):

*Մակդիր*: Խոսքի պատկերավորությանն ու հուզականությանը նպաստող տարածված միջոցներից է մակդիրը, որի հիմքում ևս ընկած է բառի փոխաբերական իմաստը, «Մակդիր հասկացությունը, անկախ նրա լայն ու նեղ ըմբռնումից, մեր քերականագիտության մեջ միշտ էլ կապվել է գոյականի հետ և բնութագրվել որպես գոյականի վրա դրվող բառ... Մակդիրը այսօր էլ դիտվում է որպես առարկան ու երևույթը գեղարվեստորեն բնութագրող բառ կամ բառակապակցություն: Վերջին տարիներին ոճաբանական գրականության մեջ նկատվում է մի նոր միտում՝ մակդիրների շարքը դասել նաև գործողությունը բնութագրող բառերը»,- նկատում է Ա.Մարությանը (30-139):

Մելիք-Շահնագարյանը սասիրայի ոճական տարբեր միջոցների շարքում կարևոր տեղ ու դեր է հատկացրել մակդիրին, որի դիպուկ ու տեղին օգտագործումով էլ կատարում է յուրահատուկ գեղարվեստական ընդհանրացումներ:

Ի պատիվ Մելիք-Շահնագարյանի՝ պետք է ասել, որ, ընդհանուր առմամբ նրան հաջողվել է շրջանցել «Նոր-Դարի» պահպանողական մտայնությունը և նույնիսկ երգիծել այն՝ գործածելով խոսուև մակդիրներ: Ահա դրախտից «Ուհան պելուն» հասցեագրած նամակում Տմբլաչի Խաչանը իր պարսավանքն է ուղղում ոչ միայն «Մուրճի», «Մշակի» նեղ թայֆայական հակառակությանը, այլև հարազատ «Նոր-Դարին», որի սեփական թղթակիցն էր ինքը. «*Ընդեղ վէջ ծակ Նոր դարական տեսի, վէջ ճղճըղ Մշակական ...յա Մուրճական, որ ամբողջ տարին միմյանց հայիոյելով՝ մեկի շինածը մյուսը քանդի...*» (2-28): *Ծակ, ճղճըղ*

մակդիրներով Խաչանը երգիծում է մամուլի սնամեջությունը, սուտը, ժողովրդի խոսքի անտեսումը, հայիոյախոս սնանկությունը: Այս մակդիրները հետաքրքրական են ոչ միայն իրենց կիրառական ինքնատիպությամբ, այլև նրանով, որ արտահայտում են երգիծաբանի վերաբերմունքը, գնահատականը պատկերվող երևույթի նկատմամբ:

Ի դեպ, մամուլի տարբեր օրգանների կողմից փոխադարձ վիրավորանքն ու անհանդուրժողականությունը սահման չի ճանաչում: Խաչանը երգիծում է լրագրի «հայիոյախոս» լեզուն: «Մշակին Վրցըկանքին ուտըցրած ուշուցնէն. *խեղկատակ, դաւթարը կորցրած, կատարեալ ապուշ, դատարկ կարաս, գրականական թնրութեան մեջ խորասուզված պարոն էն էլ կոտրած գրչով և գլուխգործոց դոնքիշոտ*» (2-30):

Մակդիրներն ընտրելիս Մելիք-Շահնագարյանը առաջին հերթին նկատի է ունենում նրանց իմաստային խորությունն ու բազմազանությունը, նկարագրվող երևույթի բնորոշ կողմերն արտահայտելու ունակությունը: Հեղինակը Շուշվա ռեալական դպրոցի բարքերի նկատմամբ իր ժխտական վերաբերմունքը արտահայտում է հեզմական բնույթի մակդիրով: Այսպես՝ «Ղալին *լուսաւերուած շկօլին* ըխճըկորանցը մհար ծոզարդար ըն սարքալ» (1-59): Երգիծելու համար աղջիկների վարքուբարքի եվրոպական նորամուծությունները, նրանց «բարիշնա» դառնալը, երգիծաբանը ընտրում է նրանց ծագումը հեզմող մակդիրներ. «Բարիշնան էլ՝ մեկալ օրուայ *քար կոտորող Թիւնուն ախճիկը*, եա *Չաղալ Պետոն թոռնը*, սբլդրան լոք ա տամ» (1-59): Այնուհետև Խաչանը շարունակում է իր երգիծանքը. «Ռեալնի շկօլին մունթերը թողած իւրանց *վէսկի կարթմունքը*, քշեր ցերեկ քեֆի ու կարտի երայ ըն մէտք անըմ» (1-72):

Խաչանը երգիծում է հայ կանանց ու աղջիկների պահվածքը, նրանց հանդերձանքը՝ *փիրփետ կեափուն* հարսները, Բաքուայ *թւադու ծտէր ցիվիլիզովաննի դամբըր*, *փորը հացուտ իլած մարթոց*, *հըշտը-համբիւր ճիւրը կակող կնէգ*, *քեօք կեռէք*, *քար կոտրած խղճնտանքնէ*, *բոխճենին տրաքըմ բմբասանք*:

Մելիք-Շահնագարյանը ձգտում է նոր ու յուրօրինակ մակդիրներ



գործածել: Դրանց գործածությունը պատճառաբանում է, բխեցնում է նկարագրվող երևույթների էության այս կամ այն կողմը բացահայտելու անհրաժեշտությունից: Նրա գրչի տակով անցնում են *«պորտը եղըկալած դերերն ու վրթըբըղենն»*, *«հեալա ըշխարքիս խերին շառին բեյխաբար կապընեն կտրած ազիզ մեագիզ պահած ըխճըկէրքը»*, *«խւրանց մարթոց խէլքին փոշի անող՝ օրիշ մարթոց քմական ընգած գեոզալ խանըմենն»*, *«Նչաղին զուր տեղան են դիւնեան դարկող հեաքիմենն, նա ասնավաննի տակոյ-սեակոյ ստատեալ խօսող սևը սիպտըկցնող, սիպտակը սըվըցնող ատվակատնեն»*, *«Փողեր կոլ տուող դումի չլեննեն»*, *«սըբաշա շտացած մակլերենն»*, *«ժըժըպապա անող ազկի պարծանքս լիւսըթաթախ ջահիլ ջիուլենն»*, *«շուղումբուր ասլըզադա, իւրանց տեղը ճնանչող էշերը»*, *«ջուրը ծակ վարժապետնեն»* և հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչները: Մելիք-Շահնագարյանի բառապաշարում կան այնպիսի մակդիրներ, որոնք խոսքում համանուն չեն պատկերվող երևույթին: Դրանց ստեղծումը պայմանավորված է համատեքստային իրադրությամբ, և իրենց արտասովորությամբ ոճը դարձնում են ճոռոմ, երգիծական:

Մելիք-Շահնագարյանը ընտրել է այնպիսի մակդիրներ, որոնք բազմակողմանիորեն բնութագրում են առարկան ու երևույթը: Նրանք նպաստում են նկարագրվող երևույթների, կերպարների էության տարբեր հատկանիշների երգիծական գնահատմանը:

*Չակադրույթը* ոճական, շարահյուսական դարձույթ է, որով արտահայտվում են տարբեր երևույթների, գործողությունների միջև գոյություն ունեցող հակադիր հարաբերություններ ու առնչություններ:

Ինչպես նշում է լեզվաբան Լ.Եգեկյանը, հակադրույթը ոճաբանական կարևոր բանադարձում է, որի շնորհիվ հատկապես գեղարվեստական խոսքում, հաճախ նաև առօրյա-խոսակցական լեզվում խոսքին հաղորդվում է արտահայտչական երանգավորում (24-235):

Մելիք-Շահնագարյանի երգիծանքի ոճը մեծ մասամբ պայմանավորված է նաև հակադրությունների օգտագործմամբ: Փաստորեն, նրա ապրած ժամանակաշրջանը ինքնին հակասությունների շրջան էր, և իր

ստեղծած հակադրություններով Մելիք-Շահնագարյանը ներկայացրել է ժամանակաշրջանի իրական պատկերը: Երգիծանքի այս միջոցը վեր է հանում ճշմարիտն ու կեղծիքը, բարոյականությունն ու անբարոյականությունը, հասարակական աննախանձախնդրությունը և շահամոլությունը: Յետևյալ հատվածում հեղինակը խարազանում է ծույլ ու անգործունյա հոգևորականների էությունը, ծաղրում նրանց մեծ ու փոքր անգրագիտությունը և շահամոլությունը: *«Թա հունց կըվերչանայ էս պենը, հեալա անքննելի ա, մենակ քննուած վերչացած ա, վեր մզանըմ օղտերը թողած՝ մուծակին փաչին երայ ըն դաւի տամ»*:

Ամբողջովին հակադրությունների վրա է կառուցված «են դիւնըին ահալաթան» ֆելիետոնը, ուր դժոխքում իրենց արժանի պատիժը կրող «ազկի խմբակիր, վարժապետ, մեծատուն» զղջում են իրենց գործած սխալների ու մեղքերի համար: *«Ախր դալաթ չրիմք ազկի խմբակիր, վարժապետ եա կիր կիրող տեռիմք, սոտեր փչեցիմք, լեալը աջուղու փիսըցրիմք, փիսը լւըցրիմք աչ պեները ծեախ շոռ տւիմք, ըստիւր ընդիւր երայ քարեր շպըրտեցիմք...»* (2-15), կամ *«թամահ ըրիմք քեասիք քիսուբու փողերա մին մանըը լիա լպզտեցիմք, եա շիլ ընգնելուք կոլ տւիմք, միեգ ստեղ քթըծակներավըս ամըն օր վեր ընք ածըմ»* (2-16), *«Մեր տոնը շինեցիմք, խալխին տոնը քանդեցիմք»* (2-17):

Վերոհիշյալ օրինակներում ունենք բայական հականիշներով արտահայտված հակադրություններ:

Մելիք-Շահնագարյանի լեզվում հանդիպում են այնպիսի պատկերներ, որտեղ հակադրությունն արտահայտվում է ինչպես միևնույն խոսքի մասի, այնպես էլ տարբեր խոսքի մասերի բառաձևերով: Այսպես՝ խարազանելով հասարակության մեջ արդարությունը, հավասարության բարոյական և իրավական արժեքները բարձր պահելու կոչված պետական պաշտոնյաների գործունեությունը, Մելիք-Շահնագարյանը հակադրույթի միջոցով ցույց է տալիս նրանց հակառակ պահվածքը *«Ըստեղ ատվակատ, սուղիա, պրիստաւ, եասաղուլ, քեօխա ու մովրով չի կայ, վեր ըռըշվաթաւ սոտը դիւզըցնին, սևը սիպտըկցնին*, հշտեղ չաթուքեասաննէ կայ, թլակա ըզադին» (2-9):

Մեծահարուստների այլասերվածությունը և ազահությունն է խտացված հետևյալ պատկերում. «Աշխարքիս պէները թրսըպարան ա, մին տեղ հազարնէ ըն խարջըմ սաղ ջանաւ դաչա քինըմ, մին օրիշ տեղ կապէկ չըն քթըմ դոխտուրի եա ճարի տան, մին տեղ փարթամթիւնը հանց քուռըցրայա մարթոց աչքերը, վէր տասսը չեշմակաւ էլ աղքատ ըղքուդու տեսնըմ չըն, մին օրիշ տեղ հանց տասսը վերստան հեռի ըն-գած եղըպատառին երայ զարբ ըն անըմ, վէր ասիս աչքնէն ըրծևու աչ-քեր ինի: Մին տեղ տասսը ջուռայ գեյիմ ըն փոխըմ, օրը մինը շպրտըմ, տէն քցըմ, մին օրիշ տեղ՝ մետակ հալաւ էլ չըն քթըմ, վէր պէց լաշընէն ծածկին» (2-87): Այս հակադրությունների մեջ անհնարին է չտեսնել Ֆրիկի ոճը, առկա է կրկնակի հակադրություն մի կողմից՝ նախադասու-թյունների միջև, մյուս կողմից՝ յուրաքանչյուր նախադասության մեջ:

Ինչպես նշեցինք, Մելիք-Շահնագարյանը ստեղծել է բազմաբնույթ և բազմատեսակ հակադրություններ: Հակադրությունը կարող է արտա-հայտել գործողությունների հաջորդականություն, երևույթների փոփո-խություն: «Արշալույսը միշտ Արշալույս մնայ ու վերջալիւս չտեռնայ, խալխին մթնըմը թողի» (2-207): «Ու մին սիսթան ետը Անտոնին կնէգը մարթին երայ մին գապիսկա ա կիրըմ, թա ես քեզ էլ սիրըմ չըմ, տու ըս գիղըմ քու խօխէքը, Ալիըմբարանց Ռուբէնին հետան ընգում, չրու Պարիժ մին փախչըմ, վէր ընդեղ էնքան ղւնդալին մէջին անկեղծ սեր քթնի...» (2-170): «Էլ խեղճերը գիղըմ չըն, թա սէրին գապասը հեալա չփսակուած ըն վրչըցրայ, մեզ տակին ալրի թեփն ա մնացալ, եա աւալքի կրակին մոխերն ու մուրմուտը» (2-174):

Մի շարք հակադրություններում բևեռները ոչ թե ժխտում կամ բա-ցառում, այլ հաստատում են իրար: Թեև հակադրության երկու եզրե-րում կան հակամիշ բառեր, բայց ըստ էության այդ կառուցվածքների մեջ հակադրություն չկա: Դրանք դիպուկ բնորոշումներ են, և հաշվի առնելով դրանց խորիմաստությունն ու սեղմությունը՝ անվանում ենք աֆորիզմներ: Ինչպես օրինակ՝ «Իրըսըհան հիլի, տկըհան ծիլի», «Էն վաղէ կիւշը, ետի փրթիւշը» և այլն:

Կրկնաբերությունը ոճական, շարահյուսական այնպիսի դարձույթ է,

երբ միևնույն բառը, բառակապակցությունը, նախադասությունը կրկնվում է երկու կամ ավելի անգամ՝ հուզականությունն ուժեղացնելու նպատա-կով: Բառերի և արտահայտությունների կրկնությունները սովորաբար հանդիպում են նաև առօրյա-խոսակցական ոճում և բնորոշ են ժողովր-դական լեզվամտածողությանը: «Զուռնա-Տմբլայում» գործածական են տարբեր բնույթի կրկնություններ՝ բառերի, բառակապակցությունների, իսկ երբեմն նաև ամբողջական նախադասությունների, հատկապես խոսքի սկզբնամասերում, որը և կոչվում է *հարակրկնություն*. «Թեազայ տռնին կեալին երայ իմ բլըբանը շնհաւեր ա անըմ քու թեազայ տարին, շնհաւեր ա անըմ դէրերին, գուրծըկըլներին, շնհաւեր ա անըմ դոխտուր-ներին, դալլաքներին, վրժուհոնոցն ու վըրժըպըտներին...» (1-53): Կրկնվող բառերը օգնում են պարզ պատկերացնելու այս կամ այն եր-գիծանքը. «Էս տարի կեարունքին քրըզբարոզա շատ խուսեցին կըզըթ-ներումը, հու վէր եր ար կենըմ բոմփում ար մեր հուքեվուր դէրերին կլ-խին, թա քարոզ չըն տամ, քարոզ չըն տամ...» (1-18): Կամ՝ «խօսում ար, խօսում մեր ըշխարի վրթապետը՝ ըշխարքիս տական փռնըմ ար, երկինքաւը տիւս կեամ, տնաշէնը ծով ար ծով, օվկիանոս ծով...» (1-19): Այս հատվածներում կրկնությունները ընդգծում են հոգևորականների անգործունյա, տգետ լինելը և հակադրում ոչ հոգևոր կոչում ունեցող աշխարհիկ վարդապետի շաղակրատությանը:

Կրկնվել կարող են նախադասության տարբեր անդամներ: Ենթակա-յի, ստորոգյալի, կոչականի, որոշչի, խնդրի, պարագայի կրկնություն-ները ոճական տարբեր արժեքներ են ստանում. «Ճուլին ընգալա ծովը, Հայոց ճուլին մին քանէ տարէ էլ մնա ծովին տակին, հուր յալիտենական կոլ կքինա...» (1-68): *Ճուլի* կրկնվող ենթական ընդգծում է հայոց անտեր անտիրական վիճակը և մեծ տերությունների կողմից խաղաքարտի պես այս ու այն կողմ նետվելը:

Հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել բայ-ստորոգյալների կրկնությանը: Բայ-ստորոգյալը կազմում է նախադասության առանցքը: «Էտ շափաղը բուլա վէր քցին մեր կկազին շհարներին եա շնըտքներին երայ, բուլա վէր մին պիծի շողբ քցին մեր հոքեվուր եա մարմնաւուր դէ-

րերին երայ, *բու ա մին պիծի շողք քցին* մեր ժմերին կնծրպետներին, դումի չլեններին, եթմների ապեկուններին երայ, վեր ծեռաց ընդրանց մքնրժոռաւ եա քըրլիւսաւ ծկըթած փողերին ճոնդը պեց ինի» (1-70): Այս կրկնվող գործողություններով հեղինակը նպատակաուղղում է իր վերաբերմունքը բոլոր այն հասարակական շերտերի վրա, որոնց գործունեության միակ և հիմնական նպատակը գողանալն է և միայն գողանալը, գռփելը:

Կոչականի, ինչպես նաև ձայնարկության կրկնությամբ հեղինակը ընդգծում է հույզեր ու զգացմունքներ, կերպարների հոգեբանությունը, սոցիալական բնորոշ կողմերը. «*Վա՛յ ծեր մեղքին, հազար վա՛յ*» (1-58), կամ «*Վու՛յ շատ ընք յաւաշ քինըմ, վու՛յ ախճի մեզ ըն եշըմ, վույ քու աչքերը քուռանա, տիւս տրաքի սերտըս ճաքից...*» (1-8): Ձայնարկությունների, կոչականների, եղանակավորող բառերի կրկնությամբ Մելիք-Շահնագարյանը արտահայտում է կերպարների անկաշկանդ զգացմունքներ, հույզեր:

Յուրաքանչյուր խոսքի մասի կրկնություն ոճական յուրահատուկ առանձնահատկություն ունի և տարբեր երանգավորում է հաղորդում խոսքին: Եթե բայերի կրկնությունները խոսքին տալիս են յուրահատուկ ռիթմ, ապա ածականների կրկնությամբ ու կուտակումով ավելի տպավորիչ է որևէ կերպարի կամ երևույթի բնութագիրը:

«Ձուռնա-Տմբլայում» զգալի թիվ են կազմում նաև անձնական դերանունների կրկնությունները: Ինչպես օրինակ՝ «վեր կեամք ըստեղ, լեաւ կընար *ժէր* կնանեքին էլ պերիք, *ժէր* մեար էլ, *ժէր* քուր էլ...» (1-21): Կամ՝ «մեր կնանեքը քանդեցին, քարուատակ ըրին մեզ, կլխնէս տարին. «*Էս* պե՛ր, *ԷՆ* պեր, ըտրան հաւան չըմ, *Էս* միէզ մօղա չի» (1-24), *Էս, ԷՆ* դերանունների կրկնությամբ ավելի է ընդգծվում կանանց հոգեբանությունը, երևում է հեղինակի ծաղրական վերաբերմունքը նման «մողայիկ» կանանց նկատմամբ:

Մելիք-Շահնագարյանի խոսքում, ինչպես նշել ենք, կրկնվում են ոչ միայն բառեր, այլև բառակապակցություններ ու նախադասություններ: Օրինակ՝ «Ես *ասալչըմ*, իսկի *մտկաւս էլ անց չի կացալ վէր ասիմ* Ղա-

լին ազիզ-ազիզ ըխճըկերքը լիւսավերութիւնը գիղըմըն թա ֆըռընգիստանայ եկած չարդու եա քչըղակու թևին երայ ա» և հաջորդ պարբերությունները ևս սկսվում են «*Ես ասալ չըմ*» նախադասությամբ, ու յուրաքանչյուր պարբերության մեջ երգիծվում է շուշեցիների սովորությունները, հավատալիքները, հասարակության տարբեր շերտերի արատները, ժողովրդի հանդեպ նրանց գործած ոչ նպաստավոր արարքները: Կամ՝ «տրուբադուրի» նման տմբլին թխելով՝ Տմբլաչի Խաչանը նորից մատը դնում է հասարակական կյանքի ցավոտ կողմերի վրա՝ հրավիրելով բոլորի ուշադրությունը՝ երգիծանքի խտացված գույներով վեր հանելով թերությունները: «Տմբլիս չթխած սուս ու փուս *մին ծեն տիւս եկաւ*» (1-47), «տմբլիս չթխած *մին գիլ սեաս* եր իլաւ...» (1-48), այսպիսի տողերով շարունակվում է մի քանի պարբերություն:

Նոր տարվա առթիվ շնորհավորանքներ ուղղելով հասարակության բոլոր շերտերին՝ «*բլըբանս շնհավեր ա անըմ*» տողերով երգիծում է նրանց գործունեության մեջ տեղ գտած մերժելի երևույթները. «...*գարգեարներան էլ խնդրըմա, վէր պղնծին նհետ վէսկի չխառնին, վէսկու դադրը մեր ժըղովորքը հեալա տժեր կը հսկանայ*» (1-54):

Մելիք-Շահնագարյանը կրկնություններով հաճախ ոճավորում է հերոսների խոսքը: Այսպես՝ «*Կապա, կէր*» ֆելիետոնում հեղինակը պատկերում է մարդու արժանապատվությունը վիրավորող այն երևույթը, երբ մարդուն գնահատում են արտաքին հանդերձանքից ելնելով, նսեմացնում են նրան՝ առանց հաշվի առնելու մարդկային արժանապատվությունը և բարեկամական կամ ընկերական հարաբերությունները: Այս ֆելիետոնում թամամ բաջին պատժում է նման մարդկանց. «*Հացին վախտը վեր կեամա, բլիւղնէն առաչ ու առաչ պերըմ ըն թամամ բաջուն տէմ անըմ, նա էլ սուսուփուս ծեռքը տանըմ ա արխալղին փէշքը փռնըմ, բլիւղին տէմ անըմ-կապա-կէր, կապա-կէր* ասըմ, խորագը ետ տամ...» (1-216):

Չեղինակի խոսքում հաճախ նույն արտահայտությունը կրկնվում է ժխտական մասնիկով, որը նորից հաստատում է նախորդի միտքը: «*Վխպեր փողի թալակ աբա փողի թալակ չի* հինչ զեհիրըմար ա, վեր ետ ճրերըմը

նչադա իւիլ պրօֆեսօր, դոկտօր, ֆէրշիլ, մասաժիստկա կա...» (2-86):

Այսպիսով՝ կրկնությունները ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում են հիմնական թեմայի, բառի վրա, որով էլ մեծանում է նրա երգիծական կամ հուզական ներգործության ուժը:

*Աստիճանավորում:* Աստիճանավորումը ոճական հնարանք է, շարահյուսական դարձույթ, որի դեպքում բառերը, ինչպես և բառերի կապակցությունները իրար հարաբերակցվում են իմաստի աստիճանական փոփոխությամբ: Աստիճանավորումը լինում է երկու տեսակ՝ աճող կամ սաստկացող և նվազող: Ավելի տարածված և գործածական է աճող աստիճանավորումը:

Մելիք-Շահնագարյանի «Ձուռնա-Տմբլայուն» աստիճանավորումը ևս ծառայում է երգիծանքի ոճական դերն ընդգծելու նպատակին: Ահա բնագրային հետևյալ հատվածում հեղինակը չափազանցության հետ ստեղծում է աստիճանավորման հետաքրքիր օրինակ. «Ամմա գիղըմ չի թա ծիւնը *կեալաւ կեալաւ*՝ հանց *պցրացալ ա* սար ու ծեօր *կոխալ* չուերին ենը *կտրցրալ* վեր պատառ ար մնացալ էծերը սովածութիւնան *եր ինին քերծերին կլոխը*, ընդեղան *աստղերը ըրածին* քըըրլիսու հասրաթ թողին առանց են էլ խարըմ մնացած խեղճ հըլերին» (2-60):

Ոճական այս հնարի գործածումով հեղինակը դրսևորել է ինքնատիպ երգիծանք՝ ստեղծելով այլաբանական պատկեր: Ազգի գլխին հետզհետե կուտակվող ողբերգությունները նրան դնում են ահավոր դրության մեջ, հեղինակը երգիծում է քաղաքական այն խաղերը, որոնք ավելի են խորացնում ժողովրդի գլխին կախված վտանգը:

Երգիծաբանի սուր ծաղրը ընդգրկում է նաև այլ շառավիղներ: Ազգամիջյան ընդհարումները ծնում են նորանոր չարիքներ, և այդ ժամանակահատվածում որոշ հայեր նոր դիրքորոշում են հանդես բերում. «Քշեր չի անց կենըմ վեր խոտու տիգեր, տրմանու մարաք, հրըվանու կիւմ չի *կրակ տան դողոռանչ անին*: Քշեր չի անց կենալ, վեր մին մինու *հէյվան չի կիւման տիւս օնին*, 40-50 մնըթական ապրանքը վեց օխտը մանէթաւ իւրանց քիւրա թուրքերին երայ *ծախին*, օր չի անց կենալ, վեր ժամին տռանը *ղւմըղալ չի սարքին կլոխ ծղին*, *կոռնը* եա կուխկաճաղ-

*կուտրատին, քթըպռոշ տփլըկցնին»* (1-179):

Մելիք-Շահնագարյանի երգիծանքին բնորոշ են աստիճանավորման այն օրինակները, երբ գործողությունների աստիճանական ուժեղացումը հետընթաց վայրէջքով հասցնում է նվազաբերության: «*Ըրմանում ի*» ֆելիետոնում գրողը նկարագրում է խուլերի հիվանդության բերած հետևանքները, որը ձեռնտու է որոշ մարդկանց: «խուլերը (անըմը կտրուի, հա՛) սաղ սալամաթ դարեազը ծեռքին *նի մտաւ, փրթից, կտորից*, սաղ շհարը *իլալում քցից, անցկացաւ երգիտ աշխար վննատակ տաւ*, գեջղանըգեջ էտ կլոխը բլըբանաս մեծ հայերն ու թորքերը, էտ խոըփըջ քոն իլած դումըցիք *օյամիշ իլին, վաշ վիշ ըրին*. Էն տրաքըմ դժբժըմ Բաքուն մին ամսըմը *տրտակուալ ար*, տներն ու քիւչէքը սև նոթըմ *ներկուալ*, օթի օրփաթ *տեռալ*, մին քանէ ջամդաք օտողների *ծեռքի մնացալ»* (1-224): Ինչպես նկատեցինք, աստիճանավորումն ըստ կազմության լինում է մեկ բառով և բառերի կապակցությամբ արտահայտված: Հետևյալ օրինակում հեղինակը երգիծում է շուշեցի կնոջ «լուսավորվածությունը». «Վայ ա, վեր մինին տքրակէնը եա սկեսուրը հզերանց մին պերանը պենա թա Սեանամ, Նախշուն եա Օֆելյա, պէնին *թեահրը ըտրհենց չի, ըստրհենց ա*, եա *աչքիտ երայ օնք կա*. էլ կարել *չըն ռխան պրծնին*, հանց *կնդիչը կպցրցնի ծվվա, ծկլթա, վէնները տալիը թակի, հեարբու կեա (վիճի -ե.Մ.) վէրչն էլ նստի* զոզոայ, վեր տոն տնըհաւա բաղրիար կտեռնան» (2-103):

*Տարըմբոնումը* ոճական այն հնարանքն է, երբ բառը կամ արտահայտությունը, որ գործածված է փոխաբերական կամ երկրորդական իմաստով, խոսակցի կողմից ընկալվում է գլխավոր, ուղղակի, անմիջական իմաստով կամ հակառակը: Տարըմբոնման այսպիսի օրինակներ են հանդիպում «Ձուռնա-Տմբլայի» բազմաթիվ ֆելիետոններում: Ահա Շուշվա կանանց միամտությունն ու անգրագիտությունը պատկերող մի հատված «Հայոց թիատրոան» ֆելիետոնից.

*«Ախճի, Հուռի տու էլ էն օրը թիատր քեցիր:*

*Վէ՞ր օր:*

*Էն օրն է, վեր ասըմ ին Սիրանուշին պենը փիս ար:*

Յա ընդդեմի ի, էնքան մարթ ար հուաքուալ, վեր ասեղ քցելի տեղ չի կար, ասըմ ըն Ապելեանցին պենը փիս վախտը իսկի էնքան խալխ չիլալ:

Լեաւ, վեր հուաքուալ ին, պենը լիւացալ» (2-125):

Այստեղ տարըմբոնման տեղիք է տալիս ռուսերեն бенефис (թատերական պատվախաղ-Ե.Ս.) բառը, (խոսքը վերաբերում է Յ.Աբելյանի և Սիրանուշի՝ Շուշիում տրված ներկայացումներին): Բարբառային արտասանությամբ հնչում է *պենը փիս*, որը այլ իմաստ ունի բարբառում՝ *բանը* վատ:

Յեղիմակը հատուկ միտումով ստեղծում է բառիմաստների շփոթում, որն էլ նպաստում է սոցիալական տարբեր խավերի մարդկանց կյանքի, կենցաղի, հոգեբանության ճշմարիտ պատկերմանը:

Մելիք-Շահնազարյանը երգիծում է կանանց մտքի պարզունակությունը: Տեսնելով ներկայացման ժամանակ հերոսի մահը՝ նրանք դա ընկալում են որպես իրական կյանքում կատարված իրադարձություն, և շատ զարմանալի է նրանց համար, որ նույն դերասանուհին կարող է ուրիշ կյանք ունենալ, որը և համարում են խիստ անբարոյական: «Ամմա վերջը են գեահրմար ազարը թիւնդվից, խօխան քվորը թափշուր ըրաւ, ինքը թէք ընգաւ, դեաստի մէռաւ: -Յու՞նց թա մէռաւ, բա էրէգ կուտանը պէց են ար հայոց վեչերընը նստած:

Ղո՞րթ

Քու ազիգ արևը

Վա՛յ քու ծամը կտրուի, ախճի հինչ ետ եկած կնէգ ա իլալ էտ Սիրանուշը, ախր ես էլ ասիմ համիմ էտ օրը խէ ար անըմը փոխալ փռքփռու տիրալ, տու մէ ասէլ մտկըմը օրիշ պէն ա իլալ, թա չէ հինչ ասէլ ա ստըտոտ մէռնի, լիա վեր խալխը հռանան, փողերը տինի ջուբըմը, միմ պուքի, էքսան էլ իրես ինի կլուք քինա:

Վայ, քու աչքերը քուռանայ, ախճի ժըննակիս կնանէքն էլ ըն ալլամ դալլամ տեռալ...» (2-125):

«Ձուռնա-Տմբլայուն» հեղինակը ստեղծում է տարըմբոնման այնպիսի ցայտուն պատկերներ, որոնք բացահայտում են հասարակական

տարբեր շերտերի մտածելակերպը, սոցիալական դրությունը, բարոյական սնանկությունը, դրանով իսկ քննադատելով տվյալ հասարակական միջավայրը:

*Յեզնանը*: «Ձուռնա-Տմբլայուն» հանդիպում են հեզնանքի բազմաթիվ դրսևորումներ: Այն ուղղված է կենցաղի մեջ եղած թերությունների, հասարակական-քաղաքական և ազգային այլևայլ արատների դեմ: Յեզնանքի հիմնական միջոցը ձևի և բովանդակության անհամապատասխանությունն է, որով էլ ավելի ցայտուն է դառնում բնութագրվող առարկան կամ երևույթը, «Դա մի արտահայտություն է, որի մեջ բացասական երևույթը ծաղրվում է ոչ ուղղակի ճանապարհով, գրողը նրան ինչ-որ արժանիքներ է վերագրում, կարծես ուզում է գովաբանել, բայց ստացվում է ճիշտ հակառակը: Բարձր հատկանիշներ վերագրելով այս կամ այն մարդուն, երևույթին՝ գրողը դրանով իսկ ցույց է տալիս, որ այդ դրական գծերն իրականում բացակայում են» (44-240): «Միմ քանէ անքննելի պեներ» ֆելիետոնում հեզնանքով երգիծելով հասարակության սուտ ու անիրական բարեմասնությունները՝ հեղինակը խոսքը ուղղում է երիտասարդներին. «Միէգ ծէգ ըմ հրցնըմ, ա կիրին տակն էլ գիրող, կլոխն էլ, Օսաննա կանչող հոգևոր դերեր, օնվերստը վրջըցրած ես անվրջըցնելի Շիլլեր, Շէքսպիր, Էօթ, Սպէնսեր, Դարվին, Մոնթեզայ, Ադամ Սմիդ ես հինչ գիդամ լեդի Սմիտ անկիր ըրած, ժըժըպապա անող ազկի պարծանքս լիւսըթաթախ ջահիլ ջիուլնէ, էս անքննելի պեները տեսած՝ հու՞նց չի Տմբլաչի խաչանը հիլլա կտրի, մտքին դոնն ընգնի, հեալա ծէր լիւսաւերութիւնն էլ ընեծի, ծէր կարթմունքն էլ» (2-124): Այսպես բազում արժանիքներ վերագրելով հերոսին՝ հեղինակը ցույց է տալիս դրանց ներքին սնանկությունը: Յեղիմակի խոսքը հեզնական բնույթ է ստանում ոչ միայն բառերի, այլև նախադասությունների, ամբողջ պատկերի նկարագրությամբ:

«Թեազայ կիպիտատին (դեպուտատ-Ե.Ս.) իրամանաւը Թոփխանըմը էլ էշ չըն թողըմ, վեր մարթկանց ջարգընը կաղնի, թակըմ ըն քշըմ, չիւն շատ ըն արթմիշ ըրալ, բայց շատ մարթ կենգատաւեր ա էտ կարքատրութիւնան, օզըմ ըն թողթ շինին խնդիրքակործ ինին, վեր էլիա էրգան անգուծներին իւրանց պըպական տեղը կղընցնին, թա չէ Թոփխանան շնորքա ընկալ ա, հանց ա միմ գատ կուրցրած ինի» (1-75):

Երգիծաբանը հաճախ կախման կետերի, տրոհության նշանների օգնությամբ էլ յուրահատուկ հեզոնական իմաստ է հաղորդում խոսքին: «Մեր պոլիցիսանան օզըմ չի շհարին ֆանարնեն քշերը ջափայ քաշի վառի, չիւն ժղղովորթը քըլըքոլա լիւս ա տամ...» (1-26):

*Ճարտասանական հարց և դիմումը* այնպիսի դարձույթներ են, որոնք արտահայտվում են ճարտասանական հարցով, ճարտասանական դիմումով և գործածվում են խոսքի արտահայտչականությունն ուժեղացնելու նպատակով: Ինչպես նկատել է Ա.Ռուբայլոն, ճարտասանական կոչը ենթադրում է իրականության ընկալման յուրահատուկ, անսովոր մթնոլորտի առկայությունը, երբ հաճախ այդ կոչի ձևերի անսովորությունը աննկատ է լինում: Մեծ մասամբ գործածվում է հեղինակային խոսքում: «Ես գիղըմ չըմ էս հինչանա, վեր մին փուխընհադի կլօունի, ցիրկաչկի, աքտրիսի բենեփիսին մեր հայերը հեարիւրնէ կշպրտին, վէսկեղէն արծաթեղէն պաղարկէք կտան, ծի կտեռնան փայտոնին լծուին, լիա պենը վեր կընգնի իւրանց ու իւրանց անգլամազ խուխոցը երայ ումբրնէն սըւըցրած, ըջըններին լիւսը սըւըցրած, փորնէն մէջբան կացած՝ յոյսերաւ ապրող մեր վարժապետներին, կիր կիրողներին, ծեռքընէն կչուրանայ...» (1-64): «Ամնա հո՞ր ա, ինձ տո քեզ տամ, հու՞ ա հիր ըռըխի եշըմ, լօխչու օշ ու մէտք էնա թա հինչ ֆանդ ու ֆիլ պընըցնին, վեր հնգերին իլած չիլածն էլ պլոկին, լիւթ թողին» (1-65): «Այ՛ հարստացած ախպորց քեասիբ քուրեր, եա հարուստ մարթոց քեասիբ պարեկամնէ, իմ խորհուրթնա, վեր տուք ծնվիք վէչ, եա վեր ծնվըմ ըք լիւս աշխարի չի տիւս կեաք, թա չէ ծեր ազիզ ախպերքն ու հարուստ պարեկամնէն ծգանա խրտնըմ ըն...» (2-69):

Երգիծական որևէ երևույթ ներկայացնելուց հետո հեղինակի եզրակացությունը ստանում է ճարտասանական, հռետորական պաթետիկ երանգ և այդ պատճառով էլ հասարակական հնչեղություն է ձեռք բերում: Այդ էլ հենց նպաստում է Մելիք-Շահնազարյանի ստեղծագործության ինքնատիպությանը և հարատևությանը:

Այսպիսով՝ «Ջուռնա-Տմբլա» երկի լեզվական ողջ համակարգը, ոճական հնարանքների ու միջոցների հմուտ ու տեղին գործածությունը նրա ոճը դարձրել են պատկերավոր ու հյութեղ, լեզուն՝ արտահայտիչ:

## ԹՎԱԳՐՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տմբլաչի Խաչան (Կ.Մելիք-Շահնազարյան), Ջուռնա-Տմբլա, Ա գիրք, Վաղարշապատ, 1907, 233 էջ:
2. Տմբլաչի Խաչան (Կ.Մելիք-Շահնազարյան), Ջուռնա-Տմբլա, Բ գիրք, Վաղարշապատ, 1908, 240 էջ:
3. Մելիք-Շահնազարյան Կ., Փշրանք, Շուշի, 1889, 70 էջ:
4. Մելիք-Շահնազարյան Կ., Հայ գյուղացու սև օրը, Թիֆլիս, 1890, 35 էջ:
5. Աթանասյան Ա., Կ. Մելիք-Շահնազարյանը որպես ֆելետոնիստ, Եր., 1940, 25 էջ:
6. Աբովյան Խ., ԵԼԺ, հ 5, Եր., 1956, 510 էջ:
7. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1959, 280 էջ:
8. Ջահուկյան Գ., Общее и армянское языкознание, Եր., 1978:
9. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, 346 էջ:
10. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Եր., 1964, 70 էջ:
11. Պատկանյան Ռ., Երկեր, Եր., 1955, 779 էջ:
12. Նալբանդյան Մ., ԵԼԺ, հ. 3, Եր., 1940, 446 էջ:
13. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, 608 էջ:
14. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Եր., 1940, 355 էջ:
15. Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, Եր., 1982, 345 էջ:
16. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, 370 էջ:
17. Պողոսյան Ա., Հաղործի բարբառը, Եր., 1965, 370 էջ:
18. Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966, 498 էջ:
19. Աղայան Էդ., Բարբառային հնագույն տարբերությունները, Տեղեկագիր ԳԱ, հ.5, 1958:
20. Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, 361 էջ:
21. Բարխուդարյան Մ., Արցախ, Եր., 1996, 498 էջ:
22. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Եր., 1965, 237 էջ:
23. Մարգարյան Ալ., Հայերենի բաղիյուսական բարդությունները, Եր., 1986, 307 էջ:
24. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, 375 էջ:

25. Ղարիբյան Ար., Հայ բարբառագիտություն, Եր., 1957:
26. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Եր., 1972, 422 էջ:
27. Հայրապետյան Թ., Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը և գործը (ատենախոսություն), Եր., 2001, 134 էջ:
28. Արիստոտել, Պոետիկա, Եր., 1955, 252 էջ:
29. Բաբայան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, 158 էջ:
30. Մարության Ա., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2000:
31. Պետրոսյան Հր., Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., 1972, 451 էջ:
32. Եզեկյան Լ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990.:

#### ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
2. Հր.Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, Էմինյան ազգագրական ժողովածու, 1913թ, 1141էջ:
3. Ռ.Բաղդամյան, Աղբբեջաներեն- հայերեն բառարան, Եր., 1917:
4. Հայոց լեզվի բարբառային բառարան, Ա հատոր, Եր., 2001:
5. Ար.Ղարիբյան, Ռուս - հայերեն բառարան, Եր., 1418 էջ:
6. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, 697 էջ:
7. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.2, Եր., 1973, 688 էջ:
8. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.3, Եր., 1977, 636 էջ:
9. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, 676 էջ:
10. Հր.Աճառյան, Թուրքերենից փոխառյալ բառերը, Վիեննա, 1951, 185 էջ:
11. Հր.Պետրոսյան և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, 318 էջ:
12. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, հ. 1-4, Եր.:
13. Ա.Սուքիասյան, Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, 614էջ:
14. Հ.Հյունքեարպեյենտյան, Ստուգաբանական բառարան հայ լեզվի, 1894:
15. Գ.Գասպարյան, Բառարան Խ. Աբովյանի երկերի, Եր., 1984, 1947, 59 էջ:
16. Հր.Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, 686 էջ:
17. Նոր բառգիրք հայկազեան լեզվի (վերահրատ.) հ.1, Եր., 1979, 1140 էջ:
18. Նոր բառգիրք հայկազեան լեզվի (վերահրատ.) հ.2, Եր., 1981, 1067 էջ:
19. Առձեռն բառարան հայկազեան լեզվի, Վենետիկ, 1865, 850 էջ:

#### ՁԵՌԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Ազգային գրադարան, ձեռագիր 681:
2. Հայաստանի Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ.Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գ.գ. 7, 11, 12, 29, 33, 51, 56, 58, 59, 60, 70, 86, 90, 93, 94, 100, 116, 127, 152, 183, 230, 235, 236, 241, 306, 312:
3. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (ՀԱԻԲԱ) FBI: 0808-0961, 3683-3765:

#### ԱՄՍԱԳՐԵՐ ԵՎ ԹԵՐԹԵՐ

1. Լ.Հովհաննիսյան, ՊԲՀ, Եր., 1981, հ. 3:
2. Ա.Պողոսյան, Պատմա-բանասիրական հանդես, (ՊԲՀ), Եր., 1974, թ 2:
3. Ալ.Մարգարյան, ՊԲՀ, Եր., 1971- 3, 1973-4, 1980-2:
4. Գ.Ջահուկյան, ՊԲՀ, Եր., 1963-4, 1991-2, 1996-1-2:
5. Լ.Հովհաննիսյան, Լրաբեր, Եր., 1990, հ. 11, 1977, հ. 1:
6. Բանբեր Երևանի համալսարանի, Ստուգաբանություններ, Եր., 1983, հ. 3:
7. Սովետական գրականություն, Եր., 1966, հ. 11:
8. Էդ.Աղայան, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1971, հ.2:
9. «Աղբյուր», Թիֆլիս, 1917, մայիս:
10. <<Գրական թերթ>> շաբաթաթերթ, Երևան, 1940, թ. 20:
11. <<Սշակ>> օրաթերթ, Թիֆլիս, 1878:
12. <<Նոր-դար>> օրաթերթ, Թիֆլիս, 1885, հ.147, 1889 հ.հ.192, 193, 1891, հ.հ. 144, 145, 146, 1894, հ. 16, 1900թ. հ.հ. 37, 29:
13. <<Մարմարա>> օրաթերթ, Կ. Պոլիս, 1967, 13 օգոստ.:
14. Հայրենիքի ծայն, Եր., 1990, 3 հոկտեմբերի:
15. Երեկոյան Երևան, Եր., 1966, 30 հուլիսի:
16. ԼՂ Հանրապետություն, Ստեփանակերտ, 1996, 27 մարտի:

#### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԳԲ - Գավառական բառարան
2. ԲԲ - Հայոց լեզվի բարբառային բառարան
3. ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան
4. ՆԲՀ - Նոր բառգիրք հայկազեան լեզվի
5. ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես
6. Գ- գործ N
7. հնիս-հնդեվրոպական նախալեզու

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խմբագրի կողմից.....	3
Երկու խոսք.....	4
<i>Գլուխ Առաջին</i>	
I. XIX դարավերջի գրական արևելահայերենը և Մելիք-Շահնազարյանի բարբառային ստեղծագործությունների լեզվական համակարգը .....	13
II. «Զուռնա-Տմբլայի» հնչյունական համակարգը.....	20
<i>Գլուխ Երկրորդ</i>	
I. Բառապաշարային իրողություններ .....	32
ա) Համագործածական բառեր .....	35
բ) Բարբառային բառեր.....	40
գ) Գրաբարյան բառաչերտ.....	64
դ) Փոխառություններ արևելյան լեզուներից.....	80
ե) Փոխառություններ ռուսերենից.....	89
զ) Օտարաբանություններ.....	93
II. Իմաստափոխություն.....	99
III. Բառակազմություն.....	104
ա) Դարձվածքներ.....	114
բ) Ժողովրդական բանահյուսության նմուշներ.....	116
<i>Գլուխ Երրորդ</i>	
Քերականական իրողությունների առանձնահատուկ դրսևորումները «Զուռնա-Տմբլայում».....	120
I. Ձևաբանական առանձնահատկություններ .....	120
II. Շարահյուսական առանձնահատկություններ.....	142
<i>Գլուխ Չորրորդ</i>	
«Զուռնա-Տմբլայի» ոճական առանձնահատկությունները.....	149
I. Երգիծանքը և նրա դրսևորումները.....	149
II. Պատկերավորման և արտահայտչական միջոցները.....	155
ա) Համեմատություն.....	155
բ) Փոխաբերություն.....	158
գ) Փոխանունություն.....	161
դ) Չափազանցություն.....	163
ե) Շրջասույթ.....	167
զ) Մակդիր.....	168
է) Հակադրույթ.....	170
ը) Կրկնաբերություն.....	172
թ) Աստիճանավորում.....	176
ժ) Տարըմբռնում.....	177
ժա) Հեզնանք.....	179
ժբ) Ճարտասանական հարց և դիմում.....	180
Թվագրված գրականություն.....	181
Բառարաններ.....	182
Թերթեր և ամսագրեր, ձեռագիր աղբյուրներ.....	183
Համառոտագրություններ.....	183
Դոկանդակություն .....	184





Անվերապահորեն կարելի է ասել, որ Տմբլաշի  
Խաչանի (Կոստանդին Մելիք-Շահնազարյան)  
քաղաքական և սոցիալական սարկազմը XIX  
դարի երկրորդ կեսի արևելահայ երգիծանքի  
համապատկերում իրեն համարժեք մի այլ  
մեծություն չի ճանաչում:

ՀԵՂԻՆԱԿ

Շապիկի վրա՝ Շուշիի կիրճը